



With funding from

Austrian
Development
Cooperation



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐԱՐԻ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ICARE
INTERNATIONAL
CENTER FOR
AGRICULTURE
RESEARCH AND
EDUCATION

ԱՐԱՀՈՎԿԱՆՆԻՑԱՆ
ԱՐՄԵՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

fruitemia

Արա Հովհաննիսյան
Արմեն Զաքարյան

ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Աշխատանքը տպագրության է երաշխավորել ՀԱՅ Գիտական խորհուրդը:

**Հեղինակներ՝ Արա Հովհաննիսյան, Արմեն Զաքարյան
Մասնագիտական խորհրդաստու՝ դրվագ. Դավիդ Ների
Գրախոսներ՝ Էրերի Ստեփանյան, Գևորգ Հարությունյան
Հրատ. Խմբագիր՝ Սոս Ավետիսյան**

ԹՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ձեռնարկը հրատարակվել է Ավատրիական զարգացման համագործակցության կողմից ֆինանսավորվող եւ Ազրորիգնեակի հետազոտությունների եւ կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի կողմից իրականացվող Հայաստանում այգեպուդության ոլորտի զարգացման (ՖԲՌՈՒՏԵՆԻԱ) նախագծի շրջանակում: Ձեռնարկի մշակումը եւ հրատարակումը նպատակ ունի համարել Հայաստանի ազգային ազրարային համալսարանի մասնագիտական գրականությունը՝ ազրոնոմիական մասնագիտության կրթական ծրագրերը հագեցնելով Հայաստանում եւ արտերկրում իրականացված վերջին հետազոտությունների արդյունքների վրա հիմնված արդիական գիտելիքներով եւ գործնական հմտություններով:

Ձեռնարկում ներկայացված են Պողարուծություն առարկայի տեսական եւ գործնական հիմնական դրույթները, որոնք ներառում են.

- պատղարուծության տնտեսական նշանակությունը, զարգացման պատմությունը եւ հեռանկարները,
- պատղահատապտղատու բույսերի կառուցվածքային, կենսաբանական առանձնահատկությունները, պատղատու տեսակների ու բուսածերերի դասակարգումը, դրանց արտադրական, տնտեսական բնութագրերը եւ մասնագիտական եղբույթները,
- բազմամյա տնկարկների նախագծման եւ հիմնման գործողությունները,
- նորառումն եւ պատղաբերող այգիների մշակության տեխնոլոգիաները եւ դրանց առանձնահատկությունները,
- արտաքին միջավայրի գործուների ազդեցությունը պատղատու բույսերի աճի եւ զարգացման վրա,
- բերքահավաքի, բերքի տեղափոխման, խնամքի եւ պահպանության յուրահատկությունները:

Ձեռնարկում ներկայացված են նաև պատղահատապտղատու բույսերի մշակության ընթացքում կիրառվող արդյունավետ արդի տեխնոլոգիաները եւ դրանց կիրառության առանձնահատկությունները ՀՀ պայմաններում:

Ձեռնարկը ներկայացնում է հեղինակների տեսակետը, եւ Ավստրիական զարգացման համագործակցությունը պատասխանատու չէ բովանդակության համար: Ծնորհակալություն ենք հայտնում ՖԲՌՈՒՏԵՆԻԱ նախագծի միջազգային մասնագիտական խորհրդաստու, Խտախայի Մարկեթ պոլիտեխնիկական համալսարանի Գյուղատնտեսության, սննդի և շրջակա միջավայրի գիտությունների դեպարտամենտի ծառարանության եւ ճիբապտղարուծության պրոֆեսոր Դավիդ Ներիին՝ «Պողարուծություն» ձեռնարկի մշակման գործում մասնագիտական խորհրդատվություն ապահովելու համար:

Տպագրված է Հայաստանում, 2022 թ.:

ISBN 978-9939-77-159-5

© Ավստրիական զարգացման համագործակցություն, 2022թ.

© Հայաստանի ազգային ազրարային համալսարան, 2022

With funding from

 **Austrian
Development
Cooperation**



**The handbook is recommended for publication
by the ANAU Scientific Council.**

Authors: **Ara Hovhannisyan, Armen Zakaryan**

Professional consultant: **Dr. Davide Neri**

Peer Reviewer: **Eteri Stepanyan, Gevorg Harutyunyan**

Publisher's editor: **Sos Avetisyan**

FRUIT GROWING

This publication was made possible within the framework of the Fruit Production Sector Development (FRUITENIA) Project in Armenia funded by the Austrian Development Cooperation (ADC) and implemented by the International Center for Agribusiness Research and Education (ICARE) foundation.

Development and publication of this handbook is aimed to supplement the professional literature in the Armenian National Agrarian University (ANAU), equipping the educational programs of the university's agronomy specialties with the knowledge and hands-on skills that are based on the latest research conducted in Armenia and abroad.

The handbook presents the main theoretical and practical provisions of the Fruit Growing course, including:

- Economic significance of fruit growing, history of its development and perspectives;
- Structural and biological peculiarities of fruit and berry crops, classification of fruit types and cultivars, their production and economic characteristics, and professional terms;
- Actions of designing and establishing perennial plantations;
- Growing technologies in newly established and yielding orchards and their characteristics;
- Impact of factors of external environment on the growth and development of fruit crops;
- Peculiarities of harvesting, transportation, maintenance and storage.

This handbook presents also effective (current) technologies used during the cultivation of fruit and berry crops.

The handbook reflects merely the views of the authors, and the Austrian Development Cooperation cannot be responsible for its content.

We express our sincere gratitude to Dr. Davide Neri (PhD), the international consultant to the FRUITENIA project, Professor of Arboriculture and Oliviculture, Department of Agricultural, Food and Environmental Sciences, Marche Polytechnic University, Ancona, Italy, for providing professional consultancy in developing the "Fruit Growing" handbook.

Printed in Armenia, 2022.

© Austrian Development Agency, 2022.

© Armenian National Agrarian University, 2022.

Բովանդակություն

- 11 **Ներածություն**
- 12 **Պտղաբուծության նշանակությունը:**
պտղաբուծությունը որպես առարկա, գիտություն եւ
գյուղատնտեսական արտադրության ճյուղ
- 18 **Պտղաբուծության նշանակությունը մարդու եւ
տնտեսության համար**
- 20 **Պտղաբուծության զարգացման պատմությունը եւ
այգեգործական արդիական տեխնոլոգիաների
զարգացման հեռանկարները <<-ում**
- 24 **Հայաստանի պտղաբուծության արդի վիճակը**
- 26 **Պտղատու բույսերի ծագման օջախները, տարածման
եւ ընտանեցման օրինաչափությունները: Պտղատու
բույսերի անհատական եւ պատմական զարգացման
օրինաչափությունները: Բուսաձեւի (սորու) եւ
նույնակի (կրկնակ, կլոն) հասկացությունների
բնորոշումը**
- 32 **Պտղատու բույսերի կառուցվածքը, կենսաբանական
եւ կենսաքիմիական կենսագործունեության
առանձնահատկություններ**
- 38 **Պտղահատապտղային բույսերի բուսածի եւ հանգստի
շրջանները, զարգացման աճափուկերը**
- 44 **Պտղահատապտղային բույսերի պտղաբերման
օրինաչափությունները, սկզբնավորման
արագացման եղանակները: պտղաբերման
պարբերականությունը եւ դրա մեղմացման ուղիները**
- 47 **Պտղատու բույսերի անհատական զարգացման
օրինաչափությունները**
- 55 **Պտղահատապտղային բույսերի աճի եւ զարգացման
վրա ավդող արտաքին միջավայրի գործոնները եւ
դրանց ավեցության
կարգավորումը**

- 58 **Պտղահատապտղային բույսերի աճի Եւ կարգացման վրա ավդող ջերմային գործոնները Եւ դրանց ավդեցության կարգավորումը**
- 61 **Պտղահատապտղային բույսերի աճի Եւ կարգացման վրա ավդող հողային գործոնները Եւ դրանց ավդեցության կարգավորումը**
- 63 **Պտղահատապտղային բույսերի աճի Եւ կարգացման վրա ավդող ջրային Եւ օդագազային գործոնները Եւ դրանց ավդեցության կարգավորումը**
- 65 **Պտղահատապտղային մշակաբույսերի բազմացման կենսաբանական հիմունքները, եղանակները Եւ գործնական կիրառումը**
- 73 **Պտղատնկարանի առանձին բաժինների դերն ու ագրոտեխնիկան**
- 79 **Պտղատնկարանի հիմնումը, գործունեությունը, տնկանյութի աճեցման տեխնոլոգիաները**
- 82 **Տնկարան հիմնելու աշխատանքների ծավալը Եւ ծախսերը**
- 87 **Թվուկային տնկանյութի արագացված բազմացումն ու աճեցումը ժամանակակից տեխնոլոգիաներով**
- 95 **Պտղատու այգիների (տնկարկների) տիպերը: պտղատու ինտենսիվ այգիների առանձնահատկությունները Եւ առավելությունները**
- 100 **Պտղատու տնկարկների համար տեղանքի ընտրությունը տարբեր պայմաններում**
- 103 **Այգու հիմնման նախագծումը, տարածքի կազմակերպումը Եւ հողամասի տեղաձեւումը**
- 108 **Պտղատու տեսակների սևման մակերեսների սահմանումը ըստ բուսաձեւերի, պատվաստականների Եւ աճեցման գոտիների**
- 112 **Շարքերի տեղաբաշխումը այգում Եւ բույսերի տեղաբաշխումը շարքերում: Մշակաձեւերի դասավորությունը՝ փոշոտման, կազմակերպչական Եւ տնտեսական արդյունավետության տեսանկյունից**
- 115 **Պտղատու տնկարկների այգետնկման ժամկետները, տնկանյութի ընտրությունը Եւ նախապատրաստումը տնկման համար**

- 119 **Պտղահատապտղային տնկարկների հիմնման
աշխատանքների կազմակերպումը, հողի
նախապատրաստումը եւ տնկման տեխնիկան**
- 124 **Պտղատու երիտասարդ եւ բերքատու այգիների
հողի պահպանման համակարգերը**
- 127 **Պտղատու երիտասարդ եւ բերքատու այգիների
ծառերի ոռոգման համակարգը**
- 132 **Պտղատու երիտասարդ եւ բերքատու այգիների
ծառերի պարարտացման եւ սնուցման համակարգը**
- 135 **Պտղատու երիտասարդ եւ բերքատու այգիների
ծառերի եւ բերքի պաշտպանությունը աղետալի
վտանգներից (ցրտահարություն, կարկուտ, քամիներ,
երաշտ, ցրտահարություն, հիվանդություններ,
վնասատուներ եւ այլն)**
- 138 **Պտղատու ծառերի էտի եւ ձեւավորման
նպատակներն ու սկզբունքները, աճի եւ
պտղաբերման հարաբերակցության, բերքով
բեռնվածության կարգավորումը**
- 142 **Ծառերի էտի տեսակները, գործողություններն ու
կատարման տեխնիկան: Էտի կատարման
գործիքներն ու սարքավորումները**
- 147 **Էտի կատարման ժամկետները եւ
ինտենսիվությունը**
- 150 **Բերքահավաքի ժամկետների եւ բերքի
կանխորոշման եղանակները եւ սկզբունքները**
- 155 **Պտուղների բերքահավաքի կատարման
առանձնահատկությունները եւ բերքի իրացումը**
- 160 **Բերքի ետքերքահավաքային խնամքը,
պտուղների տեսակավորումն ու հակավորումը,
նախապատրաստումը պահպանման,
փոխադրման եւ վաճառքի**
- 164 **Արտադրական ավանդական եւ օրգանական
պտղաբուծության տարբերությունները: Խելամիտ
պտղաբուծության սկզբնավորումը**
- 164 **Օրգանական պտղաբուծության
առանձնահատկությունները**

Գործնական

- 168 **Պտղատու բույսերի կառուցվածքը,
օրգանները եւ եկրաբանությունը**
- 169 **Պտղատու բույսերի խմբերն ու դրանց
ներկայացուցիչները**
- 171 **Պտղատու բույսերի կառուցվածքը եւ օրգանների
նկարագրությունը**
- 175 **Պտղատու բույսերի բազմացումը եւ տնկանյութի
աճեցումը**
- 181 **Պտղատու բույսերի առողջ, Վիրուսավերծ
տնկանյութի աճեցման տեխնոլոգիաները**
- 184 **Պտղատու բույսերի սերմերի ծլունակության
որոշարկման եղանակները, սերմերի
ստրատիֆիկացում (ավազածածկում),
սերմերի ցանքի չափաքանակները (նորմերը)**
- 188 **Աչքապատվաստի եւ կտրոնապատվաստի
կատարման տեխնիկան**
- 195 **Պտղատու այգիների եւ տնկարկների տիպերը,
մշակաձեւերի ընտրությունը, տեղաբաշխումը եւ
նախագծման սկզբունքները տարբեր
պայմաններում**
- 201 **Այգու տարածքի կազմակերպումը եւ հողամասի
տեղաձեւումը, տեսակների ու բուսաձեւերի
տնկման բանաձեւերի սահմանումը, հողի
նախապատրաստումը, այգու հիմնումը**
- 208 **Պտղահատապտղատու տնկարկների հիմնման
նպատակով մշակաբույսերի տեսակների,
պատվաստակալների եւ մշակաձեւերի
ընտրությունը**
- 221 **Պտղահատապտղատու տնկարկների տնկման
ժամկետները, հիմնադրման աշխատանքների
կազմակերպումն ու նախապատրաստումը**

ՊՏՂԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐԻ ՁԵՒՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- 224 **Ծառերի ձեւավորման բարելավված բնական համակարգերը**
- 229 **Ծառերի ձեւավորման ցածրած, ինտենսիվ եղանակները** (արհեստական սաղարթներ)
- 239 **Էտի կատարման տեխնիկան, նպատակը, ժամկետները եւ ձեւերը**
- 244 **Հնդավորների էտը**
- 248 **Խնձորենու էտը**
- 249 **Տանձենու էտը**
- 251 **Սերկելիլենու էտը**
- 253 **Կորիզավորների էտը**
- 253 **Ծիրանենու էտը**
- 255 **Դեղձենու էտը**
- 257 **Սալորենու էտը**
- 258 **Կեռասենու էտը**
- 260 **Բալենու էտը**
- 261 **Ընկուզավորների եւ հատապտղայինների էտը**
- 261 **Ըկուզենու էտը**
- 262 **Տխլենու էտը**
- 263 **Նշենու էտը**
- 264 **Հաղարջենու էտը**
- 264 **Կարմիր հաղարջենու էտը**
- 265 **Կոկոչենու էտը**
- 266 **Մորենու էտը**
- 267 **Պտղահատապտղատու տնկարկների ոռոգման ու սնուցման տեխնոլոգիան կաթիլային եղանակով**
- 273 **ՀՀ-ում տարածված ծիրանենու մշակաձեւերի բնութագրերը**
- 273 **Ծիրանու մշակաձեւերը**
- 277 **ՀՀ-ում մշակվող դեղձենու եւ նեկտարենու մշակաձեւերի բնութագրերը**

- 277 **Դեղձենու մշակաձեւեր**
- 283 **Նեկտարենու մշակաձեւեր**
- 285 **ՀՀ-ում տարածված սալորենու եւ
շլորենու մշակաձեւերի բնութագրերը**
- 285 **Սալորենու մշակաձեւեր**
- 291 **Շլորենու մշակաձեւերը**
- 293 **ՀՀ-ում կեռասենու եւ բալենու մշակաձեւերի
բնութագրերը**
- 293 **Կեռասենու մշակաձեւերը**
- 297 **Բալենու մշակաձեւերը**
- 299 **ՀՀ-ում տարածված խնձորենու մշակաձեւերի
բնութագրերը**
- 309 **ՀՀ-ում տարածված տանձենու եւ սերկելիենու
մշակաձեւերի բնութագրերը**
- 309 **Տանձենու մշակաձեւերը**
- 317 **Սերկելիենու մշակաձեւերը**
- 320 **ՀՀ-ում հատապտղայինների եւ ընկույզավորների
մշակաձեւերի բնութագրերը**
- 324 **Ընկույզենու մշակաձեւերը եւ կիսավայրի
բուսաձեւերը**
- 327 **ՀՀ-ում մշակվող չոր մերձարեւադարձայինների
մշակաձեւերի բնութագրերը**
- 327 **Նոնենու մշակաձեւերը**
- 331 **Թպենու մշակաձեւերը**
- 333 **Ժորենու (ժորի, արեւելյան խոլրմա, ճապոնական
խոլրմա, ոսկեպտղի, կակենի, գագենի) մշակաձեւերը**
- 335 **Օգտագործված գրականության ցանկ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատղատու բույսերի մշակությունը մեր տարածաշրջանում ունի հազարամյակների պատմություն: Դարեր շարունակ մարդու կողմից բազմացվել և ընտրասերվել են պտղատու վայրի բույսերը, ոնոնց մշակովի ձևերն այսօր ունեն սոցիալական և տնտեսական մեծ նշանակություն:

Մասնագետների կանխատեսմամբ Երկրագնդի բնակչության շարունակական աճը հանգեցնելու է գյուղատնտեսական մթերքների (ներառած պտղաբուծական մթերքների) պահանջարկի ավելացմանը: Ուստի գյուղատնտեսության ոլորտի մասնագետների գերխնդիրն է լինելու ավելացնել պտղահատապտղատու մշակաբույսերի բերքատվությունը, արտադրության ծավալները, բարելավել գյուղատնտեսական արտադրանքի որակական հատկանիշները և բարձրացնել արտադրության տնտեսական արդյունավետությունը:

Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները (աշխարհագրական հյուսիսային բարեխսառն գրտու պայմանները, ուղղահայաց գրտիականության առկայությունը, 10οC-ից բարձր ջերմաստիճանների գումարը, մբնուրտային տեղումների քանակը և այլն) հնարավորություն են ընձեռում զբաղվել պտղահատապտղատու մշակաբույսերի արդյունաբերական արտադրությամբ, ինչպես նաև որոշ պտղատեսակների և դրանց վերամշակման արդյունքում ստեղծված ապրանքների միջազգային շուկայում ունենալ կայուն դերակատարում: Այդ պատճառով պտղաբուծությունը Հայաստանի Հանրապետության պայմաններում արագ զարգացող, եկամտաբեր և հեռանկարային ոլորտ է:

Սույն ձեռնարկը նախատեսված է ազրարային ոլորտի ուսանողների համար: Այն ներառում է պտղաբուծություն առարկայի հիմնական բաժինները և մանրամասն տեղեկատվություն է պարունակում ինչպես տեսական այնպես էլ գործնական հարցերի վերաբերյալ: Զեռնարկում ներկայացված թեմաները կնպաստեն ուսանողների կողմից պտղաբուծության ոլորտին առնչվող հարցերի յուրացմանը, ինչպես նաև կարող են օգտակար լինել փորձառու ազարակատերների և սկսնակ գյուղատնտեսների համար:

Պտղաբուծության նշանակությունը: Պտղաբուծությունը որպես առարկա, գիտություն եւ գյուղատնտեսական արտադրության ճյուղ

Պտղաբուծությունը բուսաբուծության, մասնավորապես՝ այգեգործության մասնաճյուղ է։ Այգեգործությունը հասուլ հողատարածքներում՝ այգիներում եւ տարատեսակ տնկարկներում բազմամյա բույսերի՝ ծառերի, թփերի, վազերի, որոշ խոտանմանների բազմացման, տնկման եւ խնամքի խնդիրներով զբաղվող բուսաբուծական ենթաճյուղ է։

Այգեգործության մասն են կազմում պտղաբուծությունը, խաղողագործությունը, պուրակային ծաղկաբուծությունը եւ ծառագիտությունը, կանաչապատումը, թքագործությունը (շերամի կերակրման համար) եւ այլն։ Շատ երկրներում, հատկապես՝ հյուսիսային, որտեղ խաղողի մշակությունը կարենոր տեղ չունի արտադրությունում, պտղաբուծությունը եւ խաղողագործությունը միասնական ենթաճյուղ են համարում։

Պտղաբուծությունը (եւ խաղողագործությունը) մարդու սննդի համար պիտանի մրգեր, հատապտուղներ, ընկույզներ, յուղատու եւ համեմունքային պտուղներ առաջացնող բազմամյա բույսերի (ծառերի, թփերի, վազերի, որոշ խոտանմանների) բազմացման, տնկման, աճեցման, խնամքի, բուժման, մշակության խնդիրներով զբաղվող բուսաբուծական ենթաճյուղ է։

Պտղատու կամ պտղահատապտղային բույսեր են համարվում վայրած կամ մշակվող բազմամյա այն ծառատեսակները, վազերը, թփերն ու խոտարույսերը, որոնք տալիս են մարդու սննդի համար պիտանի պտուղներ՝ թարմ կամ վերամշակված վիճակում օգտագործելու համար։

Վայրի, վայրած կամ կիսավայրի-կիսամշակովի տեսակներն

աճում են անտառներում եւ այլ բնական միջավայրում կամ բնակավայրերում ու նոյնիսկ տնամերձերում՝ անխնամ վիճակում կամ մարդու նվազագույն միջամտության պայմաններում (չունեն մշակության տեխնոլոգիա): Դրանց պատուղները սովորաբար մանր ու անորակ են, բայց կարող են բարձ, իսկ առավելապես վերամշակված վիճակում օգտագործվել մարդու կողմից, նաև ունենալ որոշակի շուկայական արժեք:

Հայաստանի Հանրապետությունն աչքի է ընկնում զանազան վայրի պտղատեսակներով, որոնցով հարուստ են Տավուշի, Լոռու, Սյունիքի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերի անտառները:

Պտղահատապտղախն մշակաբույսերը, այսինքն՝ մշակովի տեսակները աճեցվում են մարդու որոշակի խնամքի ու մշակության պայմաններում: Որպես արդյունք՝ դրանք տալիս են առանձնահատուկ բարձրորակ պտուղներ, որոնք ապահովում են որոշակի ծավալի արդյունաբերական բերք, որն ունի տնտեսական եկամտաբերություն՝ սպառողական, ապրանքային ու շուկայական որակների շնորհիվ:

Պտղահատապտղային մշակաբույսերն ըստ բույսի եւ պտղի կառուցվածքի, կենսաբանական դիմացկունության եւ մշակության առանձնահատկությունների դասակարգվում են արտադրական խմբերի՝ կարելության հետեւյալ հերթագայությամբ:

1. **Կորիզավորներ** – խմբի մեջ ընդգրկված են՝ ծիրաննենի, դեղձնի եւ նեկտարենի, սալորենի ու շլորենի, կեռասենի, բալենի եւ բալակեռասենի, որոնց պտուղն առաջանում է ծաղկի վարսանդից եւ պարունակում է «կորիզ» կոչվող միայն մեկ սերմ, ուստի եւ անվանակոչվել են «կորիզապտուղ»:
2. **Հնդավորներ** – խնձորենի, տանձնենի, սերկեւիլենի՝ (արտադրական մշակաբույսեր), նաև վայրած կամ կիսամշակովի արոսենի, ալոճենի (սզնի), զկեռենի (մուշուլա), սեւարոսի, որոնց պտուղը գոյանում է ծաղկի զրեթե բոլոր մասերից՝ բաժակակալ, ծաղկակալ, վարսանդ եւ պարունակում է մի քանի «հունդիկ» կոչվող սերմեր:
3. **Ընկուզավորներ** – ընկուզենի (պոպոկ, կակալ, գուզ), տիսենի (պնդուկ, տկողին), նշենի, շագանակենի, պիստակենի եւ այլն, որոնց բուսաբանական պտուղը ուտելի չէ, չորացած զանգված է, բայց պտուղը, որը կոչվում է «ընկուզակ», ունի միջուկ (սերմ), որն օգտագործվում է սննդի մեջ:

- Հատապտղայիններ** – ելակենի եւ գետնաելակենի, որոնք գրեթե իրարից չեն տարբերվում, մորենի (ազնվամորի) եւ մոշենի, հաղարջենի, կոկոռշենի, հապալասենի, լափոենի (լափոի, փշարմավենի, չիշխանենի) եւ այլն, որոնք հիմնականում թիկը են կամ նաև խոտարույսեր եւ ունեն տարբեր կառուցվածքի մասը պտուղներ՝ «հատապտուղներ»:
- Չոր մերձարեւադարձայիններ** – նոմենի, թզենի, ժորենի (արեւելյան խուրմա), թթենի, շողպար (կիվիֆրուտ), հանուսի (ունարի), փշատենի, ձիթենի, զկեռ ճապոնական, սերկեւիլ ճապոնական եւ այլն, որոնք ջերմասեր են եւ դիմանում են քույլ ցրտերին:
- Խոնավ մերձարեւադարձայիններ կամ ցիտրուսայիններ** – կիտրոն (լիմոն), նումայ (մանդարին), նարինջ, գնդալիմոն (քուրինջ, գրեյֆրուտ), պոմելո, կինկան, քումկար եւ այլն, որոնք ջերմասեր, մշտադալար քույսեր են:
- Արեւադարձայիններ** – ադամաքրուց (քանան), արքայախնձոր (անանաս), մանգենի (մանգո), կոյավենի (գուավա), սեխածառ (պապայա), ավկատանձ (ավոկադո), որոնք շատ ջերմասեր, մշտադալար քույսեր են:
- Հումքասոր, համեմունքային եւ տեխնիկական պտղատեսակներ** – սրճենի (կոֆե), շոկոլադածառ (կակաո), յուղարմավենի, մշկընկույզ (մուսկատ), մեխակածառ, հիլ (կարդամոն), եւ այլն, որոնք շատ ջերմասեր, մշտադալար քույսեր են:

Վերջին երեք խմբերի պտղատեսակները շատ տաք եւ առանց ցրտերի կիխմայի քույսեր են: Հայաստանում մշակվում են միայն ջերմատնային պայմաններում, ուստի դրանց մասին տեղեկություններ այստեղ չենք ներկայացնում:

Պտղաբուծությունը կազմակերպում է պտուղների (մրգերի, հատապտուղների եւ ընկույզների) արտադրությունը եւ այդ նպատակով զբաղվում է բազմամյա պտղատու քույսերի տնկարկների ստեղծման՝ նախազժման, կառուցման, տնկման, մշակության գիտական եւ արտադրական համալիր խնդիրներով:

Պտղաբուծությունն ուսումնասիրում է պտղատու քույսերին վերաբերող հետեւյալ հարցերը:

- Դասակարգումն ըստ քուսաբանական ընտանիքների, ցեղերի, տեսակների, բուսաձեւերի (սորտերի), դրանց կենսաբանական, արտադրական, տնտեսական առանձնահատկությունները:

- Արտաքին ու ներքին կառուցվածքը, աճման, զարգացման ու պտղաբերման օրինաչափությունները: Առաջարկում է դրանց աճն ու պտղաբերումը կանոնավորող միջոցառումներ:
- Բազմացման եղանակներն ու ձեւերը եւ առաջարկում է անհրաժեշտ պատվաստակալներ ընտրելու, տնկանյութի աճեցման համար տնկարանների կազմակերպման համակարգերը եւ շահագործման տեխնոլոգիաները:
- Պտղատու բույսերի վրա ազդող միջավայրի գործոնների (լույսը, ջերմությունը, օդը, ջուրը, հողը, բուսական եւ կենդանական բնաշխարհը) ազդեցության աստիճանն ու ձեւերը եւ այդ գործոնների բացասական ազդեցության կարգավորման հնարավորությունները:
- Պտղատու բույսերի պահանջները լույսի, ջերմության, ջրի, օդի ու սննդառության հանդեպ եւ առաջարկում է պտղատու ծառերն ու թփերը մշակելու, ձեւավորելու, էտելու, ոռոգելու, սնուցելու, պարարտացնելու, բուժելու, այգու հողը մշակելու, խճամբի այլ միջոցառումների եւ աշխատանքների լավագույն ձեւերը, տնկարկների եւ այգիների արտադրական շահագործման, պտղատու տնկարկի ոռոգման եւ պարարտացման համակարգերը:
- Տնկարկների (այգիների) նախագծման, տեղածեման եւ հիմնադրման տեխնոլոգիաները. առաջարկում է պտղատեսակների եւ մշակաձեւերի (սորտերի), ինչպես նաև հողատարածքների ընտրության, այգետնկման նախապատրաստման եւ այգու հիմնադրման նորագույն սկզբունքները:
- Պտուղների հասունացման ընթացքն ու կենսաբանական բնույթը եւ առաջարկում է դրանց բերքի խճամբի եւ բերքահավաքի կազմակերպման սկզբունքները:
- Պտուղների հետքերքահավաքային պահպանման ու վերամշակման լավագույն ձեւերը:
- Վայրած եւ մշակովի ձեւերի բազմազանության պահպանության եւ օգտագործման, դրանց ժառանգականության փոփխման եւ ընտրասերման (սելեկցիայի) միջոցով ընտանեցման (մշակովի դարձնելու) հարցերը, եւ առաջարկում արտադրությանը նոր տեսակներ ու բուսաձեւեր (սորտեր):
- Տնկարկների (այգիների) նոր արտադրական շահագործման համակարգերը եւ պտուղների աճեցման նոր տեխնոլոգիաների ստեղծումն ու տեղայնացումը, գիտական նորույթների կիրառումը:

Պատղաբուծությունը որպես գիտություն եւ առարկա հիմնվում է հողագիտության, ազրոքիմիայի, բուսաբանության, կենսաքիմիայի, ֆիզիոլոգիայի, ծինաբանության (գենետիկայի, ժառանգականության օրինաչափությունների) օրենքների վրա, ինչպես նաև՝ օդերեւութաբանության եւ ջրօգտագործման, բույսերի պաշտպանության, մանրէաբանության, մեղվաբուծության, ազրոարտադրության կազմակերպման, ազրոարդյունաբերական տնտեսագիտության եւ հաշվառման գիտելիքների տիրապետման ու լատիներեն լեզվի գիտական տերմինների իմացություն վրա:

Պատղաբուծություն առարկայի նպատակն է՝

- ապագա մասնագետներին սովորեցնել պտղատու բույսերի կենսաբանությունը, արտաքին ու ներքին կառուցվածքը, աճման ու պտղաբերման օրինաչափությունները, պտղատեսակների ու սորտերի դասակարգումը, դրանց արտադրական ու տնտեսական բնութագրերը, միջավայրի գործոնների ազդեցությունը պտղատու բույսերի վրա.
- պատրաստել մասնագետների, որոնք կկարողանան լրիծել այնպիսի կարեւոր հարցեր, ինչպիսին են պտղատու բույսերի բազմացումն ու տնկանյութի աճեցումը, տնկարանի գործունեությունը, պտղատու այգու հողատարածքի ընտրությունն ու գնահատումը, պտղատեսակների եւ բուսաձեւերի (սորտերի) ընտրությունը, հողի նախապատրաստումն այգետնկման համար, այգու տեղաձեւումը, այգեպաշտպան անտառաշերտի հիմնումը եւ սորտերի դասավորության կարգը այգում, այգու հողի մշակությունն ու ծառերի խնամքը, ոռոգումը, պարատացումը, սնուցումները, բուժումները, ձեւավորումը, էտը, բերքահավաքը եւ այլն.
- նպաստել ապագա մասնագետների՝ կայուն գիտելիքների ձեռքբերմանը, որը հնարավորություն կընձեռի հետազում դրանք ճիշտ կիրառել պտղատեսակների ու սորտերի ճանաչման, պտղատու բույսերի բազմացման, տնկանյութի պահանջարկի հաշվառման, պտղատու այգիների հիմնադրման եւ տարածների կազմակերպման, այգու մշակության, բերքի խնամքի եւ պտուղների բերքահավաքի ընթացքում.
- պատրաստել մասնագետների, որոնք հմտորեն կտիրապետեն տնկարանի եւ այգու հիմնադրման համար անհրաժեշտ հաշվարկներին:

Պատղաբուծություն առարկային առնչվող գիտելիքներն ու հիմնա-

կան դրույթները կիրառվում են մրգային, հատապտղային, այդ թվում խաղողի եւ ընկուզավոր պտուղների ստացման, համապատասխան տնկանյութի աճեցման եւ տնկարկների հիմնման, ինչպես նաև կանաչազարդ այգետարածքների ու անտառայգիների ստեղծման համար:

Պտղաբուծության նշանակությունը մարդու եւ տնտեսության համար

Պտղաբուծությունը զբաղվում է պտուղների (մրգերի եւ ընկույզների) արտադրությամբ, որոնք շատ կարեւոր նշանակություն ունեն մարդու համար. դրանք դասվում են առավել կարեւոր սննդամթերքների շարքին:

Մարդու համար պտուղների նշանակությունը անշափ մեծ է՝ դրանք արժեքավորվում են մի շարք կարեւոր սննդատարրերի՝ շաքարների, վիտամինների, օրգանական բրուների, հանքային աղերի պարունակության, ինչպես նաև էներգիա արտազատելու ունակության (կալորիականության) տեսանկյուններից:

Պտուղները պարունակում են բազմաթիվ կենսաակտիվ նյութեր (վիտամիններ, ներազդակները (հորմոններ), մակարդանյութեր, դրուդողներ, բուսայուղեր, քաղանքանյութ), որոնք խիստ անիրաժեշտ են մարդու օրգանիզմի գործունեության համար:

Պտուղները ոչ միայն մարդկության սննդառության կարեւոր բաժին են, այլև կարեւոր բուժիչ ու առողջարար նշանակություն ունեն մարդու համար. դրանք կարգավորում են մարսողական համակարգը, նպաստում այլ սննամթերքների մարսմանը, չեզոքացնում եւ որոշ շափով հեռացնում են վնասակար, թունավոր, թթվեցնող, ճառագայթում կրող նյութերը: Դրանք ավելացնում են արյան կարմիր գնդիկները, պահպանում են արյան նորմալ ռեակցիան, բարելավում սրտանորային համակարգի աշխատանքը:

Վերջապես, պտուղները զովացուչիչ, քարմացնող ու հաճելի սննդամթերք են, ախտրժաբեր են, հանգստացնում են նյարդերը եւ վերականգնում մարդու ուժերը:

Հատկապես հարավային երկրների պայմաններում պտղաբուծությունը համարվում է զյուղատնտեսության ենթաճյուղերից առավել եկամտաբերը:

Այս դրույթը հիմնավորվում է շնորհիվ բազմամյա պտղատու բույսերի բնական ժառանգականության հզորության, դիմացկունության ու բարձր բերքատվության, որն ապահովում է բարձր բերք առանց խնամքի մեծ դժվարությունների եւ ծախսերի:

Պտղաբուծությունը կարեւոր հումք է արտադրող հիմնական ճյուղերից մեկի՝ վերամշակման արդյունաբերության համար:

Պտղաբուծության կարեւոր տնտեսական նշանակությունը պայմանավորված է համաշխարհային շուկայում պտուղների պահանջարկի մշտական բարձր մակարդակով: Պտղատու տեսակների մշակությունը շահութաբեր ու եկամտաբեր է Երկիր մոլորակի գրեթե բոլոր տարածաշրջաններում: Արտադրական պտղատու այզու տնկման ներդրումները եւ պտուղների բերքի սպասման 3-5 տարվա մշակության ժամանակում են 1-3 տարվա բերքից ստացվող եկամուտներով, իսկ հետագայում, տասմանյակների ընթացքում, տարեկան շահութաբերության մակարդակը հասնում է 100-300 %-ի: Որոշ փոքր եւ միջին, այսպես կոչված «քանանային երկրների» տնտեսությունները եւ բնակչության բարեկեցությունը գլխավորապես կամ ամբողջովին կախված է մրգերի արտադրությունից:

Բացի տնտեսական նշանակությունից, այգեգործական տնկարկների տարածները մարդկության համար ունեն կարեւոր բնապահպանական, սանհիտարահիգինիկ եւ առողջարար նշանակություն:

Այգիների մեծ զանգվածները շատ բարենպաստ են մարդու առողջության համար, քանի որ դրականորեն են ազդում մթնոլորտի եւ միջավայրի մաքրության վրա, մաքրում են օդը՝ կլանում վնասակար նյութերը եւ փոշին, ավելացնում թթվածինը, մեղմացնում քամիները, խնճավացնում օդը, ստեղծում են ստվեր, զով միջավայր եւ, ի վերջո, բույսի կանաչ զանգվածի, ծաղիկների, պտուղների միջոցով ուրախացնում մարդուն՝ պատճառելով գեղագիտական հաճույք:

Այդ բերկրանքը հատկապես հատկանշական է սիրողական պտղաբուծությունում՝ տնամերձում կամ ամառանցում սեփական այգու տնկման ու ծառերի խնամքով զբաղվողի համար: Այգեգործի հոգեբանական բավականությունն առավել կարեւոր է, եթե անհատական այգու խնամքի հատուցումը բերքով եկամտաբեր է ընտանեկան բյուջեի համար:

Պտղատեսակների ծառերը, վազերն ու թփերն օգտագործում են բնակավայրերի եւ հանգստավայրերի կանաչապատման համար, տնկվում են պուրակային տարածքներում, ճանապարհանգերներին, անտառայգիներում եւ հանդիսանում առողջարար, քամերեկ ու ստվերակող միջավայր: Բազմաթիվ պտղատու տեսակներ ունակ են աճել անբարենպաստ պայմաններում եւ ստեղծել նպաստավոր միկրոմիջավայր այլ բույսերի եւ օրգանիզմների համար: Բացի այդ, պտղատու բույսերն ի զորու են ամրացնել թեր տարածքների, լանջերի հողերը՝ հնարավորություն ստեղծելով պայքարել հողերի օդային եւ հողային քայլքայման (երողիա) ու անապատացման դեմ:

Պտղաբուծության կարգացման պատմությունը Եւ այգեգործական արդիական տեխնոլոգիաների կարգացման հեռանկարները ՀՀ-ում

Պտղաբուծությունը մարդկության հնագույն զբաղմունքներից է: Դեռևս մեր թվարկությունից առաջ 1500-3000 թթ. պտղատուների մշակման մասին տեղեկություններ են տվել Եգիպտացիները, քարելնացիները, ասորիները, ուրարտացիները, չինացիները, հնդկացիները եւ այլ հինավորց քաղաքակրթություններ: Այդ են վկայում 2000-5000 տարի առաջ Եգիպտոսում, Հունաստանում, Իտալիայում, Հայաստանում ստեղծված հուշարձանների վրա քանդակված խնձորենու, նոնենու, խաղողի եւ այլ պտղուների պատկերումները, ինչպես նաև բազմաթիվ սեպագիր արձանագրություններ:

1939-49 թթ. Կարմիր բլուրում կատարված պեղումների ընթացքում Բ. Պիոտրովսկին հայտնաբերել է տարբեր պտղուների (խնձոր, սալոր, ծիրան, խաղող եւ այլն) սերմեր, որոնք ցույց են տալիս, որ Հայաստանում պտղաբուծությամբ զբաղվել են առնվազն ուրարտացիների (Արարատյան քագավորության) ժամանակաշրջանից: Օրինակ՝ ըստ հայոց պատմահայր Մովսես Խորենացու ավանդության՝ հանրածանաչ ասորաց թագուհի Շամիրամի ջանքերով, ի հիշատակ նահատակված Արա արքայի, պտղատու եւ խաղողի այգիներ ոռոգելու նապատակով, Արարատյան դաշտի մի զգալի հատվածում անցկացվել է քարե մեծ ջրանցք: Այն գործում է մինչ օրս եւ ժողովրդի մեջ այդպես էլ կոչվում է՝ «Շամիրամի ջրանցք»: Հայտնի են նաև «Մեմուայի ջրանցք» անվանմամբ, քանզի իրականում հենց Մեմուա արքան է այն կառուցել՝ Արարատյան քագավորության մայրաքաղաք Տուշպան (Վանը) խմելու եւ ոռոգման ջրով ապահովելու նպատակով: Նույնանման ջրանցք է կառուցվել նաև Էրեբունիի շրջակայրում՝ մ.թ.-ից 300 տարի առաջ:

Համաձայն հույն պատմիչների (Ստրաբոն եւ այլք) վկայությունների, Պատմական եւ Միջնադարյան Հայաստանում զարգացած է եղել պտղաբուծությունը, ամենուրեք եղել են ընդարձակ այգիներ եւ

պտղատեսակների բազմազանություն:

Չնայած պտղաբուծության ոլորտի բազմադարյան փորձի առկայությանը, 20-րդ դարի սկզբին (1913 թ.) Ռուսական կայսրության կազմում գտնվող Հայաստանում կար ընդամենը 9 հազար հեկտար խաղողի և 2500 հեկտար պտղատու այգն: Առաջին համաշխարհային պատերազմի և քաղաքացիական կրիվների հետեւանքով պտղաբուծության ոլորտը խիստ անկում ապրեց: 1919 թ. տվյալներով, այգետարածքների կրճատումից հետո երկրում մնացին 5 հազար հեկտար խաղողի և 1500 հա պտղատու այգիներ (հիմնականում՝ ծիրաննենի և դեղճնենի):

1921 թ-ից ի վեր, Խորհրդային Հայաստանի տարածքում պտղաբուծության զարգացումը նոր թափ ստացավ և դուրս գալով Արարատյան դաշտի ու նախալեռնային գոտու սահմաններից՝ ընդգրկեց երկրի գրեթե բոլոր վարչական շրջանները: Այգեգործությամբ սկսեցին զբաղվել նաև որոշ բարձրեռնային գոտիներում (Գեղարքունիքի մարզի՝ Սեւանա լճի առափնյա հարավային գոտին, Կոտայքի մարզի Ապարան-Հրազդանի հատվածները, մասամբ Սյունիք, Լոռու և Շիրակի մարզերի որոշ տարածքներ), որոնք գտնվում են ծովի մակարդակից 2000 մ և ավելի բարձրությունների վրա: Անցյալի ցաքուցրիվ տնկված ծառերի, մանր տնտեսությունների փոխարեն, հիմնվեցին ավելի ծավալուն և կանոնավոր այգիներ: Նոր այգիների տարածքների զգալի աճ արձանագրվեց 1930-ական, 1950-ական և 1970-80-ական թվականներին: 1980-ականների վերջի տվյալներով՝ Հայաստանում պտղատու և խաղողի այգիների տարածությունները համապատասխանաբար կազմել են 54 և 36 հազար հա: Այդ տարիներին պտուղների տարեկան համախառն արտադրանքը տատանվում էր 180 - 280 հազար տոննայի սահմաններում: Խոկ խաղողի արտադրության տարեկան ծավալը հասնում էր 280-320 հազար տոննայի:

Այդ տասնամյակներում կանոնավոր արդյունաբերական այգիների տարածությունների ընդարձակման հետ մեկտեղ, հիմնադրվել են տնկարանային պետական ճեղնարկություններ, ստեղծվել են բազում գիտահետազոտական հաստատություններ և կայաններ, ներդրվել նոր տեխնոլոգիաներ: Որպես այդ ամենի արդյունք՝ հանրապետությունում բարձրացել էր այգիների մշակության մակարդակը և արդյունավետությունը:

Այդ տարիներին Հայաստանի գիտական հիմնարկներում ուսումնասիրվել եւ բացահայտվել են տարբեր պտղատու բույսերի կենսաբանական առանձնահատկությունները, համբավետության հողակլիմայական պայմաններում դրանց աճի ու զարգացման բազ-

մարիվ օրինաչափությունները, ստեղծվել են արդյունավետ նոր բուսաձևեր (սորտեր), մշակվել են այգիների կառավարման մեքենայացման, քիմիացման, նոր ազրոտեխնիկայի կիրառման շատ գործընթացներ, հայտնաբերվել ու կիրառվել են վճասատուների եւ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ:

Անկախությունից հետո Հայաստանում պտղատու այգիների եւ խաղողի տնկարկների տարածությունները զգալիորեն պակասեցին՝ համապատասխանաբար հասնելով 23-24 եւ 9-10 հազար հա-ի:

Պտղահատապտղային տնկարկների տարածքնրի աճ արձանագրվեց 2003-2004 թթ.: Իսկ համաձայն 2018 թ. վիճակագրական տվյալների, պտղատղահատապտղային բույսերի եւ խաղողի տնկարկների տարածքները համապատասխանաբար կազմում են 38 եւ 17 հազ. հա:

Ստորեւ ներկայացվում են Հայաստանում տարբեր պտղատեսակների համախառն բերքի վիճակագրական պաշտոնական տվյալները (armstat.am եւ <https://www.fao.org/faostat/>):

Աղյուսակ 1.

Հայաստանի Հանրապետությունում պտղատեսակների արտադրությունը 2019 թ.	
Պտղատեսակ	Համախառն բերքը, տոննա
Խաղող (տեխնիկական, սեղանի)	217524
Խնձոր	81674
Ծիրան	68113
Դեղձ եւ նեկտարին	62697
Սալոր եւ շլոր	23229
Կեռաս	15970
Տանձ	12464
Ելակ եւ գետնաելակ	10960
Ընկույզ (կեղեւով)	3989
Բալ եւ բալակեռաս	3157
Սերկելի	1566
Թուզ	1234
Հատապտուղներ (մորի, մոշ, հաղարջ, այլ)	1853
Տիսիլ (կեղեւով)	347
Ընդամենը	504.777

Հետեւյալ աղյուսակը պատկերացում է տալիս պտղահատապտղային արտադրանքի համաշխարհային շուկայում Հայաստանի Հանրապետության տեսակարար կշռի մասին:

Աղյուսակ 2.

Պատուղների համաշխարհային արտադրությունը 2015 թ.	Համաշխարհային համախառն բերքը, տոննա
Խաղող՝ ներառյալ թարմ, չամիչի, գինու, կոնյակի	66.197.300
Խնձոր՝ այդ թվում թարմ, սիդրի, կալվարոսի	62.235.650
Տանձ եւ սեկեիիլ	19.744.740
Դեղձ, այդ թվում նեկտարին	17.769.620
Զիթապտուղ՝ ձեթի, պահածոյի	14.791.450
Կիտրոն՝ այդ թվում լայմ, լիմետա	12.477.230
Սալոր, այդ թվում շլոր, շլործիրան, մամուխ, մամիսասալոր	8.931.380
Ելակ եւ գետնաելակ	3.683.940
Ծիրան	3.384.500
Բալ, կեռաս, բալակեռաս	3.000.060
Նուշ (ընկույզակներ)	1.712.940
Ընկույզ (ընկույզակներ)	1.702.550
Շագանակ (ընկույզակներ)	1.161.580
Շողապար (կիվի)	1.173.070
Թուզ	1.022.190
Մորի (ավանդորի) եւ մոշ	929.380
Հաղարշենիներ եւ կոկորչ	874.370
Տիփիլ (տկողին, պնդուկ) (ընկույզակներ)	761.940
Հապալասենիներ, այդ թվում սեւ, կապույտ, կարմիր եւ լոռամրգի	623.780
Պիստակ (ընկույզակներ)	527.410
Այլ տեղական արեւադարձային ընկույզներ	173.124.850
Այլ տեղական մրգեր (լիչի, պիտայա, սապոտա, թութ, հոն, ալոճ, վկեր եւ այլն)	46.261.180

Հայաստանի պտղաբուծության արդի վիճակը

Պտղաբուծությունը Հայաստանի գյուղատնտեսության ավանդական ու եկամտաբեր ճյուղերից է եւ արտադրական կարեւոր նշանակություն ունի զրեքե բոլոր գյուղատնտեսական գոտիներում եւ տարածքներում: Հայաստանի Հանրապետության քնակլիմայական պայմանները բարենպաստ են պտղահատապտղային բուսատեսակների բարձրորակ բերքի արտադրության համար եւ կարող են ապահովել պտուղների արտադրության այնպիսի ծավալ, որը հնարավորություն կտա բավարարել սեփական սպառումը եւ ավելացնել արտահանումը:

Պտղաբուծության զարգացման հեռանկարները

ՀՀ-ի հեռանկարային զարգացման ծրագրերով գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքի եւ բերքատվության նախատեսվող ցուցանիշների համաձայն, մինչեւ 2025 թ. նախատեսվում է պտուղների տարեկան համախառն բերքը հասցնել 540, իսկ խաղողինը՝ 420 հազար տոննայի: Այսպիսի կանխատեսվող ցուցանիշների դեպքում, պտղի մոտ 10 տ/հա միջին բերքատվության պայմաններում, պտղատուների այգետարածքները պետք է ընդարձակել՝ հասցնելով 50 հազար, իսկ խաղողի 17 տ/հա բերքատվության պայմաններում՝ տնկարկների տարածքները հասցնել 25 հազար հա-ի:

Հաշվի առնելով մի շարք պտղատեսակների համար երկրի տարածքի մեծ մասի հողակլիմայական բարենպաստ պայմանները եւ պտուղների սպառման հարածուն պահանջն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում, անհրաժեշտ է հետամուտ լինել պտղաբուծության եւ խաղողագործության զարգացմանը:

Մոտակա տարիներին զարգացման խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է յուրացնել հետեւյալ մոտեցումները:

1. Նպաստել պտղատու այգիների տարածքների ընդարձակմանը, համախառն բերքի ավելացմանը եւ ապահովել այգիների բերքատվության աճը:

2. Հիմնել ցածրած բարձրարդյունավետ, խիտ այգիներ, խթանել թզուկային եւ կիսաթզուկային պատվաստակալների կիրառումը:
4. Արագացնել երիտասարդ այգիների՝ բերքատվության մեջ մտնելու ժամկետը, խրախուսել այգիների ազրոտեխնիկական նոր տեխնոլոգիաների կիրառումը (ոռոգման կարիլային համակարգ, լարասյունային, կարկտապաշտպան եւ այլ համակարգեր), աշխատանքների մեքենայացումը եւ ավտոմատացումը, էկոլոգիապես մաքուր պտղի արտադրությունը:
5. Խրախուսել ինտենսիվ պտղաբուծության զարգացումը: Ուսումնասիրել, փորձարկել եւ հիմնավորել ինտենսիվ այգիների համար պտղատեսակների, բուսածեւերի եւ պատվաստակալների ճիշտ ընտրությունն ըստ մշակության գոտիների:
6. Դարավանդապատել լեռնալանջերի հնարավորինս շատ տարածքներ՝ պտղատու այգիներ եւ անտառայօգիներ հիմնելու համար:
7. Գովազդել, աջակցել եւ խրախուսել մասնավոր փոքր ու տնամերձ այգիներում նոր պտղատեսակների ու բուսածեւերի տնկումը եւ նորովի մշակությունը՝ խտացված, ինտենսիվ համակարգերով:
8. Խրախուսել պտուղների վերամշակման (չիր, հյութ, մուրարա, զինի, օղի, սառեցում եւ այլն) մասնագիտացված պահպանման պահեստների ու սառնարանային տնտեսությունների համակարգերի ընդարձակումն ու հզորացումը:
9. Ապահովել այգեգործական ցուցանիշների խելամիտ վերլուծությունը, որի համար անհրաժեշտ է տնտեսագետների, հաշվապահների, շուկայի մասնագետների, կենսաբանների, պտուղների վերամշակման տեխնոլոգների, այլ ճյուղերի մասնագետների ու գիտնականների մասնագիտական խորհրդատվությունը:
10. Ուսուցանել եւ տարածել պտղաբուծական գիտությունը եւ արդիական փորձը, պատրաստել բարձր որակավորում ունեցող մասնագետներ՝ ազդումներ եւ այգեգործներ:

Պտղատու բույսերի ծագման օջախները, տարածման եւ ընտա- նեցման օրինաչափությունները:

Պտղատու բույսերի անհատական եւ
պատմական վարգացման
օրինաչափությունները:
Բուսաձեւի (սորտ) եւ նույնակի (կրկնակ,
կլոն) հասկացությունների բնորոշումը

Պտղատու բույսերի առաջացման օջախները եւ հետագա վարգացման պատմությունը

Բազմաթիվ վայրերում կատարված պեղումների գտածո-ները, մասնավորապես 2000-5000 տարի առաջ տարբեր վայրերում եւ ժամանակահատվածներում ստեղծված հուշարձանների վրա քանդակված՝ խնձորենու, նունենու, խաղողի եւ այլ պտուղները, ինչ-պես նաև բազմաթիվ սեպագիր արձանագրությունները վկայում են հնագույն ժամանակներում պտղաբուծության եւ խաղողագործու-թյան զարգացածության մասին:

1859 թ. Չարլզ Դարվինը «Տեսակների ծագումը» աշխատության մեջ պնդում էր, որ ինչպես բուսական եւ կենդանական օրգանիզմնե-րը, այնպես էլ պտղատու բույսերը իրենց կառուցվածքով, հատկու-թյուններով նախեւառաջ ծնողներից ստացած ժառանգական հիմքի, պատմական զարգացման եւ դրանց շրջապատող կոնկրետ արտա-քին միջավայրի պայմանների փոխադարձ ներգործության արդյունք են: Յուրաքանչյուր տեսակի կամ ցեղի օրգանիզմների հատկություն-ներն ու հատկանիշները ձեւավորվել են դարերի ընթացքում: Ըստ Դարվինի, բուսական եւ կենդանական օրգանիզմների առաջացումը, դրանց ձեւափոխություններն ու զարգացման այլ օրինաչափություն-ները տեղի են ունենում ժառանգականության փոփոխականության եւ բնական ընտրության հիման վրա:

Հետազոտմ բազմաթիվ գիտնականներ, այդ թվում՝ Զ. Չանդե-րը, Ա. Զենիքը, Լ. Քերբանկը, Ի. Տիմիրյագեևը, Ի. Միջուրինը, Ժ. Դելբա-

րը, Ա.Զայգերը, Ս.Ռամինզը եւ ուրիշներ իրենց ընտրասերումնային (սելեկցիոն) աշխատանքներում կիրառեցին Դարվինի էվոլյուցիոն ուսմունքը եւ որպես արդյունք՝ ստեղծվեցին պտղահատապտղային բույսերի նոր բուսաձեւեր (մշակաձեւեր, սրբեր):

Մշակաբույսերի ծագման եւ չենավորման աշխարհագրական կենտրոնների բացահայտման եւ ուսումնասիրման գործում մեծ դերակատարություն ունի ռուս (սովետական) մեծանուն գիտնական Ն. Վավիլովը: Նրա համաշխարհային գործնական հետազոտությունների շնորհիվ հայտարկվեցին պտղահատապտղային բույսերի մեծանասնության հայրենիքները եւ ծագման կենտրոնները (օջախները):

1926 թվականին Ն. Վավիլովը առաջին անգամ հրապարակեց իր «Ծառատեսակների ծագման կենտրոններ» կապիտալ աշխատությունը: Այնուհետեւ գիտնականը «Բուսաբանական ընտրության աշխարհագրական հիմքերը» աշխատությունում զգալիորեն ընդլայնեց մշակաբույսերի ծագման կենտրոնների նախկին հայեցակարգը:

Վավիլովի աշխատություններում ներկայացվում են աշխարհի բուսատեսակների եւ ճեւերի հարստության աշխարհագրական բաշխման օրինաչափությունները: Վավիլովը առաջին անգամ փորձել է որոշել կարեւորագույն մշակաբույսերի, դրանց շարքում նաև մրգային եւ ընկուզավոր բույսերի տարածման եւ առաջնային ծագման աշխարհագրական տարածքները: Վավիլովը առանձնացրել է նաև երկրորդական ծագման կենտրոնները, որոնք առանձնացել են հիմնական առաջնային կենտրոններից:

Ամփոփելով մոտ 60 երկրների ուսումնասիրությունը, ինչպես նաև ամբողջ Խորհրդային Սփորթյան տարածքը, Վավիլովը 1935-ին ամփոփել է համաշխարհային գյուղատնտեսության համար կարեւորագույն հնագույն կենտրոնները, այսինքն՝ տարբեր բույսերի՝ մշակության մեջ ներգրավվելու կենտրոնները: Այդ առանձնացված կենտրոնները հետեւյալն են.

- I. Չինաստանի լեռնային, Կենտրոնական եւ Արևմտյան երկրամասերի հարեւանությամբ գտնվող տարածքներ: Այս կենտրոնում առանձնացվեցին 136 հիմնական մշակաբույսեր, որոնց կազմում՝ մի շարք պտղատուններ, ինչպիսիք են ցիտրուսային մրգերը:
- II. Հնդկաստանի ծագման կենտրոնը (ներառյալ Ասամը եւ Բիրման)՝ բազմաթիվ արեւադարձային պտղատեսակներով (մանգո, շատ ցիտրուսայիններ՝ կիտրոն, նարինջ, մանդարինի որոշ տեսակներ): Հատկապես Ասամի նահանգն առանձնանում է ցիտրուսային պտղութների հարստությամբ: Այս կենտրոնում հայտնաբերվել է 117 տարբեր մշակաբույս:

III. Հինդու-մալայական ծագման կենտրոն. Աերառում է հիմնականում մալայական կղզիները (Ճավա, Սումատրա, Բորնեօ), Ֆիլիպինները եւ Հոնկոնգը: Այս օջախում կենտրոնացված է պտղատու մշակաբույսերի մեծ բազմազանություն՝ աղամարուզ (քանան), ցիտրուսայիններ, կոկոս, արեկա եւ սալակ արմավենիներ, մշկընկույզ: Ընդամենը՝ 55 մշակաբույսեր:

IV. Կենտրոնական Ասիայի ծագման կենտրոնը՝ Հյուսիսարեւմայան Հնդկաստան, Պակիստան, Աֆղանստան, Տաջիկաստան, Ուզբեկաստան եւ Արևմտյան Տյան-Շանը: Այս կենտրոնը տեսակների քանակով զիջում է առաջին երկու կենտրոններին, բայց շատ կարեւոր եւ յուրահատուկ պտղացեղերի՝ պիտակենու, մասամբ ծիրանենու եւ նշենու հայրենիքն է, նաև առանձնանում է իր տեսակների մեծ բազմազանությամբ: Հայտնաբերված է ընդամենը 42 բուսատեսակ:

V. Փոքր Ասիայի, ամբողջ Անդրկովկասի, Պարսկաստանի (ներկայումս՝ Իրանի) լեռնային եւ Միջերկրական ծովի առափնյա տարածքներն ամբողջությամբ: Այստեղ է խաղողի, տանձի, ծիրենու, կեռասի, սալորի, շլորի, բալակեռասի, նուան, բուզի, ընկույզի, մասամբ ծիրանենու, խնձորենու եւ նուշի ծննդավայրը: Վայրի պտղատու ծառերից կազմված է անտառների մեծամասնությունը, որոնք պահպանվել են մինչ օրս: Կենտրոնում գոյություն ունի ընդհանուր առմամբ 650-ից ավելի տեսակ, իսկ Հայաստանում հատկապես հայտնի են տեղածին խաղողը, ծիրանենին, սալորենին, շլորենին, տանձենին, խնձորենին եւ այլ պտղատեսակներ:

Այս կենտրոնում են ստեղծվել նաև առաջին այզիները, այդ թվում Հայաստանում, եւ կատարելազործվել՝ հասնելով ժամանակակից այգեգործությանը:

VI. Հարշիկական ծագման կենտրոնը՝ Երովայի, Էրիտրեա եւ Սոմալի:

Պտղատու բուսատեսակների թվաքանակը փոքր է: Սրճնուու հայրենիքն է:

VII. Հարավային Մերսիկայի եւ Կենտրոնական Ամերիկայի (ներառում է Անտիլյան կղզիները) կենտրոն, որտեղ կենտրոնացած է Նոր աշխարհի մշակաբույսերի հիմնական բազմազանությունը: Արևադարձային շատ պտղատու բույսերի ծննդավայրն է: Այստեղ է ծնվել կակաոյի մշակույթը՝ շոկոլադի պատրաստումը:

VIII. Հարավային Ամերիկայի կենտրոնը՝ Պերու, Էկվադոր, Բոլիվիա, շատ մշակաբույսերի ծագման օջախ է: Այստեղ հայտնաբերվել են տարբեր պտղատու բույսերի 45 տեսակներ: Լեռնային երկրամասերում պահպանվում են դեռ չուսումնասիրված յուրօրինակ պտղատեսակներ:

IX. Հարավային Ամերիկայի Բրազիլիա-Պարագվայ լեռնային կենտրոնը:

Բրագիլիան հայտնի է որպես վայրի բուսականության օջախ՝ մինչեւ 40.000 տեսակ, սակայն մինչ օրս աշխարհը դրանցից շատ փոքր քանակությամբ մշակաբույսեր է ստեղծել: Գրանցից ամենակարեւորներն են արքայախճնձորը, գետնանուշը, ֆեյխուան, մանիոկը:

Երկրագնդի կարեւորագույն մշակաբույսերի տեսակների բոլոր 9 կենտրոնները խիստ տեղայնացված են մեկուսացված են և իրարից անջատված են անապատներով կամ լեռնաշղթաներով:

Վավիլովի հայտնաբերած օրինաչափություններն ցույց են տալիս, որ մշակաբույսերի ձեւավորման հիմնական նախնիները տարբերվում են ոչ միայն մեծ թվով ձեւերի ու ցեղերի, այլ նաև բույսերի հիմնական գերիշխող հատկությունների առկայությամբ: Գործնական տեսանկյունից ամենահետաքրքիրն այն է, որ մշակաբույսերի բաշխումն անցնում է աշխարհագրական օջախի կենտրոններից դեպի ծայրամասեր, ի հայտ է գալիս մի օրինաչափություն, ըստ որի սկսում են գերակշռել մարդու համար գրավիչ հատկություններով բույսերը:

Մշակաբույսերի համաշխարհային հավաքածուների եւ շտեմարանների կազմման ու բուսաբանական համակարգված ուսումնասիրությունների միջոցով Ն. Վավիլովը քացահայտեց մշակաբույսերի նոր աշխարհն իր ամբողջ քազմագանությամբ, ստեղծեց նոր միտում մշակաբույսերի մասին գիտության մեջ, ստեղծեց բույսերի կիրառական ու արդյունավետ բուժման եւ ընտրասերման տեսական հիմքեր:

Վավիլովի աշխատանքը հիմք հանդիսացավ նաև Հայաստանում պտղատունների ընտրասերման, նոր բուսածեւերի ստեղծման եւ գործնական մշակության համար: Այն հնարավորություն տվեց մի քանի մշակաբույսերի դիմացկուն բուսածեւերով մեր այգիների մշակությունը հասցնել մինչեւ ծովի մակերեսից 2000 մ բարձրության վրա, ընդգրկելով Կոտայքի, Շիրակի, Ապարանի, Հրազդանի եւ Սեւանի ավազանի լեռնային տարածքները:

Պտղատու բույսերի դասակարգումը ենթարկվում է ընդհանուր բուսաբանական դասակարգման օրինաչափություններին, եւ պտղատունները նույնպես պատկանում են որոշակի բուսաբանական կարգամիավորների (տաքսոնների) շարքին՝ դաս – կարգ – ընտանիք (երբեմն ստորաբաժանվում է նաև ենթարնտանիքի) – ցեղ (հազվադեպ՝ նաև ենթացեղ) – տեսակ (բույսին բնորոշող առավել կարեւոր միավորը, որը հնարավոր է ունենա նաև ենթատեսակ) – ձեւ (կամ տարատեսակ). դասակարգման ստորին ու վերջնական միավորը (տաքսոնը): Սովորաբար բույսին բնութագրող կարգամիավորները սկսվում են ընտանիքից: Օրինակ՝

Ընտանիք՝ Վարդազգիներ
Ենթալուսանիք՝ Սալորայիններ
Յեղ՝ Սալորենի
Տեսակ՝ Սալորենի տնային
Ենթատեսակ՝ Սալորենի տնային «Դամասցենա»
Չեւ (կամ Տարատեսակ) Սալորենի «Դամասխ»

Դասակարգման բոլոր միավորները ճշտության համար կրկնվում են լատիներենով՝ չափորոշիչ հանդիսանալով բոլոր ազգային լեզուների համար:

Այդեգործի համար առավել կարեւոր եւ կիրառական նշանակություն ունեցող բուսաբանական միավորները ցեղը, տեսակը եւ ձեւն են: Ցեղը հիմնական տարրերից միավորն է, որը սովորաբար համապատասխանում է մշակաբույս (պտղատեսակ) հասկացությանը: Օրինակ՝ սալորենի, խնձորենի, տանձենի եւ այլն:

Տեսակը, ինչպես նշվեց, հիմնական բուսաբանական տարրերություններն արտահայտող միավորն է: Պարտադիր ունենում է կրկնակի անվանում՝ իր ցեղի՝ մեծատառով եւ հենց այդ տեսակինը՝ փոքրատառով: Օրինակ՝ Սալորենի տնային, Սալորենի շլորենի եւ այլն, Խնձորենի անտառային, Խնձորենի սիրիական եւ այլն, Տանձենի սովորական եւ Տանձենի կովկասյան եւ այլն:

Չեւն առավել կարեւորն է արտադրական մշակության, շուկայական եւ սպառողական տեսանկյուններից եւ այն ունի եւս մեկ կարեւոր մի տարրերից անվանակոչում:

Խոսքն այն ձեւի մասին է, որը մշակության մեջ է գտնվում. այն կոչվում է բուսածեւ (մշակածեւ, սորտ, կուտիվար) եւ սահմանվում է հետեւյալ կերպ.

Բուսածեւ՝ կենսաբանական եւ տնտեսական հասկացություն (կատեգորիա) է, միևնույն ժամանակ՝ արտադրական միջոց եւ միավոր:

Բուսածեւը մշակության, արտադրության, առեւտրի եւ սպառման համար պիտանի բերք առաջացնող, մարդու կողմից ճանաչված կամ ստեղծված մշակովի բույսի ձեւ է, որի մշակությունը որակապես եւ տնտեսապես իրեն արդարացնում է որոշակի բնակլիմայական պայմաններում:

Բուսածեւերի անվանումները տրվում են հետինակի (ընտրասերողի, հայտնաբերողի) կամ տվյալ ազգի, ժողովրդի լեզվային անվանումով, եւ չի բուլատրվում օգտագործել դրա բարգմանությունները, ձեւափոխությունները, աղավաղումները կամ այլ անվանումները: Գրվելով յուրաքանչյուր ազգի լեզվով ու տառերով՝ այն պետք է ու-

Աենա նույն հնչողությունը՝ ինչքանով դա բույլ է տալիս այդ լեզվի հնչյունական համակարգը: Օրինակ՝ խնձորենու ամերիկյան անգլերեն անվանումը՝ «Star Crimson» չի կարելի անվանել «Կլիմսոն» կամ առավել եւս՝ «Դեմիրճյան», այլ միայն՝ «Սթար կրիմսոն»: Իսկ ծիրանենու հայկական բուսաձենի անվանումը՝ «Սարենի», չի կարելի անվանել «Թափարզա» կամ «Յանտառնիյ» եւ այլն: Շիշտ անվանումը պետք է ապահովել նաև այլ լեզուներով գրելու դեպքում՝ «Sateni», «Сатени» եւ այլն:

Պտղատու բույսերի կառուցվածքը, կենսաբանական եւ կենսաքիմիական կենսագործունեության առանձնահատկությունները

Պտղատու եւ հատապտղային բույսերի աճման եւ զարգացման գործընթացը կանոնավորելու եւ ամենամյա բարձր բերք ապահովելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել մշակաբույսերի առանձին օրգանների կառուցվածքը, դերը, նշանակությունը եւ գործունեությունը:

Նյութի հիմնական գիտելիքները կներկայացվեն լաբորատոր-գործնական ուսուցման թեմաներում եւ փորձուսուցման ընթացքում: Սույն դասախոսությունում կներկայացվեն պտղատու բույսերի ընդհանուր կառուցվածքային, կենսաբանական եւ կենսաքիմիական առանձնահատկությունները:

Բոլոր պտղատու բույսերի մարմինը կազմված է երեք հիմնական օրգաններից՝ արմատ, ցողուն եւ տերեւ: Մնացած հավելյալ օրգանները՝ բողբոջը, ծաղկը, պտուղը, բեղիկը, կոճղարմատը, մացառը, վերը նշված հիմնական օրգաններից որեւէ մեկի ձեւափոխության արդյունք են: Պտղատու եւ հատապտղային բույսերի մարմինն իր բոլոր օրգանների ամբողջութամբ բաժանվում է երկու մասի կամ համակարգի՝ վերերկրյա (վերգետնյա) եւ արմատային (ստորգետնյա), որոնց միասնականության շնորհիվ է կազմվում եւ ապրում բույսի ամբողջական մարմինը: Վերգետնյա եւ ստորգետնյա համակարգերի միացման ու տարանջատման տեղը կոչվում է արմատավզիկ, որն արտաքնապես տարբերվում է երկու համակարգերից եւ ճանաչվում առանձին օրգան:

Արմատային համակարգը բույսի հիմքն է, որի վրա հենվում է ամբողջ վերերկրյա մասը: Այն կատարում է մի քանի կարևոր գործունություններ:

- Հողի տարբեր խորության շերտերում խարսխում եւ ամրացնում է ամբողջ բույսը:

- Մագնիսական զգայունության շնորհիվ կողմնորոշում է բույսի ածը Երկրագնդի կենտրոնի հանդեպ ուղղաձիգ ուղղությամբ (գեռմորֆիզմ)` ապահովելով վերերկրյա մասի համաչափ ածը:
- Հողից կլանում է ջուր եւ դրա մեջ լուծված սննդառության տարրեր:
- Այդ ջրային լուծույթը փոխադրում է դեպի բույսերի վերերկրյա մասի օրգաններ եւ ապահովում ամբողջ բույսի հանքային սննդառությունը եւ ջրամատակարարումը:
- Արտազատում է ապարները քայլայող նյութեր՝ դրանցից հասանելի տարրերի անջատման եւ կլանման համար:
- Արտազատում է պաշտպանական նյութեր՝ վճասակար հողաբնակ կենդանիներից (միջատներ, նեմատոդներ եւ այլ որդեր, մկներ, խլորդներ) պաշտպանելու եւ ամբողջ բույսի կյանքն ու առողջությունն ապահովելու նպատակով:
- Արմատային համակարգի տարածման գոտում (ռիզոսֆերա) փոխաներգործության մեջ է մտնում հողաբնակ միջավայրի օրգանիզմների (միկրոօրգանիզմներ, սնկեր, մանրէներ, վիրուսներ) հետ, որոնք կարող են լինել ինչպես օգտակար, այնպես էլ՝ վճասակար: Օգտակար փոխաներգործության շնորհիվ սննդառության՝ արմատների համար անհասանելի տարրերը փոխակերպվում եւ վերածվում են բույսի համար առավել մատչելի ձեւի:
- Ընդունակ է համակեցության (սիմբիոզ) մեջ մտնել որոշ օգտակար միկրոօրգանիզմների հետ եւ ամբողջական բույսն ապահովել լրացուցիչ սննդով եւ պաշտպանությամբ:
- Օրգանական նյութեր է ստանում բույսերի վերերկրյա համակարգից, որոնցով «կառուցում է» ստորգետնյա օրգանների համակարգը:
- Իր հյուսվածքներում կրուտակում է օրգանական նյութերի որոշակի պաշար, որը հետազայում օգտագործվում է պտղատու բույսի կենսագործունեության համար (ըստ տարիների եւ տարվա ժամանակաշրջանների (սեզոնների):

Արմատների յուրաքանչյուր վճասվածք ազդեցություն է ունենում վերերկրյա օրգանների վրա: Վճասված արմատներ ունեցող ծառերի բողոքները լինում են սակավաթիվ, տերեւները՝ մանր ու տձեւ,

վաս են զարգանում շիվերն ու աճող օրգանները, թափվում են նոր կազմակերպված եւ հասունացող պտղիկները: Արմատային համակարգի մեծ վնասվածքների դեպքում չորանում են շիվերի ծայրանաւերը, երբեմն՝ ամբողջ բույսը:

Արմատային համակարգն ունի վերականգնման (ռեգեներացում) ուժեղ հատկություն՝ ինչպես սեղոնային, այնպես էլ տարիքային: Բազմամյա պտղատու բույսերի կյանքում արմատների կարեւորության մասին է խոսում այն փաստը, որ վերգետնյա համակարգի ամբողջական ոչնչացման կամ չորացման ու մահացման դեպքում, արմատային համակարգը կարող է վերականգնել վերգետնյա մասի օրգանները եւ վերակենդանացնել բույսն ամբողջությամբ: Սակայն արմատային համակարգի մահվան դեպքում վերգետնյա օրգանները դատապարտված են չորացման եւ մահվան՝ դրանք արմատային համակարգ վերականգնելու ունակությամբ օժտված չեն:

Արմատային համակարգը բաղկացած է արմատների մի քանի տիպերից՝ գլխավոր եւ կողային արմատներ, հավելյալ արմատներ, փնջարմատներ ու մազարմատներ: Ըստ աճման բնույթի եւ գործառույթների արմատները լինում են կմախքային (փոխադրող) եւ աճակալող:

Գլխավոր արմատը լավ արտահայտված է լինում միայն սերմնարույսերի դեպքում, իսկ կտրոններով կամ անդախսներով բազմացված բույսերի դեպքում այն կարող է արտահայտված լինել շատ բույլ ձեւով: Գլխավոր արմատի վրա հաջորդաբար կազմակերպվում են կողային առաջին, երկրորդ (որոնք կոչվում են նաև կմախքային), երրորդ, չորրորդ եւ այլ կարգերի արմատները, որոնց վրա տեղաբաշխվում են շատ բարակ (մի քանի մմ հաստությամբ) աճակալող արմատները, փնջարմատները եւ մազարմատները: Վերջիններն իրենց անատոմիական կառուցվածքի շնորհիվ հողից կլանում են ջուր ու դրա մեջ լուծված հանքային միացություններ՝ իրականացնելով բույսի հանքային սննդառության հիմնական դերակատարությունը:

Հավելյալ արմատներն առաջանում են վերգետնյա օրգաններից՝ ցողունային մասերի հիմքից եւ մասնակցում են հողից ջուր ու սննդանյութեր վերցնելով գործնքացին: Այս արմատների շնորհիվ բույսից առանձնացած՝ կտրված կամ պոկված վերգետնյա օրգանը կարող է առաջանալ ամբողջական բույս՝ վերականգնել մայր բույսն ամբողջությամբ կամ վերարտադրել դրա դուստը բույսերը՝ նույնակերը (կլոնները), դրանով իսկ աջակցել այդ տեսակի բազմացմանը:

Պտղատու բույսերի արմատները շատ արագ կերպով զարգանում են կողային ուղղությամբ եւ ավելի լայնորեն են տարածվում, քան վե-

թերկրյա մասը: Արմատային համակարգի աճման քնույթը կախված է տեսակից, բուսաձելից, պատվաստակալից, հողակլիմայական պայմաններից ու կիրառվող ազդութեխնիկական միջոցառումներից: Այսպես օրինակ՝ խնձորենու եւ տանձենու սերմնաբույսերի արմատները հասնում են 3-5 մ, սալորենու, ծիրանենու, կեռասենու, դեղձենու սերմնաբույսերի արմատները՝ 1,5 մ, մորենու, հաղարջենու, կրկոշենու արմատները՝ մինչեւ 1 մ, իսկ ելակինը՝ 60 սմ խորության: Սակայն արմատային համակարգի հիմնական ակտիվ զանգվածը զարգանում է հողի վերին շերտերում, կախված տեսակներից, 10 սմ-ից մինչեւ 1, հազվադեպ՝ 1,5 մ խորության վրա:

Պտղատու բույսերի մշակության ժամանակ արմատային համակարգի նորմալ զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել սննդառության, խոնավության (ջրամատակարարման), ջերմության, օդաքափանցելիության (հողի փխրունության), սանիտարական մաքրության անհրաժեշտ պայմաններ, որպեսզի ապահովվի վերգետնյա օրգանների բարենպաստ աճը, զարգացումը, ծառի առողջականությունը եւ պտղաբերությունը:

Պտղատու բույսերի վերգետնյա համակարգը կազմված է քնից, կենտրոնական ուղեկցողից (քնի շարունակությունից), կմախքային եւ աճակալող ճյուղերից:

Քոնքը ցողունի ստորին մասն է՝ արմատավզիկից մինչեւ առաջին կմախքային ճյուղը: Քնի բարձրությունը կախված է բույսերի տեսակներից, սորտերից եւ ձեւավորումից: Քոնքը քնորոշ է պտղատու ծառերին, բայց կան նաևն ծառանման եւ թփային պտղատեսակներ, որոնք չեն ձեւավորում քոնք կամ ունենում են մի քանի քոնք:

Քնի եւ վերգետնյա բոլոր ճյուղավորվող օրգանների միջոցով պտղատու բույսի արմատներից վեր բարձրացող ջուրը եւ հանքային սննդատարերը փոխադրվում են մինչեւ տերեւներ, իսկ վերջինների միջոցով սինթեզված օրգանական նյութերը տեղափոխվում են դեպի արմատային համակարգի օրգաններ եւ ապահովում դրանց սննդառությունը:

Պտղատու բույսերի նորմալ կենսագործունեությունը մեծ չափով պայմանավորված է քնի առողջ վիճակով: Տարբեր պատճառներով (ցրտահարություն, արեւահարություն, վնասատուների, հիվանդությունների ու մեխանիկական ներգործության հետեւանք) ծառերի քնին հարուցված վնասվածքները կարող են էապես կրծատել ծառի կյանքի տեսողությունը:

Ծառերի քնի անմիջական շարունակությունը դեպի վեր կոչվում է ցողունի կենտրոնական ուղեկցող: Ուղեկցողից սկիզբ առնող ճյուղե-

ըստ կոչվում են առաջին կարգի կմախքային ճյուղեր, որոնց վրա հաջորդաբար կազմակերպվում են երկրորդ, երրորդ եւ այլ կարգերի ճյուղերը: Վերջիններս կրում են ծառի ամենամյա շիվերն ու պտղաբերությունն ապահովող տարբեր տիպի աճակալող օրգաններ:

Բնից վերեւ գտնվող բոլոր օրգանների ամբողջությունը՝ ուղեկցողը, իր բոլոր կարգերի կմախքային ճյուղերով, ընձյուղներով, տերեւներով եւ պտուղներով, կոչվում է «սաղարթ» (որոշ հրապարակումներում, սխալ թարգմանությամբ՝ «պսակ»):

Ընձյուղը ընթացիկ տարում առաջացած աճն է, որը մինչև բուսածի (վեգետացիա) ավարտը պատված է լինում տերեւներով եւ կոչվում է «շիվ», «միամյա աճ» կամ «տարեկան աճ», իսկ տերեւաթափից հետո այն աճվանվում է «ճյուղ»:

Ճյուղերն ըստ տարիքի լինում են միամյա, երկամյա եւ բազմամյա: Վերջինները՝ կախված աճման կետից, կարող են կոչվել «կմախքային» ու «կիսակմախքային»:

Ճյուղերի վրա առաջացած աճակալող այն ճյուղերը, որոնց վրա կազմակերպվում են ծաղիկներ եւ պտուղներ, կոչվում են պտղաբերող ճյուղեր:

Պտղատու եւ հատապտղային բույսերի շիվերի եւ ճյուղերի վրա առաջանում են բողբոջներ, որոնք լինում են երկու տիպի՝ բուսաճային (վեգետատիվ, աճակալող, տերեւարողբոջներ) եւ պտղաբերող (գեներատիվ, ծաղկարողբոջներ, պտղաբողբոջներ): Բուսաճային բողբոջներից առաջանում են միայն տեեւներ: Պտղաբերող բողբոջները կարող են լինել պարզ եւ բարդ: Պարզ բողբոջներից առաջանում է մեկական ծաղիկ (հատուկ է կորիզավորներին, կարմիր հաղարջենուն): Բարդ պտղաբերող բողբոջներից բացի ծաղիկներից առաջանում են նաև տերեւներ եւ շիվեր (քնորոշ է հնդավորներին, սեւ հաղարջենուն, թզենուն եւ այլ պտղատեսակների): Պտղաբերող բողբոջները հիմնադրվում են ամռան ընթացքում՝ սկսած ամառային արեւադարձի ժամանակաշրջանից (հունիսի 15-25-ից) եւ շարունակում են զարգանալ մինչև հյութաշարժության ավարտը՝ միշեւ խոր աշուն: Ծաղիկների զարգացումն ընդհատվում է ձմռան ցրտերից եւ շարունակվում վաղ գարնան՝ ավարտվելով ծաղկումով:

Ճյուղերի ծայրամասում կազմակերպված բողբոջները կոչվում են ծայրամասային, իսկ տերեւների ծոցում կազմակերպվածները՝ կողոյային: Կողային բողբոջների մի մասը կարող են մնալ «քնած» վիճակում եւ «արթնանալ» միայն ծառերի ցրտահարությունների, ճյուղերի խոր էտի կամ մեխանիկական վնասվածքների դեպքում: Այդպիսի բողբոջներ առաջանում են ինչպես ցողունի, այնպես էլ ար-

մատների վրա: Վերջիններս կարեւոր նշանակություն ունեն պտղատու բույսերի՝ մացառներով, կտրոններով եւ անդալիսներով բազմացման ժամանակ:

Պտղատու եւ հատապտղային բույսերի մյուս կարեւոր օրգանը տերեւն է, որը լույսի էներգիայի ազդեցությունից, ածխաթթու զազից, ջրից, հանքային աղերի միացություններից ստեղծում է օրգանական նյութեր, որոնք ապահովում են աճն ու պտղաբերությունը:

Բերքի քանակը եւ որակը կախված է տերեւային ապարատի եւ արմատային համակարգի նորմալ գործունեությունից: Այդ նպատակով բուսածի ամբողջ լնոթացքում պտղատու եւ հատապտղային բույսերի տերեւնները պետք է պահպանել ամբողջական եւ նորմալ վիճակում, որը հնարավոր է սննդառության եւ մշակության համապատասխան պայմաններում:

Պտղահատապտղային բույսերի բուսաճի եւ հանգստի շրջանները, զարգացման աճափուլերը

Պտղատու բույսերը, լինելով բազմամյա, կյանքի ընթացքում յուրաքանչյուր տարի անցնում են **զարգացման բոլորաշրջան** (շրջանադարձ, շրջանապտույտ, շրջափուլ, «ցիկլ»՝ աճափուլերի օրինաչափ հերթագայությամբ եւ տեսողությամբ: **Աճափուլ** (ֆենոլոգիական փուլ, ֆենոփուլ) բույսի աճեցողության եւ զարգացման որոշակի կառուցվածքային, ֆիզիոլոգիական եւ կենսաքիմիական վիճակն է: Աճափուլերը տեսանելիորեն տարբերվում են միմյանցից: Տարվա ամբողջ բոլորաշրջանը բաժանվում է երկու հիմնական հատվածների՝ բուսաճի եւ հանգստի շրջանների:

Բուսաճի շրջանը (բուսաճ, վեգետացիա, լատիներեն՝ vegetatio - աշխուժություն, աճ, աճեցողություն, բուսականություն՝)՝ տարվա ընթացքում բույսերի ակտիվ աճի եւ զարգացման շրջանն է: Բուսաճի շրջանն իրենից ներկայացնում է տեսանելի փուլերի (աճափուլեր, ֆենոփուլեր) հաջորդական փոխարինման երեսուր:



Նկար 1. Ծիրանենու բողբոջների ուռչելը



Նկար 2. Ծիրանենու բողբոջների բացվելը

Բուսաճի շրջանը բազմամյա բույսի աճի եւ զարգացման համար պահանջվող ժամանակահատվածում բույսի կյանքի ակտիվ ընթացքն է հաջորդական փուլերով՝

- բողբոջների ուշելը (սկզբական փուլ, որը լավ տեսանելի չէ, միայն հեռվից նկատվում է ծառի գունափոխություն),
- բողբոջների թեփուկների առանձնացումը (լավ տեսանելի է եւ լնդգծում է բուսաճի շրջանի մեկնարկը),
- բողբոջների բացվելը (թեփուկների առանձնացումը՝ հաջորդականորեն զարգանում եւ երեսում են բողբոջի մեջ ձեւավորված ծաղկի մասերը՝ բաժակաքերթիկներն ու պսակաքերթիկները, իսկ տերեւաբողբոջներից՝ ընձյուղի զագարը՝ կանաչ կոնի տեսքով),
- շիվերի աճը (ընձյուղների երկարում եւ զարգացում՝ հանգույցների, տերեւածոցների ու տերեւների աճ ու նոր բողբոջների ձեւավորում),
- ծաղկումը (բողբոջի մեջ ձեւավորված ծաղկի մասերի՝ վարսանդի եւ առէջների հաջորդական ձեւով երեւալը),
- ծաղկաբափը, (պսակաքերթիկների, առէջների, վարսանդների, նաև՝ ամբողջությամբ բողբոջների ծաղիկների որոշակի թվաքանակի չորանալն ու թափվելը),
- պտղիկների ձեւավորումը (քեղմնավորված վարսանդների աճը եւ ուշումը),
- պտղուղների աճը եւ պտղալիցի շրջանը,
- շիվերի աճի ավարտը (ընձյուղների զագաբնային բողբոջի ձեւավորումը եւ երկարությամբ աճի դադարումը, նոր հանգույցներ եւ տերեւներ չեն առաջանում),
- շիվերի աճման նոր ալիքը (որոշ պտղատեսակների՝ ընթացիկ տարվա շիվերի վիա նոր ձեւավորված բողբոջների արթնացում եւ նոր ընձյուղների աճ),
- պտղի հասունացումը՝ առավել մեծ շափերի եւ ձեւի հասնելը, գունափոխումը (նաև պտղի մեջ ձեւավորվող սերմի հասունացումը),
- պտղուղների թափվելը բույսից (պետք է կանխվի բերքահավաքով)
- բուսաճի շրջանի ավարտական փուլերն են՝ տերեւների գունափոխումը, չորացումը եւ տերեւաբափը:



Նկար 3. Ծիրանենու ծաղկումը



Նկար 4. Պտուղների աճ եւ պտղալից



Նկար 5. Պտուղների հասունացում

Տարբեր պտղատեսակների աճափուկերի հաջորդականությունը կարող է տարբերվել ներկայացված ընդհանրական հերթագայությունից, որոնց մանրամասները, ինչպես նաև մի շարք ենթափուլերի ուսումնասիրությունը ներկայացվում են գործնական դասերի եւ փորձուսուցման ընթացքում:

Տարբեր պտղատեսակների բուսաճի բոլորաշրջանի ամբողջական տեսողությունը, ինչպես նաև առանձին աճափուկերի եւ դրանց ենթափուլերի ժամանակահատվածները լինում են տարբեր եւ կախված են աճման (աճեցնելու) տեղանքի աշխարհագրական լայնությունից, ծովի մակարդակի բարձրությունից, կլիմայական մի շարք պայմաններից, տարվա եղանակից եւ միջավայրի այլ գործոններից, ինչպես նաև խմանքի աշխատանքների համակարգից (հատկապես էտի, զրման, պարարտացման, բուժումների, խթանիչների կիրառման գործողություններից):

Բնական երեւույթների սեզոնային զարգացման համար մեծ նշանակություն ունի օդի միջին ջերմաստիճանը: Մինչեւ բույսերի համար անհրաժեշտ ջերմաստիճանների բավարար չափանիշի կայունանալը բույսերը մնում են հանգստի շրջանի փուլում: Բուսաճի շրջանի մեկնարկը տեղի է ունենում գարնան՝ պայմանավորված դրական (կախված պտղատեսակից՝ $+5^{\circ}\text{C}$ -ից $+12^{\circ}\text{C}$ սահմանում) միջին օրական կայուն ջերմաստիճանի գերազանցման ժամանակահատվածով (10-15 օր): Սակայն յուրաքանչյուր պտղատեսակն ունի բուսաճի մեկնարկային ջեր-

մաստիճանային իր սանդղակը եւ պայմանները: Օրինակ՝ Արարատյան հարթավայրում բոլոր պտղատու տեսակների համար բուսածի մեկնարկի համար բավարար պայմաններ են ստեղծվում ամենառու ապրիլի 16-ին, բայց սովորաբար երեսույթը տեղի է ունենում ավելի վաղ գարնանը՝ նոյեմբերի վերջին տասնօրյակին: Վաղ գարնան շերմաստիճանային աճը հաճախ ձգձգվում է, եւ երբեմն տեղի է ունենում ցուրտ եղանակների վերադարձ, որը հանգեցնում է բույսերի նուրբ օրգանների՝ ծաղիկների, պտղիկների ցրտահարության եւ բերքի կորստի:

Այգեգործությունը խիստ կախված է գարնան շերմաստիճանի տատանումներից, հատկապես՝ ետադարձ ցրտահարումներից:



Նկար 6. Բուսածի շրջան

Բուսածի ընթացքում բույսերի վրա ազդող կարեւոր գործոն է դրական շերմաստիճանների տարեկան ընդհանուր գումարը:

Տարբեր պտղատու բույսերի զարգացման աճափուկերն առաջ են զալիս տարբեր տարիքում եւ որոշակի հաջորդականությամբ ու ժամկետներում:

Բոլոր հաջորդական աճափուկերը փոխշաղկապված են եւ տեղի են ունենում որոշակի ժամանակային պարբերականությամբ: Օրինակ՝ բուսածի գարնանային մեկնարկի ժամկետով կանխատեսվում են տվյալ տարվա բուսածի շրջանի հաջորդական աճափուկերի ժամկետները: Այսպես՝ իմանալով բուսածի սկիզբը, հնարավոր է բավկան ճշտությամբ որոշել ծաղկման շրջանի ամսաթիվը, եւ կարող ենք



Նկար 7.Հանգստի շրջան

մոտավոր ճշտությամբ կանխատեսել, թե երբ են տեղի ունենալու հաջորդական աճափուկերը՝ ընդուած մինչեւ բերքահավաքի ժամկետները:

Պարզ է դառնում, թե ինչքան կարեւոր է այգեգործների համար իմանալ բուսածի սկզբից ընթացող աճափուկերի հաջորդականությունը, տեսողությունը եւ ժամկետները՝ համապատասխան գյուղատնտեսական աշխատանքների նախատեսման եւ կատարման առումով: Հատուկ մշակված բանաձեւերով եւ հավասարումներով կարելի է հաշվարկել բերքահավաքի ճշգրիտ ժամկետները եւ նախապատրաստել բերքի հավաքի, տեղափոխման, պահեստավորման, իրացման եւ այլ գործերի համար պահանջվող աշխատումը, նյութական միջոցները, փոխադրամիջոցները, բեռնարկղները, սարքերը,

գործիքները եւ անհրաժեշտ այլ պարագաները:

Բույսի հանգստի շրջանը բնութագրվում է բույսի կյանքի անփոփոխ, անշարժ վիճակով՝ առանց տեսանելի փոփոխությունների, որը տեղի է ունենում տերեւաթափից հետո՝ մինչեւ նոր ակտիվ շրջան:

Ընդհանուր առմամբ, բույսի հանգստի շրջանը սովորաբար տեսում է նոյեմբերի վերջից մինչեւ մարտի երկրորդ կեսը: Այս շրջանը պայմանականորեն բաժանվում է երեք հաջորդական ենթաշրջանի՝ նախնական, խոր (օրգանական) եւ պարտադրական (հարկադրական, ստիպոդական) հանգիստ:

Առաջին ենթաշրջանի՝ **նախնական հանգստի** ընթացքն ավարտվում է դեկտեմբերի 20-ին՝ ձմեռային արեւադարձի օրերին: Այս փուլում բույսերը կատարում են վերջնական տերեւաթափ եւ նախապատրաստվում են խոր հանգստի:

Երկրորդ ենթաշրջանը՝ **խոր (օրգանական) հանգիստը** տեսում է մինչեւ հունվարի վերջ-փետրվար ամսվա կեսը: Այս փուլում բույսերը գտնվում են խոր հանգստի մեջ եւ դրանց անհնարին է ակտիվացնել (արթնացնել) նոյնիսկ ամենաբարենպաստ պայմաններում:

Երրորդ ենթաշրջանը՝ **հարկադրական հանգիստը** սկսվում է ցերեկային ժամերի երկարացման հետ, երբ զգալիորեն ավելանում է

արեգակնային ճառագայթների ինտենսիվությունը եւ տաքանում է միջավայրը: Այս փուլում բույսերը պատրաստ են դուրս գալ խոր հանգստից եւ «արթնանալ», սակայն դրանց կանգնեցնում է դրական զերմաստիճանների անբավարար մակարդակը: Պտղատեսակներն արթնանում եւ սկսում են բուսաճի նոր բոլորաշրջան՝ որոշակի կայուն զերմաստիճանի պայմաններում: Ընդ որում՝ ինչքան հարավային եւ զերմասեր է պտղատեսակը, այնքան բարձր զերմաստիճանի առկայություն է պահանջվում:

Պտղահատապտղային բույսերի պտղաբերման օրինաչափությունները, սկզբնավորման արագացման եղանակները: Պտղաբերման պարբերականությունը եւ դրա մեղմացման ուղիները

Պտղատու բույսերի աճի ու զարգացման օրինաչափություններն ընթանում են բույսի ամբողջ կյանքի ընթացքում: Սակայն կյանքի ամբողջ ընթացքում չէ, որ պտղատու բույսերը պտղաբերում են: Պտղաբերման ժամանակաշրջանի տեսողությունը տարբեր ծառատեսակների համար տարբեր է. օրինակ խնձորենու, տանձենու համար աճի ուժեղ շրջանը առաջին 12-15 տարիներին է, իսկ պտղաբերման շրջանը սկզբում է 5-8 տարեկանից եւ տեսում է 40-50 տարի, իսկ ծիրանենու համար՝ համապատասխանաբար 6-8, 3-4 եւ 30-40 տարի: Հատապտղային թփերի համար այդ չափանիշները լինում են համապատասխանաբար 7-8, 1-2 եւ 12-15 տարի:

Մի քանի պտղատեսակների պտղաբերման սկզբնավորման տարիքի օրինակներ.

Աղյուսակ 1.

Պտղատեսակը եւ աճեցման ձեւը	Պտղաբերության սկզբնավորման մեկնարկային տարիքը
Ծիրանենի	3-5
Ծիրանենի ցածրած	2-3
Դեղձենի	2-4
Սալորենի	3-6
Կեռասենի	4-7
Կեռասենի ցածրած	2-3
Բալենի	2-4
Խնձորենի	4-8
Խնձորենի ցածրած	2-3

Տանձենի	4-6
Տանձենի ցածրած	2-4
Սերկեւիլենի	2-4
Նոնենի	2-3
Թպենի	1-2
Ժորենի (Խուրմա)	3-5
Ընկուզենի	4-6
Ընկուզենի ցածրած	3-4
Հատապտղայիններ	1-2
Ելակենի	1

Այգեգործի խնդիրն է՝ նպաստել պտղատու բույսերի, հատկապես ծառերի լավ աճին ու զարգացմանը՝ ելնելով մշակվող տեսակի ու բուսածենի (սորտի) կենսաբանական առանձնահատկություններից, հողակլիմայական պայմաններից եւ բույսի տարիքից:

Առաջին տարիներին, եթե սկզբնավորվում է պտղատու բույսի պտղաբերությունը, այն բնութագրվում է նաեւ ուժեղ աճով, որն այդ ժամանակահատվածում հասնում է առավելագույնի:

Միաժամանակ սկսվում է պտղաբերող օրգանների առաջացումը եւ հետզիետե դրանց թվաքանակն ու կենսազանգվածի ծավալը բույսի մարմնի վրա ավելանում են՝ հասնելով առավելագույն չափի: Աստիճանաբար ավելանում են աճակալող եւ պտղաբերող ճյուղերի թիվը, բարձրանում է բույսի բերքատվությունը: Այդ գործընթացներին զուգընթաց նկատվում է նաեւ աճի ընթացքի արագության աստիճանական դասղաղում, շիվերի միջանգուցային տարածությունները կրծատվում են պտղաբերող օրգաններով, բուսաճն սկսվում եւ ավարտվում է ժամանակին:

Պտղաբերության շրջանում լավ ազրոտեխնիկայի կիրառման դեպքում դրսեւորվում են ծառի բուսածենային (սորտային) ամբողջ հնարավորությունները եւ առավելագույն բերքատվությունը: Իսկ աճը զգալիորեն դանդաղում է, համարյա կանգ է առնում, միամյա շիվերն ու պտղաբերող աճերը շատ կարծ ու նվազ են լինում, ճյուղերի ստորին մասերը սկսում են մերկանալ եւ առաջացնել նոր աճեր, հիմնականում՝ անպտուղ հոռաշվեր:

Պտույները նախորդ տարիների համեմատությամբ փոքրանում են՝ լինում են միջակ մեծության եւ ոչ բարձրորակ:

Ազրոտեխնիկայի խնդիրն է ամեն տարի կատարել՝ միջարային տարածությունների հողի վար, փխրեցումներ, մերձբնային տարածությունների մշակություն, բույսի տարիքին եւ բերքատվությանը համարժեք պարարտացում, սնուցում, ոռոգում, կանոնավոր էտ եւ բույլ

Երիտասարդացում, պայքար վնասատուների եւ հիվանդությունների դեմ:

Այնուհետեւ, երբ պտղաբերության եւ չորացման շրջանում պակասում են պտղաբերող ճյուղերը, նորերը քիչ են առաջանում, ուժեղանում է չորացման (մահացման) գործընթացը, սաղարթի ստորին 1/3 մասը մերկանում է, փոքրանում է տերեւային զանգվածի մակերեսը, ընկնում է պտուղների որակը, բույսի ընդհանուր դիմացկունությունը, հատկապես՝ ցրտադիմացկունությունը՝ այգեգործի խնդիրն է էտի (կարճացում եւ նորացում) միջոցով կարգավորել աճի ու նահացման գործընթացների հարաբերակցությունը:

Այգեգործին անհրաժեշտ է իմանալ, որ հնդավոր պտղատեսակների մշակության ընթացքում (Ա.Հ.) նկատվում է **պտղաբերման պարբերականության երեսույթ**՝ բարձր բերքատվության տարիներին հաջորդում են ցածր բերքատվության, երբեմն էլ առանց բերքի, անպտուղ տարիներ: Երեսույթի բացատրությունն այն է, որ առատ բերքի տարիներին ծառը, շատ բեռնված լինելով պտուղներով, ուժասպառ է լինում եւ չի կարողանում բավարար բվարանակի պտղաբողոքներ հիմնել, իսկ հաջորդ տարվա համար չի հասցնում կուտակել սննդանյութերի պաշար՝ բավարար բերք ապահովելու համար:

Այգեգործի խնդիրն է՝ առատ բերքի տարվա ընթացքում բարելավել բույսի աճեցնողության պայմանները: Նախեւառաջ սաղարթի ներսում ավելացնել լուսավորության հնարավորությունները՝ նուրացնելով կիսակմախքային ճյուղերի մի մասը, կարճացնելով դրանց ծայրեր՝ նոր կողային ճյուղեր առաջացնելու եւ պտղաբերող օրգաններ ստեղծելու համար: Բարձր եւ կայուն բերք ստանալու համար ցանկալի է կատարել ծաղիկների, պտղիկների եւ նույնիսկ պտղաբերող ճյուղիկների քանակի նվազեցում՝ կարգավորելով մինչեւ սպասվող բերքի բարձր, բայց նորմալ չափանիշի ապահովումը: Իսկ բերքահավաքից հետո՝ աշնանը վարել հողը պարարտացումով, գարնանը եւ ամռանը մի քանի անգամ փխրեցնել, տալ սննդումներ եւ բավարար ոռոգում, չափավոր եւ ճիշտ պայքարարել հիվանդությունների եւ վնասատուների դեմ:

Պուլատու բույսերի անհատական զարգացման օրինաչափությունները

Բույսերի անհատական զարգացման ուսմունքն ունի կարևոր գործնական եւ կենսաբանական նշանակություն: Գիտնականները վաղուց են ուսումնասիրում պտղատու բույսերի կյանքի ընթացքի եւ զարգացման փուլերի օրինաչափությունները:

Պտղահատապտղային բույսի անհատական զարգացումը, որը կոչվում է **օնտոգենեզ**՝ («անհատի զարգացում»), սերմնաբույսի, յուրաքանչյուր անհայտ առանձնյակի (սերմնաբույսի) ողջ կյանքի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունների՝ **աճափուկերի** (**ֆենփուկերի**) հաջորդականությունն է՝ սաղմագոյացումից մինչեւ մահ:

Պտղատու բույսի խնամքի գործողությունները ճիշտ կազմակերպելու եւ կատարելու համար այգեգործին անհրաժեշտ է ճանաչել եւ տարբերել մշակվող բույսի օնտոգենեզի հաջորդական աճափուկերը, դրանց հերթագայությունը, փուլերի սկզբնավորման, մեկնարկի, աճի, զարգացման եւ ավարտի պայմաններն ու օրինաչափությունները, նաև ժամանակահատվածները՝ տարվա սեզոնները եւ տեսողությունը՝ տարիների ընթացքում:

Բուսական տեսակի, ինչպես նաև ցեղի ու տեսակի, որպես բուսաբանական կարգերի, զարգացման օրինաչափությունները կոչվում են **ֆիլոգենեզ** («ցեղի զարգացում»): Այն այդ տեսակի կամ ցեղի ծագման, առաջացման, սկզբնավորման, ձեւավորման, այլ տեսակներից առանձնացման եւ մինչեւ զարգացման ներկա վիճակին հասնելու փոփոխությունների շարքն է: Որոշակի իմաստով ֆիլոգենեզը օնտոգենեզի օրինաչափությունների կարճ կրկնությունն է:

Փաստորեն անհատ առանձնյակի (սերմնաբույսի) անհատական զարգացումը պայմանավորված է տվյալ տեսակի կամ ցեղի պատմական զարգացումով, անցած ուղիով:

Դեռ 19-րդ դարի ուսումնասիրություններում մի շարք գիտնականներ առանձնացրել են պտղատու տեսակների սերմնաբույսերի անհատական զարգացման ընթացքում տեղի ունեցող կենսաբանական եւ ձեւաբանական որակական փոփոխությունների հետևյալ 4 շր-

Չանճերը՝

1. սաղմնային կամ սերմնագոյացման շրջան,
2. պատանեկան կամ երիտասարդական շրջան,
3. պտղաբերության կամ վերարտադրման շրջան,
4. ծերացման եւ մահացման շրջան:

Յուրաքանչյուր շրջանում տեղի են ունենում զարգացման մի քանի փուլեր, որոնք տարբերվում են ըստ բուսատեսակների եւ ցեղերի:

Առանձին շրջանների ընթացքում տեղի են ունենում հետեւյալ զարգացումները:

1. Սաղմնային կամ սերմնագոյացման շրջանը սկսվում է մայր բույսի ծաղկի վարսանդում բեղմնավորումից առաջացած սաղմից, դրա շուրջը ձեւավորված սերմից եւ շարունակվում մինչեւ սերմնաբույսի ծլումով զույգ շաքիլատերեների երեւալը: Պտղատեսակների սերմի ձեւավորումը ընթանում է մայրական պտղի մեջ, որոշակի փուլում անջատվելով պտղից՝ բարենպաստ միջավայրում սնվում է նախ իր մեջ կուտակված սննդանյութերով (էնդոսպերմով), որից հետո շաքիլատերեների պաշարանյութերով, իսկ այնուհետև՝ շաքիլատերեների եւ տերենների ֆուտոսինթեզի արգասիքներով:

Այս շրջանում պտղատու բույսը շատ զգայուն է արտաքին միջավայրի նկատմամբ եւ ճկուն է փոփոխությունների առումով:

2. Պատանեկան կամ երիտասարդական շրջանը սկսվում է զույգ շաքիլատերեններից հետո աճող իսկական տերենների երեւալով եւ շարունակվում մինչեւ ծառի սաղարքի աճն ու բարար ծափալի հասնելը, երբ սկզբնավորվում են ծաղկաբողքները եւ տեղի է ունենում ծաղկում ու առաջին պտուղների գոյացումը, որով մեկնարկում է պտղաբերությունը եւ սկսվում բերքատվության փուլը՝ մինչեւ կայուն բերքատվությունը, որը ստվարաբար ձեւավորվում է 3-5 տարիների ընթացքում:

Բայց տարբեր պտղատեսակների դեպքում այս շրջանը տարբեր տեսողություն ունի: Օրինակ՝ ընկուգենու դեպքում այն տեսում է 15-20, խմձորենու եւ տաճանենու դեպքում՝ 10-15, ծիրամենու, սալորենու, կեռասենու դեպքում՝ 7-10, դեղձենու, բալենու, տխլենու դեպքում՝ 3-4, հաղարջենու, կոկոռշենու, մորենու, մոշենու դեպքում՝ 2-3, ելակենու դեպքում՝ 1-2 տարի:

Այս շրջանում օրգանիզմի ժառանգական հատկանիշները դեռևս

անկայուն են, արտաքին միջավայրի պայմանների նկատմամբ՝ զգայուն:

Այս շրջանը բնորոշվում է ուժեղ բուսաճով (վեգետատիվ աճ): Ազդրմիջոցառումների ներգործությամբ հնարավոր է ուժեղացնել կամ բուլացնել բույսի ցանկալի կամ անցանկալի հատկությունները: Բույսի տարբեր օրգանները դրսեւորում են իրենց որակական հատկանիշները եւ գտնվում են զարգացման տարբեր մակարդակներում:

3. Պտղաբերման կամ վերարտադրողական շրջանը սկսվում է սերմնարույսերի 3-5 տարեկանից, երբ ծառերը սկսել են պտղաբերել, առաջացրել են բերքի աճողական կայունություն, իսկ սաղարթի չափերը հասնում են տեսակին ու տվյալ բուսածեսին (սորտին) բնորոշ չափերի: Բույսը մտնում է լիարժեք պտղաբերության փուլի մեջ եւ բերքատվությունը հասնում է առավելագույնի:

Լավագույն ազրոտեխնիկայի կիրառման պայմաններում կայունանում են տեսակային ու բուսածեսային հատկանիշների առանձնահատկությունները՝ սաղարթի ծեւը, ճյուղերի ճյուղավորման եւ դասավորման բնույթը, տերեւաթիթեղների մեծությունը, ծեւն ու եղբերի կտրտվածությունը, պտղի ծեւը, մեծությունը, գույնը, երանգը, համը, բույրը եւ այլն:

Դրսեւորվում են ծառերի ժառանգական բոլոր կենսաբանական առանձնահատկությունները՝ ցրտադիմացկունությունը, երաշտադիմացկունությունը, հողի հանդեպ պահանջկոտությունը, եւ դրանք դառնում են առավել կայուն: Այս շրջանում պտղաբերության փուլը ամենատեսականն է՝ ընկուզավորներինը՝ 30-80 տարի, հնդավորներինը՝ 25-40, կորիզավորներինը՝ 15-30, հատապտղայիններինը՝ 2-10 տարի: Այս շրջանի վերջում սաղարթի ստորին մասի ճյուղավորությունը սկսում է նորանալ, նոր շիվեր քիչ են առաջանում, սկսում է նվազել բերքատվությունը՝ բույսն աստիճանաբար անցնում է չորացման-մահացման շրջան:

4. Ծերացման-մահացման շրջան՝ սկսվում է սաղարթի «մերկացումով»՝ կմախքային ճյուղերի վրա նոր շիվեր գրեթե չեն առաջանում, ճյուղերի ծայրամասերը չորանում են, բերքատվությունը դգալիորեն նվազում է (երբեմն շատ արագորեն) եւ բույսը դադարում է բերք տալ: Բերքի որակն էլ խիստ ընկնում է՝ պտուղները մանրանում են, դառնում անորակ եւ անհամ: Բույսի չորացումը զանգվածային բնույթ է ունենում եւ նոր շիվերի աճը գնալով պակասում է, եւ ի վերջո ծառը չորանում է:

Սակայն այս շրջանը կարող է երկար շարունակվել՝ նույնիսկ մի քանի տասնյակ տարի: Գործնականում այս շրջանը կարեւոր նշանակություն չունի՝ այգեգործները որոշ տարրերակներում կարողանում են երկարաձգել պտղաբերությունը՝ երիտասարդացնող ճիշտ էտի եւ հատուկ խնամքի միջոցով, սակայն դեպքերի գերակշռող մեծամասնությունում այդպիսի երիտասարդացումը տնտեսապես իրեն չի արդարացնում, եւ այգեգործները սովորաբար գերադասում են արմատախիլ անել այդ բույսերը եւ նոր այգի տնկել:

Այզեգործին անհրաժեշտ է գիտենալ, որ անհատական զարգացման հասկացությունը եւ զարգացման շրջանների տեսությունը կիրառելի են միայն սերմնաբույսերի համար՝ այն անհատ առանձնյակների, որոնք առաջացել են սերմից: Առանձնյակները կարող են առաջանալ նաև բազմացման բուսաճային (վեգետատիվ) եղանակով, որոնց մասին խոսք կիմնի:

Պտղաբուծության մեջ սերմնաբույսերն օգտագործվում են պատվաստակալներ ստանալու եւ ընտրասերման միջոցով՝ նոր խառնածիններ (հիբրիդներ) ստանալու եւ արտադրական նպատակներով որոշ պտղատեսակների ու սորտերի (ընկույզավորներ, հատապտղայիններ եւ այլն) բազմացման համար, որոնք սերմերով բազմացնելու դեպքում պահմանում են ժառանգականությունը եւ բուսաճի առանձնահատկությունները:

Բուսաձեւ (սորտ) հասկացությունը պետք չէ շփոթել նույնակի (կլոնի, կրկնակի) հետ, թեև պտղատեսակների բուսաձեւերի գերակշռող մեծամասնությունը նույնակներ են:

Բուսաճային (վեգետատիվ) ճանապարհով առաջացող բույսերը առանձնյակներ են, բայց չեն կարող անհատներ համարվել, քանի որ չեն առաջացել սերմի սաղմից, հետեւապես չեն ունենում այն որակական փոփոխությունները, ինչ՝ սերմնաբույսերը: Դրանք կոչվում են նույնակներ (կլոններ, կրկնակներ, «դուստր բույսեր»), քանի որ առաջանում են սկզբնական կամ «մայր բույսի» ամբողջական մարմնի վերականգնումով: «Դուստր բույսերը ոչնչով չեն տարրերվում մայր բույսից, քանի որ կրում են մայր բույսի ծինաբանական (գենետիկական) ժառանգականությունն ամբողջությամբ եւ անփոփոխ կրկնությունն են: Որոշ առանձնահատկություններ լինում են, սակայն սահմանափակվում են արտաքնային (ֆենոտիպային) աննշան

տարբերություններով:

Նոյնակների բազմացումը կատարվում է միայն բուսաճային եղանակներով (պատվաստումով, կտրոններով, անդալիսներով, մացառներով, բեղիկներով եւ այլն), նաև բարդ արդիական՝ «ապակու տակ» կամ «ին վիտրո» (in vitro) կոչվող տեխնոլոգիաներով՝ մայր բույսի մարմնաբջիջների (սոմատիկ բջիջների) կամ հյուսվածքների արհեստական շատացումով արհեստական միջավայրում :

Նոյնակային (կլոնային, կրկնակ) բույսերը բազմացման տեխնոլոգիայի եւ ազրոնոմիական տեսանկյուններից բաժանվում են 2 խմբի՝

- ա) Յուրաքանչյան (սեփականարմատ) բույսեր, որոնց արմատային համակարգը գոյանում է մայր բույսի ցողունային եւ արմատային օրգաններից: Օրինակ՝ դրույտը բույսերը, որոնք բազմանում են կտրոններով (խաղողի վազ, սերկելիթենի, բղենի, նոնենի, փշատենի, շողպար, հատապտղայինների մեծ մասը եւ այլն), անդալիսներով (խաղողի վազ, շողպար, ցածրած խնձորենի, հատապտղայիններ եւ այլն), մացառներով (բալենի, սերկելիթենի, տիխենի, շլորենի, խնձորենու եւ տանձենու որոշ ձեւեր, սերկելիթենի), բեղիկներով (ելակենի եւ գետնաելակենի):
- բ) Պատվաստված բույսեր, որոնց միայն վերգետնյա մասն է հանդիսանում նոյնակ՝ ընտրվում եւ պատվաստվում է մարդու կողմից, իսկ արմատային համակարգը որեւէ այլ վայրի, կիսավայրի կամ մշակաբույսի տեսակ է՝ անկախ նոյնակ կամ սերմնաբույս լինելուց: Պատվաստված նոյնակային բույսեր են պղատուների մեծ բազմազանությունը, որոնք մշակվում են զյուղատնտոսական արտադրության մեջ. դրանք արդեն ընտրված խնձորենու, տանձենու, ծիրանենու, դեղձենու, սալորենու, կեռասենու բուսածերի ծառերն են:

Արտադրական տեսանկյունից նոյնակային բույսերի զարգացման փուլերը ընդգրկում են վերը նշված 4 շրջաններից միայն 2-ը՝ պատամեկան կամ երիտասարդական շրջանը եւ պտղաբերման կամ վերարտադրողական շրջանը:

Մյուս երկու շրջանները՝ սաղմնային կամ սերմնագոյացման շրջանը եւ ծերացման-մահացման շրջանը սովորաբար անտեսվում են ինտենսիվ այգեգործությունում, քանի որ գործնականում այգեգործը չի զբաղվում այդ տարիքային շրջանների ծառերի մշակությամբ:

Այգեգործներին անհրաժեշտ է խմանալ նաև այլ տեսություններ, որոնք որոշակի կարենություն ունեն գործնական մշակության ընթացքում:

Ոռումնասիրելով պտղատու բույսերի նույնակային (կլոնային) բույսերի (ոչ սերմնաբույս) առանձնյակների կյանքի զարգացումները եւ ելնելով գիտական վերլուծություններից, ոռու գիտնական Պ. Շիտը առաջարկեց այդ բույսերի զարգացման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները բաժանել ոչ թե 4, ինչպես սերմնաբույսերի համար է, այլ՝ 9 շրջանի:

1. Բուսաճային (վեգետատիվ) օրգանների աճի շրջան

Այն սկսվում է պատվաստաշիվի կամ կտրոնների ու անդախսների առաջացումից եւ աճից եւ շարունակվում է մինչեւ սաղարթի լիկ կազմավորումը: Բնորոշվում է ուժեղ աճով, սակայն պտղագոյացություններ դեռևս չկան: Այս շրջանում ազրոտեխնիկայի խնդիրն է.

- ա) Էտելու միջոցով ձեւավորել ծառերը՝ նախապատրաստելով պտղաբերող օրգանների առաջացմանը եւ պտղաբերման մեջարկը,
- բ) նպաստել աճին ու զարգացմանը՝ ելնելով մշակվող տեսակի ու բուսածելի (սորտի) կենսաբանական առանձնահատկություններից եւ հողակլիմայական պայմաններից,
- գ) Արագացնել շիվերի աճն ու փայտացումը, նպաստելով դրանց ձմեռաղիմացկունությանը:

2. Աճի ու պտղաբերության շրջան

Բնորոշվում է ուժեղ աճով՝ հասնելով առավելագույնի, սկսվում է պտղաբերող օրգանների առաջացումը եւ հետզինտե դրանք ավելանում են:

3. Պտղաբերության եւ աճի շրջան

Սկսվում է ծառի պտղաբերության մեկնարկից եւ տեսում մինչեւ առավելագույն բերքատվության հասնելը:

Աստիճանաբար ավելանում են շիվերը եւ պտղաբերող ճյուղերը, բարձրանում է բերքատվությունը: Զուգընթացարար նկատվում է բուսածի աստիճանական դանդաղում, շիվերի միջիանգուցային տարածությունները փոքրանում են, ավելանում են պտղաբերող օրգանները:

Ազրոտեխնիկայի խնդիրն է՝ լավացնել լուսավորության պայ-

մանները սաղարքի ներսում՝ նոսրացնելով կիսակմախքային ճյուղերի մի մասը, կարճացնելով դրանց ծայրերը՝ դրանց վրա նոր կողային ճյուղեր առաջացնելու եւ պտղաբերող օրգաններ ստեղծելու համար:

Բարձր եւ կայուն բերք ստանալու համար նորմավորել (սահմանափակել) ծաղիկների, պտղութերի եւ պտղաբերող ճյուղերի քանակը, այգու հողը վարել պարարտացումով, մի քանի անգամ փխրեցնել, սնուցել, առատորեն ոռոգել:

4. Պտղաբերության շրջան

Նպաստավոր հողակլիմայական պայմաններում եւ լավ ազդութեխնիկայի կիրառման դեպքում այս շրջանում դրսեւորվում են ծառի ներուժի բոլոր հնարավորությունները՝ առավելապես բերքի ծավալների առումով: Բուսաճը զգալիորեն դանդաղում է, համարյականգ է առնում, շիվերը եւ ճյուղերը շատ կարճ են, կմախքաճյուղերի ստորին մասերը սկսում են մերկանալ եւ քնած բողքոջներից առաջանում են նոր աճեր՝ հոռաշվեր:

Պտղութեր նախորդ շրջանների համեմատությամբ միջակ մեծության են, բայց բարձրորակ:

Ազրոտեխնիկայի խնդիրն է՝ ամեն տարի կատարել միջշարային տարածությունների վար, փխրեցումներ, պարարտացում-սնուցում, առատ ոռոգում, մերձբնային տարածությունների մշակություն, կանոնավոր ամենամյա էտ եւ քույլ երիտասարդացում:

5. Պտղաբերության եւ չորացման շրջան

Պակասում է պտղաբերող ճյուղերի առաջացումը, սաստկանում են ճյուղերի մահացման երեւությները, սաղարքի 1/3 մասը մերկանում է, պտղաբերող օրգաններն առաջանում են կենտրոնից դեպի սաղարթի եզրագծերը, փոքրանում է տերեւային մակերեսը, ընկնում է պտղությների որակը եւ ծառերի ցրտադիմացկունությունը:

Ազրոտեխնիկայի խնդիրն է՝ էտի՝ կարճացման եւ նոսրացման միջոցով կարգավորել աճի ու մահացման հարաբերակցությունը: Կատարել խոր կարճացում եւ վերոնշյալ ազրոտեխնիկական միջոցառումները:

6. Չորացման, պտղաբերության եւ աճման շրջան

Ուղեկցվում է կիսակմախքային ճյուղերի զանգվածային չորացումով՝ հետազայում տարածվելով նաև խոշոր կմախքային ճյուղերի վրա: Սաղարքը հիմքից մինչեւ կենտրոն ամբողջությամբ

մերկանում է, փոքրանում է պտղաբերման մակերեսը, ընկնում է բերքատվությունը, վատանում է բերքի որակը, ուժեղ արտահայտվում պարբերականության երեւությը: Սաղարթի ստորին մասերում քնած բոլորներց առաջանում են հոռաշխվեր, որոնք ուղարկած վեր են աճում:

Ազրոտեխնիկայի խնդիրն է՝ լավ մշակելու, պարարտացնելու, սնուցելու, ոռոգելու, խոր էտի և բուժման միջոցով նպաստել ծառի նոր աճերի առաջացմանը. երեք-չորս տարեկան ճյուղերի խոր կարձացման միջոցով ծառերը ենթարկվում են երիտասարդացման, այսինքն՝ մահացող մասերի փոխարեն ստեղծվում են նոր ճյուղեր:

7. Չորացման, աճման եւ պտղաբերման շրջան

Սաղարթը խիստ փոքրանում է, բերքատվությունը հասնում է նվազագույնի, սկսվում է աճի նոր վերելք (նոր ալիք, ակտիվացում)՝ շնայած կմախքային ճյուղերի զանգվածային չորացմանը:

Ազրոտեխնիկայի խնդիրն է՝ երիտասարդացնել ծառը՝ խիստ կարձացնելով կիսակմախքային և կմախքային ճյուղերը: Ուժեղ կարձացման հետեւանություն՝ բնի և ճյուղերի հիմքի մասերից դուրս եկած հոռաշխվերի մի մասը հեռացնելով, իսկ մնացած՝ առավել զարգացածները կարձացնելով առաջացնել նոր ճյուղավորումներ՝ ստեղծելով նոր սաղարթ: Այդ գործընթացը կատարել 2-3 տարիների ընթացքում և բարձր ազրոտեխնիկայի կիրառման պայմաններում:

8. Չորացման եւ աճման շրջան

Բերքատվությունը կանգ է առնում, չորացումը կրում է զանգվածային բնույթ, բնից դուրս են գալիս նոր հոռաշխվեր:

9. Աճման շրջան

Այս դեպքում չորացմանը զուգընթաց առաջանում են միայն հոռաշխվեր, որոնք անցնում են վերը նշված հերթական փուլերը՝ կարճ տեսողությամբ: Արտադրությունում խորհուրդ է տրվում 8-րդ շրջանից սկսած այգիները խոտանել՝ դրանց փոխարեն տնկելով նորերը:

Ըստ Պ.Շիտի, պտղատու ծառերը կարող են անցնել նոր կյանքի բոլորաշրջան՝ կրկնելով կյանքի նախորդ շրջանները և շարունակարար անցնել բազմաթիվ կյանքեր՝ այդպիսով տեսականորեն անմահ են, որը կարեւոր չէ այգեգործության համար, քանի որ հաջորդական կյանքերի ընթացքում ծառերը (վազերը) արտադրական հետաքրքրություն չեն ներկայացնում:

Պտղահատապտղային բույսերի աճի եւ զարգացման վրա ավդող արտաքին միջավայրի գործոնները եւ դրանց ավեցության կարգավորումը

Պտղահատապտղային բույսերի վրա ավդող հիմնական գործոնները

Պտղահատապտղային բույսերի աճի եւ զարգացման վրա ավդող արտաքին միջավայրի գործոնները բազմաթիվ են եւ ունեն ազդեցության տարբեր նշանակություն եւ չափասահմաններ: Տարբեր գիտնականների եւ մասնագետների կարծիքով՝ դրանց թիվը հասնում է 46-ի: Այդ շարքում շատերը հաշվառում են բազմազան հողակլիմայական գործոններ, ինչպիսիք են Արեգակի, Լուսնի, Երկրագնդի տարեկան եւ օրական փոփոխությունները, Երկրաբանական շարժումները, նազմիսական ուժերը, ռադիոակտիվ ճառագայթումը, տարբեր այլ ճառագայթումներ եւ ալիքներ, քիմիական նյութերի եւ քննական օդի ու ջրերի խտությունը եւ շատ այլ գործոններ: Առանձին դիտարկվում է կենսաբանական օրգանիզմների ազդեցությունը, գործունեության փոխազդեցությունը եւ ետազդեցությունը:

Բոլոր դեպքերում քննակլիմայական գործոնների շարքից առանձնանում են կարեւորագույն հինգ գործոններ, դրանք են՝ լույսը, ջերմությունը, հողը (արմատային սննդատարբերը), ջուրը (խոնավությունը) եւ օդը (գազային միջավայրը), որոնք դեռ 19-րդ դարում առանձնացրել է գերմանացի գիտնական Կարլ Լիբիխը՝ որպես կենսական նշանակության գործոններ: Դրանցից յուրաքանչյուր չափանիշի ծայրահեղ ցուցանիշներն ու անբավարարությունը անհարդուրժելի ե բույսի համար եւ տվյալ պայմաններում անհնար է դարձնում դրա աճը՝ ընդհուած մինչեւ բույսերի ամբողջական ոչնչանալը: Այդպիսի արդյունքի հանգեցնող գործոնն համարվում է **սահմանափակող գործոն**:

Լույսի գործոն: Պահանջը լուսավորության հանդեպ

Ինչպես հայտնի է բուսաբանությունից, լույսի գործոնի շնորհիվ է, որ բույսերում կատարվում է ֆոտոսինթեզ, եւ առաջնում են օրգանական նյութեր՝ բոլոր կենդանի օրգանիզմների կենսագործունեության հիմքը:

Լուսավորության հանդեպ պտղատու բույսերը մեծ պահանջունեն, քայլ նաև ցուցաբերում են ճկունություն եւ հարմարվողականություն: Այդ հանգամանքը հնարավորություն է տալս արդյունաբերական մշակությունն իրականացնել նույնիսկ անքավարար լուսավորված տարածքներում:

Պտղատու բույսերն օգտվում են ոչ միայն արեգակնային՝ 1) ուղիղ ճառագայթների լույսից այլ նաև՝ 2) փայլուն մակերեսներից արտացոլված լույսից եւ 3) մթնոլորտում ցրված լույսերից: Դրանք օգտագործում են լույսի ոչ միայն 1) տեսանելի լույսի (400-700 մկմ) այլ նաև 2) ինֆրակարմիր (400 մկմ-ից ցածր) եւ, հատկապես՝ 3) ուլտրամանուշակգույն ճառագայթման (700 մկմ-ից բարձր) ալիքներից: Ինֆրակարմիր լույսն ավելի շատ ջերմային է ներգիա է ապահովում, իսկ ուլտրամանուշակագույն ճառագայթումն առավել պահանջված է ֆոտոսինթեզի գործընթացում:



Նկար 8. Պտղահատապտղային բույսերի աճի եւ կարգացման վրա ավտոդարտաքին միջավայրի գործոնները

Բարեխառն գոտու պտղատու բույսերը համարվում են կարճ օրվա բույս, այսինքն՝ բավարարվում են օրվա 8-12 ժամ լույսով եւ ունեն հանգստի ձմեռային հստակ շրջան, որի ընթացքում լույսի կարիք չունեն, քանի որ ձմռանը զրկվում են ֆոտոսինթետիկ ապարատից (տերեւներից): Դրանք ծաղկում են տարեկան մեկ անգամ՝ գարնանը, իսկ ձմռանն անցնում են հարաբերական հանգստի շրջան:

Ծաղկի եւ կոկոնի աճն ու զարգացումը գարնան պայմաններում, առաջանալուց մինչեւ ծաղկելը, տեսում է 30-35 օր: Ծաղկումը շարունակվում է 6-8 օր: Գարնանային ծաղկման ժամանակ պտղի աճման եւ զարգացման ժամանակամիջոցը՝ ծաղկի թերթիկների ընկնելուց մինչեւ հասունանալը, տեսում է 75-230 օր՝ կախված տեսակից եւ սորտային առանձնահատկություններից: Գարնանային լուսավորությունը եւ ճառագայթումը հասնում են առավելագույն չափանիշների, որը բարենպաստ է պտղատուների ակտիվ ֆոտոսինթեզի, աճի եւ զարգացման համար:

Անոանը, երբ ջերմաստիճանը բարձր է եւ լուսավորությունն ավելի ուժեղ, այդ ժամանակաշրջանը նվազում է՝ դառնալով 50-200 օր: Սովորաբար պասկաբերթիկների բափվելուց մի քանի օր աճց սկսվում է վարսանիների եւ պտղիկների մի մասի բափվելը՝ առաջին պտղաբափ: Երբեմն տեղի է ունենում երկրորդ պտղաբափը՝ ձեւավորված պտուղների մասնակի անկում (երբ պտուղները հասնում են ընկույզի չափսերի): Առաջին եւ երկրորդ պտղաբափի ժամանակ բույսի վրա առաջացած բազմաթիվ պտղիկների մի մասը բափվում է, քանի որ, ելնելով սննդային եւ լուսային պայմաններից, բույսը «զնահատում է», որ ի վիճակի չէ դրանց բոլորին «կերակրել» ու պահել, ուստի եւ դրանց մի մասը, հասնելով ընկույզի չափի՝ սովորաբար ընկնում է: Դրանից խուսափելու համար հենց սկզբից պետք է պտղիկների մի մասը հեռացնել այնպիսի հաշվարկով, որ մնացածները հավասարաչափ տեղաբաշխված լինեն բույսի սաղարթի ամբողջ ծավալում:

Լույսի անբավարարության պայմաններում պտուղները, եթե նույնիսկ չեն բափվում ծաղից եւ պակասում, ապա կորցնում են ապրանքային որակները, բնորոշ մեծությունը, ձեւը, գունավորությունը, համը (առանձապես քաղցրությունը) եւ հոտը (բուրումնավետությունը), զգայուն են հիվանդությունների եւ այլ գործոնների վնասակար ազդեցության նկատմամբ: Այս փոփոխություններն անմիջականորեն կապված են լույսի, հատկապես ուլտրամանուշակագույն ճառագայթների անբավարարության հետ:

Պտղահատապտղային բույսերի աճի եւ զարգացման վրա ավդող ջերմային գործոնները եւ դրանց ավդեցության կարգավորումը

Պահանջը ջերմության նկատմամբ

Պտղատու եւ հատապտղատու տեսակները շատ զգայուն են կլիմայական այս գործոնի նկատմամբ: Դրանց մշակության վայրերում պետք է հաշվի առնել հատկապես ձմեռային ցածր ջերմաստիճանները՝ սառնամանիքները, ուշ գարնանային եւ վաղ աշնանային ցրտահարությունները, պտուղների հասունացման համար գումարային եւ միջին ջերմաստիճանները: Բույսերի աճի եւ զարգացման համար խանգարող հանգամանքներ են նաև երաշտը, ջերմաստիճանային անժամանակ նվազումները եւ քամիների, հատկապես տաք խորշակների առկայությունը:

Գարնանային ցրտահարություններից հատկապես տուժում են ծիրաննու բացված բողբջները, որոնք լրիվ վնասվում են $-1\text{--}1,5^{\circ}\text{C}$ -ի դեպքում, մինչդեռ առավել դիմացկուն խնձորնու ծաղիկները կարող են դիմանալ նույնիսկ -8°C -ի պայմաններում:

Պտղատու մշակաբույսերի հասունացման համար բուսածի (վեգետացիայի) շրջանում պահանջվում է $2.500\text{--}5.500^{\circ}\text{C}$ ակտիվ ջերմաստիճանների գումար: Ինչքան հարավային ծագում ունի պտղատու բույսը, այնքան պահանջվու է ջերմության հանդեպ, այսինքն՝ ակտիվ ջերմաստիճանների մեջ գումար է պահանջում:

Հայաստանի նախալեռնային եւ հարթավայրային գոտու եղանակային պայմաններն ամառվա ընթացքում մոտ են չոր մերձարեւադարձային կլիմային: Սա նշանակում է, որ այստեղ բուսածի շրջանում ապահովվում են բույսի նորմալ աճը, զարգացումն ու պտղաբերումը: Մեծ քանակությամբ պարզ ու արեւոտ օրերը, ակտիվ ջերմաստիճանի բավարար գումարը մինչեւ $4\text{--}5$ հազար 0°C ակտիվ ջերմության գումարները լիովին բավարար են բոլոր պտղատու բույսերի մշակության համար: Այս դեպքում օրվա լուսային տեւողությունն ինչպես ամռանը, այնպես էլ ձմռանը չի խանգարում

մշակաբույսերի նորմալ զարգացմանը:

Պտղատու բույսի ընձյուղների նորմալ աճը սկսվում է այն ժամանակ, երբ հողի եւ օդի ջերմաստիճանը հասնում է $+8-12^{\circ}\text{C}$ -ի, իսկ կոկոնների եւ ծաղիկների աճն ու զարգացումը՝ $+15^{\circ}\text{C}$ -ում: Ջերմաստիճանի կտրուկ բարձրացման դեպքում կոկոնների եւ ծաղիկների աճը արագանում է, սակայն միևնույն ժամանակ սերմնաբռնչութերի թիվը նվազում է:

$+8^{\circ}\text{C}$ -ից ցածր եւ $+32^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմաստիճանի պայմաններում դադարում է պտղատու բույսերի մեծամասնության՝ օրգանական նյութերի ֆուտոսինթեզը:

$+5^{\circ}\text{C}$ -ի պարագայում շնչառական էներգիան 2 անգամ գերազանցում է ֆուտոսինթեզի էներգիան:

-1°C -ի դեպքում նկատվում է օրգանների ցրտահարում եւ հնարավոր է՝ բույսի ամբողջովին չորացում:

Պտղատուներն առավել լավ են աճում ու զարգանում $+18-22^{\circ}\text{C}$ -ի պայմաններում:



Նկար 9. Խնձորենու այգին ձմռանը՝ բացասական ջերմաստիճանի պայմաններում

Ջերմային պայմանների պահանջը ձմեռման ընթացքում

Տերեւաբափից հետո, երբ օդի ջերմաստիճանը 0°C -ից ցածր է, պտղատու բույսերն անցնում են խոր համգստի շրջանի, որի ընթացքը եւ տեսողությունը կախված են բույսի մեջ կուտակված սննդանյու-

թերի պաշարներից, վերգետնյա օրգանների փայտացման աստիճանից, ողի ջերմաստիճանից եւ օղի հարաբերական խոնավությունից: Բայց պտղատու բույսերի ձմեռային կենսունակության վճռական գործոնը մնում են ցածր ջերմաստիճանների նվազագույն շեմը եւ սառնամանիքների տեսողությունը: Բարեխառն կլիմայական գոտու պտղատուների դիմացկունությունը խիստ տատանվում է $-14\text{--}28^{\circ}\text{C}$ -ի միջակայքում: Որոշակի հողատարածքում պտղատու մշակաբույսերի աճեցման համար անհրաժեշտ է, որ ձմեռային ջերմային պայմանները լինեն դրանց կենսաբանական ցրտադիմացկունության աստիճանից բարձր: Եթե ձմռանը տվյալ պտղատեսակի բույսերի համար տվյալ տեղանքում հնարավոր չէ ստեղծել լավագույն (կամ բարեխառն) պայմաններ, օղի ջերմաստիճանի բազմամյա ցուցանիշները $4\text{--}5^{\circ}\text{C}$ -ով ցածր են տվյալ տեսակի դիմացկունության շեմից եւ այդ ընթացքում հնարավոր չէ լրացնուցիչ միջոցներով պաշտպանել բույսերը սառնամանիքներից, ապա նախընտրելի է հրաժարվել այդպիսի տեսակների եւ մշակաձեւերի (սորտերի) մշակությունից: Այդպիսի պայմաններում խորհուրդ է տրվում տնկել միայն ցրտադիմացկուն եւ բավարար պտղաբերող մշակաձեւեր: Իսկ, օրինակ, թփերն ու վազերը կարելի է պաշտպանել՝ կատարելով այգեթաղ, բուկլից, հողա- եւ ձյունակույտում, ծածկում այլ նյութերով (մուլչապատում), թեև դա բավականին աշխատատար եւ ծախսատար է:

Պտղահատապտղային բույսերի աճի եւ զարգացման վրա ավդող հողային գործոնները եւ դրանց ավդեցության կարգավորումը

Պահանջը հողի որակների նկատմամբ

Պտղատու բույսը պահանջկոտ է հողի քերրիության եւ այլ որակների հանդեպ: Այն գերադասում է աճել հանքային սննդատարրերով (կարեւոր են համարվում հատկապես ազոտը, ֆոսֆորը, կալիումը, բայց նաև մեկ տասնյակի հասնող քիմիական մանրատարրեր) եւ օրգանական նյութերով, առաջին հերթին՝ հումուսով հարուստ ավազային, ավազակավային, կավազավային, լավ կնդիկավոր (կնձիկային) կառուցվածքի (ստրոկտորայի), օդի եւ խոնավության որոշակի աստիճանի՝ լավ օդարափանց եւ ջրարափանց հողերում: Պտղատու բույսերը գերադասում են հողի բույլ թթվային կամ չեղոր միջավայր՝ pH-ը՝ 5,5-7,0 ցուցանիշով: Սակայն կարող են դիմանալ նաև ավելի լայն հիմնարթվային միջավայրում՝ pH չափանիշը՝ 3,5-9,0: Սակայն կրային, կարբոնատներով շատ հարուստ, խիստ ավալի հողերում պտղատեսակների մեծամասնությունը վատ է աճում եւ գրեթե չի զարգանում, շուտ հիվանդանում եւ մահանում է:

Պտղատեսակների մեծամասնությունը գերադասում է քերրի հողեր, բայց դիմանում է նաև հողի սահմանափակ քերրիության եւ այլ վատ պայմաններում աճեցնելիս: Սակայն սահմանափակ պայմաններում ապրող եւ զարգացող բույսը հանդիպում է մեծ դժվարությունների: Դրա արմատները չեն ստանում բավարար խորությամբ եւ լայնությամբ տարածման հնարավորություններ: Սննդանյութերի եւ օդափոխության ռեժիմը բարենպաստ չէ աճի եւ զարգացման համար, ողոգման ու անձրեւաջրերով քերված սննդանյութերի աղբյուրները սահմանափակ են, դժվարանում է հումուսով ու հանքային աղերով սնվելը եւ այլն: Բացի այդ, տկար, անորակ, վատ կազմով հողում կուտակվում են վնասակար աղեր, սնկեր եւ մանրէներ, որոնք արմատ-


Աերի հիվանդացման եւ փուման պատճառ են դառնում եւ, ի վերջո, չորացնում բույսը:

Այգեգործը պետք է պահպանի հողի առողջ միջավայրը, վերարտադրի հողում ջրի եւ օղի մշտական բավարար քանակները, ինչպես նաև ապահովի սննդանյութերի առատությունը եւ վերականգնումը:

Հողում ջրի եւ խոնավության հանդեպ պահանջը

Պտղատու բույսը բավականին խոնավասեր են եւ աճելու ընթացքում պահանջում են ոչ միայն օղի բավականին բարձր խոնավություն, այլեւ շատ ջուր հողի մեջ: Դա հատկապես կարեւոր է մազարմատների համար, երբ դրանք չեն ունենում ջուր կլանելու բավարար մակերես: Այդ պատճառով բույրը պտղատեսակների համար պահանջվում է հաճախակի եւ մեծ ծավալի ոռոգում:

Սակայն հողի գերխոնավությունը կարող է նաև բացասարար անդրադասնալ պտղատու բույսի վրա եւ նույնիսկ ավելի վնասակար լինել, քան ծարավի աստիճանը: Բանն այն է, որ ջրի մեծ քանակը դուրս է մղում օղը հողի կազմից եւ արմատները սկսում են խեղդվել, իսկ հետո փոտել, հատկապես՝ երբ այդ գերխոնավ հողում արագ զարգանում են հողը թթվեցնող սնկերն ու մանրէները, որոնք կարող են վերջնականապես փշացնել հողը եւ կործանել արմատներն ու ծառն ամբողջովին: Օղի պարունակությունը հողում պտղատուների արմատների խորության հորիզոնում պետք է լինի ոչ պակաս, քան հողի ծավալի 15-30 %-ի հաշվով: Այգու հողը պետք պաշտպանված լինի պատահական գերխոնավությունից, պարբերական լճացումներից, ճահճակալումից, սելավաջրերից:



Ոռոգման չափաբաժնները, հաճախականությունը եւ ծավալը պետք է փոփոխել՝ ելնելով օղի եւ հողի խոնավությունից, ծառերի զարգացման փուլից եւ տարիքից (Երիտասարդ բույսերն ավելի պահանջկուտ են, իսկ տարեց ծառերն՝ ավելի դիմացկուն), տարվա սեզոնից, ջերմության ու լուսային ռեժիմներից եւ այլն:

Նկար 10. Հողի հորիզոնները

Պտղահատապտղային բույսերի աճի եւ կարգացման վրա ազդող ջրային եւ օդագազային գործոնները եւ դրանց ազդեցության կարգավորումը

Պահանջը հողի օդափոխանակության, օդի կազմի եւ օդի խոնավության հանդեպ

Պտղատու բույսերը չափազանց պահանջկոտ են օդային գործոնի պայմանների հանդեպ:

Նախ, օդը տարբեր գագերի եւ ջրի խառնուրդ է եւ միշտ չէ, որ ունի միեւնույն կազմը: Մքնուրուտային օդի հիմնական բաղադրիչն ազոտն է՝ համարյա 70 %, որը, սակայն, գտնվում է բույսերի համար ոչ մատչելի միացության ձեւով: Բայց մքնուրուտային երեւույթների շնորհիվ (ճառագայթում, ճնշումների եւ ջերմային տատանումներ եւ այլն) եւ հողում որոշ միկրոօրգանիզմների գործունեության շնորհիվ դրա մի փոքր մասը փոխակերպվում է բույսերի սննդի համար պիտանի միացությունների (նիտրատների, նիտրիտների եւ ամոնիումի): Այդ նյութերի որոշակի քանակները տեղումների միջոցով հասնում են բույսերի արմատներին: Առավել շատ են այդ միացությունները Երկրագնդի առավել տաք հատվածում՝ հասարակածի մոտ եւ պակասում են դեպի բենեռները: Դրանով է մասնավորապես բացատրվում (այլ գործոնների հետ մեկտեղ) այն հանգամանքը, որ հասարակածի արեւադարձային գոտում բուսականությունն առավել փարթամն է:

Բույսերի սննդառության կարեւորագույն գործոն է նաև ածխաթթու գազը, որը մքնուրուտային օդում կազմում է ընդամենը 0,03 %, բայց բույսի կողմից բոլոր օրգանական նյութերի ստեղծման հիմք է հանդիսանում:

Բույսերի համար ոչ պակաս կարեւոր է թթվածնի առկայությունը, որը մքնուրուտային օդում կազմում է 16 % եւ մասնակցում է բույսի

շնչառության ու բոլոր սինթեզների ու նյութափոխանակության գործընթացներին:

Պտղատու բույսերը, բացի միջավայրի օդագազային կազմից, չափազանց պահանջկու են նաև օդի խոնավության հանդեպ: Դրանով է պայմանավորված բույսերի գոլորշիացման ինտենսիվությունը, որով բույսը կարգավորում է իր ջերմափոխանակումը և բջջահյութի խտությունը: Գրեք բոլոր պտղատեսակների համար առավել բարենպաստ է օդի 60-70 % հարաբերական խոնավությունը: Սակայն դրանցից շատերը դիմանում են նաև ընդամենը 30-40 % օդի խոնավությանը: Դա պայմանավորված է ինչպես արենի ճառագայթների, այնպես էլ գերջերմային պայմանների ազդեցությամբ, որոնք խիստ չորացնում են օդը: Այդ չորությունը կարող է բույսի տերեւաթափման եւ հիվանդությունների զարգացման պատճառ հանդիսանալ: Բուն պատճառն այն է, որ բույսի տերեւերի միջոցով գոլորշիացող ջրի քանակն այս դեպքում խիստ գերազանցում է արմատներով ներծծվող ջրի քանակը: Օդի 15-25 % եւ ավելի ցածր խոնավությունը նահացու է բոլոր մշակաբույսերի համար:

Միաժամանակ պետք է հիշել, որ օդի չափազանց քարձր հարաբերական խոնավությունը (95-100 %) նույնպես բացասաբար է անդրադառնում բույսի աճի եւ զարգացման վրա եւ մի շարք հիվանդությունների զարգացման պատճառ դառնում:

Բույսերի պահանջը խոնավության նկատմամբ տարկա ընթացքում փոխվում է հետեւյալ կերպ. եթե բուսաճի ընթացքում պահանջվում է առավելագույն խոնավություն, ապա խոնավության նկատմամբ պահանջը մնեանում եւ հասնում է առավելագույնի: Տեղումների առավելագույն քանակը դժվարացնում է ծաղիկների փոշոտման գործընթացը, միաժամանակ բարենպաստ պայման ստեղծում սնկային հիվանդությունների համար: Այդ իսկ պատճառով ամպամածությունն ու մառախուղը, հատկապես գարնան՝ ծաղկման շրջանում, եւ աշնանը՝ բերքահավաքի ժամանակ, բացասաբար են ազդում բույսի ծաղիկների փոշոտման եւ պտուղների հասունացման ու պահպանման վրա: Բերքահավաքի ընթացքում խոնավ պտուղները գրեք են կորցնում են պահունակությունը, փոխադրունակությունը եւ շուտ են փոխում: Տերեւերը գերխոնավության պայմաններում սկսում են վարակվել սնկային հիվանդություններով, խիստ բազմանում են նաև խոնավասեր վնասատուները:

Օդի խոնավության տեսական պակասի դեպքում պտուղները լավ շեն զարգանում՝ շուտ են հասունանում, լինում ոչ պահունակ՝ կոպիտ պտղամսով, նվազում են դրանց համային արժեքները, հաճախակի փոխում են հենց ծառի վրա:

Պտղահատապտղային մշակաբույսերի բազմացման կենսաբանական հիմունքները, եղանակները եւ գործնական կիրառումը

Պտղահատապտղային մշակաբույսերի բազմացման եղանակները

Պտղատու եւ հատապտղային մշակաբույսերը կարելի է բազմացնել ինչպես սերմերով, այնպես էլ **բուսաճային (վեգետատիվ) եղանակներով**: Սերմերով բազմացման ընթացքում պտղատու բույսերի սորտային հատկանիշներն ու հատկությունները, ինչպես նաև պտույթների որակները չեն պահպանվում: Բազմացման այս եղանակը պտղաբուծության մեջ օգտագործվում է երկու նպատակով՝ սերմնաբույս պատվաստակալներ աճեցնելու համար եւ ընտրասերման գործընթացում՝ նոր մշակաձեւերի (սորտերի) ստացման ժամանակ:

Քանի որ մշակովի բուսաձեւը (սորտերը) սերմերով բազմացնելիս իրենց որոշ հատկությունները եւ որակները չեն պահպանվում, գործնականում դիմում ենք բուսաճային (վեգետատիվ) ճանապարհով բազմացմանը: Կախված տեսակների կենսաբանական ունակություններից եւ առանձնահատկություններից, կիրառվում են բուսաճային բազմացման տարրեր եղանակներ եւ ստանում են **յուրաքանչյաման** կամ **պատվաստված բույսեր**:

Յուրաքանչյաման (սեփականարմատ) բազմամյա բույսեր կարելի է ստանալ կտրոններով, անդալիսներով, արմատային մացառներով, բեղիկներով, բույսը (թուփը) կիսելու եղանակներով բազմացնելով:

Սովորական պայմաններում պտղատու ծառատեսակների մեծամասնությունից յուրաքանչյաման բույսերի ստացումը շատ դժվար է, անարդյունավետ: Այդ իսկ պատճառով ծառատեսակների մշակովի մշակաձեւը բազմացվում են **պատվաստեների** տարրեր ձեւերով, նախօրոր աճեցված վայրի ու կիսամշակովի տեսակների **սերմնաբույ-**

սերի (վայրակների) կամ **բուսաճային** (վեգետատիվ) **ճանապարհով ստացված նույնակային** (կլոնային) պատվաստակալների վրա: Պատվաստակալը (պատվաստի ստորին մասը) ապահովում է ամրող ջական բույսի արմատային համակարգը եւ **սնում պատվաստացուն** (վերգետնյա մասը):

Գործնական պտղաբուծության մեջ օգտագործվում են պատվաստի հիմնական երկու եղանակներ՝ **աչքապատվաստ**, որի ժամանակ պատվաստվող բույսը՝ պատվաստացուն, իրենից ներկայացնում 1 բողոք (աչք) եւ կեղեւի (կարող է նաև բնափայտի) 2-2,5 սմ երկարությամբ մասնիկ՝ **վահանիկ**, եւ **կտրոնապատվաստներ**, որի դեպքում պատվաստացուն միամյա շիվի 2-ից 5 աչքից բաղկացած փոքրիկ **կտրոն** է:

Պատվաստ կարելի է կատարել այն դեպքում, եթե պատվաստվող երկու բույսերն ունեն կենսաբանական փոխադարձ **համատեղելիություն** եւ ապահովում են հյուսվածքների լիակատար **սերտած**:

Պատվաստ կարելի է կատարել տարվա տարբեր եղանակներին, սակայն միայն բարենպաստ պայմաններում, որոնցից հիմնականը բույերի ակտիվ հյութաշարժության շրջանն է: Հայաստանում պատվաստների կատարման առավել բարենպաստ շրջաններն երկուսն են.

Ա. աճող (բացվող) աչքերով, քանի որ պատվաստված աչքերն անմիջապես սկսում են աճել: Շրջանը սկսվում է յուրաքանչյուր տեսակի համար տվյալ գոտում բողոքների ուշելու պահից մինչեւ ծաղկելն ու լնձյուղների աճելը՝ մոտ 10-15 օր տեսողությամբ: Անվանում է նաև **գարնանային պատվաստ**, քանի որ կատարվում է վաղ գարնան հյութաշարժի շրջանում՝ մարտ-ապրիլ ամիսներին, որոշ վայրերում՝ նաև մայիսին:

Բ. բնած աչքերով, քանի որ պատվաստված աչքերը ձմեռում են եւ սկսում են աճել միայն հաջորդ տարվա գարնանը: Այն կատարվում է ամռան երկրորդ կեսին ու աշնան սկզբին եւ կոչվում է նաև **ամառային** կամ **ամառաշնանային պատվաստ**, եթե օգսստոս-սեպտեմբեր ամիսներին տեղի է ունենում ակտիվ հյութաշարժի բավականին երկար շրջան՝ 1-1,5 ամիս տեսողությամբ՝ յուրաքանչյուր գոտում:

Պատվաստների տարբեր ձեւեր կարելի է կատարել նաև այլ ամիսներին՝ սակայն հաջողության ոչ մեծ հավանականությամբ:

Բոլոր շրջանների ընթացքում եղանակային պայմանները կարող են անբարենպաստ լինել (ցրտեր, անձրեւներ, քամիներ, շոգ եղանակ

եւ այլն) եւ պատվաստները պետք է պաշտպանել, մեկուսացնել միջավայրից: Պատվաստի հանգույցը պետք է ամբողջովին ծածկել այգու մածիկով եւ փաթաթել ժապավենով այնպես, որ օդը պատվաստի կտրվածքները չչորացնի կամ անձրեւաջրերը չխոնավացնեն ու փտեցնեն պատվաստը:

Աչքապատվաստ

Աչքապատվաստները համարվում են պատվաստի ամենահեշտ եւ առավել շատ տարածված եղանակը, որն ունի մի շարք առավելություններ մյուսների նկատմամբ: Աչքապատվաստի կատարման տեխնիկան պարզ է, գործողությունների կատարումը հեշտ է, արտադրողականությունը բարձր է, բույսին մեծ վնասներ չի հասցվում, կտրվածքների վերքերը արագ են վերականգնվում: Տնտեսապես էլ ձեռնատու է, քանի որ ծախսվում են ավելի քիչ պատվաստացու աչքեր ու կտրոններ:

Աչքապատվաստները կատարվում են միայն վերոնշյալ երկու ժամկետներում: Առանց ակտիվ հյութաշարժի շրջաններում դրանք չեն հաջողվում:



Նկար 11. Աչքապատվաստ

Հայաստանում մեծ մասամբ կիրառվում է **քնած աչքերով աչքապատվաստը**: Այս դեպքում պատվաստված աչքերը կպչում եւ սերտաճում են երկար ժամանակահատվածում եւ մնում են «քնած» վիճակում՝ մինչև հաջորդ տարվա գարունը: **Աճող (բացվող) աչքերով աչքապատվաստը** կատարվում է զարնանը, երբ սկսվում է հյութաշարժությունը եւ պատվաստված աչքերը կպչելուց անմիջապես

հետո բացվում են եւ սկսում են աճել: Ավելի շատ կիրառվում է կորիգավոր պտղատեսակների համար, հատկապես դեղձենու, նշենու ու ծիրանենու համար, որոնք մինչեւ աշուն կարողանում են զարգացնել լավ աճեցողության **միաժակներ**:

Գործողությունների հաջորդականությունը եւ կատարման տեխնիկան հետևյալն են. պատվաստից 3-4 օր առաջ պատվաստակալներն անհրաժեշտ է ջրել, բնի շրջակա հողը փխրեցնել եւ կատարել բուկից, որը նպաստում է հյութաշրժության արագացմանը եւ կեղեւի լավ անջատվելու:

Պատվաստի կատարման համար անհրաժեշտ է ունենալ այգու մկրատ, այգու եւ պատվաստի դանակներ (կամ այլ գործիքներ), փարաքող ժապավեններ (պոլիէթիլենային կամ այլ ճկուն թաղանթից), ախտահանող հեղուկներ, խոնավ լաթեր, սրաքար, դրոյլեր:

Պատվաստացու կտրոնները պետք է մթերել սաղարթի կենտրոնական մասի ընթացիկ տարվա ուժեղ շիվերից, որոնք գտնվում են լուսավորության լավ պայմաններում: Կտրոնները պետք է լինեն լավ զարգացած, 4-5 մմ-ից ոչ պակաս հաստության, լավ տեսանելի բողքոցներով: Ամառային շրջանում, ծառից կտրելուց անմիջապես հետո պետք է հեռացնել մթերվող կտրոնների տերենները, բողնելով տերենակորունի կարծ հատված՝ 0,5-1 սմ երկարությամբ: Պատվաստի համար օգտագործել կտրոնի միջին հատվածի 8-12 բողքոցներ: Ծայրամասի եւ հիմքի բողքոցները լավ զարգացած չեն լինում, որի հետեւանդով դրանց կայողականությունը եւ կենսունակությունը շատ ցածր է:

Պատվաստից առաջ անհրաժեշտ է բացել պատվաստակալների շուրջ արված բուկիցը եւ մաքրել ու ախտահանել խոնավ լաթով: Պատվաստի համար պիտանի պատվաստակալները պետք է լինեն առնվազն 8-10 մմ հաստությամբ (մատիտի կամ միջին գրիչի հաստության չափ):

Աչքապատվաստը կատարում են պատվաստակալի հյուսիսային կողմից, արմատավզիկից (կամ հողի մակերեսից) մինչեւ 5 սմ վերեւ, լատինական մեծատառ **T-աձեւ** կտրվածք կատարելով (կամ այլ նոր ձեւերով): Ինտենսիվ պտղաբուծության տեսկանյութի ստեղծման դեպքում, հատկապես կաթիլային ոռոգման այգիներում պատվաստի հանգույցի գերխոնավությունից սուժելու դեպքերից խուսափելու համար նպատակահարմար է պատվաստակետի տեղն ընտրել ավելի բարձր՝ հողի մակերեսին գտնվող պայմանական արմատավզիկից 10-15 սմ բարձրության վրա: Կտրված կեղեւը պատվաստի դանակի բուք սայրով զգուշությամբ ետ են տանում երկու կողմերի վրա՝ բա-

ցում «փեղկերը», ապա երկու մատով բռնելով պատվաստացու վահանիկի կողերից կամ տերեւակորունից (ամառային պատվաստի դեպքում), տեղադրում են կատարված կտրվածքի մեջ այնպես, որ պատվաստացու իջնի T-աձեւ կտրվածքի վերին եզրից («նստի փեղկերի մեջ»): Այնուհետև հարթում են կեղեւը, կապում են փաթաթում ամբողջ պատվաստը, բաց բողնելով միայն վահանիկի բողբոջը: Ժապավենը պետք է փաթաթել պատվաստի վերեւից, հասնել բողբոջին, ապա անցկացնել դրա տակով, շարունակել փակել ներքեւի կտրվածքները եւ վերջում ամրացնել 8-աձեւ կապով:

Պատվաստից 7-10 օր հետո պետք է կատարել առաջին ստուգումը: Եթե մատով դիպչելիս պատվաստացուի վրա մնացած տերեւակորունի մնացորդն ընկնում է եւ երեսում է, որ բողբոջը կանաչ ու թարմ է, նշանակում է պատվաստը սկսել է կպչել: Իսկ եթե տերեւակորունը չի ընկնում եւ բողբոջը սեւացել է՝ նշանակում է պատվաստը չի հաջողվել: Այս դեպքում այդ պատվաստակալի վրա կարելի է կատարել **վերապատվաստ** (երկրորդ պատվաստումը):` առաջինի հակառակ կողմից եւ մի փոքր վերեւ գտնվող առողջ ու հարթ հատվածում: Առաջին ստուգումից 10-15 օր հետո կատարվում է երկրորդ ստուգումը՝ բողբոջի առողջ տեսքի հիման վրա: Այդ ժամանակ բուլացնում են աչքապատվաստների կապերը: Իսկ քնած բողբոջների պատվաստի դեպքում կատարում են նաև երրորդը ստուգումը՝ հաջորդ տարվա վաղ գարնանը: Այդ ժամանակ հեռացնում են աչքապատվաստների կապերը եւ հանում ժապավենները:

Կտրոնապատվաստներ

Կտրոնապատվաստները հիմնականում կատարվում են վաղ գարնանը, հյութաշարժության ժամանակ, նախքան բողբոջների բացվելը, բայց գործնականում կարող են արդյունավետ լինել նաև այլ ժամանակաշրջաններում՝ նույնիսկ ձմռանը՝ (ձմեռային պատվաստների տեխնոլոգիա): Պտղաբուծության մեջ հիմնականում տարածված են կտրոնապատվաստի հետեւյալ ձեւերը՝ **կողապատվաստ, հասարակ** եւ **բարելավված կտրոնապատվաստ,**



Նկար 12. Կտրոնապատվաստ

Ճեղքապատվաստ, պատվաստ դնումով, պատվաստ կեղեւի տակ, եռանկյունաձեւ կտրվածքով պատվաստ եւ կամրջապատվաստ, որոնք բազմացման նպատակից բացի ծառայում են նաև այլ նպատակների համար (բուժում, սրտափոխություն, «դաստիարակ բույսի» կամ «մենքորի» եղանակ եւ այլն):

Կտրոններով բազմացումը

Գործնականում տարրերում են **փայտացած եւ կանաչ կտրոններով** բազմացումը: Փայտացած (կամ ձմեռային) կտրոններով հիմնականում բազմացվում են հաղարջենին, ցածրած խճանքենին, սերկելիթենին, թզենին, նոնենին, ձիթենին, կոկոչենին, փշատենին եւ այլն:

Փայտացած կտրոնները սովորաբար մթերվում են բույսերի հանգստի շրջանում (ուշ աշնանը), լավ զարգացած մեկ տարեկան ճյուղերից եւ պահպում են նկուղներում ու սառնարաններում՝ ավազի մեջ կամ խրամատներում՝ ձան հաստ շերտի տակ: **Արմատակալներից** (արմատակալած կտրոնների տնկիներ) բարձր արդյունք է ստացվում, երբ կտրոնները վերցնում են մեկ տարեկան ճյուղերի ստորին, ավելի ուժեղ մասերից՝ 20-25 սմ երկարությամբ եւ առնվազն 5 մմ հաստությամբ: Կտրոնները անհրաժեշտ է կտրել «օղակով» (շիվի հիմքում) կամ «կրունկով» (շիվի նախորդ ճյուղավորության փոքր հատվածի հետ), որն ավելի լավ է նպաստում կայուսի արագ գոյացմանը:



Նկար 13. Կտրոնների մթերում

Կտրոններով բազմացման հողանասը պետք է լինի բերրի եւ ապահովված լինի բարձր խոնավությամբ: Տնկումները սովորաբար կատարվում են գարնանը: Տնկելուց առաջ անհրաժեշտ է լինում **բար-**

մացնել՝ կտրել կտրոնի վերին եւ ստորին ծայրերից մեկական «հնացած» աչքի շափով: Կտրոնները տնկելու համար հողը նախօրոք վարփում եւ հարթեցվում է: Տնկման ժամանակ ցցերով (փայտիկով) անցըեր են բացում եւ կտրոնի ստորին մասով իջեցնում անցըի մեջ, որից հետո հողը բուկլիցում կտրոնի շուրջը: Կտրոնները տնկում են ուղղաձիգ կամ քիչ թերությամբ, հողից վերեւ թողնելով միայն 1-2 աչք: Տնկելուց հետո հետազա խնամքը՝ ջրելը, քաղհանելը, փխրեցնելը, բուժելը եւ այլն, կատարել ըստ պահանջի: Արմատակալած կտրոնները սովորաբար հանվում են հողից նույն աշնանը, իսկ բույլ զարգացածները կարելի են թողնել տեղում կամ վերատնկելով՝ եւս մեկ տարի աճեցնել ու նոր հանել:

Կանաչ կտրոններով բազմացումը օգտագործվում է նոր մշակաձևի արագ բազմացման համար՝ հատուկ ջերմատնային պայմաններում: Բազմացման այս ձեւը պտղաբության մեջ համատարած չէ:



Նկար 14. Մթերված կտրոնների պահպանում

Անդալիսներով բազմացում

Անդալիսներով բազմացման էությունն այն է, որ մի շարք թփանման պտղատեսակների բուսաճային (վեգետատիվ) ճյուղերն արմատակալում են առանց մայր բույսից անջատվելու, իսկ արմատակալումից հետո կտրվում, հեռացվում են մայր բույսից եւ դառնում արմատակալ տնկի: Անդալիսի շատ տարածված ձեւերն են՝ **ուղղահայաց**, **հորիզոնական** եւ **աղեղնաձև** անդալիսները: Այդ ձեւերով բազմացվում են հաղարջենին, կոկոռշենին, մորենին եւ մոշենին, ցածրած խնձորենին, սերկելիենին, թզենին, նոնենին, տիպենին, լավունին (փշարմավենի, ձիափշատենի, չիչսանենի) եւ այլն:

Արմատային մացառներով բազմացում

Բազմացման այս եղանակը հասուն է միայն այնպիսի տեսակներին, որոնց արմատային համակարգը ունակ է հողի մեջ առաջա-

Ան հավելյալ բողոքները ու շիվեր արձակել, որոնք կոչվում են «մացառներ»: Այդ մացառները մայր բույսի արմատներից կտրելու, առանձնացնելու դեպքում ստանում են արմատակալ տնկու կարգավիճակ: Այս եղանակով բազմանում են սալորենու, շլորենու, մամխասալորենու, բալենու, ինչպես նաև՝ խնձորենու ու տանձենու որոշ տարատեսակներ:

Արմատային մացառների մեծ քանակություն հատկապես երեան է զալիս ծերացած ծառերի կամ վարի ժամանակ վնասված արմատներ ունեցող ծառերի դեպքում: Այդ մացառները երկու տարեկանում օգտագործվում են որպես տնկանյութ:

ԲԵՂԻԿՆԵՐՈՎ ԲԱՎՄԱՑՈՒՄ


Բազմացման այս եղանակը բնորոշ է գետնաելակին եւ ելակին, որոնք մայր բույսերի վրա գտնվող աճնան բողոքներից առաջացնում են թելաննան երկար ընձյուղներ՝ **բեղիկներ**, որոնց հանգույցներում կան բողոքներ եւ հատկապես բեղիկի ծայրամասում առաջացնում են տերեւային վարդակ ու շփվելով խոնավ հողի հետ՝ արմատակալում եւ առաջացնում են դուստր բույս: Յուրաքանչյուր բեղիկ բուսածի ընթացքում կազմակերպում է 3-4 արմատակալած **սածիլներ** (դուստր բույսեր), որոնք կարելի է անջատել եւ օգտագործել որպես տնկանյութ:

Պտղատնկարանի առանձին բաժինների դերն ու ագրոտեխնիկան


Պտղուների արտադրությունը սկսվում է տնկարանային գործից: Տնկարանը հատուկ տնտեսություն է, որտեղ բարենպաստ պայմաններում բազմացվում, աճեցվում եւ արտադրվում է մաքրասուրու ու որակյալ տնկանյութ՝ 1-3 տարեկան երիտասարդ բույսեր, որոնք ծեռք են բերել դիմացկունություն բաց դաշտի պայմանների հանդեպ: Նման տնկանյութը կիրառվում է պտղատու այգիներ եւ այլ տիպի տնկարկներ հիմնելու համար:

Արդյունաբերական նշանակության տնկարանը կազմված է մի քանի բաժիններից եւ ենթաբաժիններից՝ (դաշտերից). այն կարող է ունենալ ջերմատներ, ստվերատներ, սառնարաններ, պահեստներ, քափոնների վերամշակման փոսեր, խրամատներ, նկուղներ, լաբորատորիաներ, ծածկեր, տնակներ, նպատակային օգտագործման տարբեր այլ կառույցներ: Տնկարանը զբաղեցնում է որոշակի հողակտորներ, որոնք կարող են լինել միասնական տարածքում կամ անշատ, սակայն՝ իրարից ոչ հեռու:

Պտղատու տնկարանի կառուցվածքում առանձնանում են հիմնական 3 բաժիններ՝ **ա) մայրուտներ, բ) բազմացման եւ գ) ձեւավորման** կամ բուն տնկարանի բաժին: Բաժինները շահագործվում են ինքնուրույն արտադրական միավորների սկզբունքով, արտադրում են տնկանյութի որոշակի տեսականի եւ աշխատում են միասնական փոխմերգործության մեջ՝ վերջնական տնկանյութ ստանալու նպատակով:



Նկար 15. Տնկարանի կառուցվածքը ըստ Ա.Ե. Մարգարյանի եւ Հ.Ն. Շահինյանի.
«Պտղաբուծություն» 1976 թ.



Նկար 16. Տնկարանի գործունեությունը եւ տնկանյութի աճեցման
տեխնոլոգիաները (ըստ Ճերևառլի հեղինակների)

Քննարկենք պտղատու տնկարանի երեք հիմնական բաժինների դերն ու գործնությունը իրենց ենթարաժիններով (դաշտերով):

I. Մայրուտների բաժին

Մայրուտները տնկարանի այն մասն են, ուր պահպանվում են արժեքավոր բույսերի մաքրատրտ առանձնյակները (շրջանացված բուսաձեւեր ու պատվաստակալներ) եւ հետագա տնկանյութ ստա-

նաևու նպատակով իրականացվում է դրանց շարունակական բազմացումը: Մաքրասորտ բուսածեռային մայրուտներ կարող են հանդիսանալ գիտահետազոտական հիմնարկների ընտրատեսակ (կոլեկցիոն) այգիները, որոնք նույնապես շահագործվում են բազմացման համար:

Տնկարանային գործում մայրուտների կարեւորագույն դերը պայմանավորված է նաև այգեգործական ճյուղի առանձնահատկությամբ՝ տնկանյութի աճեցումը տեսում է 2-3 տարի: Այդ ընթացքում շուկայում արագ զարգացման շնորհիվ տեղի է ունենում նոր բուսածեռի (սորտերի) ներմուծման եւ հների վիճարինման գործընթաց: Տնկանյութ արտադրողը նախապես չի կարող իմանալ, թե երկու կամ երեք տարի հետո ինչ ծավալի եւ տեսականու պահանջարկ է լինելու շուկայում, ինչպիսի եւ ինչքան տնկանյութ աճեցնի: Ուստի մայրուտներում պետք է ունենա մայր բույսերից մթերվող բազմացման օրգանների հնարավորինս մեծ ծավալ եւ լայն տեսականի, ինչպես նաև հետեւի գիտանկանների առաջարկներին ու շուկայի միտումներին եւ տնկի հեռանկարային նոր բուսածեռի մայր բույսեր:

Միայն մեծ, նոր ու բազմազան բուսածեռային տեսականու մայրուտներ ունենալու դեպքում են նվազում արտադրական ռիսկերը («հին» բուսածեռի տնկանյութի կորուստները), իսկ նորերի արտադրությունը դառնում է եկամտաբեր: Այդ հաճամանքները պետք է կանոնավորել պետական օրենքներով եւ հավասարակշռել ոլորտում գործող բոլոր կողմերի շահերը: Այս առումով խիստ կարեւոր է համարվում հավաստագրված տնկանյութի աճեցումը, որը թոյլ կտավերահսկել տնկանյութի մաքրասորությունը, սանիտարական վիճակը (դրանց միջոցով տարածվող վարակները) եւ արգելափակել անորակ ու վտանգավոր տնկանյութի տարածումը:

Սայրուտները ըստ աճեցվող մայր բույսերի բնույթի լինում են երկու տիպի՝

- Բուսածեռի մայրուտ (սորտային մայրուտ)
- Պատվաստակալների մայրուտ

Բուսածեռի (սորտային) մայրուտում տնկվում եւ աճեցվում են տվյալ գոտում արդյունաբերական նշանակություն ունեցող պտղատեսակների մայր բույսեր, որոնք օգտագործվում են արմատակալման կտրոններ, պատվաստացու կտրոններ եւ պատվաստի աշքեր ստանալու համար: Մայրացու տնկարկների թերքի հաշվառում չի կատարվում՝ այլ կարեւոր է համարվում աճեցողությունը եւ բուսական նյութի ստանալը: Ուստի դրանց տնկման բանաձեւը, էտը, ձեւավո-

բումը, պարարտացումը, սնուցումները եւ խնամքի այլ աշխատանքներն ուղղված են շատ կտրոններ եւ աչքեր (բողբոջներ) ստանալուն: Գրեթե բոլոր պտղատեսակների բուսաձեւային (սորտային) մայրուտում ընդունված տնկման 4×4 մ քանաձեւի դեպքում՝ մեկ մեծ մայր բույսից տարեկան կարելի է ստանալ 20-50 պատվաստի կտրոն, որոնցից յուրաքանչյուրի վրա կարող է լինել 8-12 աչք (բողբոջ) եւ մեկ ծառից կարելի է մթերել պատվաստի համար պիտանի 150-500 աչք:

Պատվաստակալների մայրուտի դերը բազմացման համար առավել շատ պատվաստակալների բույսեր ապահովելն է: Պատվաստակալների մայրուտում տնկվում եւ աճեցվում են պատվաստակալի մայր բույսեր՝ սերմերի, մացառների, արմատակալների եւ անդալիսների ստացման համար: Այս մայրուտի նպատակը առավել շատ բուսածային եղանակով բազմացվող դրսար բույսեր կամ ծլունակ շատ սերմեր ստանալն է:

II. Բազմացման բաժին

Տնկարանի բազմացման բաժնում իրականացնում են բոլոր տիպի բույսերի՝ ապագա տնկանյութի բազմացումն ու սկզբնական աճեցումը: Այս բաժինն էլ ունի ենթաբաժններ. այնտեղ, որտեղ բազմացնում են սկզբնական աճեցում են ապահովում սերմնաբույսերի համար՝ կոչվում է «ցանքի դաշտ»: Այնտեղ, որտեղ արմատակալեցնում են նոյնակային (կլոնային) պատվաստակալների կտրոններ, մացառներ, բեղիկներ, անդալիսներ՝ անվանում են «կտրոնանդալիսային դաշտեր»: Այստեղ նոյն եղանակներով արմատակալեցնում են նաև առանց պատվաստի բազմացվող պտղատեսակների բուսաձեւերի յուրարմատ դրսար բույսեր, որոնք այս դաշտից ուղղակիորեն արտադրվում են որպես տնկանյութ: Այդ շարքում են այնպիսի կարեւոր պտղատեսակներ, ինչպիսիք են սերկեփլենին, նոնենին, թզենին, թթենին, հոնենին, շողպարը (կիվի), բոլոր հատապտուղները՝ ելակենին, մորենին, մոշենին, հաղարջենին, կոկոչենին, լափոենին, հապալասենին, ինչպես նաև խաղողի վազը:

Արդիական տնկարանների բազմացման բաժիններում կան նաև բազմացման նոր տեխնոլոգիաների լաբորատորիաներ, որտեղ պատվաստակալների եւ բուսաձեւերի դրսար բույսերի բազմացումն իրականացվում է մայր բույսերի մարմնի մասնիկներից (մերիստեներից)՝ «ին վիտրո» կամ «ապակու տակ» եղանակով:

III. ԶԵՒԱՎՈՐՄԱՆ ԲԱԺԻՆ ԿԱՄ «ՔՈԼՆ ԹՆԿԱՐԱՆ»

Զեւավորման բաժնում են իրականացվում տնկանյութի արտադրության կարեւորագույն գործընթացները՝ պատվաստը, սկզբնական աճեցումը եւ ծեւավորումը: Քանի որ պտղատեսակների մեծամասնությունը բազմացվում է պատվաստներով, այս բաժնում է կատարվում տնկանյութի գերակշռող մասի արտադրությունը: Զեւավորման բաժնում է իրականացվում ծիրանենու, դեղնենու, սալորենու եւ շլորենու, բալենու եւ կեռասենու, խնձորենու, տանձենու, ժորենու, ձիթենու, հոնենու, ընկուզենու, նշենու եւ ընկուզավորների մեծամասնության, ինչպես նաև եւ մի շարք այլ պտղատեսակների տնկիների արտադրությունը:

Պատվաստն իրականացվում է այս բաժնի առաջին դաշտում, որտեղ մերձեցվում եւ սերտաճեցվում են պատվաստացուն եւ պատվաստակալը: Այդ պատճառով այս ենթաքայլինը կոչվում է «պատվաստի դաշտ» կամ պարզապես «առաջին դաշտ»: Այստեղ են բերվում, տնկվում եւ պատվաստվում բազմացման բաժնում աճեցված պատվաստակալները եւ բուսաձեւային մայրուտից մթերած պատվաստացու կտրոնները: Հաջորդ տարի այս դաշտը վերանվանվում է «երկրորդ դաշտ» կամ «միամյակների դաշտ», որը հաջողված պատվաստներից առաջացած պատվաստաշերից սկսում են ապագա տնկանյութի ծեւավորումը: Այդպես են փարզում արագ աճող կորիզավորների տնկանյութի հետ: Այն կոչվում է «միամյակ» եւ պատրաստ է տնկարանից բողարկման եւ այգում վերատնկման: Իսկ եթե տնկանյութը դանդաղ է աճում եւ չի հասնում ճյուղավորման փուլին (սովորաբար հնդավոր պտղատեսակների դեպքում), եւս մեկ տարի աճեցվում է նույն դաշտում, որը կոչվում է «երրորդ դաշտ» կամ «երկամյակների դաշտ»: Այսպիսի տնկանյութը բողարկվում է որպես «երկամյակ» տնկիներ:

Աճեցման արդիական եղանակներից են «ձմեռային» կամ «մեքենայացված» պատվաստների կատարումը: Այս պատվաստները կատարվում են ձմռան ավարտին՝ հունվար-փետրվար ամիսների ընթացքում՝ աշնանը հողից հանված պատվաստակալների (հաճախակի դրանց արմատների) վրա՝ աշնանը մթերված պատվաստացու կտրոններով: Այն կատարվում է լարորատոր, սենյակային կամ նկուղային պայմաններում, հատուկ մեքենասարքավորումների միջոցով եւ տեխնոլոգիաներով: Այսուհետեւ պատվաստները որոշ ժամանակով տեղադրվում են հատուկ միջավայրում՝ որոշակի ջերմության,

խոնավության ու օդափոխության պայմաններում սերտաճելու: Այնուհետեւ մի քանի շաբաթով պատվաստների պահպանման պայմանները փոխվում են՝ ստիպողական հանգստի անցնելու համար: Գարնան բարենպատ պայմանների գալստյան հետ սերտաճած «ձմեռային» պատվաստները կամ միանգամից տնկում են բաց դաշտում, կամ՝ սկզբում տեղադրվում են բաղարներով ստվերատնակներում, այնուհետեւ՝ տեղափոխվում բաց դաշտ: Այս դաշտը նույնապես կոչվում է «միամյակների դաշտ» կամ «երկրորդ դաշտ»:

Պտղատնկարանի հիմնումը, գործունեությունը, տնկանյութի աճեցման տեխնոլոգիաները

Պտղատու տնկարանները պտղաբուծության զարգացման հիմքն են եւ դրանց արդյունավետ գործունեությամբ է պայմանավորված երկրի արդյունաբերական պտղաբուծության զարգացումն ու վերելքը, հասկապես՝ փոփոխվող պայմաններում:

Այս առումով երկրի տարածքով մեկ անհրաժեշտ է ունենալ տնկարանների ցանց, որոնք կընդգրկեն բոլոր հողակիմայական պայմանները, պտղաբուծական գոտիները եւ երկրում աճեցվող տեսականու եւ բուսաձեւերի կազմը (սորտիմենտը): Տնկարանների ամբողջականությունը, դրանց գոտիական, տարածքային տեղաբաշխումը, աճեցվող տեսականու ընտրությունը պետք է կատարվեն՝ ելնելով բոլոր շահակիցների ու մասնակիցների (մասնավոր արտադրողների եւ սպառողների, հանրային եւ պետական մարմինների) համերաշխված փոխգործունեության միջոցով հավասարակշռված շուկայական հարաբերությունների շահերից եւ, պարտադիր կերպով, գիտական հիմքերով ու պետական վերահսկողության պայմանով: Ուստիեւ, ինչպես նշվել է վերեւում, շատ կարեւոր է տնկարանների հիմնումը այս կամ այն տեղանքում եւ պայմաններում:

Տնկարանի տեղն ընտրելիս պետք է հաշվի առնել, որ հողամասի մակերեսը պետք է լինի հարթ կամ ունենա փոքր՝ $3\text{--}5^{\circ}$ թերություն, հողերն ունենան ավազակավային կամ կավավազային կազմ, ինչպես նաև սննդանյութերով հարուստ խոր վարելաշերտ:

Տնկարանը պետք է շրջապատված լինի դաշտապաշտպան եւ քամերեկ շերտերով, ապահովված ոռոգման ցանցով:

Եթե մոտակայքում չկան հիմնված մայրուտներ, անհրաժեշտ է ընտրել ու պահպանել առանձին ծառեր՝ պատվաստակալների համար սերմեր եւ մաքրասորտ կտրոններ ստանալու նպատակով:

Սերմերը պետք է մթերել պտուղների լրիվ հասունացման շրջանում, սառը մշակման միջոցով (առանց եփելու կամ խաշելու՝ անջատել պտղամսից, լվանալ սառը ջրով եւ ոչ հաստ շերտով փոել չորանալու ստվերուտ տեղում: Չորացնելուց հետո սերմերը պահել $+5\text{--}7^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի եւ լավ օդափոխվող ու չոր սենյակային պայմաններում:

Պտղատեսակների սերմերը սովորաբար ցանում են աշնանը, հետքերքահավաքային հասունացման շրջանն աճցնելուց հետո: Այդ շրջանի արագացման զործողության լավագույն պայմաններ են ստեղծվում **ստրատիֆիկացման (ստրատիֆիկացիայի) միջոցով: «Ստրատիֆիկացիա» լատիներենով նշանակում է «շերտավորում», թեև թարգմանվել է նաև որպես «ավազացում»: Ստրատիֆիկացվող սերմերը խառնում են զետի լվացված ավազի (մանր խարամի, խճի, տաշեղների, թեփի, տորֆի եւ այլ ծածկող նյութի) հետ եւ որոշ ժամանակ պահպում ցածր, բայց դրական ջերմաստիճանների պայմաններում՝ $+1\text{--}10^{\circ}\text{C}$:**

Կորիզավորներից կեռասենու, բալենու, շլորենու, սալորենու եւ դեղձենու սերմերն ունեն հետ-հասունացման համեմատաբար երկար ժամանակաշրջան, ուստի, չորացնելուց հետո, դրանք պետք է ենթարկել ստրատիֆիկացման, այլապես սերմերը կծլեն քիչ քով կամ չեն ծլի ընդհանրապես: Կորիզավորներից ծիրանենու ու նշենու, ընկուզավոր ու հնդապոր տեսակների սերմերը կարելի է ցանել աշնանը՝ առանց ստրատիֆիկացման: Միայն թե հողում ցանելուց առաջ սերմերը պետք է բրցել հոսող ջրում, հնդավորների սերմերը՝ 8-10 ժամ, իսկ կորիզավորներինը՝ 3-4 օր: Ստրատիֆիկացման դնելուց առաջ նույնը խորհուրդ է տրվում կատարել այդ սերմերի հետ:



Նկար 17. Պատվաստակալների աճեցման դաշտ

Սերմերի ստրատիֆիկացումը կատարվում է արկդերում կամ խրամատներում կամ փոսերում՝ 1 ծավալային մաս սերմը խառնելով 3-4 մաս ծածկող նյութի (ավազի) հետ, պահպանում են $+5-6^{\circ}\text{C}$ -ի պայմաններում եւ պարբերաբար ջրում ու խառնում:

Ստրատիֆիկացում անցած սերմերը ցանում են կայուն ցրտերից առաջ, հոկտեմբեր ամսին, նախօրոք պատրաստված հողամասում: Սերմերի ցանքի չափարաժինները (նորմերը) կախված են դրանց մեծությունից, որակից, վիճակից, սերմնաբույսերի եւ տնկիների սննման մակերեսից, ցանքի ժամկետից եւ այլն:

Հնդավորների սերմերը ցանում են հողի մեջ 3-5 սմ, իսկ կորիզավորներինը՝ 5-8 սմ խորությամբ:

Ցանքից հետո, եթե տեղումներ չեն լինում եւ հողը չորացել է, ցանած դաշտը պետք է 1-2 անգամ ջրել:

Գարնանը, կորիզավոր պտղատեսակների սերմերի ծլելուց եւ առաջին 4-5 իսկական տերեւների կազմակերպումից հետո, կատարում են բույսերի նոսրացում՝ բողնելով միմյանցից 10-15 սմ հեռավորություն: Նոսրացումից անմիջապես հետո դաշտը ջրում են: Նոսրացման ընթացքում հողից հանած սերմնաբույսերով սածիլման միջոցով ստեղծում են բույսերի նոր շարքեր՝ հետա-զայում որպես պատվաստակալ օգտագործելու համար:

Բողոքումը կատարում են՝ ելնելով բուսաճի (վեգետացիայի) ընթացքում բույսերի պահանջից՝ 8-12 անգամ:

Բուսաճի ընթացքում բույսերը 2-3 անգամ սնուցել հանքային պարատանյութերով՝ հեկտարին տալով ազդուի, ֆոսֆորի եւ կալիումի պարաբանանյութերի՝ ազդող նյութի հաշվով 45-60 կգ քանակություն:

Տնկարան հիմնելու աշխատանքների ծավալը եւ ծախսերը

Տնկարանի աշխատանքների ծավալը եւ ծախսերը հաշվարկելու համար պետք է՝

1. Ծիշտ ընտրել տնկարանի տեղը: Տեղանքը պետք է լավագույնս համապատասխանի երիտասարդ պտղատու բույսերի աճեցման պահանջներին՝ զերծ լինի սառնամանիքներից, ցրտահարություններից, հեղեղումներից, սողանքներից, սելավներից, ուժեղ քամիներից, կարկուտներից, աղետալի այլ գործոնների վտանգներից, լինի հնարավորինս հարթ, առանց քարքարոտության ու խիստ մղախոտվածության, հողերը լինեն թերեւ, լավ օդաբափանց, ցանկալի է՝ ավազային կամ կավավազային, առնվազն 30-40 սմ վարելաշերտով, հարուստ հումուսով եւ հանքային սննդատարրերով, ունենա անխափան ջրամատակարարում: Հարմարավետ տեղանքը պետք կլինի ընտրել՝ վերոնշյալ գործոնների առկայությունից կամ քացակայությունից ելնելով, ինչպես նաև ուսումնասիրելով տեղանքի միկրոկլիման եւ միկրոռելենքը, վտանգների աստիճանն ու հավանականությունը, ոռոգման ջրերի առկայությունը եւ բավարար որակը երիտասարդ պտղատու բույսերի համար, հողի ֆիզիկական եւ քիմիական կազմը, սննդատարրերը եւ մի շարք այլ գործոններ: Այնուհետեւ, ելնելով տնկարանի համար տեղանքի պիտանիության աստիճանից, նախատեսել քամեքեկ շերտերի, հողի, ջրերի եւ ընդհանուր միջավայրի հետագա բարելավման միջոցառումների համակարգը եւ բույսերի տնկման (ցանքի) համար հողի նախապատրաստման աշխատանքները համապատասխան տեխնիկայով:
2. Բոլոր նախատեսվող պտղատեսակների արտադրության համար նախագծել տնկարանի հատակագիծը՝ նշելով կառուցվածքի տարրերն ըստ բաժինների ու արտադրական դաշտերի (մայրուտներ, բազմացման եւ ձեռավորման դաշտեր):

3. Նախատեսել եւ ապահովել տնկարանի արտադրական տեխնոլոգիական ամբողջ շղթայի միջոցառումների փոխկապակցվածությունը: Տնկարանի բոլոր բաժինների եւ օդակների առանձին աշխատանքները՝ սերմերի մթերում, նախապատրաստում (ստրատիֆիկացում), ցանքի եւ սերմնաբույսերի աճեցում, բուսաճային (նույնակային, «կլոնային») պատվաստականների բազմացում եւ աճեցում, մայրուտների խնամք, պատվաստացու կտրոնների մթերում եւ այլն, ծառայեցնել տնկանյութի արտադրությանը: Այդ առումով, հատկապես կարեւոր է պատվաստների ճշգրիտ կատարումը եւ խնամքը, որպակյալ տնկանյութի աճեցումը՝ պատվաստաշվի, միամյակների եւ երկամյակների խնամքը եւ ձեւափորումը, ինչպես նաև տնկանյութի բողարկումը (հանումը հողից): Այնուհետեւ կարեւոր է տնկանյութի ճիշտ պահեստավորումը, լավ պահպանումը, հետազա իրացումը: Այդ շրջանում զուգահեռաբար պետք է կատարվի տեխնոլոգիական շարքում կիրառվող յուրահատուկ տեխնիկայի, սարքերի, գործիքների եւ նյութերի ժամանակին ձեռքբերում:
4. Նախատեսել արտադրվող մշակարույսերի բոլոր մշակաձեւերի վերջնական տնկանյութի արտադրության համար անհրաժեշտ հողակտորները: Յուրաքանչյուր մշակարույսից ընտրել մոտ 5-ական մշակաձեւ (ընդամենը՝ մոտ 40-50 մշակաձեւեր): Ընտրված հողակտորները լավագույնս տեղաբաշխել տնկարանի հատակագծի վրա եւ կազմակերպել այդ դաշտերի խնամքը տնկարանի տարածքում:
5. Նախատեսել ոչ պտղատու (բանջարային, դաշտավարական, տեխնիկական եւ այլն) մշակարույսերի ցանքաշրջանառությունը տնկարանի տարածքում: Տնկարանի դաշտերի համար պետք է կազմել 4-5 դաշտային ցանքաշրջանառության նախագիծ (պլան), որտեղ նշված լինեն առանձին մշակարույսերը եւ դրանց մշակաձեւերը (սորտերը), դրանց հերթագայությունը ըստ տարիների եւ առանձին դաշտերի, ցանքի, սածիլման, ոռոգման եւ պարարտացման չափարաժինները (նորմերը): Հաշվի առնել, որ ըստ տարիների անփոփոխ, նույն տեղում մնում են տնկարկները (մայրուտները): Ձեւավորման հերթական դաշտերը, անդախային ու մացառային դաշտերը տեղափոխում են 2-3 տարին մեկ անգամ, իսկ պատվաստակալ սերմաբույսերի ցանքի դաշտերը, ցանքաշրջանառության մշակարույսերի ցանքի դաշտերը, տնկիներ արտադրող եւ կտ-

բոնարմատակալման դաշտերը փոփոխվում են յուրաքանչյուր տարի: Այդ դաշտերի տեղափոխության ընթացքում հաշվի են առնում հողամասերի մեծությունը, ինչպես նաև դրանց միավորման եւ տրոհման հնարավորությունները:

6. Կազմել տարածքի հատակագիծ, կազմակերպել եւ տեղաձեւել տարածքը: Նախատեսել անհրաժեշտ քոլոր պարագաները եւ պայմանները, որոնք անհրաժեշտ են տնկարանի կազմակերպման գործում (ճանապարհներ, անցումներ, ջրագծեր, ցանկապատ, մուտք, կայանատեղի, ջերմատուն, ստվերատուն, սառնարան, պահեստներ, ծածկեր, տարրեր օգտագործման լաբորատոր տնակներ՝ նկուղներով, թափոնների վերամշակման փոսեր, խրամատներ եւ այլն): Որոշ տարածություններ քողնել՝ հետազոյում հեռանկարային նոր պատվաստակալների եւ բուսաձեւերի (սորտերի) մայրուտներ հիմնելու համար:
7. Կազմել նախահաշիվ, նախատեսել նյութական, աշխատանքային եւ կազմակերպական քոլոր ծախսերը, նախատեսել տնկանյութի արտադրության ծավալների հնարավոր ելանքը ըստ քոլոր տեսակների, մշակաձեւերի, ինչպես նաև առանձին դաշտերից, հաշվարկել տնկանյութի ինքնարժեքը, սպասվող եկամուտները եւ շահույթը:
8. Ընտրել, ձեռք բերել կամ վարձակալել մեքենասարքավորումներ: Տնկարանի յուրաքանչյուր 10 հա տարածքի վրա աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ է 1 փոքր (մինչեւ 30 ձիառութ) կամ միջին (30-50 ձիառութ) հզորության տրակտոր (քոլոր համապատասխան կցորդներով), 1 միջին կամ մեծ բեռնատար, 1 միջին (մինչեւ 1 տոննա բեռնատարողությամբ) ավտոմեքենա, 1 միջին հզորության (800-1200 լ տարրողությամբ) սրսկիչ՝ բույսերի բուժումների համար, 2 փոքր («մեջքի») շարժիչով սրսկիչ, 1 ձմեռային պատվաստի հաստոց կամ 10-12 մեքենայական պատվաստի սարք, մոտավորապես 200 մ² մակերեսով 1 հատ քաղանթով ջերմատուն, 1 հատ մոտ 500 մ² մակերեսով մանրացանցով ստվերատնակ, 3-4 լաբորատոր տնակ, կարիլային ոռոգման համապատասխան համակարգ եւ ջրամատակարարման սպասարկման պոմպեր, խողովակներ, գտիչներ, լաբորատորիաների, ջերմատան ու բաց դաշտի աշխատանքների համար հատուկ սարքեր, սարքավորումներ, բանվորական հագուստ եւ գործիքներ:

9. Նախապատրաստել արտադրական աշխատանքների առնվազն երեք տարվա պլան՝ ըստ յուրաքանչյուր թվականի գարուն-աշուն սեղոնների, նաև՝ առանձին ամիսների: Կատարել տնկարանի հիմնադրման գործողությունների պլանավորում եւ աշխատանքների կատարման ժամանակացույց, ըստ որի որոշարկել տնկարանում աճեցվող տեսակների պատվաստակալների եւ մշակածների ընտրությունը՝ ենելով արտադրական անհրաժեշտությունից եւ հողակիմայական պայմաններից, հայքայթել վերոնշյալ բույսերը, ներկրել կամ գնել, տեղափոխել եւ պահպանել: Պլանավորել եւ կատարել շինարարական աշխատանքներ (ցանկապատ, մուտք, կայանատեղի, շինություններ, պահակասուն, պահեստներ, ծածկեր, ջերմատուն, ստվերատնակ, սառնարան, տնակներ): Կատարել բույսերի խնամքի գործիքների, նյութերի, սարքերի եւ մեքենաների ընտրություն, հայքայթում եւ գնում: Հիմնել պատվաստացու եւ պատվաստակալ մայրուտներ այլ տնկարաններից գնված մայր բույսերով եւ պատվաստակալներով, նախապատրաստել դաշտերը եւ կատարել ցանք ու ձմեռային պատվաստների տնկում:
10. Իրականացնել մասնագետների եւ աշխատողների հավաքագրում, աշխատակազմի ձեւավորում եւ աշխատանքների կազմակերպում: Տնկարանի յուրաքանչյուր 5-10 հա տարածքի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ կլինի ընդգրկել աշխատանքային հետեւյալ անձնակազմը.
- աշխատանքների դեկավար (տնօրեն, վարիչ, պատասխանատու)՝ 1 անձ,
 - Պատասխանատու անձին (տնօրեն) ենթակա պտղաբուծության եւ բույսերի պաշտպանության գծով մեկական խորհրդական մասնագետներ,
 - տնօրենին ենթակա, տնկարանային գործում մասնագիտացած 1 ազդունում-այգեգործ, որը պատասխանատու կլինի մասնագիտական հարցերի եւ տեխնոլոգիաների համար,
 - ազդունում-այգեգործին ենթակա 24 բրիգադավար, որոնք պատասխանատվություն կկրեն առանձին տեղանքներում արտադրության համար,
 - բրիգադավարներին ենթակա 12-20 բանվոր եւ պահակ (ընդամենը 2-4 բրիգադ, որոնցից յուրաքանչյուրում մինչև 8-12 հոգի),

որոնց կարելի է մասնագիտացնել որոշակի տնկանյութի աճեցման տեխնոլոգիայի առումով:

- 2 մեքենավար (տրակտորավար),
- 2 առաքող-գնորդ (փոքր ավտոմեքենայի և բեռնատարի վարորդ),
- Օժանդակ անձնակազմում անհրաժեշտ կլինիկ նաև հաշվապահ, պահեստավետ, գործավար, հնարավոր է նաև իրավաբան և վարորդ՝ գործական այցերի համար:

Թպուկային տնկանյութի արագացված բազմացումն ու աճեցումը ժամանակակից տեխնոլոգիաներով

Այզեգործական թզուկային տնկանյութի աճեցման առնչությամբ պետք է նշել տնկանյութի բազմացման եւ աճեցման այլ ձեւերը եւ տեխնոլոգիաները:

Զարգացած այզեգործություն ունեցող երկրներում պտղատեսակների թզուկային տնկիները բազմացնում են միայն բուսաճային (վեգետատիվ) եղանակներով:

Այս նոր եղանակների միջոցով ոչ մեծ լարորատորիայի եւ մեկերկու ցերնատան տարածքում ստանում են միլիոնավոր դուստր բույսեր եւ տնկիներ, որոնց ավանդական արտադրության համար կպահանջվեր մի քանի տասնյակ հեկտար տարածք:

Այդ ուղիղվ զարգացման ճանապարհին անհրաժեշտ են նոր տեխնոլոգիական եղանակի հնարավորություններ՝ համապատասխան զիտելիք ունեցող մասնագետների պատրաստում եւ լարորատոր-արտադրական սարքավորումներ:

Տնկարանային գործում վերջին տասնամյակներում ներմուծվել են մի շարք նորարարություններ եւ բարձր արդյունավետության ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնց շնորհիվ հնարավոր է դարձել մեծ քանակի առողջ (վարակագերձ), դուստր բույսերի արագացված բազմացում եւ աճեցում, ոչ մեծ ծավալի աշխատանքներով եւ փոքր մակերեսների վրա (հաճախ՝ առանց հողի) լավագույն տնկանյութի արագ եւ շատ հարմար արտադրություն:

Նոր տեղանորոգիաները հնարավորություն են տալիս բուսաճային եղանակով բազմացող բույսերից ստանալ տնկանյութի մեծածավալ արտադրանք եւ ունեն եւս մի շարք առավելություններ: Արագացված բազմացման եղանակների շնորհիվ մեկ մայր բույսից արագորեն ստանում են բազմահազար դուստր բույսեր: Մայր բույսի գոյացնող հյուսվածքի (մերիստեմի) հատվածները բազմացնում են հատուկ պայմաններում եւ հատուկ հողախառնուրդով բաղարներում աճեցնում պատվաստակալներ եւ յուրաքանչյուր տնկանյութ: Անհրաժեշտու-

թյան դեպքում արտադրում են նաև պատվաստած տնկանյութ՝ բազմացման ընթացքում կատարելով դալար օրգանների եւ հյուսվածքների միկրոպատվաստում:

Բուսաճային բազմացման ձեւերը շատ են, բայց այգեգործությունը գրեթե ամբողջովին անցել է առավել առաջադիմական տեխնոլոգիայի, որն անվանում են **բազմացում «ապակու տակ»** (In vitro եղանակ) կամ **միկրոկլոնալ բազմացման կեսատեխնոլոգիա**: Արագացված բազմացման այս եղանակի շնորհիվ մեկ մայր բույսից արագորեն ստանում են բազմահազար եւ միլիոնավոր դուստր բույսեր, որոնցից էլ՝ այդքան տնկանյութ: Եղանակի հությունն այն է, որ նորովի աճեցման արհեստական հնարքների շնորհիվ՝ սննդարար եւ արմատածին լուծույթների վրա, ախտահանված սրվակներում եւ անորթներում, արագացված կերպով բազմացնում են մայր բույսի գոյացնող հյուսվածքի (մերիստեմի) հատվածները եւ հատուկ հողախառնուրդով բաղարներում աճեցնում պատվաստակալներ կամ յուրարմատ տնկանյութ: Անհրաժեշտության դեպքում արտադրում են նաև պատվաստած տնկանյութ՝ դեռ բազմացման ընթացքում՝ կատարելով դալար օրգանների եւ նույնիսկ հյուսվածքների միկրոպատվաստում:


Միկրոկլոնային («ապակու տակ») բազմացման եղանակի մանրամասները

Այս եղանակը սկսել են կիրառել շնորհիվ ամերիկյան գիտնականների խմբի՝ (Murashige and Skoog, 1962) բուսական հորմոնները հայտնաբերելուց եւ դրանց ազդեցությունը տարբեր մշակաբույսերի աճի, բազմացման եւ զարգացման վրա մի շարք այլ գիտնականների (Aderkas, Bonga, Gray, Dennis, Moon, Northey, Park, Turner, etc.,) փորձարկումներից հետո: Այն առավել լայն տարածում եւ կիրառում է գտել 20-րդ դարի վերջից աշխարհի բազմաթիվ երկրներում:

Կենսատեխնոլոգիական եղանակով միկրոկլոնալ բազմացման գործընթացը կարելի է բաժանել չորս փուլերի: Ընդ որում՝ առաջին երեք փուլերն ընթանում են «ապակու տակ» (In vitro)՝ սրվակներում, փորձանորերում, Պետրիի բասերում (տափակ ու ծածկվող), ապակյա այլ տուփերում, իսկ վերջին՝ չորրորդ փուլը՝ փոքր սենյակներում կամ խցերում՝ վերահսկվող միջավայրի պայմաններում:

1-ին փուլ - Հյուսվածքի մասնիկների (էքսպլանտների) ընտրությունը եւ դրանց տեղադրումը ախտահանած (ստերիլ) միջավայրում

Կենսատեխնոլոգիական եղանակի կիրառման դեպքում չափազանց կարենոր է բույսի հյուսվածքից կտրված մասնիկների (էքսպլանտների) ընտրությունը, որի ժամանակ հաշվի են առնվում առանձնացվող մասնիկի (էքսպլանտի) ինչպես տարիքը, նմուշառման ժամանակաշրջանը, բուսաճային ֆենովիդը, չափսերը, հյուսվածքի անջատման դիրքը, այնպես էլ առողջ եւ անվնաս վիճակը (նկ.18):



Նկար 18. Բույսերի բազմացման կենսատեխնոլոգիական եղանակի փուլերը

Բազմացման բարձր ունակության շնորհիվ երիտասարդ հյուսվածքներն ու օրգաններն ավելի մեծ արդյունավետություն են դրսեւում, քան ավելի տարիքային հյուսվածքները (Smith, 2000):

Էքսպլանտի ընտրության հաջորդում է դրա վարակագերծումը, քանի որ բազմաթիվ ախտածին նարմիններ, ինչպիսիք են՝ սնկերը, բակտերիաները, տարրեր խմնրիչներ, վիրուսներ, կարող են տարածված լինել մայր բույսի մասնիկի (էքսպլանտի) ինչպես մակերեսին, այնպես էլ դրա բջիջներում եւ անորային համակարգում։ Վարակագերծումը հնարավոր է կատարել ճառագայթման, ջերմային մշակույթան՝ (+45-55°C), քիմիական ախտահանման մի շարք միջոցներով.

80 %-ոց մերիլ կամ էթիլ սպիրտով, 5,25-6 %-ոց նատրիումի կամ կալցիումի հիպոքլորիդով, ջրածնի պերօքսիդով եւ այլն: Վարակագերծման տեսողությունը եւ օգտագործվող լուծույթների խտությունը կարող է լինել տարբեր եւ կախված է մի շարք հանգամանքներից:

Հաճախ առկա վարակը շատ դժվար է բացահայտել արտաքին ախտանիշների բացակայության պատճառով (Hartmann and Kester, 2002): Վարակագերծումից հետո անջատված մասնիկը (էքսպլանտը) տեղադրվում է համապատասխան միջավայրում, որը պատրաստվում է ջրիմուներից ստացվող «ազար-ազար» կոչվող դոնորներից՝ մի շարք վիտամինների ու հանքային աղերի հավելումով: Աճը խթանելու համար այս միջավայրի մեջ օգտագործվում է 0,5-1,0 մգ/լ խտությամբ ցիտոկինին (կինետին, բենիլադենին [BA], 6-բենզիլամինոպուրին [BAP], 2-իզոպենտենիլադենին [2iP]) եւ թույլ խտությամբ (0,01 մգ/լ) առլսիններ (IBA, NAA կամ 2,4 Դ): Այս գործընթացը կարող է տևել 3-4 ամիս:

2-րդ փուլ - Բազմացում

Այս փուլի ընթացքում ընդգծված կերպով տեղի է ունենում մասնիկի (էքսպլանտ) բջջային զանգվածի աճ ու չափսերի մեծացում, օրգանների ձեւավորում եւ կողային ընձյուղների առաջացում (Razdan, 2003): Ընձյուղների առաջացման գոծընթացը սովորաբար խրանքում է ցիտոկինինով, սակայն դրանց առաջացման վրա անուղղակի ազդեցություն կարող են ունենալ նաև առլսինները (D’Oria, 2012): Հիմնականում, *in vitro* պայմաններում բույսերի զարգացման վրա աճի խթանիչների ազդեցության մակարդակը պայմանավորված է բույսերի ժառանգականությամբ՝ գենոտիպով (Dobrnniszki and da Silva, 2010): Պտղատեսակից եւ պայմաններից կախված, մեկ էքսպլանտը կարող է առաջացնել մինչեւ 25 ընձյուղ (նկ. 19): Եթե նոր գոյացած ընձյուղները հասնում են անհրաժեշտ չափսի, կարելի է առանձնացնել եւ տեղափոխել նոր միջավայր: Միջավայրում աճող մասնիկից (էքսպլանտ) նոր մասնիկների եւ ընձյուղների անջատում



Նկար 19. Տանձենու ընձյուղները՝ ապակյա տուփերի մեջ ազար-ազարի միջավայրում միկրոբազմացման ընթացքում

առանձնացնել եւ տեղափոխել նոր միջավայր: Միջավայրում աճող մասնիկից (էքսպլանտ) նոր մասնիկների եւ ընձյուղների անջատում

կարելի է իրականացնել յուրաքանչյուր 4-8 շաբաթը մեկ անգամ: Բազմացման այս գործընթացը կարող է կրկնվել բազմաթիվ անգամ՝ մինչեւ առանձնացվեն բավարար քանակի ընձյուղներ եւ տեղափոխվեն արմատակալման փուլ (D’Oria, 2012): Կրկնությունների քանակը կախված է տվյալ տեսակի գենոտիպից, մասնավորապես՝ բազմացման ընթացքում գենային անցանկալի փոփոխություններից զերծ մնալու հատկությունից (Hartmann and Kester, 2002; Razdan, 2003; D’Oria, 2012):

3-րդ փուլ - Արմատների առաջացում եւ կազմավորում

Սիցավայրում աճած մասնիկից (էքսպլանտ) առանձնացնելուց հետո ընձյուղները տեղափոխվում են արմատագոյացման միջավայր եւ նախապատրաստվում են վերջնական վերատնկման: Որոշ տեսակներ ունակ են արմատներ արձակել նույնիսկ նախորդ փուլի ընթացքում, սակայն շատ տեսակներ պահանջում են միջավայրի փոփոխություն: Ընդ որում, արմատագոյացման գործընթացն ակտիվացնելու համար միջավայրին հավելում են առլուսիններ եւ պակասեցվում ցիտոկինինները (Razdan, 2003; D’Oria, 2012): Բույսերի արմատառաջացման ունակության տարրերությունների պատճառով այդ գործընթացը կարող է իրականացվել կամ *in vitro* կամ *ex vitro*՝ «արտաքին միջավայրի» պայմաններում:

In vitro արմատառաջացման գործընթացն իրականացվում է վարակագերծ, ախտահանված (ստերիլ) միջավայրում (նկ. 20):



Նկար 20. Արմատառաջացման գործընթացը ախտահանված միջավայրի սրվակների մեջ

Ի տարրերություն *in vitro* եղանակի, *ex vitro*-ի դեպքում արմատագոյացման գործընթացը տեղի է ունենում փորձանորից դուրս՝ արտաքին պայմաններում: Նախքան վերատնկելը ընձյուղները հարկավոր է մշակել տարրեր տեսակի առլուսիններով: Մշակման նպատակով դրանք կարելի է ընկղմել առլուսինի լուծույթի մեջ կամ 5-10 օրով տեղափոխել առլուսինի բարձր խսություն ունեցող միջավայր:

In vitro-ի համեմատ *Ex vitro* եղանակով արմատառաջացման գործընթացը բույլ է տալիս կրծատել արտադրական ծախսերը՝ կա-

ոռույցների, գույքի, սարքավորումների, էներգիայի եւ այլն, եւ նպաստում է բույսերի ավելի լավ ձեւավորմանը, որի շնորհիվ քարձրանում է դրանց հարմարվողականությունը արտաքին միջավայրի պայմաններում՝ բաց դաշտում (Hartmann and Kester, 2002):

4-րդ փուլ - Կոփում (կլիմայավարժում)

Նախորդ փուլերի ընթացքում արմատակալած կամ նույնիսկ դեռ չարմատակալած բույսերը կոփման (կլիմայավարժման) նպատակով տեղափոխվում են ջերմատնային պայմաններ կամ քաղանքային ծածկերի տակ (նկ. 21):



Նկար 21. Բույսերի կոփումը ջերմատան պայմաններում

Բույսերը սովորաբար տեղադրվում են համապատասխան քաղանքներում, սակայն կարող են տեղափոխվել նաև հատուկ հիմնախառնուրդի (սուրստրատի) վրա (անհող միջավայր): Այս փուլում, քարձր խոնավության պայմաններում, կարող է ճնշվել բույսերի մոմաշերտի առաջացումը ընձյուղների ցողունների եւ տերեւարիթեղների վրա, որի պատճառով բուսական օրգանիզմում կարող է խախտվել ջրափոխանակության հավասարակշռությունը: Որպես արդյունք, նման բույսերը կարող են լցնել կոփման փուլը (Razdan, 2003; D’Oria, 2012): Միջավայրի ջերմաստիճանը, օդի հարաբերական խոնավությունը եւ լույսի ինտենսիվությունը՝ հզորությունը եւ տեսողությունը, խստագույն կերպով պետք է կարգավորել համակարգչային համապատասխան ծրագրակազմի միջոցով: Արմատառաջացման եւ ջրի կլանման գործընթացների վրա մեծ ազդեցություն ունի արմատային համակարգի եւ հիմնախառնուրդի փոխազդեցությունը (Neri et al., 2017):

ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ (ՄԻԿՐՈԲԱՎՄԱԳՄԱՆ) ԵՂԱՆԱԿԻ ԴՐԱԿԱՆ ԵՒ ԲԱցԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Կենսատեխնոլոգիական եղանակի հիմնական առավելություններն են.

- ▶ Կենսատեխնոլոգիական եղանակով բույսերի բազմացումն ավելի կարճ ժամանակահատված է պահանջում, քանի բազմացման ավանդական եղանակներից յուրաքանչյուրը (Dolcet-Sanjuan et al., 2008; Mencuccini, 2009):
- ▶ Դա կենսատեխնոլոգիական լաբորատորիաներին բույլ է տալիս տարեկան արտադրել միլիոնավոր բույսեր:
- ▶ Վերջինս իր հերթին պարտադրում է մեծ սպառնան շուկայի առկայություն կամ պահեստավորման համապատասխան հնարավորություն (Razdan, 2003; D’Oria, 2012):
- ▶ Տնկարանի անհափան աշխատանքն ամբողջ տարվա ընթացքում. քանի որ միկրոբազմացման ամբողջ ընթացքը կատարվում է վերահսկվող (արհեստական) միջավայրում:
- ▶ Արտադրությունը կարելի է պլանավորել և կազմակերպել ամբողջ տարվա ընթացքում՝ շուկայի պահանջներին համապատասխան (Razdan, 2003):
- ▶ Վճառածին օրգանիզմներից զերծ տնկանյութի արտադրություն. եթե մայրական բույսը ենթարկվել է փորձաքննության եւ հավաստագրվել որպես հիմնական վճառակար միկրոօրգանիզմներից զորք բույս, ապա դրանից ստացված էքսպլանտները նույնապես կարող են համարվել վճառակար միկրոօրգանիզմներից զորք:
- ▶ In vitro պատվաստումը (միկրոպատվաստում), որն ապահովում է «պատվաստի» իրականացումը մինչեւ ստերիլ պայմաններից աճեցվող բույսի դրասքումը (Musacchi, 1996; Espen et al., 2002) (նկ. 22):
- ▶ Կենսատեխնոլոգիական բազմացման եղանակը կարող է լավ այլնտրանք լինել որոշ տեսակների բազմացման համար,



Նկար 22. In vitro պատվաստում. ստերիլ միջավայրում պատվաստման անհամատեղելիությունը որոշելու ուսումնասիրություն

որոնք հնարավոր չեն բազմացնել սովորական եղանակներով՝ անդախներով եւ կտրոններով (Pasqual et al., 2002; Razdan, 2003; D’Oria, 2012):

- ▶ Անհետացման վտանգի տակ գտնվող բույսերի պահպանում. կենսատեխնոլոգիական եղանակը կարելի է կիրառել որոշակի բույսերի գենոտիպի (կենդանի վիճակում) պահպանման համար: Գործընթացն իրականացվում է 2-5°C-ի կամ հեղուկ ազոտի պայմաններում (De Carlo et al., 2009):
- ▶ Բույսերի կենդանի հյուսվածքների երկարաժամկետ պահպանում. բույսերի հյուսվածքները գերառեցման (կրիոկոնսերվացման) միջոցով կարող են պահպանվել այնքան ժամանակ, մինչեւ անհրաժեշտ լինի դրանց միջոցով կազմակերպել տվյալ բուսատեսակի վերարտադրությունը միկրոբազմացման եղանակով (Razdan, 2003): Այս եղանակի բացահայտման պահից (նախորդ դարի 60-ական թվականներ), այն համարվում է կենսարանական նյութի երկարատեղ պահպանման լավագույն միջոց, քանի որ չի առաջացնում ժառանգական (գենետիկական) շերումներ, եւ հյուսվածքները պահպանում են վերարտադրվելու ներուժը: Եղանակի հիմքում ընկած է բույսերի կրիոգեն ջերմաստիճանում (-196°C)` հեղուկ ազոտի միջավայրում, կենդանի հյուսվածքների պահպանումը, որի դեպքում, բջիջների ներսում, «դադարեցվում է» նյութափոխանակությունը:

Թվարկված առավելություններից բացի կենսատեխնոլոգիական եղանակը, որպես նորագույն տեխնոլոգիա, հարուցում է մի շարք դժվարություններ, որոնք հետզհետեւ հաղթահարվում են: Այդ եղանակով զարգացում անցնելու ճանապարհին անհրաժեշտ են նոր տեխնոլոգիական լայն հնարավորություններ՝ համապատասխան գիտելիք կրող մասնագետների պատրաստում եւ լարորատոր-արտադրական սարքավորումներ:

Պտղատու այգիների (տնկարկների) տիպերը:

**Պտղատու ինտենսիվ այգիների
առանձնահատկությունները եւ
առավելությունները**

Հայաստանում հիմնականում մշակում են սովորական կամ, ինչպես ընդունված է ասել, դասական այգիներ, որտեղ աճեցնում են բարձրաբուն խոշոր ծառեր՝ 7-8, երբեմն էլ 15 մետր բարձրության, որոնք պետք է տնկվեն շատ լայն՝ 6x4 մ, նույնիսկ 8x8 մ քանածեալ, եւ այգում ծառերի թիվը կազմում է 200-400 հատ մեկ հեկտարի վրա:

Այս այգիների ծառերը ավանդաբար պատվաստվում են սերմնաբույս պատվաստակալների վրա: Հիմնականում դրանք խոշոր ծառեր են, բայց քանի որ սերմնային քազմացման դեպքում դրսեւրվում է խայտարդես եւ տարրուակ (հետերոգեն) ժառանգականություն, վերջիններիս վրա պատվաստված մշակաբույսերի ծառերի բերքը նույնական լինում է անկանոն եւ անկայուն որակի:

Այսպիսի այգու ծառերը լինում են եւ շատ խոշոր եւ միջին չափսերի, դիմացկուն կամ թույլ, շատ կամ քիչ բերքատու, շուտ կամ ուշ բերքի անցնող: Դրանց պտղաբերությունը սկզբնավորվում է տնկումից 3-5 կամ նույնիսկ 7-8 տարի հետո, բերքատվության կայունացումը դանդաղ է՝ տեսում եւս 4-6 տարի եւ հետագայում էլ դրանք տարեցտարի ունենում են փոփոխական, անկանոն բերքատվություն: Բայց այդպիսի բերքատվությունը հաճախակի կայունանում է պտղաբերման պարբերականության երեսույթի ձեւով, երբ լավ բերք է ստացվում ոչ քե յուրաքանչյուր, այլ 2-3 տարին մեկ:

Այդպիսի ծառերի ներուժը տատանվում է 20-ից մինչեւ 300 կգ բերքի սահմաններում եւ այգու բերքատվության առավելագույն միջին ցուշաճիշը, որին կարողանում ենք հասնել դասական այգում, կազմում է 20-25 տ/հա:

Արդեն 20-րդ դարի 50-ականներից Եվրոպայում ու Հյուսիսային Ամերիկայում, այնուհետ գրեթե բոլոր զարգացած ու զարգացող երկրներում, որպես այգեգործության զարգացման ուղի ընտրել են թզու-

կային ինտենսիվ այգիները, որտեղ օգտագործվում են նոր տեխնոլոգիական նվաճումներ, ինչպիսին են սյունալարային (շպալերային) համակարգը, ոռոգման կարիլային համակարգը, այգեպաշտպան ցանցերը, շատ աշխատանքների մեջենայացումն ու ավտոմատացումը:

Այդ այգիներում օգտագործում են միայն թզուկային պատվաստականներ, որոնց վրա պատվաստված ծառերը նույնապես թզուկային են, ցածրած՝ 2-5 մ բարձրութամբ եւ փոքր լայնության՝ 1-2,5 մ սաղարթով: Պատվաստակալ բույսերը բազմացնում են միայն բուսաճային (վեգետատիվ) եղանակով եւ դրա հաշվին դրանք չեն ունենում ժառանգականության շեղումներ, բոլոր դրստր բույսերը լինում են միատարր (համասեռ, հոմոգեն), միեւնույն որակի, որի հաշվին էլ տնկանյութը եւ աճեցրած ծառերը նույնապես լինում են միատարր ու համահավասար. սա հնարավորություն է տալիս մեքենայացնել եւ ավտոմատացնել աշխատանքների մեծ մասը:

Զարգացած այգեգործություն ունեցող երկրներում ներկայումս տնկում են միայն թզուկային պտղատու այգիներ, որոնց ծառերը այգեգործը մշակում է նոր մոտեցումով՝ «աճեցնել ոչ թե բնափայտ, այլ միրգ» սկզբունքով: Այսինքն՝ ծառերին բույլ չեն տալիս աճել սեփական նպատակների համար, այլ սահմանափակում են աճեցողությունը, որով ստիպում են դրանց արագ եւ շատ պտղաբերել: Ծառերի ճյուղերը հաճախ են էտում եւ երիտասարդացնում, իսկ բողնված շիվերը խիստ կորացնում են: Այսպիսի էտի ու ձեւավորման հաշվին, որը կոչվում է քանուակային (պալմետային), թզուկային ծառերն ունենում են փոքրածավալ եւ տափակ սաղարք, որը ձգվում է շարքերի ուղղությամբ, ու դրանց հաշվին էլ ծառերը տնկվում են նեղ միջջարթերով եւ շատ խիստ միջրճային տարածքներով՝ 4x2,5 մ, 4x2 մ, 3x2 մ, 3x1,5, նույնիսկ 2x1 մ ու ավելի խիստ բանաձեւերով:

Ծառերի թիվը հեկտարի վրա դասական այգիների համեմատ (200-600 ծառ/հա) ավելանալով 2-5 անգամ, հասնում է 1000-5000 ծառ/հա-ի: Ծառերի սաղարթը կայունացնելու եւ շիվերի կորացումն ապահովելու նպատակով դրանք ամրացվում են սյունալարային համակարգին:

Այդպիսի այգիների համար ընտրասերող գիտնականները ստեղծել են առավել արդյունավետ ֆուտոսինթեզ կատարող եւ դրա հաշվին պտղաբերության բարձր արդյունավետություն ունեցող մշակաձեւեր (սորտեր), որոնք 1 պտուղ են առաջացնում 15-25 տերերի ֆուտոսինթեզի հաշվին, մինչդեռ սովորական սորտերը՝ միայն 40-50 տերեւներով: Նոր սորտերի յուրաքանչյուր, թեև փոքր, ծառի

Աերուժը կազմում է 50-80 կգ քերք, իսկ այգու բերքատվությունը հասնում է 80-120 տ/հա-ի եւ ավելի քարձը:

Ավելին՝ այսպիսի այգում բոլոր ծառերը լինում են ոչ միայն բերքատ, այլև միեւնույն չափսերի ու ձեւի եւ շատ համաչափ ու նույնորակ (հոմոգեն), առանց որակական շեղումների, որն առաջ է բերում մի շարք տեխնոլոգիական առավելություններ:

Թզուկային ինտենսիվ պտղատու այգիների առավելությունները դասական այգիների համեմատ բազմաթիվ են՝

1. շատ քարձը բերքատվություն միավոր տարածքից՝ ավելին քան 5-10 անգամ.
2. պտղաբերության արագ սկիզբ՝ տնկման 1-ից 3-րդ տարվանից.
3. կայուն քարձը բերքատվություն պտղաբերման սկզբից եւ առանց պարբերականության.
4. ծառերի ցածր ու տափակ սաղարթների հաշվին, որոնք ամբողջովին հասանելի են մարդու հասակին, հեշտանում են թզուկային ծառերի էտի ու ձեւավորման, ինչպես նաև խճանքի ու բերքահավաքի բոլոր աշխատանքները.
5. սյունալարային եւ կարիլային ոռոգման համակարգերի եւ փոքր ու տափակ սաղարթների հաշվին հնարավոր է դառնում այգու մշակության եւ ծառերի խճանքի գրեթե բոլոր աշխատանքների մերենայացումը եւ նույնիսկ ավտոմատացումը.
6. հեշտանում են միջաշրջերի հողի մշակության աշխատանքների կատարումը, որը հնարավոր է լինում կատարել ավելի կառավարելի եւ էներգախնայողական փոքրածավալ տեխնիկայի եւ քոյլ հզորության տրակտորների միջոցով.
7. կարիլային համակարգի շնորհիվ հեշտ կառավարելի, արդյունավետ եւ ջրախնայող են լինում ոռոգման աշխատանքները ու հնարավոր է դառնում ճշգրիտ պարարտացման եւ սնուցման աշխատանքների կատարումը կարիլային համակարգով՝ դրանք կատարվում են համակարգի խողովակներով մղվող ջրալուծույթների միջոցով.
8. կարիլային համակարգի շնորհիվ հեշտանում եւ արդյունավետ է լինում պայքարը մոլախոտերի դեմ, որոնք այս դեպքում այգու միջաշրջերում գրեթե չեն զարգանում.
9. սյունալարային համակարգի ու ծառերի տափակ սաղարթի հաշվին հնարավոր է դառնում համատեղված (ինտեգրաց-

- ված) պայքարի կազմակերպումը մոլախտերի, վճասատուների եւ հիվանդությունների դեմ եւ բարձրանում է դրանց արդյունավետությունը,
10. ծառերի փոքր ու տափակ սաղարքների հաշվին հեշտանում եւ արդյունավետ ու խնայող է դառնում բուժումների կատարումը.
 11. ծառերի փոքր ու տափակ սաղարքի լավ լուսավորության եւ օդափոխության ռեժիմի հաշվին պտուղներն ունենում են բարձր որակ եւ ապրանքայնություն.
 12. աշխատանքների մեքենայացման ու ավտոմատացման, խնայողությունների, բարձրորակ եւ մեծ ապրանքայնություն ունեցող մեծածավալ բերքի հաշվին զգալիորեն իջնում է պտուղների արտադրության ինքնարժեքը.
 13. կանոնավոր այգու համակարգի շնորհիվ մեծանում են նոր տեխնոլոգիաների եւ տեխնիկայի ներդրման ու կիրառման հնարավորությունները.
 14. սպառողական շուկայի պահանջները բավարարելու համար մեծանում են նոր սորտերի արագ ներդրման հնարավորությունները.
 15. նորանոր տեխնոլոգիաների ներդրման եւ կիրառման շնորհիվ խթանվում են բերքառատ եւ բարձարժեք նոր սորտերի ստեղծումն ու տարածումը:

Համարվում է, որ թզուկային այգիներն ունեն նաեւ որոշ թերություններ.

- պահանջում են մեծ ներդրումներ եւ հիմնադրման մեծածավալ աշխատանքներ.
- թզուկային ծառերը շատ երկարակյաց չեն՝ աճում եւ պտղաբերում են 15-30 տարի (դասական այգիների ծառերն ապրում են տասնյակ տարիներ՝ մինչեւ 70-80).
- սառնամանիքների եւ գարնանային ցրտահարությունների ռիսկը զգալիորեն մեծ է ցածրած եւ ցածրաբուն թզուկային ծառերի համար, քանի որ մեր կլիմայում սառնամանիքները եւ ցրտահարությունները կրում են սառը օդային զանգվածների նստվածքային բնույթ, այսինքն՝ դրանք, իջնելով բարձրուներից, կուտակվում են զետնամերձ գոտում որոշակի շերտով, ուստի եւ սառը օդի նույնիսկ ոչ մեծ շերտի դեպքում

ցածրած ծառերը ենթարկվում են ցրտահարվելու ավելի մեծ վտանգի, քան սովորական բարձրաբուն ծառերը.

- նույն պատճառով ցածրած ծառերի օրգանները, գետնամերձ խոնավ տարածքին ավելի մոտ լինելով՝ ավելի մեծ չափով են ենթակա սննդային հիվանդություններով վարակվելու վտանգին, քան սովորական բարձրաբուն ծառերը.
- այզիներ նախագծելու, հիմնելու, կառավարելու եւ ծառերը խնամելու տեխնոլոգիաները բարդ են եւ պահանջում են խոր մասնագիտական գիտելիքներ:

Բայց այս թերությունները հարաբերական են, քանի որ արտադրողի ներդրումները եւ աշխատանքը շատ արագ եւ առատորեն փոխառուցվում են, հատկապես երբ այգեգործն ունի խոր գիտելիքներ, հետեւում է ճյուղի նորույթներին եւ պատրաստ է նոր ներդրումներ անել՝ այս թերությունները վերածվում են առավելությունների: Օրինակ՝ այգու կարծ կյանքի պատճառով այգեգործը ուրիշներից ավելի շուտ է տնկում իր հաջորդ այգին՝ այդ ընթացքում ստեղծված նոր մշակածեներով, որոնք շուկայում ավելի պահանջված են եւ քանկարծեք: Նույնը կարելի ասել նոր սարքերի, տեխնիկայի եւ տեխնոլոգիաների կիրառական առավելությունների մասին:

Այսպիսով, ինտենսիվ քորոկային այգիների հիմնումը լուծում է շատ հարցեր՝ ավանդական այգիների համեմատությամբ ունենալով շատ բարձր արդյունավետություն եւ ապահովելով շահութաքերության բարձր արդյունք:

Պտղատու տնկարկների համար տեղանքի ընտրությունը տարբեր պայմաններում

Պտղատու մշակաբույսերի տնկման տեղի գնահատման պայմանները եւ ընտրության սկզբունքները

Պտղատեսակների մեծամասնության համար տեղի ճիշտ ընտրությունը ապագա այգու նորմալ վիճակի եւ բարձր բերատվության բախտորոշ գործոններից մեկն է:

Պտղատու բույսերը նոյն տեղում աճում եւ պտղաբերում են մի քանի տասնյակ տարի եւ տեղի ճիշտ ընտրությունից է կախված դրանց հետագա նորմալ աճն ու պտղաբերումը: Այգու հիմնման նախապատրաստման եւ տնկման ընթացքում բույլ տրված սխալները հետազյում ուղղելու համար բավականաչափ մեծ ծախսեր են պահանջվելու եւ կապված են լինելու դժվարությունների հետ: Ընդ որում սխալների մի մասն էլ աննուղելի են՝ շատ դեպքերում բնությունը հետադարձ շտկումներ կատարելու հնարավորություն այլևս չի տալիս:

Հիմնվող տնկարկի այգետարածքի համար անհրաժեշտ է ընտրել բնակլիմայական հիմնական պայմանների լավագույն կամ ցանկալի չափանիշներով միջավայր:

Պտղատու այգիների համար նախընտրելի են հարք կամ կիսահարք տարածքները: Դրանց դիրքադրման կողմերից լավագույնն են համարվում արեւելյան, հարավարեւելյան կամ հարավային լանջերը, ցանկալի են նաև հարավարեւմտյան լանջերը: Ստվերադիմացկուն պտղահատապտղային տեսակների համար հնարավոր է օգտագործել նաև արեւմտյան, հյուսիսարեւելյան եւ հյուսիսարեւմտյան թեքությունները, քայլ պետք է զերծ մնալ հյուսիսային լանջերում այգիների տնկումից, քանի որ այնտեղ արեւային լուսավորությունը եւ ջերմային պայմաններն անբավարար են ծաղկումն եւ պտղաբերումն ապահովելու համար:

Միենայն ժամանակ, պետք է ի նկատի ունենալ, որ հարավային թեքություններն ավելի չորային են, այդտեղ նաև ավելի ուժեղ են ար-

տահայտվում գիշերային ու ցերեկային ջերմաստիճանների տատանումները, որի հետեւանքով ծառերի բնի ու կմախրային ճյուղերի կեղեւը հաճախ վճառվում են արեւահարումներից:

Տնկարկի տարածքի կազմակերպման եւ այզու խնամքի առումով նախընտրելի են բացարձակ հարությանը մոտ 1-2°-ից մինչեւ 5-8° թեքություն ունեցող հողատարածքները: Լանջերի վրա հարմար են նաև ավելի թեք՝ 8-12° թեքության հողամասերը, սակայն այզի հիմնելու համար դրանց հողային տարածքի վրա պետք է պատրաստել **դարավանդներ** (տերասներ): Կախված լանջի թեքությունից եւ հողաշերտերի որակներից՝ դարավանդների լայնությունը կարող է լինել 2-5 մ: Դարավանդները դեպի ներս պետք է ունենան որոշ թեքություն՝ ջուր պահելու համար, իսկ պատերը (քերմա) պետք է լինեն կիսաքեր եւ ճմապատվեն կամ դրանց հողը սեղմվի, տրորվի գործիքներով, որոշ դեպքերում էլ ամրացվեն քարերով, ամուր ցանցերով կամ հասուկ զարիններով:

Դարավանդներ պատրաստելու դեպքում քազմաքիվ թեք լանջեր ունեցող տարածություններ Հայաստանում կարելի է օգտագործել պտղաբուծության համար:

Պետք է հաշվի առնել, որ վաղ ծաղկող պտղատեսակների համար վտանգավոր են փակ հովիտները, կարսայանման փոստրակները, որտեղ կուտակվում եւ երկար ժամանակ մնում են սառը օդային հոսանքները: Զմռան եւ գարնան ընթացքում սառը օդերի տեսական ազդեցության հետեւանքով տեղի են ունենում բողրոջների, շիվերի, ճյուղիկների, իսկ գարնանը՝ ծաղիկների եւ պտղիկների ցրտահարում:

Այս դեպքում, ինչպես նաև հզոր, տեսական ու կայուն հյուսիսային քամիների պարագայում տմկման համար ըմտրված հողամասը պետք է պաշտպանված լինի քամիների եւ սառը օդի հոսանքներից:

Պտղատու բույսերի հողային պահանջներից ելնելով՝ այգետնկման համար նախընտրելի են կավավազային կամ ավազակավային կնձիկային (կնդիկավոր) մեխանիկական կազմություն (ստրուկտուրա) ունեցող հողերը: Որոշ դիմացկուն պտղատեսակներ հնարավոր են աճեցնել նաև ավազային, կավային եւ նոյնիսկ ծանր կավային հողերում: Աղակալած եւ ճահճացած հողերը առանց քարելավման (մելիորատիվ) միջոցառումների պտղատու բույսերի մշակության համար պիտանի չեն:

Այգետնկման տեղանքի ընտրության գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել նաև տվյալ վայրում ստորգետնյա ջրերի քարձրության մակարդակը, որը ավանդական ծառերի համար պետք է հողի

մակերեսից գտնվի առնվազն 2-2,5 մ խորության, իսկ թզուկային ծառերի եւ հատապտղային թփերի համար ոչ պակաս քան 1-1,5 մ խորության վրա: Ստորգետնյա ջրերի՝ հողի մակերեսին մոտ գտնվելը բացասարար է անդրադառնում պտղատու բույսերի աճի վրա. առաջ են գալիս մահացու ոչ վարակիչ (ֆիզիոլոգիական) հիվանդություններ՝ դեղնախտ (քլորոզ), խեժակալում (խեժապատում հոսություն, գոմոզ) արմատների խեղդում (ասֆիքսիա) եւ փտում: Հաճախակի նկատվում են նաև տերեւների բոշնում, քառամում, միամյա շիվերի ծայրամասերի չորացում, դրանց աճի ձգձգում աշնանը՝ լավ չեն փայտանում եւ ձմռանը ցրտահարվում են: Ստորգետնյա ջրերի ուղածից ուղղությամբ տարեկան տեղաշարժի հետեւանքով այգու հողն աղակալում է, եւ ծառերը չորանում են: Հողի մակերեսին մոտ գտնվող ստորգետնյա ջրերի ավելորդ քանակները հեռացնելու նպատակով խորհուրդ է տրվում հողամասերի ներսում եւ շուրջը պատրաստել ջրահեռացման առուների ցանց (դրենաժ):

Հողի նկատմամբ տարրեր պտղատեսակներ ունեն տարրեր պահած: Կորիզավոր պտղատեսակները լավ աճում են ջրաքափանց կավավազային հողերում: Հնդավորները լավ են աճում ջրաքափանց շագանակագույն հողերում, սեւահողերում: Սերկելիենին կարող է աճել նաև քոյլ աղակալվածություն եւ գերխոնավություն ունեցող հողերում: Հատապտղայիններն առավել պահանջկուտ են հողի բերրիության հանդեպ: Ընկուզենին լավ է աճում ձորակների, խոճավությունը լավ պահպանող կավավազային հողերում: Ընկուզենին, նշենին, այլ ընկուզավորները կարող են աճել համեմատաբար չոր եւ, նույնիսկ քարքարոտ հողերում: Նոնենին, ծիրանենին, բալենին, ձիթենին բավականին չորադիմացկուն են եւ լավ զարգանում են տարրեր տիպի հողերում:

Այգու հիմնման նախագծումը, տարածքի կազմակերպումը եւ հողամասի տեղաձեւումը

Հողամասի հատակագծումը

Տարիների փորձը ցույց է տվել, որ բազմամյա տնկարկմերի օգտագործումն ավելի շահավետ է, եթե դրանք բաժանված են լինում համեմատաբար ավելի փոքր հողամասերի: Այդ դեպքում հնարավոր է լինում ավելի ճիշտ տեղաբաշխել այգեպաշտպան շերտերը, ճանապարհները եւ բարելավել այգու կազմակերպչական եւ տեխնիկական աշխատանքները, արդյունավետ օգտագործել փոխադրամիցոցները:

Հողաբաժնյակներ (կվարտալ) ասելով հասկանում ենք այգու այն մասը, որտեղ հոծ զանգվածով տնկված են մշակվող բույսեր (ծառեր, վազեր, թփեր) եւ բոլոր կողմերից սահմանափակված է ճանապարհներով, նաև՝ այգեպաշտպան անտառաշերտերով: Հողաբաժնյակը համարվում է այգու կառուցվածքային եւ արտադրական միավորը եւ դրա մեջությունը կախված է նաև այգու մեծությունից: Սակայն գործնականում՝ այգու խնամքի աշխատանքների կազմակերպման եւ տնտեսական արդյունավետության տեսանկյուններից, հողաբաժնյակի առավել հարմար մեծությունն է համարվում 4-6 հա քառակուսի կամ ուղղանկյուն տարածքը: Օրինակ՝ 200 x 200 մ կամ 200 x 250 մ կամ 200 x 300 մ կամ, ասենք, 150 x 400 մ կողմերով:

Բայց շատ մեծ հողամասերի բաժանումը ենթադրում է հողաբաժնյակների ավելի մեծ տարածություն: Մեծամեծ այգիներում, որոնք ունեն 100 հեկտար եւ ավելին տարածք, բաժնյակները ցանկալի է լինեն 8-12 հա՝ քառակուսի կամ ուղղանկյուն ձեւի, իսկ շատ փոքր այգիներում՝ հարկադրված են մշակել 2-ից մինչեւ 3 հա տարածություն՝ նույնիսկ եռանկյուն կամ այլ ձեւի հողամասերով: Բաժնյակների մեծության որոշման ժամանակ էական նշանակություն ունեն նաև տնկվող տնտեսակները: Ծառատեսակների (օր.՝ տանձենի, ծիրանենի եւ այլն) հողաբաժնյակները ավելի խոշոր են, քան թփանման տնտեսակների դեպքում: Հատապտուղների դեպքում բաժնյակնե-

ըստ ունենում են 1-3 հեկտարից ոչ ավելի մեծություն:

Լանջի թեքությունը եւ հողամասի ձեւը, իրենց հերթին, նույնպես անդրադառնում են հողաբաժնյակների մեծության վրա: Որքան հողամասի ձեւը եւ թեքությունը մեծ է, այնքան փոքր են լինելու քաժնյակները, իսկ դրանց ձեւն՝ անկանոն:

Յուրաքանչյուր հողաբաժնյակ հնարավորության դեպքում պետք է ունենա միատեսակ հողատեսք, նույն թեքությունը եւ հարթությունը, իսկ ձեւը ցանկալի է լինի քառակուսի կամ ուղղանկյուն: Հողամասի անհամաշափ կամ կտրատված լինելու պատճառով եզրային եւ հատկապես անկյունային հողաբաժնյակին կարելի է տալ եւ եռանկյունաձև, եւ շեղանկյունաձև, եւ որեւէ այլ հարմար ձեւ:

Քաժնյակները հողամասում պետք է տեղաբաշխել այն հաշվով, որ դրանց երկար կողմերը լինեն գերիշխող եւ համընկեն վնասակար քամիների ուղղությանը: Հատապտուղների քաժնյակները աշխատանքների հարմարության տեսակետից պետք է քաժանել 1-1,5-հեկտարանոց քանվորական հողավանդակների:


Այգու տեղաձեւման համակարգերը

Գոյություն ունեն այգու տեղաձեւման տարրեր չափաձեւեր եւ համակարգեր:

1. Քառակուսի համակարգ, որի դեպքում ինչպես միջշարային, այնպես էլ միջքուսային տարածությունները լինում են հավասար՝ 8×8 , 7×7 , 6×6 , 5×5 մ եւ այլն, այդ համակարգի դեպքում ծառերը տնկվում են քառակուսու գագաթներում: Դրա առավելությունն այն է, որ այգու տեղաձեւման եւ հողի հետագա մշակության աշխատանքներն ավելի հեշտ են կատարվում: Բացի այդ, այդ համակարգի դեպքում ծառերը գտնվում են սննդառության, ջերմության եւ լուսավորության միատեսակ պայմաններում եւ փոխադրման ու մշակության աշխատանքների մեքենայացումը առավել նպատակահարմար ձեւով է կատարվում՝ շարքերի երկու ուղղությամբ:
2. Ուղղանկյուն-քառանկյան համակարգ: Այս դեպքում պտղատու ծառերին հատկացվելիք միջշարային տարածությունները լինում են ավելի մեծ, քան միջքուսային տարածությունները, ծառերը տնկվում են ուղղանկյուն-քառանկյան գագաթներին (8×6 , 6×4 մ եւ այլն), 1 հեկտարի վրա բույսերի քանակությունը փոքր-ինչ շատ է ստացվում: Հողի մշակության աշխա-

տանքները նպատակահարմար է կատարել մեծ տեխնիկայի միջոցով, սակայն միայն մեկ ուղղությամբ՝ շարքերով:

3. Շախմատաձև (եռանկյուն) համակարգ: Ծառերը տնկվում են հավասարակող եռանկյան զագաթներին, տարածքն ավելի նպատակահարմար է օգտագործվում եւ 1 միավոր տարածության վրա բույսերի ավելի մեծ քանակ է տեղափորվում, քան մյուս համակարգերի դեպքում: Տնկման այդ համակարգն օգտագործվում է հատկապես թեք լանջերում այգիներ հիմնելիս: Թերությունն այն է, որ այս դեպքում միջշարային տարածությունների մշակության մեքենայացումը որոշակիորեն դժվարանում է:
4. Ուրվագծային համակարգ: Հաջորդական անհամաշափ գծերի շարքերով տրկման համակարգ է, որը անհամաշափ լանջերի վրա դարավանդների կառուցման արյունք է: Նախագիծը հարմարվում է լանջի հորիզոնների ուրվագծերին:



Նկար 23. Պտղատու այգու կառուցվածքը եւ հողաբաժնյակները

Պտղատու այգիներում գլխավոր եւ հիմնական ճանապարհներն ու անցումները

Պտղատու այգիներում հիմնում են գլխավոր եւ հիմնական միջրաժնյակային (միջկարտավային) ճանապարհներ, ինչպես նաև այգեմիջյան անցումներ:

Այզու գլխավոր ճանապարհը միացնում է այզու բոլոր անցումները եւ մուտքը (հաճախ՝ դարպասով) արտաքին ճամապարհային ցանցի հետ (ցանկալի է ասֆալտապատ մայրուղու հետ): Բոլոր տիպի փոխադրամիջոցների՝ բեռնատարների, տրակտորների, սրսկիշների, բերքահավաքային եւ այզու խնամքը սպասարկող այլ մեքենաների ու սարքերի երկկողմանի անցումն ապահովելու նպատակով գլխավոր ճանապարհը պետք է լինի հնարավորին չափ մեծ լայնության՝ ելելով այզու ընդիհանուր բազմահեկտար մեծությունից, բայց սովորաբար՝ 6-10 մ, իսկ բաց կամ փակ ջրահեռացումներով եզրերը՝ 1,5-2 մ:

Այզու ներքին ճանապարհացանցի ուղիներն անցկացնում են այզու ամբողջ պարագծով մեկ՝ տնկարկների շուրջը եւ հողաբաժնյակների միջեւ ու միանում են գլխավոր ճանապարհին: Այդ ճանապարհների ուղիների լայնությունը լինում է 4-6 մ, իսկ ճամփեղրերը՝ 1-1,5 մ: Ցանկալի է, որ այս ճանապարհները նույնական լինեն ասֆալտապատ ու ջրահեռացումով եւ ստորգետնյա խողովակների հետ հատման տեղերում ունենան կամքջակներ:


Միջբաժնյակային եւ այլ անցումները լինում են գրունտային եւ միակողմանի շարժման՝ 3-4 մ լայնությամբ եւ 1 մ ճամփեղրերով:

Տնկարկների այգեպաշտպան եւ քամեթեկ շերտերի հիմնումը

Բաց տարածություններում եւ քամոտ լանջերում պտղատու այգիներ հիմնելիս այզու շուրջը կամ առնվազն գերիշխող քամիների ուղղության հանդիման անհրաժեշտ է ստեղծել այգեպաշտպան շերտեր, որոնք պաշտպանում են վնասակար քամիների ազդեցությունից: Քամիները մեծ վնասներ են հասցնում պտղատու բույսերին՝ կոտրելով դրանց ճյուղերը, արմատախիլ անելով երիտասարդ ու հատկապես նորատունկ ծառերը: Հասունացման շրջանում պտուղները քամուց հարում են իրար, ստանում վնասվածքներ եւ հետագայում երկար չեն պահպում:

Ծաղկման շրջանում քամիները խանգարում են մեղուների թռիչքին, եւ կանոնավոր փոշոտում տեղի չի ունենում: Զմռանը քամիները քշում եւ հեռացնում են ձյան ծածկոցը, հողում քավարար խոնավություն չի կուտակվում, իսկ ամռանը ուժեղանում է հողի մակերեսից գոլորշիացումը եւ չորացնում հողը, որից էլ տուժում են պտատու բույսերը, հատկապես՝ երիտասարդ ծառերը, թփերը:

Հայաստանի հողակիմայական բոլոր շրջաններում այգեապաշտպան շերտերում որպես զլատավոր տեսակ խորհուրդ է տրվում տնկել բրգածել կամ թուրքեստանյան բարդենի, իրարից 1-1,5 մ հեռավորության վրա: Կենդանի ցանկապատ հիմնելու նպատակով պետք է տնկել փշոտ ծառատեսակներ (օր՝ գլեղիչա, ոռքինիա): Թփանման տեսակներից կարելի է տնկել փշատենի, եղբեանի, մասրենի եւ այլն:



Նկար 24. Տնկարկների պաշտպանությունը քամիների ավելցությունից

Այգեպաշտպան շերտերի բույսերը պետք է նույնպես ոռոգել, դրանց նկատմամբ հատուկ խնամք տանել, որպեսզի չդառնան վնասատուների եւ հիվանդությունների տարածման օջախներ:

Հնարավորության դեպքում այգեպաշտպան ու քամերեկ շերտերի տնկումները ցանկալի են կատարել այգին հիմնելուց 2-3 տարի առաջ, որպեսզի հճարավոր լինի պաշտպանել քամիներից հատկապես նորատունկ եւ երիտասարդ ծառերը:

Պտղատու տեսակների սևման մակերեսների սահմանումը ըստ բուսաձեւերի, պատվաստակալների եւ աճեցման գոտիների

Այգու տարածքի տնկման սկզբունքները, ծառերի տնկման բանաձեւերը

Արդյունաբերական այգու ծառերի տնկումները պետք է իրականացնել որոշակի կանոնավոր տնկման համակարգով, այսինքն՝ պետք է **սահմանել** բույսեր սևման մակերեսը, որը բույսին տարամադրվող հողային եւ օդային տարածքն է, որտեղ յուրաքանչյուր ծառ կարող է աճել եւ զարգանալ՝ չհանդիպելով հարեւան ծառերի արմատներին հողում, ոչ էլ դրանց ճյուղերին՝ օդային տարածքում:

Պտղատու մշակաբույսերին տրամադրվող տնկման հեռավորությունը կախված է տեսակների եւ բուսաձեւերի (սորտերի) աճի բնույթից, հողակլիմայական պայմաններից, պտղատու ծառերի պատվաստակալից, հողամասի մեծությունից եւ այլն: Ուժեղ աճեցնողություն ունեցող ծառատեսակները (ծիրանենի, խնձորենի, տանձենի, կեռասենի, ընկույզենի եւ այլն) տնկվում են ավելի մեծ սննան մակերեսներով, քան բույլ աճողները՝ բալենին, դեղճենին, սերկենիլենին եւ այլն:


Համեմատաբար երկար բուսաճի (վեգետացիայի) շրջանի կլիմայում՝ ցածրադիր վայրերում, որտեղ բույսերն աճում են ավելի փարթամորեն, պտղատու բույսերին հատկացվում են սննան ավելի մեծ մակերեսներ, քան բարձրադիր ու լեռնային շրջաններում:

Ըստ 1 ծառին տրամադրվող սննան մակերեսի կարելի է որոշարկել **տնկման բանաձեւը** (սխեման), այսինքն՝ որոշել շարքերի հեռավորությունը (**միջշարային տարածությունը**) եւ շարքերի երկարությամբ ծառերի հեռավորությունը միմյանցից (**միջբնային կամ միջծառային կամ միջքուսային տարածություն**): Ըստ դրանց չափսերի կազմվում է ծառերի տնկման բանաձեւը, որը ներկայացվում է որպես միջշարա-


յին եւ միջբնային տարածությունների քազմապատիկը: Օրինակ՝ Արարատյան հարթավայրում, ծիրանենու սովորական (դասական) այգում 1 ծառի համար գիտական եւ գործնական առումներով ընդունված սննան մակերեսն է $45\text{-}65 \text{ մ}^2$: Այս դեպքում տնկման քանաձեւը կարող է լինել՝ $8\times 6 \text{ մ}$ (միջշարայինը 8 մ եւ միջծառայինը 6 մ), որոնց քազմապատիկը ստացվում է 48 մ^2 : Առավել մեծ սննան մակերեսով տնկման քանաձեւը ընդունված է $8\times 8 \text{ մ}$, այսինքն՝ միջշարայինը եւ միջծառայինը՝ 8 մ , դրանց քազմապատիկը ստացվում է 64 մ^2 : Այսինքն, այգեգործը, այս չափանիշների շրջանակում, ելնելով իր տարածքի հողակլիմայական ու մշակության պայմաններից, մշակաձեւերից, աճեցման համակարգից եւ այլ հանգամանքներից, կարող է, ընտրել տնկման տարրեր քանաձեւեր, ինչպիսին են $8\times 8 = 64 \text{ կամ } 8\times 7 = 56 \text{ մ}^2$ կամ $7\times 7 = 49 \text{ մ}^2$, նույնիսկ՝ $7\times 6 = 42 \text{ մ}^2$:

Իսկ, օրինակ, նախալեռնային գոտում առավել ընդունված սննան մակերեսն է $30\text{-}45 \text{ մ}^2$, այսինքն տնկման քանաձեւերն են $7\times 6 = 42 \text{ մ}^2$, $6\times 6 = 36 \text{ մ}^2$, $6\times 5 = 30 \text{ մ}^2$:

Ըստ տնկման քանաձեւի ու սննան մակերեսի հաշվարկվում է այգու մեկ այլ կարեւոր ցուցանիշ՝ **բույսերի խտությունը այգում կամ այգու խտությունը**: Այն արտահայտվում է 1 հեկտարի վրա ծառերի թվով: Դրա համար հեկտարի մակերեսը ($10\,000 \text{ մ}^2$) քածանվում է 1 բույսի սննան մակերեսի վրա: Օրինակ, ծիրանենու դեպքում՝ $10\,000 \text{ մ}^2 : 48 \text{ մ}^2 = 216$ ծառ: Համանման թվեր է կազմում դասական այգիների նաև մյուս պտղատեսակների տնկման խտությունը՝ $200\text{-ից } 500$ ծառ/հա:



Նկար 25. Ծառերի ուղղանկյուն դասավորությունն այգում



Նկար 26. Ծառերի եռանկյուն (շախմատաձեւ) դասավորությունն այգում

Հայաստանում բոլոր պտղատեսակները հիմնականում մշակվում են բարձրած կամ դասական կամ սովորական կամ բարձրաբուն այգիներում:

Այս տիպի այգիներում ծառերն ունեն բարձր աճ՝ 6-8 մ, նույնիսկ 10-15 մ, լայն սաղարթ՝ մինչեւ 5-6 մ, բարձր բուն՝ 0,7-0,8 մ: Տնկվում են մեծ հեռավորությունների վրա, քանի որ պահանջում են սննման մեծ մակերես: Որպես պատվաստակալ են ծառայում հիմնականում նույն տեսակի սերմնաբույսերը:

Հայաստանում լաս մշակության գոտիների, պտղատեսակների եւ պատվաստակալների ավանդական (սովորական) այգում 1 բույսի համար գիտական եւ գործնական չափանիշներով ընդունված տնկման բանաձեւերն են (մ-ով):

Աղյուսակ 1.

Դրորա-տեսակ	Պատվաստակալ	Ցածրացր գոտի (Տապահ եւ Մերժ)	Արարատյան հարթավայր, պայման Ձոր	Նախա-Երևանային գոտի (Կոտոսար, Արագածոտն)	Լեռնային գոտի (Որոշ Կոտոսար, Ջուխի)	Բարձրա-Երևանային գոտի (Հրազդակ, Սեւան)
Խնձորենի	Խնձորենու սերմնաբույս	7 x 5 6 x 5	8 x 6 6 x 6	7 x 5 6 x 5	6 x 5	6 x 4
Տանձենի	Տանձենու սերմնաբույս	8 x 6	8 x 6	7 x 5	6 x 5	5 x 4
Ծիրանենի	Ծիրանենու սերմնաբույս	8 x 6	8 x 8 7 x 7	7 x 5 6 x 5	-	-
Դեղձենի	Դեղձենու, ծիրանենու սերմնաբույս	5 x 4 4 x 4	6 x 5 5 x 5	5 x 4 4 x 4	-	-
Սալորենի	Շլորենու, սալորենու սերմնաբույս	5 x 5 4 x 4	6 x 4 5 x 5	5 x 4 4 x 4	4 x 4	-
Կեռասենի, բալակեռասի հիբրիդներ	Կեռասենու, բալասու սերմնաբույս	6 x 5 4 x 4	6 x 5 5 x 5	5 x 4 4 x 4	4 x 4	-
Բալենի	Բալենու սերմնաբույս, յուրարմատ		5 x 4 5 x 3	4 x 4 4 x 3	4 x 4 4 x 3	4 x 3
Ընկուզենի	Ընկուզենու սերմնաբույս, յուրարմատ	8 x 7 8 x 6	8 x 8 8 x 7	7 x 7 8 x 6	7 x 6	-

Սեղկելիթնի	յուրարմատ	4 x 3	4 x 3	4 x 3		
Թվենի, Նոռենի	յուրարմատ	4 x 3				
Հաղարծենի Մորենի, մոշ	յուրարմատ	2.5 x 1 2.0 x 1	2,5 x1,25 2,0 x 1,0	2.0 x 0,8		
Ելակ	յուրարմատ	0.8 x 0.25	1 x 0.3 0.8 x 0.25	0.8 x 0.3 0.6 x 0.25	0.6 x 0.25	

Հայաստանում դեռ քիչ են, բայց շատ անհրաժեշտ են արդիական համակարգերով հազեցած այգիները: Դրանք կոչվում են **ինտենսիվ, թզուկային, ցածրաճ, գաճաճ, ցածրաբուն, սյունալարային, լարային (շպալերային), պալմետային (քանդակային), խտացված այգիներ:**

Վերջին տարիներին այսդպիսի այգիներ սկսել են տնկել որոշ մշակաբույսերի՝ խնձորենու, տաճաճենու, ծիրանենու, կեռասենու, ընկույզենու եւ այլ պտղատեսակներով:

Ցածրաճ (գաճաճ, թզուկային) այգիների տնկման առանձ-նահատկությունները

Այս այգիներն ամբողջովին տարբերվում են սովորական (դասական) այգիներից, առաջին հերթին՝ **տնկման մեծ խտության բերմունքով: Այսպիսի այգիների ծառերի պատվաստակալները հատուկ ընտրած գաճաճ բույսեր են, ծառերը նույնական ցածրաճ են եւ ունեն **փորբածավալ տափակ սաղարք:** Դրանից ելնելով ծառերը տնկվում են փոքր սննման մակերեսով՝ 4x3 մ, 4x2,5 մ, 4x2 մ, 3x2 մ եւ նույնիսկ 2 x 1 մ բանաձեւով (համապատասխանաբար ունեն 12, 10, 8, 6 եւ նույնիսկ 2 մ² սննման մակերես): Այդպիսի տնկման դեպքում այգին միավոր տարածքի (հեկտարի) հաշվով ստանում է մեծ խտություն (ինտենսիվություն): Ծառերի թիվը 1 հեկտարի վրա դասական այգիների համեմատ ավելանում է 5-10 անգամ, հասնում 1000-4000 ծառ/հա-ի:**

Շարքերի տեղաբաշխումը այգում եւ բույսերի տեղաբաշխումը շարքերում:

Մշակաձեւերի դասավորությունը՝ փոշոտման, կազմակերպչական եւ տնտեսական արդյունավետության տեսանկյունից

Շարքերի եւ բույսերի տեղաբաշխումն այգում

Այգիներում ծառերի տնկման համար խորհուրդ է արվում ընտրել քառակուսի կամ ուղղանկյուն եղանակը, ընդ որում, ուղղանկյուն եղանակի պարագայում շարքերի միջեւ քողմել ավելի մեծ հեռավորություն, քան շարքերում տնկվող ծառերի միջեւ, օրինակ՝ 7x5, 7x4, 6x4, 5x3 մ եւ այլն: Տեղաբաշխման այս եղանակը հնարավորություն է տալիս միավոր տարածությունում տեղադրել ավելի մեծ քանակությամբ ծառեր: Բացի այդ, հնարավոր է լինում միջարային տարածություններում խճայել 2-2,5 մ ազատ տարածություն, որը թույլ է տալիս լավացնելու ծառերի սաղարթի լուսավորության պայմանները:

Նպատակահարմար է ծառերի շարքերի ուղղվածությունն ընտրել հյուսիսից հարավ: Աշխարհագրական այս ուղղության դեպքում ծառերի սաղարթը եւ թփերը օրվա ընթացքում ստանում են առավելագույն լուսավորություն եւ կատարում առավել արդյունավետ ֆուսուինքեզ: Սակայն, ելնելով տեղանքի առանձնահատկություններից, հատկապես թեքություններից եւ ջրամատակարարման հնարավորություններից, բույլատրվում է շեղել շարքերի ուղղությունը նշած ուղղությունից մինչեւ 30o դեպի արեւելք կամ դեպի արեւմուտք: Սակայն պետք է հաշվի առնել, որ Հյուսիս-Հարավ գծից նույնիսկ մեկ աստիճան շեղվելը վատացնում է բույսերի ֆոտոսիթեզի եւ պտղաբերության հնարավորությունները եւ նվազացնում բերքի քանակն ու որակը: Դա հատկապես ազրում է պտղուների քաղցրության, բուրունավետության եւ գունավորության ցուցանիշների վրա:

Այգում մշակածեւերի տնկման դասավորությունը՝ Ելնելով ծաղիկների փոշոտման տեսանկյունից, կազմակերպչական եւ տնտեսական արդյունավետությունից

Պտղատեսակների բուսածեւերի մեծ մասը խաչածեւ փոշոտվող բույսեր են եւ յուրաքանչյուր բուսածեւն ունի իր փոշոտող բուսածեւերը (սորտերը), որոնք այգում պետք է դասավորվեն հատուկ բանաձեւով՝ այնպես, որ նպաստեն մեղուների կամ քամու միջոցով պտղատեսակի ծաղիկների արդյունավետ խաչածեւ փոշոտմանը:

Փոշոտվող է համարվում այգու հիմնական մշակածեւը, բայց այն նաեւ պետք է փոշոտիչ հանդիսանա որպես փոշոտիչ ընտրված միակ մշակածեւի համար: Իսկ փոշոտիչ է համարվում այգու երկրորդական կամ լրացուցիչ մշակածեւը:

Սովորաբար լավ փոշոտման համար բավական է յուրաքանչյուր 3 կամ 4 փոշոտվող ծառերի հարաբերությամբ տնկել մեկ փոշոտիչ ծառ (տոկոսային հարաբերությունը՝ 75% : 25% կամ 80% : 20%): Ուստի տնկման լավագույն տարրերակներից է համարվում այգու բոլոր շարքերում յուրաքանչյուր երեք-չորս փոշոտվող ծառերից հետո հաջորդը (չորրորդը կամ հինգերորդը) տնկել փոշոտիչ բուսածի տնկի: Սակայն զործնականում տնկման այդ օրինաչափությունը շատ դժվար է պահպանել եւ կանխատեսել տնկումների ճշգրիտ կատարումը յուրաքանչյուր շարքում եւ ամբողջ այգում: Այդ խառնաշփորից խուսափելու համար գերադասելի է փոշոտվող/փոշոտիչ հարաբերությունները ընտրել եւ տնկել շարքերով: Օրինակ՝ տնկում են 3 շարք փոշոտվող եւ 1 շարք փոշոտիչ ծառեր եւ այդօրինաչափությամբ շարունակում են տնկել ամբողջ հողաբաժնյակը, նաեւ՝ ամբողջ այգին: Կամ այգեգործների մեծամասնության կարծիքով ավելի հարմար է համարվում տնկել 6 շարք փոշոտվող եւ 2 շարք փոշոտիչ բուսածեւի տնկիներ, քանի որ դրանով նույնական պահպանվում է լավ փոշոտման համար ցանկալի 3:1 հարաբերությունը: Որոշ այգիներում տերերը գերադասում են ունենալ ոչ թե մեկական փոշոտվող եւ փոշոտիչ այլ 3-4 եւ նույնիսկ 5-6 մշակածեւ, որը, սակայն, արդեն ավելորդ դժվարություններ է առաջացնում եւ նպաստակահարմար չէ:

Շատ մշակածեւերի դեպքում պետք է ընտրել փոխադարձ փոշոտող կամ մասնակիորեն իրար փոշոտող մշակածեւեր: Այս դեպքում մշակածեւերի ծառերի հարաբերությունը կարող է լինել շատ բազմատարբերակ՝ ելնելով այգեգործների նպատակներից եւ մտահղացումներից. օրինակ՝ հասունացման տարրեր ծամկետների մշակածեւեր աճեցնելու, տարրեր աշխատանքների միաժամկետ կամ, հակառակը, տարածամկետ կազմակերպման, բերքահավաքի եւ վաճառքի

նույն ժամկետներում, սեղմ ժամկետում եւ արագ անցկացման կամ, հակառակը, համաշափ կատարելու եւ շատ ուրիշ նպատակներ: Տոկոսային հարաբերությունները կարող են լինել՝ 80:10:10 կամ 60:20:20 կամ 50:25:25 կամ 30:30:20:20 կամ 40:30:30 կամ 30:30:30 :10 կամ 25:25:25:25 եւ այլն: Համապատասխան տոկոսային հարաբերությունների համար կազմվում են շարքերի հարաբերակցության բանաձեւեր:

Պտղատու տնկարկների այգետնկման ժամկետները, տնկանյութի ընտրությունը Եւ նախապատրաստումը տնկման համար

Տնկման ժամկետները

Պտղատու բույսերը կարելի է տնկել ինչպես աշնանը, այնպես էլ գարնանը: **Աշնանային տնկումներն ունեն այն առավելությունը, որ տնկիները մինչեւ կայուն սառնամանիքների սկսվելը հնարաբորություն են ունենում կպչելու, արմատների վրա վերքերը փակելու եւ վերականգնվելու, երեսն նույնիսկ՝ նոր արմատներ առաջացնելու:** Այդպիսի տնկիներն առանց հապաղելու եւ ժամանակին են սկսում իրենց բուսածը (վեգետացիան) վաղ գարնանը եւ մինչեւ աշուն փարթամորեն աճում ու զարգանում են:

Ցածրադիր գոտում աշնան տնկումները կատարվում են հոկտեմբերի վերջից մինչեւ նոյեմբերի երկրորդ կեսը, իսկ նախալեռնային եւ լեռնային գոտիներում՝ հոկտեմբերի սկզբից մինչեւ նոյեմբերի սկիզբը, այն հաշվով, որ այդ աշխատանքն ավարտվի տվյալ վայրում կայուն սառնամանիքների սկսվելուց առնվազն 15, իսկ ավելի լավ է՝ 20 օր առաջ: Սովորաբար աշնան տնկման ժամանակահատվածը բավականին երկար է՝ առնվազն 1-1,5 ամիս եւ այգեգործական այլ աշխատանքներից ազատ ժամանակաշրջանում, ուստի կարելի է հասցնել կատարել մեծածավալ տնկումներ:

Գարնանային տնկումներն այս կամ այն վայրում սկսելու ժամկետը կախված է տվյալ կլիմայի պայմաններից: Սովորաբար այն դժվար է սկսել մինչեւ ձնիալը եւ հոդի՝ քեշի գալու ժամկետը (գերխոննավ վիճակի ավարտը): Տնկումները սկսում են այդ ժամանակ կամ փոքր-ինչ ավելի ուշ, բայց ոչ ուշ տվյալ պտղատեսակի ծաղկման սկզբնաժամկետը: Սովորաբար գարնան տնկման ժամանակահատվածը բավականին սեղմ է՝ մոտ 10-15 կամ 20 օր եւ այդ ժամանակաշրջանում կատարվում է այգեգործական եւ այլ գյուղատնտեսական աշխատանքների մեծ ծավալ՝ աշխատումը եւ գյուղտեխնիկան շատ զբաղված են:

Գարնանային տնկումները հաճախ լավ արդյունք չեն տալիս, հատկապես՝ ուշացածները: Դա բացատրվում է կլիմայական մի քանի երեսույթների բացասական դասավորությամբ: Օրերը երկարում են եւ արեւային ճառագայթումն ուժեղանում է, բայց օդը տաքանում է շատ ավելի արագ, քան հողը, այն էլ՝ արմատների խորության շերտում: Որպես հետեւանք, բողոքները շուտ են բացվում եւ աճում, իսկ արմատներն «ուշանում են», չեն հասցնում ջուր եւ հանքային սննդանյութեր մատակարարարել վերգետնյա աճող օրգաններին: Իրենց հերթին, բացված բողոքների ընձյուղները չեն կարողանում արագ աճել եւ ձեւավորել բավարար քանակի տերեւներ (ֆուտոսինթեզ կատարող մակերես): Անբավարար ֆուտոսինթեզի հետեւանքով սակավաթիվ եւ մանր տերեւները չեն հասցնում արմատներն ու ամբողջ բույսն ապահովել օգանական սնննդով: Բույսի խախտված, անբավարար սննդառության պատճառով ընձյուղները սկսում են չորանալ, իսկ արմատները փառում են: Բացի այդ, ջերմաստիճանի արագ բարձրանալու հետեւանքով ուժեղանում է հողի մակերեսից ջրի գոլորշիացումը, բույսերն ընկնում են խոնավության պակասորդի (դեֆիցիտ) պայմանների մեջ եւ որպես արդյունք՝ նույնպես կարող են չորանալ: Գարնանային նորատունկ ծառերի ու թփերի մի զգալի տոկոսը մահանում է, նույնիսկ եթե սկսել է աճել: Այս դեպքում այգու տնկանյութի վերջնական կաշողականությունը հնարավոր է հաշվառել միայն հունիսի վերջերին՝ արեւադարձի օրից (հունիսի 22-ից) հետո:


Սակայն նույնիսկ վերջնականորեն արմատակալած եւ աճող տնկինների զարգացման աստիճանը 1-1,5 ամսով ետ է մնում իրենց տեսակի եւ մշակածելի ծառերից, որոնք տարիներ շարունակ աճում են այդ տեղում: Ավելին՝ զարգացումով դրանք ետ են մնում նույն աշնանը տնկված իրենց հասակակից բույսերից:

Հայաստանի ցածրադիր, հարթավայրային եւ նախալեռնային շրջաններում տնկումները ցանկալի է կատարել աշնանը, իսկ լեռնային շրջաններում՝ գարնանը: Տնկման ժամկետները կախված են նաև տնկվող ծառերի կամ թփերի կենսաբանական առանձնահատկություններից: Խնձորենին, տանձենին, ծիրանենին, սալորենին, բալենին, որոնք համեմատարար ցրտադիմացկուն են, ավելի հաճախ տնկում են աշնանը, իսկ դեղնենին, նշենին, կեռասենին, սերկենին, նունին, թզենին, ժորենին (արեւելյան խորման)՝ գարնանը, որպեսզի խուսափեն հնարավոր ձմեռային սառնամանիքներից:

Տնկանյութի ընտրությունը եւ նախապատրաստումը տնկման համար

Տնկման համար տնկանյութը պետք է հայթայթել, ընտրել, գնել, փոխադրել եւ պահեստավորել կանչավ, մինչեւ այգետնկումը: Սովորաբար տնկանյութը իրացվում է աշնանը՝ հողից համելուց անմիջապես հետո: Բայց նույնիսկ գարնան տնկումների համար այն հանվում է հողից եւ պահեստավորվում է աշնանը՝ կարգավորվող միջավայրի սառնարաններում կամ պահեստներում կամ նկուղներում, գոնե՝ խրամատներում:

Տնկանյութը՝ ինչպես աշնանը հողից նոր հանված, այնպես էլ զարնանը պահեստավորումից հետո պետք է ունենա առողջ տեսք, լավ ճյուղավորված ու փարթամ արմատային համակարգ՝ 3-4 կմախքային արմատներով, առնվազն 30 սմ երկարությամբ եւ պատված բազում մազարմատներով: Որքան տնկիների արմատները լավ են զարգացած, այնքան դրանք ավելի բարձր կպչողականություն են ունենում եւ հետազայում փարթամորեն են աճում ու զարգանում: Առողջ արմատներ ունեցող տնկիներն ունենում են սպիտակավուն, բաց գույն, իսկ գորշ ու մոխրագույն արմատները փշացած են եւ արդեն կորցնում են իրենց կենսունակությունը: Եթե արմատների վրա նկատվում են ուռուցքներ կամ այլ վերքեր, նշանակում է դրանք հիվանդ են արմատային քաղցեղով եւ տնկման համար պիտանի չեն:



Նկար 27. Տնկանյութի որակները եւ լավագույնի ընտրությունը

Ընտրված տնկիների վերգետնյա մասը պետք է ունենա կանգուն եւ ուղղաձիգ բուն, առողջ եւ առանց վնասվածքների հարթ կեղեւ, իսկ պատվաստի հանգույցում՝ վերքերի վերականգնված սերտաճում։ Տնկին պետք է ունենա առնվազն 3-5 լավ զարգացած կմախքային ճյուղեր եւ մեկ կենտրոնական ուղեկցող, եթե այդպիսին է դրա ձեւավորումը։

Տնկանյութը տնկման վայրը փոխադրելուց հետո պետք է անմիջապես բաղել որոշակի հողաշերտով եւ թերեւակի խոնավացնել, ջրել։ Եթե աշնանը բերված տնկանյութը տնկվելու է զարնանը, ապա թափել այգետնկման վայրում, բայց շինություններին մոտ գտնվող ու ծածկ ունեցող խրամատներում՝ 40-50 ամ խորությամբ ու թեք պատերով։ Խրամատներում տնկիները շարպում են շարքերով եւ ամբողջ արմատային համակարգը մինչեւ բնի կեսը ծածկվում է խոնավ հողով, հողը վերեւից սեղմվում է ոտքերով եւ լավ խոնավացվում։

Հնդավոր տեսակների տնկիները պարտադիր պետք է լինեն երկու տարեկան, իսկ կորիզավորները կարող են լինել նաև մեկ տարեկան։ Որքան տնկիները երիտասարդ են, այնքան ավելի բարձր կլինի դրանց կաշողունակությունը։ Այգետնկման համար կարելի է օգտագործել ծառերի մինչեւ երեք տարեկան, բայց ոչ ավելի մեծ տարիքի տնկիներ, որոնց կաշողականության տոկոսը շատ ցածր է, դրանք արտադրական այգու տնկման համար պիտանի չեն։

Տնկելուց անմիջապես առաջ կատարվում է տնկիների համապատասխանության եւ առողջական վիճակի ստուգում։ Այգու մկրատով կամ դանակով կտրում հեռացնում են արմատների հիվանդ, չորացած ու կոտրված մասերը, իսկ առողջների ծայրերը կարելի է «քարմացնել»՝ կտրել եզրից 1 սմ-ոց հատված։

Արմատների թարմացումից հետո անհրաժեշտ է տնկիները ընկդմել կավից եւ գոմաղբահեղուկից պատրաստված խիտ ջրախառնուրդի մեջ, որպեսզի դրանք ախտահանվեն, հագենան ջրով եւ օրգանական սննդով։

Տնկելու ժամանակ պետք է կարճացնել նաև տնկիների վերգետնյա մասը՝ կտրելով կմախքային ճյուղերի 1/3 մասը, այն հաշվով, որ կենտրոնական ուղեկցողը մյուս ճյուղերից համեմատաբար երկար մնա։ Կմախքային ճյուղերի էտը պետք է կատարել սաղարթի արտաքին կողմի («դրսի») բողոքի վրա, որպեսզի հետագայում շարունակական շիվերը չաճեն սաղարթից դուրս եւ սաղարթի ներսը չխտացնեն։ Տնկիների վերերկրյա մասի կարծեցումը կատարվում է զարնանը, անկախ այն բանից, թե դրանք տնկվել են աշնանը, թե զարնանը։

Պտղահատապտղային տնկարկների հիմնման աշխա- տանքների կազմակերպումը, հողի նախապատրաստումը եւ տնկման տեխնիկան

Հողատարածքի հողի նախապատրաստումը

Պտղատու բույսերը փարթամորեն կարող են աճել միայն խնամքով նախապատրաստված՝ հարթեցրած եւ գծանշած, նախապես խոր վարած, կրկնավարած, պարարտացրած, սննդանյութերով հարուստ եւ համապատասխան նախորդ մշակաբույսեր ունեցող հողերում: Պտղատու բույսերի աճի ու զարգացման համար կարեւոր նշանակություն ունի հողի խոր վարը, որը բարելավում է դրա ֆիզիկարիմիական հատկությունները, օդաջերմային ռեժիմները եւ սննդառության ուղղաձիգ տեղաշարժը եւ պայքարում է մոլախոտային բուսականության դեմ:

Սննդանյութերով աղքատ հողամասերում այգին հիմնադրելուց առաջ պետք է հող մտցնել օրգանական պարարտանյութեր (գոմադր, տորֆ, բուսահող)՝ 30-70 տոննայի սահմաններում 1 հեկտարի հաշվով, սուպերֆոսֆատ՝ մինչեւ 300-700 կգ/հա, կալիումական աղ՝ 100-200 կգ/հա: Ավելի նպատակահարմար է այդպիսի հողամասերում այգին տնկելուց առաջ 2-3 տարի մշակել առվույտ, կորնգան, այլ լրացգի մշակաբույսեր, որոնք կհարստացնեն հողը ազոտային նյութերով, կլավացնեն հողի ֆիզիկարիմիական հատկությունները եւ 4-5 տարով կստեղծեն բարենպաստ պայմաններ պտղատու բույսերի արմատների աճի եւ զարգացման համար:

Փոսերի փորատումը եւ նախապատրաստումը տնկումներին

Անկախ այգետարածքի հողի համատարած բարելավման եւ պարարտացման գործողություններից, պտղատու ծառերի արմատային

համակարգի համար պետք պատրաստվեն հատուկ ժամանակավոր ապաստարաններ՝ տնկման փոսեր, որտեղ նորատունկ ծառերը 4-5 տարով ապահով կածեն ու կզարգանան: Այնուհետեւ ծառի մեծանալուն եւ հզորացմանը գուգընթաց արմատները կհաղթահարեն տնկման փոսի պատերի սահմանները եւ դուրս կգան այդ շրջանակներից՝ տարածվելով նաև հորիզոնական ուղղություններով, զբաղեցնելով իրենց հատկացված սննման մակերեսը: Գիտական փորձերի եւ գործնական աշխատանքների արդյունքներն ապացուցում են խոր եւ լայն



Նկար 28. Փոսերի փորատումը եւ նախապատրաստումը տնկման համար՝ մեքենայացված եւ ձեռքի գործիքներով



Նկար 29. Պատրաստի փոս տնկման համար

փոսերի արդյունավետությունը նորատունկ ծառերի կաչողականության եւ երիտասարդ ծառերի արագ աճի ու զարգացման համար:

Տնկման փոսերը պետք է պատրաստել տնկումները կատարելուց առնվազն 1-1,5 ամիս առաջ, ուստի զարմանային տնկումների դեպքում դրանք պետք է փորատվեն դեռեւս աշնանը: Փոսերի պատրաստման եւ տնկման միջեւ ընկած «սպասման» ժամանակահատվածի բացատրությունը տրված է ստորեւ՝ այս ենթարաժնի վերջում:

Տնկման փոսերը կարելի է փորատել ինչպես ձեռքով, այնպես էլ մեքենայացված: Վերջին տարիներին ստեղծված մի շարք փոսփորիչ մեքենաները, որոնք ունեն տարրեր տրամագիծ, հաջողությամբ օգտագործվում են Հայաստանի հիմնական պտղաբուծական շրջաններում:

Տնկման փոսերը փորվում են կլորավուն ձեւի, դեպի ներքեւ նեղացող թեք պատերով: Հնդավորների տնկման համար, որոնց տնկիները խոշոր երկամյակներ են (տնկվում են 2 տարեկանում) փոսերը պետք

Էլինեն մինչեւ 100-125 սմ լայնությամբ եւ 70-80 սմ խորությամբ, իսկ կորիզավորների միամյակների համար՝ մինչեւ 70-80 սմ լայնությամբ եւ 50-60 սմ խորությամբ: Այդքան էլ պետք է լինեն թզուկային բոլոր տեսակների տնկիների համար պատրաստվող տնկման փոսերը:


Փոսերի նախապատրաստման կամ տնկման ժամանակ փոսից հանած հողը պարտադիր է նորից հարստացնել ինչպես օրգանական, այնպես էլ հանքային պարարտանյութերով: Փոսի հողին տրվող պարարտանյութերի քանակը կախված է փոսերի մեծությունից: Այսպես, օրինակ՝ մինչեւ 1մ լայնությամբ եւ 50-60 սմ խորությամբ փոսերից յուրաքանչյուրին պետք է լցնել 30-40 կգ փտած գրմադր կամ 10-20 կգ փտած բռչնադր, 1-1,5 կգ հասարակ սուսերֆոսֆատ կամ 0,7-0,8 կգ կրկնակի սուսերֆոսֆատ, 120-200 գ կալիումական աղ կամ մոխրով փոխարինելիս՝ մինչեւ 1 կգ մոխրի: Տնկելիս ազոտական պարարտանյութեր չեն օգտագործում, դրանք կիրառում են՝ երբ ծառերի կաշողականությունն արդեն վերջնականապես ապահովվել է եւ սկսվել է դրանց բուռն աճը:

Պարարտանյութերի նշված քանակությունը հողի հետ լավ խառնելուց հետո պետք է նախօրոք լցնել տնկման փոսերը, դրանց խորության մինչեւ 2/3 մասի չափով, որպեսզի նախքան տնկումները հողը «նստի»՝ իջնի ներքեւ: Փոսի դատարկ մնացած մասը հողալցվում է տնկման ժամանակ:

Տնկումների կատարման տեխնիկան


Պտղատու ծառերի տնկումը պատասխանատու աշխատանք է, որի ճիշտ կատարումից կախված է ծառերի կաշողունակությունը եւ դրանց հետագա աճն ու պտղաբերությունը: Տնկիների վատ կաշողունակությունը կամ ոչ նորմալ աճն ու զարգացումը հաճախ տեղի են ունենում ոչ ճիշտ տնկման հետեւանքով:

Տնկումները կատարում են 2 հոգով. տնկողներից մեկը տնկին իջեցնում է փոսի մեջ, որը 2/3-ով լցված է նախօրոք պարարտանյութերով խառված հողով եւ արմատներն ուղղում կրնածեն հողարմբի վրա: Երկրորդ տնկողը, վերցնելով նույն կերպ պատրաստած հողը, բահով լցնում է արմատների վրա, մինչեւ փոսի վերենի եզրերը: Տնկին բռնողը ուղբերով ամուր տրորում է հողը, այնպես, որ հողի խորքում օդային խոռոշներ չմնան եւ տնկին ձեռքով բույլ քաշելիս դուրս չգա հողից, իսկ արմատավզիկը հողի մակերեսից 5-7 սմ բարձր լինի. հետագայում, երբ հողը կիշնի ցած, «կնստի», այն արմատավզիկը պետք է հավասարվի հողի մակերեսին:



Նկար 30. Ծառի տնկումն ավազային հողում (հեղինակի նկար)

Արմատավզիկը խոր կամ մակերեսից բարձր լինելու դեպքում ծառերը վատ են կպչում, կարող են ծովել եւ տապալվել, կամ հակառակը՝ խեղդվել խոր հողում. բոլոր դեպքերում նորմալ չեն աճում, կարող են ուշացնել պտղաբերությունը եւ ունենալ միջակից ցածր բերքատվություն:



Նկար 31. Տնկման ճիշտ տեխնիկան (դասագրքային նկար)

Տնկումից անմիջապես հետո տնկիները պետք է կապել փայտյա ցցերին՝ քամիներից ծովելուց կամ կոտրվելուց խուսափելու համար, պատրաստել բնամերձ բաժակներ մինչեւ 1-1,5 մ տրամագծով, եւ անկախ այն բանից, թե ինչպիսի եղանակ է, անկախ տեղումների քանակից տնկումների ընթացքում, պարտադիր ջրել՝ յուրաքանչյուր տնկման փոս հղելով 2-5 դրոյլ ջուր: Հողի մակերեսից գոլորշիացումը կանխելու եւ ծառերի բաժակներում խոնավությունը երկար ժամանակ պահպանելու համար, ցանկալի է կատարել մուլչապատում՝ ծածկում գոմաղբով, տորֆով, բուսահողով, ծղոտով եւ այլն:

Պատղատու երիտասարդ եւ բերքատու այգիների հողի պահպանման համակարգերը

Այզին կարելի է հաջողորդացնել խնամել, իսկ պատղատու բույսերը կարող են լավ աճել, զարգանալ ու պտղաբերել միայն մեծ խնամքով նախապատրաստված հողում՝ խոր վարած, առատորեն պարարտացված, ճիշտ հարթեցված եւ տեղաձեւված:

Երիտասարդ այգու հողը պետք է լավ մշակել մերձբնային տարածություններում (ջրման բաժակներում), բուսածի (վեգետացիայի) ամբողջ ընթացքում այն պետք է լինի փոխար, մոլախոտերից գերծ եւ սննդանյութերով ու խոնավությամբ ապահովված: Բաժակների լայնությունը պետք է համապատասխանի ծառերի տարիքին եւ սաղարթի շրջագծի մեծությանը: Նորատունկ ծառերի առաջին երկու տարում մերձբնային բաժակները պետք է քողմել մինչեւ 1-1,5 մ տրամագծի լայնությամբ, հետագայում՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ, այն պետք է ավելացնել 0,5 մ-ով, իսկ մինչեւ 8-10 տարեկան ծառերի բաժակները պետք է լայնացվեն և ունենան 3,5-4 մ տրամագիծ, ընդունում այդ տարածքը չի կարելի զբաղեցնել այլ բույսերով: Աշնանը մերձբնային տարածությունները պետք է փորել բահով 15-18 սմ խորությամբ, առանց արնատները վնասելու, իսկ գարնան սկզբում անհրաժեշտ է հողուրագներով փխրեցնել 8-12 սմ խորությամբ՝ քաղհանելով մոլախոտերը: Գարնանա-ամառային շրջանում անհրաժեշտ է լինում կատարել 3-5 քաղհան-փխրեցում:



Նկար 32. Խոտածածկ միջշարային տարածությունով տնկարկներ

Երիտասարդ այգիներում, քանի դեռ տնկված ծառերը փոքր են և այգու միջշարային տարածությունները ազատ են, դրանք կարելի է զբաղեցնել միջանկյալ մշակաբույսերով մինչեւ ծառերի 5-8 տարեկանը, եթե դրանք դեռևս չեն անցել լրիվ պտղաբերության շրջանին: Այսուհետեւ, **բերքատու այգում** կարելի է մշակել միայն առվույտ:



Նկար 33. Խոտածածկից ազատ միջշարային տարածություն

Նույնը չի վերաբերում է **ցածրաճ (թզուկային) այգիներին**, որտեղ միջշարքերը բավական մեղ են և այնտեղ որեւէ այլ միջանկյալ մշակաբույսեր մշակել հնարավոր չեն:

Չորային վայրերում հողից խոնավության կորուստը նվազեցնելու նպատակով խորհուրդ է տրվում ծառերի մերձբնային տարածությունները մուշապատել՝ առնվազն 5սմ շերտով մակերեսային ծածկում կատարել: **Մուշապատումը նպաստում է նաև ջրի թափանցմանը** եւ կուտակմանը հողի խոր շերտերում, կարգավորում է հողի ջերմային ռեժիմը եւ խոչընդոտում է մոլախոտերի աճին: Մուշապատումը կարող է



Նկար 34. Մերձբնային տարածության մուշապատում

Յ անգամ պակասացնել ջրի գոլորշիացումը հողի մակերեսից:

Բոլոր դեպքերում հողի մշակության եւ միջշարքերի պահպանման համակարգերի ընտրությունը պետք է ճշտել ազրոնոմիական եւ այգեգործական գրականության տվյալների հետ:

Պահատու երիտասարդ եւ բերքատու այգիների ծառերի ոռոգման համակարգը

Հայաստանի ամբողջ տարածքում բոլոր արտադրական այգիները ջրովի են, քանի որ մեր հողակիմայական պայմաններն անբարենպաստ են պատղատուների անջրդի մշակության համար: Դա արտահայտվում է հողի մակերեսի բնական գոլորշիացման եւ տեղումների տարեկան անբավարար ծավալի միջեւ գոյություն ունեցող պակասորդի (դեֆիցիտի) ձեւովեւ բացատրվում է տեղումների տարեկան անհամաչափ բաշխմանը, որը մեր բազմամյա բույսերի կենսաբանական պահանջներին չի համապատասխանում:

Սովորական (դասական) այգիները ոռոգելու ամենատարածված ձեւը բաժակային ոռոգումն է, երբ ջուրը հասցվում է յուրաքանչյուր ծառի արմատային համակարգի տարածման գոտի:

Սակայն հողը լավ խոնավացնելու կատարելագործված ձեւ է համարվում **ակռուային ոռոգումը**, երբ ջուրը համաշափ ներծծվում է հողի բոլոր շերտերը՝ թե ուղղահայաց եւ թե հորիզոնական ուղղություններով: Հայաստանում կարելի է ոռոգել նաև **մարգերուլ**, սակայն համատարած ոռոգումը շատ ծախսատար է եւ հաճախ՝ դժվար կառավարելի:

Ցածրած (թգուկային) այգու ոռոգումը անհրաժեշտ է կատարել միայն **կարիլային** կամ **մանրանձրեւացման** **համակարգով**, եւ այսպիսի ոռոգումը նախատեսում է ավելի հաճախ, բայց քիչ ծավալի ջրումներ:

Կարիլային կամ մանրանձրեւացման եղանակով ոռոգման ճշգրիտ ձեւը որոշվում է՝ ելնելով յուրաքանչյուր այգու պայմաններից, տարիքից ու բերքատվությունից:

Հնարավորության դեպքում պետք է կոնկրետ հաշվարկել տվյալ այգու ջրման չափաբաժինները (նորմերը) ազրոնոմ-այգեգործի եւ ոռոգման մասնագետի հետ:

Սովորական (դասական) այգու ռողումը եւ ջրումները

Հայաստանում բարձր ջերմաստիճանը, մթնոլորտային տեղումների անբավարար քանակը եւ օդի ցածր հարաբերական խոնավությունը ուժեղացնում են հողիցեւ պտղատու բույսերից ջրի գոլորշիացումը: Այդ պատճառով ռողումն ունի վճռական նշանակություն, հատկապես՝ երիտասարդ բույսերի համար:

Ոռոգման ու ջրման չափաբաժինները (նորմերը) կախված են տվյալ վայրի ու տեղանքի հողի որակներից ու խոնավունակությունից, մթնոլորտային տեղումների քանակից, օդի հարաբերական խոնավությունից, ռողգվող շերտի խոնավությունից եւ ռողգվող բույսերի տարիքից, տեսակից ու բուսաձևից (սրտայից):

Եթե տվյալ այգու ջրման չափաբաժինները (նորմերը) հնարավոր չէ հաշվարկել ազրոնոմ-այգեգործի եւ ռողուման մասնագետի հետ, ապա օգտագործում են տվյալ տարածքում ընդունված միջին չափաբաժինները:

Օրինակ՝ Արարատյան հարթավայրի պայմաններում սովորական (դասական) այգու.

- ▶ նորատունկ ծառերը ջրում են տարեկան 8-12 անգամ, մեկ ջրմանը հղելով 300-400 խմ/հա,
- ▶ երիտասարդ այգու ծառերը (մինչեւ 5-6 տարեկանը) ջրում են տարեկան 6-8 անգամ՝ մեկ ջրմանը բաց բողնելով 400-600 խմ/հա,
- ▶ բերքատու տարիքի ծառերը ռողում են տարեկան 4-6 անգամ՝ յուրաքանչյուր ջրմանը 1 հեկտարին տալով 600-800 խմ ջուր:

Նախալեռնային գոտու պայմաններում ջրումների չափաբաժինները, թիվը եւ հաճախականությունը կրճատում են 15-25 %-ով: Լեռնային գոտում եւ այն վայրերում, որտեղ մթնոլորտային տեղումների քանակը բարձր է, կարելի է բավարարվել վերոնշյալի 50 %-ով, բաշխված ընդամենը 4-5 ջրումների:

Այգիներում ջրումների չափաբաժինները, հաճախականությունը եւ ժամկետները ճշտվում են՝ ենելով հողի խոնավությունից ու բույսի զարգացման փուլից:

Ցածրած (թզուկային) այգու ռողումը կատարվում է կաթիլային եւ մանրանձրեւացման եղանակներով:

Վերջին տարիներին լայնորեն տարածվում է կաթիլային ռողուման

համակարգը, իսկ դրան զուգահեռ՝ նաեւ մանրանձրեւացման եղանակը այնտեղ, որտեղ կաթիլայինը հնարավոր չէ: Սակավաջուր երկրների համար այս ձեւերը համարվում են կատարյալ եղանակ: Կաթիլային եղանակը աչքի է ընկնում հետեւյալ առավելություններով.

- ավանդական ոռոգման համեմատ ջրման նորմը պակասում է 1,5-3 անգամ,
- ոռոգման համար օգտագործվող ջրի գրեթե 90 %-ը նպատակային կերպով հասնում է ծառերի արմատային համակարգին,
- հավասար չափաբանակով ջուր են ստանում բոլոր բույսերը՝ շարքի եւ առաջին եւ վերջին ծառերը(վագերը),
- ջրման հողային աշխատանքները ավելորդ են դառնում,
- չոր են մնում այզու միջարային եւ միջրուսային տարածությունները, եւ մոլախոտերը, չստանալով ջուր, գրեթե չեն զարգանում, քաղիանի աշխատանքները դառնում են ավելորդ կամ խիստ պակասում են,
- կաթիլային եւ մանրանձրեւացման համակարգի միջոցով հնարավոր է կազմակերպել պտղատու բույսերի կատարյալ սնուցում/պարարտացում,
- դրանով նաեւ կրծատվում են օգտագործվող պարարտանյութերի քանակները եւ աճում է բույսերի կողմից դրանց օգտագործման արդյունավետությունը,
- այզու բերքատվությունը բարձրանում է 50-500 %-ով:

Այզու ոռոգման համար այս եղանակները ընտրելիս պետք է հաշվի առնել, որ կաթիլային համակարգը պետք է ներդնել միայն նորատունկ այզում: Մեծահասակ այզին, որտեղ ծառերի արմատներն արդեն տարածվել են հողում եւ հարմարվել են ոռոգման այլ համակարգերի, չեն կարողանում հարմարվել նոր պայմաններին: Այդ այզիներում կարելի է խորհուրդ տալ մանրանձրեւացման համակարգի կիրառումը:

Կաթիլային կամ մանրանձրեւացման ոռոգման չափաբաժինները պետք է կազմեն.

- նորատունկ ծառերը ջրում են տարեկան 12-18 անգամ, մեկ ջրմանը բաց բողնելով՝ 50-100 խմ/հա,
- երիտասարդ ծառերը (մինչեւ 4-5 տարեկանը) ջրում են տարեկան 10-15 անգամ, մեկ ջրմանը 100-200 խմ/հա,

- բերքատու տարիքի ծառերը ոռոգում են տարեկան 6-10 անգամ՝ յուրաքանչյուր ջրմանը տալով 200-250 խ.մ/հա ջուր:

Տվյալ այգու ոռոգման համակարգի եւ ջրման չափաբաժինների (նորմերի) սահմանումը պետք է կատարել ազդոնոմիական, հիդրոդերենուրաբանական, այգեգործական եւ ոռոգման մասնագիտական գրականության տվյալներին համահունչ:

Պտղատու երիտասարդ եւ բերքատու այգիների ծառերի պարարտացման եւ սնուցման համակարգը

Այզու ծառերը կարող են լավ աճել, զարգանալ ու պտղաբերել միայն մեծ խնամքով նախապատրաստված եւ **առատորեն պարտացված հողում**:

Նույնիսկ սննդանյութերի բավարար պաշար ունեցող հողամասերում, իսկ աղքատ հողերում՝ առավել եւս, կարեւոր է, որ այգին հիմնադրելուց առաջ հող մտցվի հանքային (ֆոսֆոր, կալիում ու մինչեւ 7-8 մանրատարրեր) եւ **օրգանական պարարտանյութեր** (գոմաղը կամ թռչնաղը, բուսահող):

Հայաստանի հողերի մեծամասնությունում այգին հիմնադրելուց առաջ պետք է յուրաքանչյուր հեկտարի հաշվով հող մտցնել՝

- 30-70 տոննա գոմաղը կամ 10-20 տոննա թռչնաղը,
- 300-700 կգ սուպերֆոսֆատ,
- 120-250 կգ կալիումական աղ,
- 30-50 կգ մանրատարրերի խառնուրդ:

Բոլոր պարարտանյութերը միաժամանակ համաշափ ցրվում են հողի մակերեսին եւ վարի կամ խոր վարի միջոցով շրջվում հողի մեջ: Այնուհետեւ կատարվում են հողի հարթեցում եւ տեղաձեւման աշխատանքներ:

Բացի այդ, տնկման փոսերը լցնելու ժամանակ հողը պետք է լրացնիչ հարստացնել օրգանական եւ հանքային պարարտանյութերով, հաճախ նաև հողը փուլսը դարձնելու համար ավելացնել թերթացնող օդարափանց, կնդիկավոր լցոնանյութերով (տորֆ, թեփ, տաշեղ, փայտածուխ, սպիտակ կամ կարմիր ավագ եւ այլ չփոփող կամ դանդաղ փոտոյ մանրակնդիկ նյութեր):

Սովորական (դասական) այգի տնկելիս պարարտանյութերի քանակները տնկման փոսերում, Հայաստանի հողերի մեծամասնությունում, մոտավորապես հետեւյալն են. յուրաքանչյուր փոսի մեջ պետք

Է լցվի՝

- 2-3 դույլ փտած գոմաղբ,
- 3-5 դույլ ավագ կամ այլ փուխր լցանյութ,
- 200- 350 գ սուպերֆուֆատ,
- 60-120 գ կալիումական աղ,
- 10-30 գ մանրատարրերի խառնուրդ:

Ցածրած (թզուկային) այգու տնկման համար յուրաքանչյուր փուսի մեջ պետք է լցվի՝

- 1-3 դույլ փտած գոմաղբ,
- 2-3 դույլ ավագ կամ այլ փուխր լցանյութ,
- 120-200 գ սուպերֆուֆատ,
- 30-60 գ կալիումական աղ,
- 10-20 գ մանրատարրերի խառնուրդ:

Պարատանյութերի տվյալ քանակությունները նախատեսված են ավանդական պտղաբուծության համար նախատեսված չափի տնկափոսերի համար եւ ինտենսիվ պտղաբուծության թզուկային ծառերի այլ չափսերի փոսերի համար նյութերի քանակներն անհրաժեշտ է համամասնորեն պակասեցնել:

Տնկման փուլում ազոտական պարարտանյութերի կիրառումը անցանկալի է: Դրանք պետք է օգտագործել միայն տնկումից հետո՝ մոտ 1-2 ամիս անց, երբ նորատունկ ծառերն արմատակալել են եւ սկսվել է դրանց հաստատուն աճը:

Ծառերի աճի եւ պտղաբերության համար կարեւոր նշանակություն ունեն նաև ամենամյա պարարտացումը եւ սնուցումները: Պտղատու քազմամյա բույսը՝ ծառը, մի քանի տասնյակ տարիներ աճելով նոյն տեղում, մեծ քանակությամբ օգտագործում է հողի սննդային տարրերը, որոնք, եթե այգեգործի կողմից չվերականգնվեն, ապա դրանց պակասորդը կարող է ծառերի աճի եւ բերքատվության լուրջ խանգարումների պատճառ հանդիսանալ:

Այգեգործի պարտքն է պարբերաբար կատարվող պարարտացման եւ սնուցումների միջոցով վերադարձնել հողին օգտագործված սննդանյութերը եւ սնել աճեցվող քազմամյա բույսերը: Պարարտանյութերի տեսակները եւ ազդեցությունը շատ բազմազան են, դրանց մասին կարելի է կարդալ մասնագիտական գրականությունում:

Սովորական (դասական) այգու հիմնական պարարտացումը պետք է կատարել ամեն տարի՝ գարնանը հող մտցնելով ազդող նյութի հաշվով՝ 150-250 կգ/հա ազոտ (սելիտրա) եւ աշճանը (կամ նաեւ գարնանը) 60-90 կգ/հ ֆոսֆոր, 40-60 կգ/հա կալիում, եւ 2-3 տարին մեկ՝ հող մտցնել 30-60 տ/հա փտած գոմադր կամ 10-20 տ/հա փտած բռչնադր: Ազոտային պարարտանյութերի տարեկան չափաբաժնի 1/3-1/4-ը կարելի է տալ սնուցման ձեւով՝ գարնանը կամ ամռանը, բայց ոչ ուշ քանի պտուղների հասունացման ժամկետից 1 ամիս առաջ:

Կախված սովորական (դասական) այգու ծառերի տարիքից, սաղարթի մեծությունից եւ պարարտանյութերի տեսակից՝ անհրաժեշտ է լինում կատարել պարարտացում հետեւյալ կարգով՝

Աղյուսակ 2.

Այգում ծառերի պարարտացման միջինացված չափաբաժնները (Նորմերը)					
Ծառի տարիքը	Բաժակի տրամագիծը, մ	Գոմադր կամ կոմպոստ, կգ	Ամռնիումական սելիտրա, գ	Կրկնակի սուպերֆոսֆատ, գ	Կալիումի քլորիդ, գ
2-3	2	15-25	50-70	60-80	40-60
4-5	2,5	30-35	120-150	100-150	80-120
6-7	3	40-50	200-250	200-300	120-200
8-9	3,5	60-80	350-500	500-600	150-300
10 եւ ավելին	4,0	80-100	500-600	700-1000	250-500

Սնուցումներն ավելի արդյունավետ է կատարել արտարմատային (տերեւային) սնուցման ձեւով: Այսինքն պարարտանյութերը ոչ թե հող են մտցվում, այլ սրսկվում են տերեւային զանգվածի վրա: Այս դեպքում ջրալույծ պարարտանյութերը արագ եւ առանց կորուստների մտնում են ծառերի (վազերի) հյուսվածքների մեջ: Արտարմատային (տերեւային) սնուցման համար կարելի է օգտագործել շուկայում առկա մի շարք համակցված պարարտանյութեր՝ ազոտի, ֆոսֆորի եւ կալիումի տարբեր հարաբերակցությամբ: Բացի այդ, դրանք պարունակում են նաև բույսերին անհրաժեշտ միկրոտարրեր: Սրսկվող լուծույթի խտությունը պետք է համապատասխանի կոնկրետ պարարտանյութի կիրառման գրությանը, սակայն լինի ոչ ավելին քան 0,3-0,5 %, այլապես տերեւները կարող են վնասվել («այրվել») ու չորանալ:

Սովորաբար սնուցումները կատարում են տերեւների 2-3 սրսկումով՝ առաջինը ծաղկումից 5-7 օր հետո, երկրորդը՝ առաջին սրսկումից մոտ 1 ամիս անց, իսկ երրորդը՝ երկրորդից 1-1,5 ամիս հետո:

Յածրած (թգուկային) այգիների կաթիլային կամ մանրանձրեւ-ացման ռողջման համակարգերով **հիմնական հաճքային պարարտացումը փոխարինվում է սնուցումներով**, որոնց քանակները եւ հաճախականությունը որոշարկվում են՝ ելնելով յուրաքանչյուր այգու պայմաններից, տարիքից ու բերքատվությունից ազդունում-այգեգործի, ազրոքիմիայի եւ ռողջման մասնագետների հետ համատեղ։ Յածրած ծառերի սնուցման չափաբաժինները պետք է սահմանափակել 4-5 տարեկան սովորական ծառերի համար նախատեսված նորմերով։

Այգու պարարտացման եւ սնուցման համակարգի եւ չափաբաժինների (նորմերի) սահմանումը պետք է կատարել ազդունումիական, այգեգործական եւ ազրոքիմիական մասնագիտական գրականության տվյալների հետ համահուն։ Առնվազն հինգ տարին մեկ պետք է կատարել հողի քիմիական վերլուծություն (անալիզ) եւ ճշտումներ մտցնել այգու պարարտացման եւ սնուցման չափաբաժինների քանակական ու որակական ցուցանիշներում։

Պտղատու երիտասարդ եւ բերքատու այգիների ծառերի եւ բերքի պաշտպանությունը աղետալի վտանգներից

(ցրտահարություն, կարկուտ,
քամիներ, երաշտ, ցրտահարություն,
հիվանդություններ, վնասատուներ եւ
այլն)

Ծաղիկների պաշտպանությունը գարնանային ցրտահարություններից

Հայաստանի պտղաբուծական շատ տարածքներում ուշ գարնանային ցրտերը համընկնում են ծառերի ծաղկման շրջանին կամ պտղագոյացմանը: Այդ ցրտահարությունից մեծ չափով վնասվում են պտղատու ծառերի բացված բողբջները, ծաղիկները եւ նոր զոյցած պտղիկները: Ծաղկման փուլում ծաղիկները կարող են վնասվել նույնիսկ թույլ ($-1\text{--}2^{\circ}\text{C}$) ցրտերից, որը կարող է բերել բերքի 100 %-ի կորստի:

Ուստի խիստ անհրաժեշտ է լինում պաշտպանել ծաղիկները եւ պտղիկները ցրտահարումներից, որնեւ կերպ չեղոքացնել ցրտերի վնասակար ազդեցությունը:


Ցրտահարությունների դեմ առավել կիրառական է մնում այգու ծխապատումը (ծխեցում) եւ որոշ չափով՝ այգու առատ ջրումները, որոնք այդ շրջանում նույնագեն դժվար հասանելի են լինում՝ ոռոգման ջրի բացակայության պատճառով:

Այգու ծխապատումը կատարվում է նախապես պատրաստած ծխակույտերն այրելով ցրտահարության զիշերվա վերջում՝ լուսաբացից 1,5-2 ժամ առաջ: Ծխակույտերը, թվով 120-150 հատ/հա, տեղադրելով միմյանցից 3-5 մ, խսկ ծառերից՝ 1-3 մ հեռավորության վրա, պատրաստվում են վաղ գարնանը՝ ոչ ուշ քան սպասվող ծաղկումից 2 շաբաթ առաջ: Ծխակույտերը պահանջում են քիչ ժամանակ եւ էժան միջոցներ՝ ցախ, ճյուղեր, ծղոտ, թեփ ու տաշեղ, գոմաղը, հող.

պատրաստվում են այնպես, որ կրակը շուտ չբռնկվի, այլ ծխա՝ դանդաղ եւ երկար:



Նկար 35. Ուշ գարնանային ցրտահարություն



Նկար 36. Ծխակույտի պատրաստման գծապատկեր
(հեղինակի նկար)

Պտղատեսակների, հասկապես լմնկուղենու, ծաղիկներին մեծ վնաս են հասցնում տեսական (5-6 օր տեսողությամբ) եւ **առատ տեղումները** եւ **համեմատաբար ցածր ջերմաստիճանները** (+5...8°C), որոնց հետեւանքով զարգանում են լնձյուղներին, ծաղիկներին եւ պտղիկներին վնասող սնկային հիվանդությունները: Ցանկալի է կատարել հակասնկային բուժումները (սրսկումներ) նույնիսկ անձրեւների շրջանում:

Կարկուտը կարող է փշացնել ծառերի թերքի 50-100 %-ը եւ մարմնի մեծ զանգվածը՝ տերեւները, շիվերը, ճյուղերը: Դրանց դեմ պետք է գործի հակակարկտային ծառայություն կամ այգեգործը սեփական ուժերով պետք է ծառերի վրա տեղադրի կարկուտապաշտպան ցանցեր, որոնք պաշտպանում են նաև **քամիների** բացասական ազդեցությունից, **բռչունների** եւ **խոշոր միջատների** վնասներից, հատկապես ծաղկման եւ պտուղների հասունացման շրջանում:



Նկար 37. Կարկուտի հասցրած վնասը (վերջին նկարը՝ հեղինակին է)

Պտղատու ծառերի էտի Եւ ձեւավորման նպատակներն ու սկզբունքները, աճի Եւ պտղաբերման հարաբերակցու- թյան, բերքով բեռնվածության կարգավորումը

Պտղատու ծառերի էտի Եւ ձեւավորման նպատակներն ու սկզբունքները

Պտղատու ծառերի ձեւավորումը եւ էտը կատարվում է բույսի վերգետնյա մասի՝ շիվերի ու ճյուղերի հատումների միջոցով: Պտղատու ծառերի ձեւավորումը եւ էտը նպատակ ունեն կազմակերպել ծառի մարմինը՝ բնի բարձրությունը, կմախքային ճյուղերի քանակը, դիրքը եւ դասավորվածությունը, սաղարթը, ճյուղերի կառուցվածքային ամբողջությունը եւ բոլոր օրգանների հավասարակշռությունը: Էտով չափավորվում եւ կանոնավորվում են բույսերի աճեցողությունը, բարձրությունը, սաղարթի մեծությունը: Էտը խրանում է զարգացումը, պտղաբերությունը, բերքի ծավալը եւ որակը:

Էտն ազդեցություն է բողնում բույսի արմատների նկատմամբ շիվերի հարաբերակցության վրա: Սովորաբար սաղարթի հատումները նվազեցնում են արմատային համակարգի ծավալը: Սակայն այնուհետ բույսը դրան հակազդում է սաղարթի բուսաճային նոր աճով, որի հետեւանքով ավելանում են արմատների քանակը եւ զանգվածը՝ պահպանելով սաղարթի եւ արմատային համակարգի համապատասխան հարաբերակցությունը:

Զեւավորումները նպատակ ունեն այգեգործի մտահղացումներով կազմակերպել ծառի մարմնի ձեւը, բնի բարձրությունը, կմախքային ճյուղերի քանակը, մեծությունը, դիրքը եւ դասավորվածությունը, սաղարթը, ճյուղերի կառուցվածքային ամբողջությունը եւ բոլոր օրգանների հավասարակշռությունը: Զեւավորմամբ, ինչպես եւ էտով, չափավորվում եւ կանոնավորվում են բույսերի աճեցողությունը, զարգացումը, պտղաբերությունը, բերքի ծավալը եւ որակը:

Պտղատու ծառերի ձեւավորման համակարգերն ընտրվում են՝ ել-

Աելով բույսի պտղատեսակից, մշակաձեւի (սորտի) եւ պատվաստակալի առանձնահատկություններից, տարիքից, այզու մշակության տեխնոլոգիայից, հողակլիմայական պայմաններից եւ այլ գործոններից: Ետի եւ ձեւավորումների սկզբունքները, կարգավորումները եւ ինտենսիվությունը կախված են ծառի տեսակից, մշակաձեւից, տարիքային շրջանից, ֆիզիոլոգիական վիճակից, աճեցողության եւ պտղաբերության հարաբերակցությունից եւ միջավայրի պայմաններից, որոնք բոլորը պետք է հաշվի առնել նախքան էտի կատարումը:

Ծառի աճեցողության ապդեցությունը Էտի եւ ձեւավորման սկզբունքների վրա

Պտղատու ծառերի ամենամյա բուսաճի ընթացքում առաջանում են մարմնի նոր մասեր եւ հզորանում են գոյություն ոունեցողները՝ ապահովելով բույսի կենսունակությունն ու կարողությունները: Հզորած (բարձրած) ծառերն առաջացնում են շատ երկար եւ հաստ շիվեր՝ մի քանի կողային բույլ ճյուղավորումներով: Նման աճի բնույթը դժվարացնում է հավասարակշռված սաղարքի ստեղծումն ու պահպանումը, ուշացնում է ծաղկման եւ պտղաբերման սկզբնավորումը, ձգձգում է առավելագույն բերքատվության ապահովման տարիքի հասնելը, այդ թվում՝ նվազեցնում է պտղի արտադրության հարաբերական ցուցանիշները:

Բուսաճի ուժը մեծապես կապված է ծառի պատվաստակալի տեսակի եւ որակների հետ (հզորած, միջակած, կիսացածրած, ցածրած, կիսաբզուկային, թզուկային, գերբզուկային եւ այլն): Այն կարող է բարելավվել նաև հողի բարձր բերրիության, պարարտացման ու սնուցման լավ մակարդակի, առատ ջրումների, ինտենսիվ եւ կարգավորող էտի շնորհիվ: Ինտենսիվ էտը դրական ազդեցություն է ունենում նաև բույլ աճեցողության ծառերի վրա, սակայն խորհուրդ է տրվում հիմնականում կիրառել հզորած բույսերի համար:

Ցածրած եւ թզուկային պատվաստակալների օգտագործումը քոյլ է տալիս վերահսկել ծառի սաղարքի չափսերը, արագացնել պտղաբերման սկզբնավորումը, ավելացնել բերքատվության հարաբերական չուցանիշները: Այնուհանդերձ, դրանք պահանջում են պատշաճ կառավարում՝ առավել ճշգրիտ էտի եւ պտուղների մեծության ու որակի վերահսկում հնարավոր այլ եղանակների միջոցով:

Բույսի ձեւավորումները կարող են լինել բնականն եղանակներով, ինչպիսին են բրգաձեւները, հարկայինները, բաժակաձեւները, կամ արհեստական քանդակային (պալմետային) եղանակներով՝


փոված, կորացած, ուղղաձիգ եւ այլն:

Բոլոր ձեւավորումների դեպքում այգեգործները էտի եւ այլ հնարքների միջոցով կարողանում են հակազդել վատ ցուցանիշների վրա:

Պտղատու ծառերի ձեւավորման առավել տարածված ավանդական (դասական) եւ թպուկային (ինտենսիվ) համակարգերն ու էտի առանձնահատկությունները

Հայաստանում պտղատու ծառերի ձեւավորման առավել տարածված ավանդական (դասական) բնականու տարրերակներն են՝ հարկային, նոսր հարկային, անհարկ (փոփոխված առաջատարով), բաժակածել կամ բարելավված բաժակածել համակարգերը: Ցածրած եւ թգուկային ծառերի արիեստական ձեւավորումները շատ ավելի բազմազան են եւ արտասովոր տեսքի՝ փոված, կորացած, ուղղաձիգ, հովհարանման, երկթեւանի, թեք կորդոնի, իլիկածել եւ այլ արիեստական ձեւավորումներով:

Սովորական (դասական) եւ ցածրած (թգուկային) այգիներում մինչեւ պտղաբերությունը երիտասարդ ծառերի խնամքը անհրաժեշտ է տանել այնպես, որ ապահովվեն ծառերի կանոնավոր աճը, ամուր եւ համաշափ սաղարթի կազմակերպումը, որպեսզի հետագայում բերքի ծանրության տակ չկոտրվեն կմախքային եւ կիսակմախքային ճյուղերը: Եթե պտղատու ծառերը մնում են առանց էտի, անխնամ են աճում, եւ սաղարթում առաջանում են ավելորդ խտացումներ, վատանում է ծառի/վազի լուսային եւ օդային ռեժիմը, ճյուղերն ավելորդ երկարում են, ստվերաբկում իրար եւ ամուր չեն լինում:



Նկար 38. Սաղարթի ձեւավորման պալմետային (թանդակային) համակարգ.

Էտելիս առաջնահերթաբար կատարում են սանիտարական էտ, որի ընթացքում պետք է նոսրացնել, հեռացնել սաղարթի խտացում առաջացնող ճյուղերը, սաղարթից դեպի ներս, դեպի դուրս, ներքեւ եւ

հորիզոնական դիրքով աճող բույր ճյուղերը, հոռաշիվերի մի մասը, մի կետից (երկծեղից) աճող մրցակից շիվերից մեկը եւ այլն:

Լավ ձեւավորված բերքատու տարիքի ծառերի մեծամասնությունն ունենում է լավ աճեցողություն եւ պտղաբերում, այսինքն՝ էտելու կարիք առանձնապես չի լինում, աճը սահմանափակվում է 25-30 սմ-ով եւ դրանք դառնում են ինքնակարգավորվող: Խաղողի վազը, սակայն, ցանկացած տարիքում պահանջում է ամենամյա էտ:

Տարիքի հետ մեծանում է ծառերի բարձրությունը, սաղարթի ծավալը, կմախքային ճյուղերը ծգվում են եւ մերկանում, պակասում է տերեւային մակերեսը եւ բերքը: Այսպիսի բերքատու ծառերը պետք է լինում երիտասարդացնել:



Նկար 39. Սաղարթի ձեւավորման բարելավված բաժակաձեւ համակարգ

Էտը կարելի է կատարել ծառերի հանգստի շրջանում (ձմեռային էտ) եւ բուսածի (վեգետացիայի) ընթացքում (ամառային կամ կանաչ էտ): Հանգստի շրջանի էտի ժամկետները որոշելիս պետք է հաշվի առնել տվյալ տարածքի բնակչիմայական պայմանները: Ծառերը (վազերը) կարելի է էտել երկար ժամանակահատվածում՝ աշնանը՝ տերեւաբափից հետո եւ մինչեւ բողբոջների բացվելը գարնանը: Սովորաբար այն կատարում են՝ երբ խիստ ցրտերի վտանգն անցել է, իսկ ծառերի հյութաշրթի դեռ չի սկսվել:

Բոլոր դեպքերում ծառերի ե՛ւ ձեւավորման, ե՛ւ էտելու համակարգերը պետք է ընտրել փորձառու եւ բանիմաց ազդոնոմ-այգեգործի խորհրդատվությամբ:

Ծառերի էտի տեսակները, գործողություններն ու կատարման տեխնիկան: Էտի կատարման գործիքներն ու սարքավորումները

Էտի պտղահատապտղային բույսերի վերգետնյա մասերի որեւէ կարգի եւ չափսերի հատումներն են, որոնք փոխում են բույսի կառուցվածքը, օրգանների քանակը, աճեցողությունը եւ դասավորվածությունը, ազդում աճի եւ պտղաբերության ինտենսիվության ու դրանց հարաբերակցության վրա:

Գյուղայուն ունի էտի 2 հիմնական տեսակ՝ կարճացում եւ նորացում: **Նորացումը՝** ճյուղի կամ շիվի ամրողական երկարության հեռացումն է նախորդ կարգի ճյուղի վրա աճման տեղից: Էտված շիվի կամ ճյուղի կտրված տեղում թռղնվում է միայն մի քանի միլիմետր կեղեւ ու բնափայտ, որն անվանում են **օղակ:** Այդ հանգամանքից ելնելով նորացումն անվանում են նաև «**էտում օղակի վրա**»:

Նորացնող էտի միջոցով ամրողովին հեռացվում են ճյուղեր կամ շիվեր՝ դրանք կտրելով միացման տեղից: Նորացումը կիրառվում է շատ մեծ քանակի բուսաճային շիվերը կամ ծերացած պտղաբերող ճյուղիկների քանակը նվազեցնելու նպատակով: Նոր աճերի եւ ճյուղավորումների ավելացումը զսպելու նպատակով նորացնող հատումները կարելի է կիրառել զարնանք եւ ամուճը: Նորացումով կարելի է հեռացնել նաև մերկացած եւ չորացող տարեց ճյուղեր, որով խթանվում է ծառի երիտասարդացումը, քանի որ տարեց ճյուղերի կտրվածքից ցածր գտնվող քնած թռղնոջները կարող են արքնանալ՝ աճել եւ առաջացնել նոր շիվեր:

Կարճացումը ճյուղի կամ շիվի երկարության մի հատվածի հեռացումն է: Կարճացումով հեռացվում է էտվող շիվի կամ ճյուղի որոշակի մասը, ըստ այդմ տարբերում են **կարճացման աստիճանը՝**

- **բույլ կարճացում,** երբ հեռացվում է երկարության 1/5-1/4 մասը,
- **միջակ կարճացում՝** 1/3-1/2 մասը,
- **ուժեղ կարճացում՝** 1/2-2/3 մասը,

- **Խոր կարճացում կամ խոր էտ՝** ավելին քան 2/3 մասը

Այս շարքում ընդգրկվում է նաև **ծերատումը**, եթե հեռացվում է շվի միայն ծայրամասը՝ 1-5 սմ հատվածը:

Կարճացնող էտի հատումներով խթանում են բուսածային (վեգետատիվ) աճը եւ ակտիվացնում պտղաբերող (գեներատիվ) օրգանների առաջացումը՝ ծաղի պտղաբերող կարգավիճակն արագացնելու, հզորացնելու եւ պահպանելու նպատակներով:

Բացի հիմնական տեսակներից, կիրառվում են էտի նաև այլ տեսակներ:

Ծերատումը շիվի ծայրամասային փոքր հատվածի հեռացումն է: Ծայրամասը կտրվում է զագարից մի քանի սանտիմետր ներքեւ: Ըստ էության, սա կարճացման առավել քույլ աստիճանն է: Սահմանափակում է շիվերի գերածը եւ երկարությունը, խթանում շիվերի կողային աճերը եւ արքնացնում մարող աճի ակտիվությունը: Սովորաբար ծերատում են ամռան բուսածի ընթացքում՝ ծերատելով աճող շվի միայն զագարը: Հաճախ ծերատում են առանց գործիքների միջամտության՝ եղունգների օգնությամբ:

Կանաչ կամ ամառային էտ կատարվում է, եթե ծառերի աճմանը ընթացիկ տարում կմախքային եւ կիսակմախքային ճյուղերի վրա գոյանում են սաղարթի ձեւավորման համեմատ սխալ դիրքավորված շիվեր՝ ուղղաձիգ, հորիզոնական կամ կախվող, որոնք կամ մտնում են սաղարթի ներսը, առաջացնելով խտացումներ, կամ աճում են դեպի հողային մակերես եւ միջջարային տարածություններ՝ խանգարելով մարդկանց ու մերենաների անցումներին: Հեռացվում են նաև բոլոր հոռաշվերը, որոնք խանգարում են ծառերի կմախքային ճյուղերի եւ սաղարթի նորմալ ձեւավորմանը:

Հետադարձ էտ՝ մեկ տարեկանից բարձր տարիքի շիվի հատումներն են: Հետադարձ էտը նախորդ տարիների սխալ էտի կամ աճեցնողության փոփոխության հետեւանքով անհրաժեշտ դարձած էտն է: Սովորաբար դա շիվի կամ ճյուղի նախորդ կտրվածքի վերեւի մասում աճած միակ կողային շիվի հեռացումն է իր նախորդ ճյուղի (2 տարեկան կամ ավելի մեծ տարիքի) մի հատվածի հետ միասին: Այս էտը կատարվում է՝ վերջին ճյուղը ավելի փոքր բարձրության վրա առաջացող ճյուղով փոխարինելու համար: Հետադարձ էտով հեռացվում են նաև խանգարող, մրցակից շիվերը կամ ուժեղ ուղղաձիգ շիվերը կամ նաև աճի ուղղությունից շեղված ճյուղերը՝ այսինքն ետ են բերվում մինչեւ նախորդի ուղղությունը:

Երիտասարդացումը 3-5 տարեկան ճյուղերի եւ նույնիսկ ավելի տարեց ճյուղերի կարճացումն է, երբ հեռացվում է դրանց մի մասը, ինչպես նաև նորսացումը, երբ հեռացվում են անքողովվին: Երիտասարդացումը կատարվում է, որպեսզի սաղարթի մերկացած հատվածները լրացվեն ու խտանան նոր շիվերով եւ պտղաճյուղիկներով, ինչպես նաև՝ որ սահմանափակվի սաղարթի աճը եւ ծառի բարձրությունը:

Խոր երիտասարդացումը 5 տարեկան եւ ավելի մեծ տարիքի կմախրային ճյուղերի կարճացումն է, երբ հեռացվում է դրանց մի մասը՝ սաղարթի ծերացած հատվածները լրացնելու եւ շիվերով ու պտղաճյուղիկներով երիտասարդացնելու համար:

Կունդ՝ մեծ տարիքի բոլոր կմախրային ճյուղերի կարճացումն է, երբ թողնվում է դրանց միայն կարճ մասը, որպեսզի ծերացած սաղարթը վերակենդանանա եւ երիտասարդացնա:

Բնատում՝ մեծ տարիքի ծառերի բնի ոչ մեծ բարձրության վրա հատումը բոլոր կմախրային ճյուղերով հանդերձ՝ ծերացած ծառը վերակենդանացնելու եւ երիտասարդացնելու համար: Հաջողության հավանականությունը մեծ չէ եւ գործնականում բնատումը կիրառվում է միայն առանձին ծառերի դեպքում՝ առավելապես սիրողական պտղաբուծությունում:

Էտելու գործողությունների կարգին են դասվում նաև մի քանի հնարքներ, որոնք չեն պահանջում շիվերի կամ ճյուղերի հատումներ:

Կեղեւի օղակավորում (կամ **կեղեւի քերծում, կտրում**), երբ ամբողջական օղակով կամ կիսաօղակի այլ ձեւերով հեռացվում են երիտասարդ կամ միջին տարիքի անպտուղ ճյուղի կեղեւի մի հատվածը՝ ընդհատելով կեղեւի ամբողջականությունը եւ դրա փոխադրող խրձերի միասնությունը երկու կտրվածքների միջև: Դրանով խափանվում եւ դժվարանում է ճյուղի սննդանյութերի տեղաշարժը դեպի արմատներ: Հեռացված կեղեւի կտրվածքների վրա առաջանում են ուսուցքներ (սննդանյութերի կուտակումներ): Որպես արդյունք՝ ակտիվանում են պտղաբուռջների հիմնարրման գրղծերացները եւ ճյուղի պտղաբերման սկզբնավորումը, խթանվում է ծառի պտղաբերությունը եւ բարձր քերքը: Որոշ դեպքերում բավական է լինում կատարել կեղեւի քերծվածքներ, այլ ոչ թե կեղեւի ամբողջական հեռացում:

Կորացում (ծռում)՝ ճյուղի աճման անկյունը փոխելու գործողություն է: Շյուղերն ուղղվում են իրենց դիրքից մինչեւ 45° անկյան կամ հորիզոնական կամ ներքեւ աճման դիրքով: Այս գործողությունը պա-

կասեցնում է ճյուղային հյութաշարժը եւ նվազեցնում ճյուղերի ակտիվ աճը, խթանվում է ճյուղի պտղաբերությունը եւ ծառի բարձր բերքը:

Կամարաձեւ կորացում՝ կորացման ծայրահեղ ձևն է, երբ ճյուղերը կամ շիվերը կորացվում են՝ տեղաշարժելով ծայրանապը իրենց աճման առանցքից ներքեւ: Այս գործողությունը խիստ նվազեցնում է բուսաճային աճը եւ արագացնում է ծաղկաբորբոքների հիմնադրումը, ճյուղի պտղաբերությունը եւ ծառի բարձր բերքը: Հետագայում այն խթանում է նաև նոր կողային շիվերի առաջացումն այդ կորացված մասից եւ կարգավորում ծառի համաչափ աճն ու պտղերությունը:

Էտի կատարման գործիքներ եւ սարքավորումներ

Ծառի համար արդյունավետ, որակյալ, անվճառ եւ էտողի համար անվտանգ էտ կատարելու համար անհրաժեշտ է կիրառել համապատասխան գործողությունների համար պիտանի եւ բարձորակ կտրող գործիքներ: Ծառ կարենոր է նաև դրանց պահպանությունը աշխատանքային լավ վիճակում՝ լավ արդյունքի հասնելու եւ ծառի բնափայտի ներսում վարակների ու հիվանդությունների առաջացումը կանխելու համար: Կտրող սայրերը պետք է լինեն շժանգոտվող պողպատից եւ պահպեն սրված ու մաքուր վիճակում: Էտվող ճյուղերին պատճառած վերքերի արագ առողջացման հնարավորություն տալու համար գործիքները պետք է կատարեն պատշաճ՝ հարք ու ցածր կտրվածքներ:

Էտի հասումները կատարելու համար ամենատարածված ձեռքի գործիքներն են.

Այգու մկրատ (կամ «սեկատոր»)՝ մինչեւ 2 սմ հաստություն ունեցող ճյուղեր կտրելու համար է: Այն կարող է ունենալ տարրեր տիպի գործող շեղբեր (սայրեր) եւ բռնակներ:

Այգու երկարաբեւ մկրատ (կամ «թեւավոր սեկատոր»)՝ մինչեւ 3 սմ հաստություն ունեցող ճյուղեր կտրելու համար է: Այն կարող է ունենալ տարրեր երկարության (30-90 սմ) բռնակներ եւ հզոր շեղբեր (սայրեր):

Այգու օդային մկրատ. ունի երկար ձողեր կամ բռնակներ (2-4 մ), հասուլ լծակներով գործող «հակառակ կեռ» մկրատ, որը բավականին ուժեղ է եւ կտրում է բարձր ծառերի մինչեւ 5 սմ հաստություն ունեցող ճյուղերը: Նախընտրելի են այն օդային մկրատները, որ ունեն թերեւ ձող եւ բռնակներ:

Այգու սղոց՝ հատուկ կորուքյան եւ ատամների ուղղվածության սղոց է, որն օգտագործվում է, երբ անհրաժեշտ է կատարել հաստ ճյուղերի հատում:

Էտի մեծածավալ աշխատանքները հեշտ ու արագ իրականացնելու նպատակով մեծ այզիների էտումները կատարվում են **Էտի սարքավորումներով** եւ **մերենաներով**: Դրանք գործարկվում են օդամոլիչ կամ հիդրավլիկ (հեղուկի ճնշման) ուժով, վառելանյութի այրման կամ էլեկտրական հոսանքով ու մարտկոցներով աշխատող շարժիչներով:

Էտի կատարման ժամկետները Եւ ինտենսիվությունը

Տարվա ընթացքում էտ կարելի է կատարել բույսերի տարեկան զարգացման շրջանի որեւէ ժամանակահատվածում: Սակայն, էտի կատարման ժամկետները որոշելիս, հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ տարբեր ժամանակահատվածներում կատարված հատումները տարբեր կերպ են ազդում կտրվածքների վերքերի փակման, հատման կետից նոր ընձյուղների ձեւավորման ինտենսիվության, ինչպես նաև ծառերի պտղաբերման ունակության վրա:

Հանգստի շրջանի էտ կամ Ճմեռային (կամ Ճմեռագարնանային) էտ

Կատարվում է ուշ աշնանից մինչեւ վաղ գարուն՝ մինչեւ յուրաքանչյուր պտղատեսակի ծաղկման սկիզբը եւ ակտիվ աճից առաջ: Այդպիսի էտը խթանում է բուսածը եւ մեծացնում բույսի կենսունակությունը գարնան ընթացքում: Շատ ցուրտ կլիմայական պայմաններում տրամաբանական է հետաձգել էտը, սպասել մինչեւ առաջին բողբոջների ուղենությանը: Անիմաստ է շուտ սկսել եւ կտրելով բողբոջների այն հատվածները, որոնց վրա բողբոջները մահացել են ճմեռային ընթացքում: Սպասելով մինչեւ շիվերի վրա ակնհայտ երեւալը, թե որոնք են ողջ ու կենսունակ բողբոջները (ուղենով դրանք լավ զանազանվում են մահացածներից) հնարավոր է լինում ճիշտ էտելով կարգավորել ծառի աճն ու պտղաբերությունը:

Հանգստի շրջանի ծառերը կարելի է էտել երկար ժամանակահատվածում՝ դրանց հանգստի շրջանի սկզբից (աշնանը տերեւաթափից հետո) եւ մինչեւ բողբոջների բացվելը՝ գարնանը: Հանգստի շրջանի էտի ժամկետները որոշելիս պետք է հաշվի առնել տվյալ տարրածքի բնակլիմայական պայմանները: Սովորաբար այն կատարում են, եթե խիստ ցրտերի վտանգն անցել է, իսկ ծառերի հյութաշրժը դեռ չի սկսվել:

Հանգստի շրջանի էտն իր հերթին կարող է իրականացվել 2 ժամանակահատվածում:

- ա) **Աշխաճաճմեռային** - կատարվում է մեղմ ձմեռային կլիմայի դեպքում՝ տերեւաբափից հետո մինչեւ կայուն ցրտերն ընկնելը, հիմնականում բարձր ցրտադիմացկունություն եւ ձմեռադիմացկունություն ունեցող՝ (խնձորենի, տանձենի, սալորենի, բայենի, ծիրանենի) պաղատեակների դեպքում:
- բ) **Զմեռագարնանային** - սկսվում է ձմռան ավարտին՝ զարնանաշնչի ազդակների պահից, սովորաբար փետրվարի կեսից՝ մինչեւ տվյալ պտղատեսակի բոլորների ուշելը, կատարվում է պակաս ցրտադիմացկուն ծառատեսակների դեպքում եւ տաք կլիմայի պայմաններում: Համեմատաբար փոքր այգետարածքներում, որտեղ տվյալ ժամանակահատվածում չկա աշխատութի հասանելիության խնդիր, բոլոր ծառատեսակների հանգստի շրջանի էտը կարելի է իրականացնել այս ժամկետում:

Ամառային էտը («կանաչ էտ») կատարվում է ակտիվ բուսածի ընթացքում, երբ լավ տեսանելի են շիվերի եւ պտղաճյուղիկների բոլոր օրգանները եւ հատկապես՝ տերեւները: Այդ ժամանակ կանաչ էտի ճիշտ կատարումով հնարավոր է խթանել ծառի լրտավոր եւ օդաբափանց առողջ սաղարթը եւ պտուղների հասունացման համաշափ ընթացքը: Այդ ժամանակահատվածում էտելու միջոցով միջամտության ազդեցությունը ծառի աճի ու զարգացման վրա շահավետ է հատկապես լավ պարարտացման եւ ոռոգման պայմաններում: Ամառային էտի արդյունավետությունը հատկապես ձեռնտու է ամռան առաջին կեսին, բայց ավելորդ աճերի հատումները առհասարակ օգտակար են երկու հիմնական ժամանակահատվածներում էլ:

- ա) **Վաղ ամառային էտը** կատարվում է ակտիվ աճող շիվերի վրա եւ խթանում կողային նոր շիվերի աճը: Այս էտի ընթացքում համատեղելի է նաև այգու խնամքի մեկ այլ գործողություն՝ պտուղների նորացումը (հունիսի առաջին 20 օրվա ընթացքում):
- բ) **Ուշ ամառային էտը** չի խթանում որեւէ ծավալուն աճ կամ որոշ պտղատեսակների դեպքում խթանում է քիչ բվով վաղաժամ շիվերի կազմափորումը, որոնք սակայն չունեն ծաղիկների հիմնադրման մեծ ունակություն: Բայց այս էտի կատարումը ձմեռային էտի նվազեցման եւ կանխարգելման եղանակ է՝ կանխավ կտրվում են ավելորդ շիվերը եւ ծառից չեն խլում

ավելորդ ուժ, ջուր եւ սնունդ, որը խթանում է ծառերի հաջորդ տարվա ավելի կենսունակ աճն ու պտղաբերությունը:

Ծառերի ձեւավորման բոլոր համակարգերում զարնանային եւ ամառային էտի իիմնական նպատակն է նվազեցնել ծառերի տեսական բուսաճային փուլը եւ ավելացնել ու արագացնել պտղաբերությունը: Ամառային էտը կիրառվում է նաև ծառերի անպտուղ (Երիտասարդական) զարգացման փուլը կրծատելու, պտղաբերող շիվերի լուսավորության եւ օդափոխության պայմանները բարելավելու, պտղաբերող ճյուղիկները շատացնելու, կմախրային ճյուղերն ուժեղացնելու նպատակներով:

Ամառային էտի արդյունավետության նպատակով յուրաքանչյուր պտղատեսակի համար կարեւոր է հաշվի առնել ծառի կենսաբանությունը, կանխատեսել կատարվող գործողությունների ազդեցությունը առաջացող նոր շիվերի քանակի եւ տեսակի առումով եւ նախատեսել տարրեր ժամանակահատվածներում շիվերի ու ճյուղերի հետադարձ էտը:

Բուսաճի (վեգետացիայի) ընթացքում կատարվող էտն իրականացվում է բուսաճի ամրող ընթացքում եւ բույսերի՝ այդ ժամանակահատվածին բնորոշ գույնի պատճառով կոչվում է «կանաչ էտ»: Նման հատումներ կատարվում են ինչպես մինչեւ բերքի հասունացումը, որի դեպքում հեռացվում են սաղարթը խտացնող, բերքը ստվերարկող ճյուղերը, այնպես էլ՝ բերքահավաքից հետո:

Բերքահավաքից հետո սովորաբար կտրվում են այն ճյուղերը, որոնք պտղաբողոքներ կրելու պատճառով չեն հեռացվել հանգստի շրջանում:

Հատվում են նաև սաղարթը խտացնող այն ճյուղերը, որոնք խիստ ստվերարկելու պատճառով խոչընդոտում են հաջորդ տարվա պտղաբողոքների ձեւավորումը, ինչպես նաև այն ճյուղերը, որոնց հատման կետից ցանկալի չէ ունենալ նոր հզրած ճյուղեր: Ի տարբերություն հաճախատի շրջանում կատարված էտի, ամռան վերջում իրականացված հատման միջոցով ձեւավորվում են անհամեմատ քոյլ աճ ունեցող շիվեր:

Հաճախակի էտի ժամանակահատվածը եւ եղանակները որոշվում են ոչ թե ծառերի կենսաբանության եւ այգեգործական նպատակների, այլ եղանակային պայմանների եւ գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման տեսանկյունից՝ հաշվի առնելով աշխատուժի առկայությունը, աշխատանքային ժամանակացույցի վերաբերյալ պայմանավորվածությունը եւ այլն:

Բերքահավաքի ժամկետների եւ բերքի կանխորոշման եղանակները եւ սկզբունքները

Որեւէ պտղատեսակի բույսերն աճեցնում եւ խնամում են պտուղներ ստանալու համար: Այզու բերքի հասունացումը եւ բերքահավաքի կատարումը վճռական շրջան են՝ որպես այգեգործի մինչ այդ կատարած աշխատանքի գնահատանք եւ նրա գործողությունների տարեկան արդյունք: Անկազմակերպ եւ անհաջող բերքահավաքը բերում է բերքի մեծ կորուստների եւ ապարդյուն է դարձնում տարվա ընթացքում կատարված աշխատանքները:

Ուստի պետք է դեռ պտուղների հասունացման շրջանում մտահոգվել բերքահավաքի ճիշտ կազմակերպմամբ եւ կատարմամար: Բերքահավաքի հաջող կազմակերպման համար անհրաժեշտ է այն ճիշտ կանխատեսել եւ այլանավորել: Բերքահավաքի աշխատանքների որակով կատարման նպատակով պետք է նախատեսել հետեւյալ միջոցառումները՝

- բերքահավաքի կատարման ժակետների կանխատեսում,
- բերքահավաքի տեսողության որոշարկում՝ ըստ այզում աճող պտղատեսակ(ներ)ի եւ դրա(նց) բուսաձեւերի (սորտերի),
- բերքի ծավալի կանխորոշում ըստ բուսաձեւի եւ բերքի որակների (ապրանքայնություն, մեծություն, ամրություն, փոխադրունակություն),
- բերքահավաքի կատարման եւ բերքի իրացման համար անհրաժեշտ նախահաշվարկներ եւ աշխատուժի, արկղերի, գործիքների, գույքի, սարքերի, փոխադրամիջոցների, պահեստային տարածքների, պտղի վաճառքի վերաբերյալ պայմանավորվածություններ (կնքված պայմանագրեր), ապահովագրման պայմանագրեր եւ այլն:

Բերքահավաքի ժամկետների կանխատեսումը կատարվում է պտղի հասունացման ընթացքում բերքահավաքի հնարավոր ժամկետից 1 ամիս, ամենաուշը 2 շաբաթ առաջ: Դրա համար օգտագործում են հետեւյալ հմտությունները՝

1. նախորդ տարիների փորձը
2. տվյալ կլիմայական գոտում տվյալ բուսածելի (սորտի) հասունացման ժամկետներն ըստ գրականության,
3. հետեւել տարվա օդերեւութարանական տվյալների փոփոխություններին եւ կատարել օրերի ճշտումներ ըստ նկատվող տարրերությունների:

Այսպիսով, բերքահավաքի սկիզբը կանխորոշվում է 2-3 օրվա ճշգրտությամբ եւ բերքահավաքից 10-30 օր առաջ:

Բերքահավաքի ժամկետների ավելի ճշգրիտ՝ 1 օր ճշգրտությամբ կանխատեսումը կատարվում է հասունացման ընթացքում, պարբերաբար՝ 2-5 օրը մեկ ժամկետից պտղանմուշներ վերցնելով եւ կամ համտեսային փորձարկման կամ պտուղների օրական քաշաճի որոշման կամ շաքարների եւ թթվության որոշման՝ քիմիական վերլուծության (անալիզի) միջոցով:

Բերքահավաքը սովորաբար սկսում են պտղի լրիվ հասունացումից 2-5 օր առաջ, իսկ հետավոր վայր փոխադրելու դեպքում՝ դրանից 5-8 օր առաջ:

Պտուղների հասունացման առումով տարրերում են հասունացման երկու աստիճան՝ քաղի եւ սպառողական:

Քաղի հասունացում՝ պտղի այն վիճակն է, երբ այն այլեւս չի աճում, ձեռք է բերում սորտին բնորոշ ձեւ եւ գույն, քայլ դեռ բացակայում է ծածկող գույնը եւ պտղամիաը դեռ չունի սորտին յուրահատուկ համն ու բույրը, փափկությունը եւ պատրաստ չէ սպառման համար: Շատ սորտերի պտուղները քաղվում են այս վիճակում:

Սպառողական հասունացման վիճակում պտուղները ձեռք են բերում սորտին բնորոշ յուրահատուկ համն ու բույրը, փափկությունը եւ պատրաստ են սպառման համար:

Հնդավորների ամառային, կորիզավորների վաղահաս ու միջահաս եւ հատապտուղների սորտերի սպառողական եւ քաղի հասունացման ժամկետները համընկնում են:

Հնդավորների աշնանային եւ կորիզավորների ուշահաս սորտերի քաղի եւ սպառողական հասունացումների միջեւ տարրերությունը 15-45 օր է, հնդավորների ձմեռային սորտերի դեպքում այդ տարրերությունը հասնում է 1,5-3 ամսվա եւ ավելին:

Բերքահավաքի ժամկետների կանխատեսումը

Բերքահավաքի ժամկետների կանխատեսումը կատարվում է հնարավոր ժամկետից մոտ 1 ամիս առաջ, պտղի հասունացման ընթացքում: Ազգրում, ելնելով նախորդող տարիների փորձից կամ գրականության տվյալներից, վերցնում են տվյալ կլիմայական գոտում տվյալ բուսաձեևի հասունացման ժամկետները, այնուհետ, ըստ տվյալ տարվա օդերեւութարանական օրացույցի (տարին քանի օրով է «առաջ» կամ «հետ»), որոշում են այզու բերքի հասունացման սպասվող սկիզբը:

Բերքահավաքի ժամկետների ավելի ճշգրիտ՝ 1 օր ճշգրտությամբ կանխատեսումը նույնականացնելով է, սակայն այդ եղանակները բարդ են ծախսատար են: Այդպիսի կանխատեսումներ կատարվում են հասունացման ընթացքում պարբերաբար՝ 3-5 օրը մեկ ծառերից կամ վազերից նմուշներ վերցնելով եւ համտեսային փորձարկման կամ պտուղների (ողկույզների) օրական քաշամբի որոշարկման կամ քիմիական վերլուծության (անալիզի) միջոցով:

Բերքահավաքի տեւողության որոշումը

Յուրաքանչյուր բուսաձեևի բերքահավաք սկսելու ժամկետի կանխորշումից հետո պետք է 2-3 օրվա ճշգրտությամբ որոշել նաեւ բերքահավաքի հնարավոր տեւողությունը, այսինքն սկիզբն ու ավարտը՝ օրերով:

Բերքահավաքի տեւողության եւ ժամկետների ճշգրիտ որոշարկումը կատարվում է փորձից ելնելով եւ պայմանավորված է տվյալ սորտի հասունացած վիճակում պտուղների՝ ծառի վրա տեսականութեն պահպանվելու կամ հակառակը՝ արագ քափելու կամ փտելու կամ քոռոմելու կամ չորանալու հատկություններով:

Պտղատեսակների մեծամասնության պարագայում պտուղները ծառի վրա երկար չեն պահպանվում եւ դրանց բերքահավաքը պետք է անցկացնել սեղմ ժամկետում՝ 3-5 օրում կամ սկսել բերքահավաքը կանխավ՝ դեռ պտուղների բերիա, խակ վիճակում, հատկապես՝ հեռավոր վայրեր փոխադրելու համար:

Բայց մի շարք պտղատեսակներ (ժորենի (խուրմա), նուռ, շողպար, խնձոր, սերկելի եւ այլն) իրենց պտուղները կարող են բույսի վրա պահել շատ երկար՝ 1-2 ամիս, ուստի այգեգործի համար հնարավորություն է ստեղծվում ոչ միայն լավ կարգավորել բերքահավաքը, այլ նաեւ պտուղների որակը՝ հասունության աստիճանը, ապրանքային տեսքը, քաղցրությունը եւ բբվությունը:

ԲԵՐՔԻ ԾԱՎԱԼԻ ԿԱՆԽՈՐՉՈՒՄԸ

Պտղատու ծառերից եւ ամբողջ այգուց սպասվելիք բերքը կարելի է որոշել նախօրոք, ելնելով ծառի վրա գտնվող, նախ՝ ծաղկաբողքոցների, ծաղիկների, կազմակերպված պտուղների, իսկ այնուհետեւ, հիմնականում, բնական պտղաբաժից հետո՝ ծառի վրա մնացած պտուղների քանակով:

Ծառերի սպասվող բերքի ծավալի առավել ճշգրիտ կանխատեսումը կատարվում է վերջին պտղաբաժից հետո (հունիս ամսից հետո):

Այգու բերքի ծավալի կանխորչումը կատարվում է ըստ հետեւյալ բանաձեւի՝

$$\text{Բ} = (\mathfrak{D} \times \mathfrak{P} \times 1000 \times \mathfrak{Q} \times 1000 \times \zeta) - \mathfrak{U},$$

որտեղ Բ - ն 1 հեկտարի բերքի ծավալն է՝ տոննայով,
Ծ - 1 ծառի պտուղների թիվը՝ հասով,
Պ - պտղի քաշը՝ գրամով,
Զ - մեկ ծառի պտուղների քաշը՝ կգ-ով,
Հ - 1 հեկտարի վրա ծառերի թիվը,
Ս - այգու նոսրության գործակիցը (նոսրության տոկոսվ):

Այգու ամբողջ բերքի հաշվարկի համար Բ-ն պետք է բազմապատկել այգու հեկտարների թվով:

Այս բանաձեւով հաշվարկ կատարելու նպատակով հաջորդաբար կատարում են հետեւյալը՝

- յուրաքանչյուր հեկտարի վրա ընտրվում են տնկարկին բնորոշ միջին մեծության 5 ծառ,
- որոշարկում են այդ ծառերի պտուղների թիվը՝ 1 ծառի պտուղների թիվը որոշարկելու համար կարելի է հաշվել ընտրված ծառի ոչ թե բոլոր պտուղները, այլ դրա մեկ, բայց իրեն բնորոշ կմախրաճյուղի կամ կիսակմախրային ճյուղի պտուղները եւ այդ թիվը բազմապատկել տվյալ ծառի կմախրաճյուղերի ճյուղերի կամ կիսակմախրային ճյուղերի թվով,
- 5 ծառերի միջին թվաբանականով որոշարկում են այդ 1 հեկտարի 1 ծառի պտուղների միջին թիվը,

- Ելնելով նախորդ տարվա փորձից կամ վերցնելով տվյալներ մասնագիտական գրականությունից, տվյալ մշակաձեւերի (սորտի) պտղի միջին քաշի մասին՝ գրամի ճշտությամբ, բազմապատկում են 1 ծառի պտուղների թվով: Դրանով որոշարկում են 1 ծառից սպասվող միջին բերքը կգ/ծառ չափանիշով՝ կիլոգրամի տասնորդականի ճշգրտությամբ,
- բազմապատկում են կգ/ծառ բերքի թիվը տվյալ այգու 1 հեկտարի ծառերի թվով (որը հայտնի է ըստ ծառերի տնկման խտության) եւ ստանում այդ հեկտարից սպասվող տեսական բերքատվությունը՝ տ/հա չափանիշով,
- գումարելով տվյալ այգու բոլոր հեկտարների տեսականորեն սպասվող բերքը, ստանում են այգու ամբողջ տարածքից սպասվող բերքի ծավալը, տ/հա չափանիշով,
- գործնականում սպասվող իրական բերքը ստանում են՝ հանելով տեսական բերքի թվից տվյալ այգու նոսրության, այսինքն բացակա ծառերի տոկոսը, որն այգեգործը պարտավոր է հաշարկել ամեն տարի:

Բերքի ծավալի կանխորոշումը պետք է կատարել յուրաքանչյուր տարի, հատկապես երիտասարդ այգիներում, քանի որ բերքատվությունը տարեցտարի փոխվում է:

Պտուղների բերքահավաքի կատարման առանձնահատկու- թյունները եւ բերքի իրացումը

Բերքահավաքի կազմակերպումն ու բերքի իրացումը

Բերքահավաքի կատարման եւ բերքի իրացման համար անհրաժեշտ է կատարել նախահաշվարկներ ու ձեռք բերել պայմանավորվածություններ:

Նախ բերքի սպասվող ծավալի հավաքման եւ իրացման համար պետք է հաշվել՝

- այզու բերքի ծավալի հավաքման համար «մարդ-օրերի» քանակը,
- բերքահավաքի սպասվող ժամկետներում հնարավոր աշխատուժինությունների թվաքանակը,
- գործիքների, գույքի, սարքերի տեսականին եւ թիվը ըստ աշխատողների թվաքանակի,
- բեռնախցիկների ծավալը կամ արկղերի քանակը բերքի փոխադրման համար բաշխված բերքահավաքի օրերով,
- փոխադրամիջոցների քանակը՝ բաշխված ըստ բերքահավաքի օրերի, կանխավ ձեռք բերելով պտղի վաճառքի մասին պայմանավորվածություններ եւ ապահովագրություն (կնքել պայմանագրեր):

Պտուղների քաղը եւ բերքահավաքի կատարման տեխնիկան

Պտուղները պետք է քաղել այն ժամանակ, երբ դրանք ձեռք են բերել տվյալ սորտին բնորոշ չափը, գունավորությունը, յուրահատուկ համը, իսկ պտղակորունը հեշտությամբ անջատվում է պտղաբերող ճյուղերից:

Սովորաբար պտուղները հավաքում են քաղի հասունացման վհճակում՝ քանի որ ծանից քաղված պտուղները այլևս չեն հասունանում: Ժամկետով այն կարող է համընկնել կամ չհամապատասխանել

սպառողական հասունացման վիճակին:

Բերքահավաքը կատարվում է **համատարած** կամ միանվագ եւ **լնտրովի** կամ աստիճանաբար: Սովորաբար պտուղների համատարած հավաքումը պետք է սկսել ներքեւի ճյուղերից եւ վերջացնել վերեւի ճյուղով: Որոշ դեպքերում, առաջին հասունացող պտուղները հատուկ լնտրողաբար հավաքելու նպատակով, սկզբում հավաքում են ծառի սաղարթի վերին հատվածի պտուղները եւ մի քանի օր հետո ներքեւի ճյուղերից՝ ինչպես համատարածի դեպքում:

Աստիճանական բերքահավաքը կատարվում է պտուղների հասունացմանը զուգընթաց լնտրովի քաղելով միայն հասունացածները:



Նկար 40. Բերքահավաքի լնտրովում օգտագործվող գործիքներ

Բերքահավաքի կատարման տեխնիկան

Բարձր ծառերի վրա գտնվող դժվար հասանելի պտուղները քաղելու համար օգտագործում են կեռիկներ, հեռահար քաղի սարքեր, որոտ տուփիկներ, ելարաններ, աստիճաններ եւ այլն:

Ողկույզները եւ երկար պտղակորունով պտուղների քաղը կատարում են այգու մկրատով (սեկատոր)՝ կտրելով պտղակորունի հիմքից կամ միջնամասից:

Կարճ պտղակորունով պտուղների քաղը կատարում են միայն ձեռքով՝ աջ ձեռքի ափով պահում են պտուղը, ցուցանատով կամ բութ մատով ուղղահայաց սեղմում են պտղակորունը ճյուղի միացման տեղում կամ պտտում պտղի առանցքի շուրջը եւ զգուշությամբ պոկում ու դնում զամբյուղի կամ դույլի մեջ:

Բերքահավաքի ժամանակ պտուղները պետք է քաղել զգուշությամբ՝ շվճասելով դրանց պտղամաշկը եւ հյուսվածքները: Հավաքած պտուղները պետք է վնասվածքներ չունենան: Պտուղները

պարտադիր չէ քաղել պտղակոթունով, բայց անպայման պետք է քաղել առանց վնասելու պտղաբերող օրգանները:

Երբեք չի թույլատրվում բերքը հավաքել ծառերը թափահարելու միջոցով. այդ դեպքում պտուղները վնասում են մեկը մյուսին, կորցնում ապրանքային տեսքը, եւ երկար չեն պահպանվում:

Բերքահավաքի ժամանակ չի թույլատրվում բարձրանալ ճյուղերի վրա քանի որ կա դրանց կոտրվելու եւ հավաքող անձի ընկնելու վտանգ: Քաղված պտուղների տեղափոխման եւ պահպանման համար օգտագործում են ուսապարկեր, զանրյուղներ, տուփիկներ, դույլեր, արկրեր եւ այլն: Վերամշակման համար նախատեսված բերքը կարելի է հավաքել փոխադրամիջոցների բեռնախցիկներում:



Նկար 41. Բերքահավաք ձեռքով



Նկար 42. Կիսամեքենայացված բերքահավաք



Նկար 43. Մեքենայացված բերքահավաք

ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԿԱՏՈՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր պտղատեսակի բերքահավաքը պետք է կազմակերպել սեղմ ժամկետներում՝ մի քանի օրվա ընթացքում եւ ավարտել տվյալ բուսաձենի պտղաբափից առաջ: Պտուղների հավաքը կատարում են առավոտյան եւ երեկոյան ժամերին, զով, մեղմ ու չոր եղանակին: Անթուլատրելի է քաղել շոգ կամ անձեւոտ եղանակին, ուժեղ քամիների պայմաններում, ինչպես նաև շատ վաղ առավոտյան, եթք դեռեւս ցողը նստած է ճյուղերի եւ պտուղների վրա:

Հավաքված պտուղները պետք է չունենան վնասվածքներ ոչ պտղամաշկի, ոչ էլ պտղակորունի վրա, դրանք պետք է լինեն չոր, անցանկալի բուսական մնացորդներից զերծ, ցանկալի է՝ փայլուն մաշկով՝ առանց փոշու կամ հողի շերտի: Տեսական պահպանման համար նախատեսվող բերքը պետք է հավաքել առավելագույնս անվնաս կերպով:

ԲԵՐՔԻ ԵՏՐԵՐՔԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ, ՊՍՈՒՂՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻԱԿԱՎՈ- ՐՈՒՄԸ, ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՊԱՀԱՎԱՆՄԱՆ, ՎԻՌԱԴՐՄԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԸ

Հավաքված բերքի պտուղների պահպանումը

Տեսական պահպանման համար նախատեսվող բերքը առավելագույնս անվնաս կերպով հավաքելուց հետո իսկույն պետք է հեռացնել այգուց, ցանկալի է՝ շուտ պաղեցնել, տեղափոխել եւ պահել զով ու չոր միջավայրում:

Պտուղների որակը եւ դրանց հետագա պահպանումը մեծ չափով կախված են բերքահավաքի ճիշտ ժամկետից: Այն պտուղները, որոնք ծառի վրա լրիվ չեն հասունացել եւ շուտ են հավաքվում, պահպանելու ընթացքում շատ արագ փչանում են: Բացի այդ, ժամանակից շուտ հավաքված պտուղները ձեռք չեն բերում տվյալ սորտին յուրահատուկ գույնը, բույրը եւ ունենում են ցածր ապրանքային որակ: Միաժամանակ պետք է նշել, որ չափից ավելի հասունացած պտուղները փոխադրունակ չեն, վատ են պահպանվում եւ կարծ ժամկետում փչանում են:



Նկար 44. Ծիրանի հավաքված բերքը մինչեւ տեսակավորելը եւ տեսակավորման ընթացքում



Նկար 45. Բերքի տեսակավորման հոսքագիծ



Նկար 46. Ծիրանի տեսակավորված բերքը

Տեսական պահպանման համար բերքը պետք է տեսակավորել, չափահակել (կատարել «կալիբրովկա», կալիբրացում), մաքրել անցանկալի մնացորդներից և տեղադրել օդաթափաթանց արկղերի մեջ:

Պահպանումը կարելի է կատարել տարբեր պայմաններում եւ սարքավորումներում: Սովորական սառնարաններում կամ սառը նկուղներում $+4\ldots 10^{\circ}\text{C}$ պայմաններում պտուղները պահպում են 15-20 օր: Արդյունաբերական սառնարաններում՝ շատ ցածր դրական ջերմաստիճանի՝ $+1\text{-}2^{\circ}\text{C}$, լավ օդափոխության եւ օդի 75-90 % չորության պայմաններում դրանք անփոփոխ պահպում են 1-5

ամիս: Ավելի երկար՝ 5-8 ամիս պահելու համար կիրառվում է կարգավորվող զազերի միջավայր: Ավելի տեսական պահպանության համար կիրառվում է արագ սառեցման հասուկ տեխնոլոգիա շատ ցածր ջերմաստիճանների պայմաններում՝ $-18\text{-}36^{\circ}\text{C}$:

Ընդհանրապես պտուղները վատ փոխադրուեակ են եւ սովորական բեռնատար փոխադրամիջոցներով կարելի է տեղափոխել 3-5 օրվա ընթացքում :

Սառնարան բեռնատարներում ցածր, բայց դրական $+2\text{-}4^{\circ}\text{C}$ ջերմաստահճանների պայմաններում դրանք կարող են դիմանալ $10\text{-}15$ օր, երբեմն էլ ավելին՝ այնքան, որքան արդյունաբերական սառնարաններում:

Պտուղների՝ առավել հաճախ կիրառվող պահպանման եղանակը սառնարանային ցածր ջերմաստիճանի եւ բարձր խոնավության պայմաններում օդային միջավայրում պահելն է:

Աղյուսակ 3.

Պտուղների պահպանման ջերմաստիճանը եւ խոնավությունը

Պտղի անվանումը	Ջերմաստիճան, °C	Խոնավություն, %	Պահպանման տեւողություն, օր
Շիրան	+0,5 - 0	90	15-30 օր
Դեղձ	-1+2	90	15-55 օր
Խնձոր ամառային	-0,5 - 0	90-95	45-90 օր
Խնձոր ձմեռային	-1-0	90-95	90-270 օր
Տանձ	-1+3	90-95	30-180 օր
Խաղող	-1-0	90-95	120-180 օր
Սալոր, շլոր	+1 - 0	90-95	15-30 օր
Բալ	-1+2	90-95	3-7 օր
Կեռաս	+2 - 0	90-95	5-10 օր
Հաղարջ	-0,5 - 0	90-95	7-30 օր
Մորի, ազևամորի	-0,5 - 0	90-95	2-3 օր
Ելակ	0	90-95	5-7 օր

Բոլոր դեպքերում այգու բերքի փոխադրման եւ պահպանման պայմանները, ձեւերը եւ չափանիշները սահմանում է պտղաբանջարեղենի պահպանության մասնագետը՝ ելնելով բերքի նպատակային օգտագործման հանգամանքներից եւ պահպանության տեխնոլոգիական հնարավորություններից:



Նկար 47. Բերքի երկարատեւ պահպանումը սառնարանային պայմաններում

Արտադրական ավանդական եւ օրգանական պտղաբուծության տարբերությունները:

Խելամիտ պտղաբուծության սկզբնավորումը

Նախորդ՝ 20-րդ դարում արձանագրված տեխնոլոգիական նորարարությունները, արդյունաբերական արտադրության ինտենսիվացումը եւ երկրագնդի բնակչության շեշտակի աճն առավել խոցելի էին դարձել շրջակա միջավայրը, մարդկանց առողջությունը, ինչպես նաև բնական եւ մարդածին էկոհամակարգերի հավասարակշռված գոյատեւումը:

Ավելին՝ այսօր առկա տնտեսական մարտահրավերների գերակշիռ մասը, ինչպիսիք են՝ պարենային անվտանգության անբավարար մակարդակը, բնակչության թերանման բարձր ցուցանիշները եւ սննդամբերի գների շարունակական աճը, իմնականում պայմանավորված են հողերի քայլայման (դեգրադացում, էրոզիա) եւ աղտոտման, ջրային ռեսուրսների աղտոտման եւ անբավարարության, կլիմայի, ինչպես նաև գյուղատնտեսական համակարգերի փոփոխման հետ:

Ստեղծված իրավիճակի բելադրանքով եւ թվարկված հանգամանքներից ելնելով, սկզբնավորվում են գյուղատնտեսական նոր գաղափարներ ու սկսվում է դրանց գործնական կիրառումը: 20-րդ դարում սկսեց զարգանալ գյուղատնտեսության վարման մի նոր մոտեցում, որն անվանվեց օրգանական գյուղատնտեսություն: Այն նպատակ է հետապնդում ստեղծել բնական ռեսուրսների, հատկապես հողօգտագործման, այնպիսի համակարգ, որը կպահպաներ էկոհամակարգերի բնական հավասարակշռությունը եւ գործընթացները: Միևնույն ժամանակ կարենոր է, որ մթերքների օրգանական արտադրությունը կապահովի որակյալ եւ արդյունավետ մթերքարտադրություն, որի շրջանակում, պահպանելով բնական միջավայրը, կրարելավվի հողի մշակության արդյունավետությունը, հնարավորինս կնվազեցվի կամ կրացառվի արհեստական (սինթետիկ) քիմիական նյութերի՝ պարատանյութերի, բուժանյութերի, աճի խթանիչների, հորմոնային հավելումների, տարբեր այլ քիմիկատների օգտագործումը:

Օրգանական գյուղատնտեսությունն ուղղված է Երկրագնդի Էկո-համակարգերի նյութերի և տարրերի կենսաբանական ու քիմիական շրջապատույտների կայունացմանը և հարատեսմանը, լավագույն արդյունքի ստացմանը: Օրգանական գյուղատնտեսությամբ հեռանկարում պահպանելի ինչպես անմիջական առնչություն ունեցող մասնակիցների (բույսեր, կենդանիներ, հող, մանրէներ և այլն), այնպես էլ ամրող մոլորակի և այդ թվում մարդկության առողջությունը:

Մեր օրերում օրգանական գյուղատնտեսությունը հարակայուն մի համակարգ է, որն ունի լավ ձեւավորված հստակ սկզբունքներ, գաղափարախոսություն, արտադրության չափանիշներ, հուսափ գործիքակազմ, կազմակերպված հավաստագրում և ճանաչելի է ամբողջ աշխարհում:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսական մթերքի և հոմքի արտադրության, պահպանման, վերամշակման, փոխադրման, իրացման, ինչպես նաև վայրած բույսերի մթերմանն առանչվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Օրգանական գյուղատնտեսության մասին օրենքով (2008 թ.): Համաձայն այդ օրենքի, «Էկոլոգիական», «Էկոլոգիապես մաքուր», «Քիոլոգիական» տերմինները կամ դրանց «Էկո», «Քի» կամ կրծատ այլ ձեւերը համահավասարեցված են «օրգանական» բառին:

Գոյություն ունեն օրգանական գյուղատնտեսության բազմաթիվ սահմանումներ, սակայն ընդհանրացնելով եւ պարզ ձեւակերպելով՝ կարելի է ասել, որ այն մի մեթոդ է.

- որը բույսերի մշակության և կենդանիների բուծման ընթացքում օգտագործում է բացառապես բնական եղանակներ (կենսաբանական նյութերի կիրառում, սինթետիկ քիմիական պատրաստուկների բացառում, կենդանի օրգանիզմների դիմադրողականության բարձրացում և այլն),
- համաձայն որի գյուղմթերքների արտադրությունն իրականացվում է խիստ որոշակի չափորոշչի համաձայն և արտադրության ողջ գործընթացը վերահսկում է հավաստագրումն իրականացնող մարմինը,
- հարցյունս որի արտադրված գյուղատնտեսական մթերքը շուկայում ներկայացվում է հասուն մակնշմամբ:

Օրգանական պտղաբուծության առանձնահատկությունները

Օրգանական պտղաբուծությունը այդինքն է տնկարկների մշակության հասուն համակարգ է՝ միտված արհեստական (սինթետիկ) քիմիական նյութերի՝ հանքային պարարտանյութերի, բուժանյութերի, բազմամյա բույսերի աճի եւ զարգացման խթանիչների եւ նման այլ քիմիկատների կիրառման հիմնավորված նվազեցմանը, սահմանափակմանն ու բացառմանը, ինչպես նաև հողի եւ ջրի, բազմամյա բույսերի (ծառերի, վազերի, թփերի) առավել խելամիտ եւ բնական եղանակներով շահագործմանը: Այս համակարգը միտված է ներդաշնակեցնել այդինքների մշակությունը բնական էկոհամակարգերին եւ մշակության յուրաքանչյուր միջոցառում իրականացնել նոր տեխնիկական կանոնակարգերի եւ նորմատիվների պահանջներին համապատասխան:

Պտղատու այդինքների օրգանական մշակությունն աշխարհում սկսվել է 20-րդ դարի երկրորդ կեսից, երբ դեռ բարձր բերքատվության եւ շատ մրերքի արտադրության համար ավանդական այդինքներում կիրառվող քիմիական միջոցների (պարարտանյութեր, բուժանյութեր եւ այլն) աճող ծավալները եւ հողերի անխնա շահագործումը հանդիսացան բնական գործընթացների շեղումների եւ ամրողական խախտումների, հողերի, ջրերի, բնական միջավայրերի աղտոտման եւ ապակայունացման պատճառ: Որպես արդյունք, ավելի ու ավելի էն տուժում եւ հիվանդանում այգու ծառերը եւ դրանց բերքը, որը ստացվում էր ոչ միայն անհամ ու անորակ, այլ նաև՝ որպես մարդու սնունդ ոչ պիտանի ու վնասակար:

Պտղատու մշակաբույսերի սննդառությունն ապահովելու, վճառակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումները խելամիտ կազմակերպելու եւ ակնկալվող բերքատվությունն ավելացնելու համար օրգանական պտղաբուծությունում կիրառվում են այդինքների միջարքերի վարի եւ մոլչապատճան նոր եղանակներ, հողի նվազագույն կամ գրոյական մշակման համակարգեր, օրգանական պարարտանյութեր (գոմադր, կոմպոստներ, բուսական մնացորդներ, կանաչ պարարտացում, այլ), կարիլային ոռոգման հակարգով շափավորված ջրումներ ու սնուցումներ, ծառերի բուժումներ բուսական

ծագման նյութերով, ազրոտեխնիկական միջոցառումներով այգու եւ միջավայրի առողջացում, եւ այլն:

Օրգանական պտղաբուծության նպատակներն ու հեռանկարները Հայաստանում

Օրգանական պտղաբուծության նպատակն է բացահայտել տվյալ միջավայրին հատուկ պայմանները եւ բնակվող օրգանիզմների փոխհարաբերությունները, որը բույլ կտա կազմակերպել պտուղների էկոանվտանգ արտադրությունը:

Օրգանական պտղաբուծությունը օրգանական գյուղատնտեսության ոլորտներից մեկն է եւ համարվում է հեռանկարային ուղղություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը (առավելապես օրգանական պտղաբուծությունը) սկսել է զարգանալ 2002 թվականից, երբ մի շարք համայնքներում (Դիմիտրով, Արգինա, Լուսակն և այլն) հիմնվեցին օրգանական մոտեցումներով մշակվող առաջին այգիները: Այսօր ՀՀ-ում օրգանական սննդամբերի արտադրությունը գտնվում է զարգացման փուլում եւ տեղական ու արտասահմանյան շուկաներում ներկայացված է մի քանի տասնյակ արտադրողներով: Այս ներառում է հավաստագրված գյուղատնտեսական ու վայրի հավաքի տարածքներն ու անցումային փուլում գտնվող հողատարածքները: Երկրում առկա են նաև օրգանական կամ անցումային հավաստագիր ունեցող մեղվարուծական տնտեսություններ:

Օրգանական արտադրության հավաստագրում

Օրգանական գյուղատնտեսության մասին ՀՀ օրենքի համաձայն, գյուղատնտեսական արտադրամբը կարող է համարվել օրգանական, եթե արտադրության գործընթացը հավաստագրվել է համապատասխան հավաստագրող մարմնի կողմից եւ ստացել է «օրգանական» կամ «անցումային շրջանի օրգանական» հավաստագիր:

Հայաստանում ստեղծվել եւ հաջողությամբ գործում է միջազգային ճանաչում ունեցող օրգանական հավաստագրման հայաստանյան կազմակերպությունը՝ «Էկոգլոբ» ՍՊԸ-ն, որը կարող է հավաստագրումն իրականացնել մի շարք միջազգային ստանդարտ-

ներին (EU Reg. 884/2008, 889/2008 Եվրամիության օրենքի համար-ժեք «Կանաչ Կովկաս» չափորոշչի, USDA NOP 7 eCFR-205IFOAM, NON GMO եւ այլն) համապատասխան:

Օրգանական հավաստագրումն առավել հարմարեցված է տեղական տնտեսա-մշակութային պայմաններին, նպաստում է արտադրության առավել մեղմ անցմանը, ինչպես նաև ապահովում է տարրեր շուկաների պահանջներին համապատասխանող ծառայությունների առկայությունը՝ նպաստելով տեղական օրգանական արտադրողների՝ արտահանման ներուժի աճին ու մրցունակության ավելացմանը: Հայ ֆերմերները, վերամշակողները, արտահանողներն ու ներմուծողները կարող են մեկ փաթեթի շրջանակում ստանալ ՀՀ, ԵՄ, Շվեյցարիայի, ԱՄՆ, Կանադայի, Գերմանիայի ու մի շարք այլ պետությունների կողմից ճանաչված հավաստագրեր ու ներկայանալ այդ շուկաների օրգանական հատվածում:

Հավաստագրումը հայ արտադրողներին հնարավորություն է ընձեռում նաև օգտագործել միջազգային հետեւյալ մակնշումները:

Միջազգային մակնշում

Եվրամիության (ԵՄ) մակնշումը
ԵՄանդամ չհանդիսացող երկրի
ծագման օրգանական արտադրանքի համար



ԱՄՆ-ի «Ազգային օրգանական արտադրանք» կազմակերպության (USDA NOP) օրգանական մակնշումը

Կանադայի օրգանական մակնշումը



Գերմանիայի Հավաստարմագրման Ազգային (DAkkS) մակնշումը, բույլատրված է ԷԿՈԳԼՈԲ-ի կողմից օգտագործման



«Կանաչ Կովկաս» տարածաշրջանային մակնշումը



Օգանական արտադրանքի շուկան եւ հեռանկրները

2008 թ-ից հայկական արտադրության օրգանական մթերքները սկսել են արտահանվել ԵՄ, ԱՄՆ եւ ՌԴ շուկաներ: Հիմնականում արտահանվում են աճեցված եւ վայրած պտուղներ եւ հատապտուղներ, դրանց հավաքման ու վերամշակման միջոցով ստացված արտադրանքը (չորացված մթերք, խոր սառեցված մթերք, հյութեր, մուրաբաներ եւ այլն), ինչպես նաև՝ պտղատեսակների ծաղիկներից ստացված մեղրը: Արտահանման մեծ հեռանկար ունեն նաև աճեցված կամ վայրած պտուղների եւ հատապտուղների հավաքի միջոցով ստացված պատրաստուկներն ու դեղաբուսային ապրանքները:

Այս ոլորտի տեղական շուկայի զարգացման հմարավորությունները եւ արտահանման հսկայական ներուժը պատկերացնելու համար ստորեւ ներկայացվում են օրգանական գյուղատնտեսության ոլորտի համաշխարհային մի շարք ցուցանիշներ, որոնք ներկայացվում են FIBL-ի (Օրգանական գյուղատնտեսության գիտահետազոտական ինստիտուտ) 2021 թ. գիտական հրապարակումներից:

Աղյուսակ 4.

Ցուցանիշը	Ամբողջ աշխարհում (2019)	Առավելագույն ցուցանիշ ունեցող առաջատար երկները
Օրգանական գյուղատնտեսության հողատարածքները	72,3 մլն հա	Ավստրալիա - 35,7 մլն հա Արգենտինա - 3,7 մլն հա Իսպանիա - 2,4 հա
Վայրածից եւ այլ ոչ գյուղատնտեսական տարածքներից հավաքված բերքի հողատարածքները	35,1 մլն հա	Ֆինլանդիա - 4,6 մլն հա Չամբիա - 3,2 մլն հա Նամիբիա - 2,6 մլն հա
Օրգանական մթերք արտադրողները	3,1 մլն արտադրող	Հնդկաստան - 1,366,226 Ուգանդա - 210,353 Եթովպիա - 203,602
1 մարդու հաշվով սպառման արժեքը	14 եվրո	Դանիա - 344 եվրո Շվեյցարիա - 338 եվրո Լյուքսեմբուրգ - 265 եվրո

Գործնական

ՊՏՂԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պտղատու բույսերը բնության մեջ հանդես են գալիս հետեւյալ կենսական ձևերով:

1. **Հզրած ծառեր**, որոնց բարձրությունը լինում է առնվազն 10-15 մետր և ավելին, ունենում են բրզանելի, համեմատարար ուղղաձիգ սաղարք, լավ արտահայտված կենտրոնական ուղեկցող և վերընթաց աճ, զարգացած կմախքային ճյուղեր, 1-1,5 մետր բարձրությամբ բուն: Հզրած պտղատու բույսերի օրինակ են ընկույզենին, շագանակենին, կոկանին (պեկանենին, հիկորին), խնձորենու, տանձենու, կեռասենու վայրած ձևեր և այլն:
2. **Միջակած ծառեր** (սովորական ծառեր), որոնց բարձրությունը տատանվում է 5-10 մետրի սահմաններում, ունեն գնդաձեւ, տարածված սաղարք, թույլ արտահայտված կենտրոնական ուղեկցող, զարգացած կմախքային ճյուղեր, 0,5-1 մետր բարձրությամբ բուն: Այդպիսի բույսերից են ծիրանենին, դեղձենին, նշենին, սերկենիլենին, ժորենին (արեւելյան խուրման), ձիթենին, հոնենին, պիստակենին, ցիտրուսային պտղատեսակները, նաև խնձորենու, տանձենու, սալորենու, շլորենու, թզենու, նոնենու, բալենու և բալակեռասի որոշ բուսածեր (սորտեր) և վայրած ձևեր:
3. **Ծառանմաններ**, որոնց հատկապես տարածված սաղարթով ներկայացուցիչները նման են ծառերին, ունեն 3-6 մետր բարձրություն, բայց՝ ոչ թե 1, այլ 2-8 (երբեմն՝ ավելի) բուն եւ շունեն վառ արտահայտված կենտրոնական ուղեկցող: Նման բույսերի օրինակ են տիսլենին, փշատենին, հոնենին, չիչւանենին, սալորենու, բալենու, թզենու, նոնենու որոշ բուսածեր (սորտեր):

4. **Թփեր** (կանգուն թփեր), որոնց բարձրությունը 2-3 մետր է, չունեն բուն, իսկ բազմաթիվ ուղղաձիգ ճյուղավորումները (5-25 եւ ավելի) սկսվում են հողի մակերեսից: Այս խմբի ներկայացուցիչներ են հաղարջենին, կոկոռշենին, հապալասենիները, շիշխանենու, մասրենու, մոշենու որոշ մշակաձեւեր (սորտեր):
5. **Կիսաքփեր** (փուլող թփեր). Նման են նախորդ կենսական ձեւերի ներկայացուցիչներին, սակայն ունեն 1-1,5 բարձրությամբ սահմանափակ ած, կախվող, փուլող կամ գետնատարած ճյուղեր, հաճախ՝ փշոտ ճյուղեր: Այդպիսի բույսերից են մորենին (ազնվամորին), մոշենին, մասրենու, հաղարջենու եւ կոկոռշենու որոշ ձեւեր:
6. **Վազեր** (լիանաներ). Ունեն ճկուն, մազլցող բայց փայտացող, 3-15 մետր երկարությամբ, հենարանի կարիք ունեցող ցողուն, արտահայտված գագաթնային ած եւ թույլ ճյուղավորումներ: Այս խմբի ներկայացուցիչներ են խաղողը, շողպարենին (կիվի), կրքածաղիկը, կիտրոնաքուփը եւ այլն:
7. **Խոտանմաններ.** ի տարրերություն նախորդ կենսական ձեւերի՝ չունեն փայտացող օրգաններ, շատ ցածրած են՝ մինչեւ 30-40 սմ բարձրության տերեւային վարդակ կազմող ցողունով: Այդպիսի բույսերից են ելակենին, գետնաելակը, քրուհատին, լոռամբգին, որոշ հապալասենիներ:

Պտղատու բույսերի խմբերն ու դրանց ներկայացուցիչները

Պտղատու բույսերն ըստ կենսաբանական առանձնահատկությունների, պտղի ծագման եւ կառուցվածքի, բաժանվում են հետեւյալ խմբերի:

1. **Կորիզավորներ.** խումբը ներառում է ծիրանենին, դեղձենին, սալորենին, շլորենին, կեռասենին, բալենին եւ բալակեռասեները: Այս խմբի մեջ են մտնում նաև արտադրական նշանակություն չունեցող պտղատեսակներ, ինչպիսիք են՝ մամինենին, մամիսասալորենին, դափնեկեռասենին, ցախակեռասենին, վայրած շլորենիները եւ այլն:
2. **Հնդավորներ.** առավել տարածված եւ արտադրական նշանակություն ունեցող տեսակներն են խնձորենին, տանձենին, սերկեւիլենին: Այս խմբում ներառված են նաև արտադրական նշանակություն չունեցող պտղատեսակներ, ինչպիսիք են՝

զկեռենին (սովորական կամ գերմանական), սզնենին (ալոճենին), արոսենին, սեւարոսենին, քարազկեռենին եւ այլն:

3. **Ընկուզավորներ.** այս խմբի ներկայացուցիչներն են ընկուզենին, տիվենին, նշենին, պիստակենին, շազանակենին, կոկանին (պեկանենի):
4. **Հատապտղայիններ.** ելակենի, գետնաելակենի, մորենի, մոշենի, հաղարջենի, կոկրոշենի, չիշխանենի, հապալասենիներ, լոռամրգի, լիմոնարուփի, թանքրվենի եւ այլն:
5. **Չոր մերձարեւադարձայիններ.** ներկայացուցիչներն են՝ նոնենին, թզենին, ժորենին (արեւելյան խուրմա), ծիրենին, շողպարը (կիվի), հոնենին, փշատենին, թթենին, հանուպենին (ունար), ճապոնական զկեռենին, ճապոնական սերկենինին (դոցինիա), մաքուզենին, ֆեյխտան եւ մի շարք այլ պտղատեսակներ: Այս խմբի ներկայացուցիչների մեծամասնությունը Հայաստանի պայմաններում նույնիսկ ամենատաք գոտիներում չի աճում:
6. **Խոնալ մերձարեւադարձայիններ.** կիտրոնենի (լիմոն), նարնջենի, մանղարինենի, քորինջ (գրեյպֆրուտ), գնդալիմոնենի (պոմելո), լայմ, ցիտրոն, կինկան, կումկատ եւ շատ այլ հիբրիդային ցիտրոսային պտղատեսակներ: Այս խմբի ներկայացուցիչները Հայաստանում չեն աճում:
7. **Արեւադարձայիններ.** արքայախնձորենի (անանաս), աղամաքենի (քանան), հնդկրնկուզենի (կոկոսյան արմավենի), քալատրենի (հնդկրնկույզ, կեշյու), ավկատանձենի (ավոկադո), մանգենի (հնդկադեղձ, մանգո), կոյավենի (հնդկախնձոր, գուավա), սեխսածառ (պապայա), քրթենի (անոնա), փշատանձ (օպունցիա), փշարուզ (փիքայա), հացածառ (չեկքրուտ), մշկրնկույզ (մուսկատային ընկույզ), մակադամիա (ընկույզ մակադամիա) եւ շատ ու շատ այլ պտղատեսակներ: Այս խմբի ներկայացուցիչները Հայաստանում չեն աճում:
8. **Հումքատու (տեխնիկական) պտղատուներ.** սրանց պտուղները կամ ծաղիկները բավարարում են մարդու սննդային զանազան կարիքները, սակայն օգտագործվում են միայն որպես հումք՝ վերամշակվող արտադրանքի համար: Հիմնական ներկայացուցիչներն են արճենին, շոկոլադածառը (կակաո), կոլա ընկույզը, յուտարմավենին, մեխսակածառը, հիլը եւ այլն: Այս խմբի ներկայացուցիչները Հայաստանում չեն աճում :

Պտղատու բույսերի կառուցվածքը Եւ օրգանների նկարագրությունը

Պտղատու բույսերը կազմված են բուսաճային (վեգետատիվ) (արմատ, ցողուն, տերեր) եւ սեռական (վերարտադրող կամ գեներատիվ) (ծաղիկ, պտուղ, սերմ) օրգաններից:

Կառուցվածքային առումով տարրերակվում են պտղատու բույսերի վերգետնյա՝ ցողունային եւ ստրգետնյա՝ արմատային համակարգեր:

Արմատային համակարգը կազմված է հետևյալ մասերից:

1. Գլխավոր (ուղղաձիգ կամ առանցքային) արմատ: Այն առաջնում է սերմից, ուղղաձիգ տարածվում է հողում մինչեւ 10 մետր խորությամբ, հատուկ է միայն սերմնաբույսերին: Արմատային համակարգը կազմված է հետևյալ մասերից:
 2. Կմախբային (հորիզոնական կամ կողային) արմատ: Գլխավոր արմատից առաջացած արմատները կոչվում են նաեւ առաջին կարգի արմատներ: Դրանք կարող են ունենալ մինչեւ 20 սմ հաստություն: Գլխավորապես աճում են հորիզոնական դիրքով եւ հանդիպում մինչեւ 2 մետր խորության վրա: Առաջին կարգի (կմախբային) արմատից հաջորդաբար առաջանում են 5-10 սմ հաստությամբ 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կարգի արմատները:
 3. Աճակալող արմատներ (մազարմատային արմատներ). սրանք 0,5-2 սմ հաստությամբ 3-րդ, 4-րդ, երբեմն ավելի բարձր կարգերի արմատներ են, որոնք կազմված են աճող, ակտիվ (ներծծող), միջանկյալ եւ փոխադրող գոտիներից: Ակտիվ գոտում գտնվում են 0,5-1 մմ հաստությամբ 0,5-2 սմ երկարությամբ բազմաթիվ **մազարմատներ** (աղվամազ հիշեցնող կարծ եւ խիտ բելիկների փնչեր), որոնք հողից կլանում են ջուր եւ հանքային աղեր: Դրանք արագ աճում, մահանում են փոխարինվում են նորերով:

Արմատային եւ ցողունային համակարգերի միջև գտնվող իրար միացնող բայց եւ բաժանարար հատվածը կոչվում է արմատավզիկ, որը լինում է իսկական եւ պայմանական: Իսկական արմատավզիկը սերմերով բազմացող բույսերին բնորոշ օրգան է, արմատից եւ ցողունից տարրերվում է օղակաձև կնճիռով, հաստությամբ, նրբությամբ, երբեմն էլ՝ գույնով: Պայմանական արմատավզիկը հատուկ է բուսաճային (վեգետատիվ) եղանակով բազմացող բույսերին, չունի օղակաձև կնճիռ, քիչ է տարրերվում արմատից եւ ցողունից եւ չի համարվում առանձին օրգան:


Այգետնկման ժամանակ տնկանյութի արմատավզիկը (հատկապես իսկականը) պետք է հավասար լինի հողի մակերեսին՝ այլ դիրքով կխախտվի ծաղի բնականոն աճը, զարգացումը, ամրացումը

հողում, ինչպես նաև կրծատվի կյանքի տեսդությունը: Ծառի հետագա աճին զուգընթաց արմատավզիկ կիսով չափ կամ ամբողջովին կարող է խորանալ հողի մեջ, որը բնական է համարվում:

Պտղատու ծառերի վերգետնյա համակարգը (նկ. 1) կազմված է հետեւյալ օրգաններից:

1. Բուն. արմատավզիկից մինչեւ առաջին կարգի կմախրային ճյուղավորությունն ընկած ցորունային հասվածն է: Բնի բարձրությունը հաստատուն է, եւ այն որոշում է մշակողը: Տարեկ ծառատեսակների բնի բարձրությունը կարող է տատանվել 15-20 սմ-ից մինչեւ 1,5-2 մետրի սահմաններում:
2. Կենտրոնական ուղեկցող. բնի ուղիղ շարունակությունն է մինչեւ գագարային շարունակող շիվը (աճի շարունակության շիվ): Դեղձենու, նշենու, սալորենու եւ որոշ ուրիշ տեսակների ուղեկցողը բացակայում է: Այն կտրում է այգեգործը՝ ելնելով ծառի աճեցման պահանջներից: Որոշ ծառերի ուղեկցողը բացահայտ չի արտահայտված, այդ պատճառով կոչվում է բարնված ուղեկցող:
3. Կենտրոնական ուղեկցողի շարունակող շիվ (աճի շարունակության շիվ). ընթացիկ տարվա աճն է, առաջանում է ուղեկցողի գագարնային վերգետատիվ տերեւարողությունը:
4. Մրցակից շիվ (աճ). առաջանում է ուղեկցողի ոչ գագարնային կամ քնած բողոքից, աճում է շարունակվող շիվի ուղությամբ եւ վերջինիս համեմատ ունի համեմատաբար պակաս աճեցողություն: Մրցակից շիվերը հեռացվում են սաղարթի նոսրացման ժամանակ կամ օգտագործվում են որպես կենտրոնական ուղեկցողի փոխարինուող:
5. Առաջին կարգի կմախրային ճյուղ. աճում է կենտրոնական ուղեկցողից եւ վերջինի նկատմամբ կազմում 45-90 աստիճանի անկյուն:
6. Երկրորդ կարգի կմախրային ճյուղ կամ կիսակմախրային ճյուղ. աճում է առաջին կարգի կմախրային ճյուղից:
7. Աճակալող ճյուղեր. յուրաքանչյուր տարվա աճող ու ճյուղավորվող շիվերն են, որոնք վերածվում են 3-րդ, 4-րդ, երեսն ել հաջորդ կարգի ճյուղերի: Մրանցով է պայմանավորված ծանի վերգետնյա մասի աճն ու զարգացումը:
8. Նորմալ շիվն աճում է նախորդ տարվա շիվերի վրա՝ դրանց վրա նախորդ տարում ձեռավորված բողոքից: Լինում է միջին երկարության (40-60 սմ) եւ միջին հաստության (մինչեւ 0,5 սմ):

9. Վաղաժամ (կամ աննորմալ) շիվն աճում է ընթացիկ տարվա նորմալ շիվի բողոքներից եւ վերջինի համեմատ լինում է կարծ ու նվազ: Բնորոշ է կորիզավոր պտղատեսակներին, հատկապես՝ դեղձենուն: Սովորաբար, մինչեւ բուսածի ավարտը չի հասցնում ամբողջովին փայտանալ եւ ձմռանը մասամբ կամ ամբողջովին սառչում է:
10. Հոռաշիվ (հոռացած աճեր), աճում են բնի եւ կմախքային ճյուղերի, այլ տարեց ճյուղերի մերկացած հատվածների քնած բողոքներից: Լինում են շատ երկար (մինչեւ 1,5-2 մետր) ու հաստ (1-2 սմ), մեծ միջիանգույցներով եւ խոշոր տերեւաթիթեղներով: Նման ճյուղերը սովորաբար հեռացվում կամ խիստ կարճացվում են:



Նկար 1. Պտղատու ծառի կառուցվածքը

- | | |
|--|---|
| 1. Ուղղաձիգ (գլխավոր) կմախքային արմատ, | 8. Երկրորդ կարգի կմախքային ճյուղ (կիսակմախքային), |
| 2. առաջին կարգի հորիզոնական կմախքային արմատ, | 9. կենտրոնական ուղեկցող, |
| 3. ուղղահայաց արմատ, | 10. կենտրոնական ուղեկցողի շարունակող աճ, |
| 4. արմատավոր, | 11. մրցակից ճյուղ, |
| 5. մացառաշիկ, | 12. հոռաշիվ, |
| 6. բուն, | 13. կենտրոնական ուղեկցողի եւ կմախքային ճյուղի միջև կապմվող անկյուն, |
| 7. առաջին կարգի կմախքային ճյուղ, | |

11. Մացառաշիվը (մացառ) աճում է որոշ պտղատեսակների (քալենի, շլորենի, սերկելիթենի, որոշ տանձենիների) արմատային համակարգի հավելյալ բողբոջներից կամ բնի հիմքի քնած բողբոջներից: Հիշեցնում են հոռաշիվեր կամ նորմալ շիվեր, աճում են բնամերձ տարածքում կամ բնից մի քանի մետր հեռավորության վրա: Խորում են ծառի կենսական ուժն ու խանագարում հողի բնամերձ մշակությանը: Ցանկալի է նման շիվերը հեռացնել հիմքից: Մայր բույսից զգուշորեն (արմատային հղողագուղձով) հեռացնելու դեպքում կարելի է վերատնկել եւ ծառայեցնել յուրարմատ տեսակների եւ բուսաձեւերի՝ առանց պատվաստի բազմացման համար: Դրանք կարելի է կիրառել որպես պատվաստակալ:

Ծառի բնից վերեւ ընկած հատվածը՝ բոլոր ճյուղավորումների եւ օրգանների ամբողջությունը կոչվում է սաղարթ (կամ, ինչպես սխալ-մամբ անվանում են՝ պսակ), իսկ արմատային եւ ցողունային (վերգետնյա) համակարգերը միասին անվանում են ծառի մարմին կամ ծառի բնակերպ՝ հարիտուս (Ակ. 2):



Նկար 2. Ծառի բնակերպ (հարիտուս)

Աղյուր՝ <https://magnificentplumbing.com/wp-content/uploads/2018/03/3-Ways-to-Keep-Tree-Roots-from-Growing-in-your-Sewer-Lines-865x723.jpg>

Պտղատու բույսերի բազմացումը եւ տնկանյութի աճեցումը

Պտղատու բույսերի բազմացման եղանակները

Բնական պայմաններում պտղատու եւ հատապտղատու բույսերի ճնշող մեծամասնությունը բազմանում են սերմերով, սակայն հանդիպում են նաև վեգետատիվ ճանապարհով (ցողունի, արմատների հատվածների միջոցով) բազմացող տեսակներ:

Այսպիսով՝ գոյություն ունի պտղատու բույսերի բազմացման երկու եղանակ՝

- սեռական (գեներատիվ, սերմերով)
- անսեռ (վեգետատիվ, բուսածային)

Սեռական բազմացման դեպքում տեղի է ունենում բույսերի թվաքանակի ավելացում սերմերի ցանքի միջոցով, որոնք առաջացել են ծնողական երկու առանձնյակների գեների միաձուլման շնորհիվ: Մինչդեռ վեգետատիվ բազմացման դեպքում՝ բույսերի թվաքանակի ավելացումը տեղի է ունենում սոմատիկ բջիջների եւ վեգետատիվ օրգանների կիսման ճանապարհով:

Սեռական (սերմերով) բազմացում. բազմացման այս եղանակը կոչվում է սեռական, քանի որ հիմքում ընկած է սեռական (փոշուտման) գործընթացը: Սերմերով բազմացման դեպքում ստացված սերունդը չի պահպանում ծնողական ձեւերի հատկությունները, քանի որ ունի հավաքական գենոտիպ, որում ընգրկված են գեներ ինչպես հայրական, այնպես էլ մայրական բույսերից (նկ.3):

Բնական պայմաններում սերմերով բազմացումն ավելի հեշտ է ընթանում եւ վեգետատիվ բազմացման համեմատ ունի մի շարք առավելություններ: Սերմերն ավելի երկար ժամանակ են մնում կենսունակ վիճակում, որը պահպանում է



Նկար 3. Ընկույզենու սերմնաբույս

դրանց սերունդ տալու ունակությունը երկար ժամանակահատվածում (սերմերը կարող են գոյատեսել երկար ժամանակ՝ մինչեւ ծլելու համար բարենպաստ միջավայրում հայտնվելը):

Սերմից ստացված բույսերը զերծ են լինում վիրուսային հիվանդություններից, որը բնորոշ չէ վեգետատիվ բազմացման համար: Եվ վերջապես՝ սերմնաբույսերն ավելի կենսունակ են եւ հարմարված շրջակա միջավայրի պայմանների նկատմամբ:

Արտադրական պտղաբուծության տեսանկյունից սերմերից առաջացած բույսերն ունեն որոշ «թերություններ»: Դրանք համեմատարար ուշ են բերք տալիս (Պոպով, 1994), ինչպես նաև կարող են ունենալ տարրեր ժառանգականություն, հետեւաբար կարող են տարրեր կերպ ազդել իրենց վրա պատվաստված նույն սորտի աճի հզորության վրա:

Հիմք ընդունելով սեռական բազմացման առանձնահատկությունները, այս մոտեցումը զիսավորապես կիրառվում է երկու նպատակով՝

ա) սերմնային պատվաստակալներ ստանալու,

բ) նոր սորտեր ստանալու համար:

Արտադրության մեջ առավել ընդունված են բույսերի բազմացման վեգետատիվ եղանակները:

Վեգետատիվ (անսեռ, բուսաճային) բազմացում. այս դեպքում դրստր բույսն առաջանում է մայր բույսի մի հատվածից՝ ճյուղից, կտրոնից կամ բողբջից, եւ ամրող գործողության հիմքում ընկած է քչիզների վերածնումը (ուեգեներացիան, վերականգնումը): Այդ հատկության շնորհիվ բույսը փորձում է վերականգնել կորցրած հյուսվածքը կամ օրգանը: Իսկ վերականգնված հյուսվածքից եւ օրգանից ձեւավորվում է ամբողջական նոր բույս: Այս գործընթացը կոչվում է ռեպարատիվ վերականգնում (ռեպարատիվ ուեգեներացիա), որի վառ օրինակ է բույսից առանձնացված ընձյուղի վրա արմատային համակարգի առաջացումը, ինչպես նաև՝ բույսից առանձնացված արմատների վրա նոր ընձյուղների ձեւավորումը:

Վեգետատիվ ճանապարհով ստացված պատվաստակալների առավելությունն այն է, որ դրանք ապահովում են աճի հավասար հզորություն եւ նույն սորտերի նկատմամբ ունեն միանման համատեղելիություն:

Ոչ սեռական բազմացման թերություններից կարելի է նշել վիրուսային հիվանդությունների փոխանցման հնարավորությունը, համեմատաբար բույլ արմատային համակարգը եւ սերմնաբույսերի համեմատ կյանքի կարծ տեսողությունը:

Վեգետատիվ (բուսաճային) բազմացման ձեւերն են՝

Բնական բազմացում. կատարվում է առանց մարդու միջամտության, ձեւերն են՝ բնական անդալիսը, բեղիկները, մացառները:

Վրիեստական բազմացում. կատարվում է մարդու միջամտությամբ: Լինում է անդալիսներով, կտրոններով, պատվաստով:

Կարելի է առանձնացնել նաև վեգետատիվ (բուսաճային) բազմացման յուրարմատ եւ ոչ յուրարմատ (պատվաստված) տեսակներ:


Յուրարմատ բազմացում. դուստր բույսն առաջանում է՝ սնվելով մայր բույսի արմատից: Այդպիսի բազմացման ձեւերն են՝

ա) անդալիսներով բազմացումը, որը բնորոշ է ցածրած խնձորենուն, տանձենուն, սերկելիենուն, հաղարջենուն, կոկոչենուն, թզենուն, նոնենուն: Անդալիսային բազմացման ձեւերն իրենց հերթին կարող են լինել.

Ուղահայաց կամ բուկլիցով անդալիս. մայր բույսը տնկվում է տնկարանի բուսաճային (վեգետատիվ) ճանապարհով բազմացող մայրուտում: Գարնանը հեռացվում է բույսի 5-6 սմ-ից բարձր ցողունային մասը: Կտրվածքի ներքեւի մասից՝ քնած բողբոջներից, առաջանում են նոր շիվեր, որոնց աճելուն զուգընթաց կատարում են հողով բուկլից՝ նպաստելով արմատագոյացմանը: Յուրաքանչյուր թփից ստացվում է 10-12, իսկ յուրաքանչյուր հեկտարից՝ 150-200 հազար արմատակալ (նկ. 4):

Հորիզոնական անդալիս. մայր բույսի երկու կողմերից բացվում են հորիզոնական ակնաներ, որոնք ունեն 15-20 սմ խորություն, 12-15 սմ լայնություն եւ անդալիսի ենթարկվող ճյուղի երկարությունից 5-8 սմ պակաս երկարություն: Ակնաներից յուրաքանչյուրի մեջ հորիզոնական դիրքով դրվում են մայր բույսի ընթացիկ տարվա աճած ընձյուղները: Անդալիսի ենթարկվող ճյուղի ծայրի մասը հողի մակերես է հանվում եւ կապվում է փայտյա ցցին: Անդալիսի ենթարկված ճյուղի վրա եղած բողբոջներից առաջանում են շիվեր: Եթե դրանց երկարությունը հասնում է 10-12 սմ-ի, կատարվում է հողով բուկլից: Աշնանը՝ տերեւաբափից հետո, բուկլիցի հողը հետ են տանում, եւ առանձնացնում են 10-12 արմատակալներ (նկ. 4):

Աղեղնաձեւ (շինական) անդալիս. առավելաբար կիրառվում է խաղողագործության մեջ, կատարման տեխնիկան նույնն է, ինչ հորիզոնական անդալիսինը, սակայն այս դեպքում մեկ մայր բույսից ստացվում է 2 դուստր բույս: Արմատագոյացումն արագացնելու համար անդալիսի ենթարկված ճյուղի կեղեւի վրա արվում է 1,5 սմ լայնությամբ օղակաձեւ կտրվածք:



Նկար 4. Բուսագոյին բազմացման ձեւերը

- | | |
|---|--|
| 1. թեղիկներով, | 7. կանաչ կտրոններով, |
| 2. մացառներով, | 8. արմատային կտրոններով, |
| 3, 4 և 5. աղեղնաձեւ, հորիզոնական և ուղղահայաց անդախներով, | 9. հյուսվածքային բույս (<i>in vitro</i>) բազմացում |
| 6. փայտացած կտրոններով, | |

Օդային անդախիս. Կիրառվում է ցիտրուսայինների դեպքում: Ծանի սաղարթի կենտրոնական մասից ընտրվում է 1-2 տարեկան ճյուղ, որի միջին մասից հեռացվում է կեղեւը, տերում աճրացվում է երկու մասի բաժանված ծաղկաման կամ տոպարակ, որտեղ լցվում է ավազ, խիճ: Օդակածել կտրվածքի տեղում 2 ամիս հետո առաջանում են սպիտակ արմատներ, որոնք հետո գորշանում են: Ծաղկամանի ներքեւից հեռացվում է արմատակալած ճյուղը եւ առանձին տնկվում:

Գլխիկոր անդալիս. բնորոշ է մոշենուն, դրա ճյուղերն արագած են, երկարում են մեկ վեգետացայի ընթացքում այնքան, մինչեւ բույսի հակառակ կողմից հպվում են հողին, որի շնորհիվ ծայրամասի վեցետատիվ բողբոջն առաջացնում է դրուստ բույս, որն աշնանը կարելի է առանձնացնել:

Բեղիկներով բազմացում. բնորոշ է գետնաելակին, ելակին, որոնց սողացող 30-40 սմ երկարությամբ բեղիկների վրա գտնվող վեցետատիվ բողբոջներից առաջանում են դրուստ բույսեր: Աշնանը բեղիկները չորանում են, հարդյուն որի դրուստ բույսերն անջատվում են մայր բույսերից: Մեկ վեցետացիայի ընթացքում մեկ մայր բույսն առաջացնում է 4-5 դրուստ բույսեր:

Կտրոններով բազմացում. փայտացած կտրոններով բազմացումը բնորոշ է թղթենուն, նոնենուն, ծիրենուն, հաղարջենուն, կոկոչենուն, փշատենուն: Կտրոնները մթերում են երիտասարդ ծառերից՝ աշնանը՝ տերեւաթափից հետո: Այս նպատակով ընտրվում է սաղարթի ստորին հատվածի հիմքի մասը: Աշնանը մթերված կտրոնները պահում են նկուղում, խրամատում՝ $0\text{--}5^{\circ}\text{C}$ ջերմության, 70-85 % օդի հարաբերական խոնավության պայմաններում: Տնկելուց առաջ կտրոնները նկուղից դուրս են բերում, թարմացնում, հեռացնում կտրոնների ծայրային եւ հիմքի մասերը՝ համապատասխանաբար շեղ եւ ուղիղ, օղակաձև կտրվածքներով:

Արմատակալման համար նախատեսված կտրոնները պետք է ունենան 20-25 սմ երկարություն: Կտրոնները տնկվում են զարնանը, երբ օդի ջերմաստիճանը $1\text{--}20^{\circ}\text{C}$, խակ հողինը՝ $18\text{--}21^{\circ}\text{C}$, օդի խոնավությունը՝ 80-85 %: Կտրոնները տնկվում են $60\text{--}70 \times 10\text{--}15$ բանաձեւով եւ $18\text{--}20$ սմ խորությամբ:

Կամաչ կտրոններով բազմացումը կիրառվում է արագացված եղանակով բազմացման դեպքում, ինչպես նաև այն բույսերի համար, որոնք դժվար են արմատակալում փայտացած կտրոններով: Բազմացման այս եղանակի կիրառման դեպքում մթերվող կտրոնները պետք է ունենան 12-15 սմ երկարություն՝ 2-3 տերեւային հաճգույցներով: Կտրոնները մթերվում են հունիսի 20-ից մինչեւ հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում, վերամշակվում արմատարձակման ու աճման խթանիչներով եւ տնկվում ջերմոցներում՝ խոնավության



Նկար 5. Փայտացած կտրոններով բազմացում

Եւ արհեստական մառախուղի պայմաններում: Որպես հողաշերտ կարող է ծառայել սպիտակ ավազը, հրաբխային ավազը, խիճը:




Նկար 6. Բազմացման կենսատեխնոլոգիական մեթոդ

Կենսատեխնոլոգիական եղանակ (միկրոկլոնային բազմացում): Լայնորեն կիրառվում է աշխարհի բազմաթիվ երկրներում՝ բուսաճային (վեգետատիվ) եղանակով բազմացվող բույսերից առողջ տնկանյոթի ստացման եւ զանգվածային արտադրություն կազմակերպելու նպատակով: Այս եղանակի կիրառման դեպքում դուստր բույսերն աճեցվում են մայրական բույսի հյուսվածքներից վերցված նմուշներից, որոնք որոշ ժամանակ պահպում են սննդային միջավայրում, այնուհետեւ տեղափոխվում այլ միջավայր՝ արմատակալման, որից հետո՝ վերատնկման համար (նկ. 6):

Ոչ յուրարմատ բազմացում՝ պատվաստ – պտղատնկարաններում կիրառվող բազմացման հիմնական եղանակն է: Այս դեպքում միմյանց են միացվում երկու տարբեր բույսերի հատվածները, որոնք սերտածելով շարունակում են աճը եւ զարգացումը որպես մեկ ամբողջական օրգանիզմ: Պատվաստված բույսը բաղկացած է երկու մասից՝ պատվաստակալից, որից զարգանում է արմատային համակարգը եւ պատվաստացուից, որի վրա ձևավորվում են բույսի վերգետնյա օրգանները (նկ. 7):

Գոյություն ունեն պատվաստի բազմաթիվ եղանականեր, սակայն գործնականում կիրառվող ձեւերը կարելի է բաժանել երկու խմբի՝ աչքապատվաստ եւ կտրոնապատվաստ: Նշված երկու եղանակներից առավել տարածված է եւ գործնական մեծ նշանակություն ունի աչքապատվաստը:



Նկար 7. Բազմացման պատվաստի եղանակ

Պտղատու բույսերի առողջ, վիրուսավերծ տնկանյութի աճեցման տեխնոլոգիաները

Բազմացման կենսատեխնոլոգիական եղանակ (In vitro - «ապակու տակ», միկրոկլոնային բազմացում). լայնորեն կիրառվում է աշխարհի բազմաթիվ երկրներում՝ բուսաճային (վեգետատիվ) եղանակով բազմացող բույսերից առողջ տնկանյութի զանգվածային արտադրություն կազմակերպելու նպատակով:

Կենսատեխնոլոգիական եղանակի կիրառման հիմքում ընկած է երիտասարդ ընձյուղների գագարի գոյացնող հյուսվածքի (մերիստեմի)՝ կողային փոքրիկ ճյուղավորումներ առաջացնելու ունակությունը: Այդպիսի ճյուղավորումները կարելի է պարբերաբար անջատել մայրական հյուսվածքից, այնուհետեւ համեմատաբար կարճ ժամկետներում աճեցնել արհեստական պայմաններում՝ առանց սեզոնային սահմանափակումների:

Կենսատեխնոլոգիական եղանակով բազմացումը կարող է շրջանցել պատվաստի փուլը կամ ընդգրկել այն՝ պատվաստակալի կիրառման անհրաժեշտության դեպքում: Այս եղանակի կիրառմամբ արագացվում է ընտրասերման (սելեկցիոն) աշխատանքների տետողությունը, ապահովվում է տնկանյութի սորտային մաքրությունը, բույսերի միատարրությունը (հոմոգենությունը), ախտահանումը, վարակագերծումն ու վիրուսազերծումը:

Աղյուսակ 1.

Արտասահմանում կենսատեխնոլոգիական եղանակով
բազմացվող առավել տարածված պատվաստակալների¹
ըստ հիմնական պտղատեսակների¹

Պտղատեսակը	Պատվաստակալի անվանում, համար
Խնձորենի	Պատվաստակալներ՝ MM9 EM8 M27 MM109 Geneva® 'G.11' (<i>Malus</i> hybrid) Geneva® 'G.202' (<i>Malus</i> hybrid) Geneva® 'G.210' (<i>Malus</i> hybrid)

1. Gregory A. Lang, Achieving sustainable cultivation of temperate zone tree fruits and berries, 2019

		Geneva® 'G.214' (<i>Malus</i> hybrid) (USA) Geneva® 'G.222' (<i>Malus</i> hybrid) Geneva® 'G.41' (<i>Malus</i> hybrid) Geneva® 'G.890' (<i>Malus</i> hybrid) Geneva® 'G.935' (<i>Malus</i> hybrid) Geneva® 'G.969' (<i>Malus</i> hybrid) Budagovski® 'B.10' (<i>Malus</i> hybrid)
Ծիրանենի	Պատվաստակալներ	Myrobalan 29C (<i>P. cerasifera</i>) MRS 2/5 (Selection of <i>P. cerasifera</i> x <i>P. spinosa</i>) Torine... Avifel (<i>P. domestica</i>) Sait-Lucie Tetra 22
Կեռասենի/ բալակեռասենի	Պատվաստակալներ	Adara (<i>P. cerasifera</i>) CAB 11E (<i>P. cerasus</i>) CAB 6P (<i>P. cerasus</i>) Gisela® 3 (<i>P. cerasus</i> x <i>P. canescens</i>) Gisela® 5 (<i>P. cerasus</i> x <i>P. canescens</i>) Gisela® 6 (<i>P. cerasus</i> x <i>P. canescens</i>) Gisela® 9 (<i>P. cerasus</i> x <i>P. canescens</i>) MaxMa Delbard® 14 Brokforest (<i>P. mahaleb</i> x <i>P. avium</i>) MaxMa Delbard® 60 Broksec (<i>P. mahaleb</i> x <i>P. avium</i>) Maxma Delbard® 97 Brokgrove (<i>P. mahaleb</i> x <i>P. avium</i>) Piku1 (<i>P. avium</i> x [<i>P. canescens</i> x <i>P. tomentosa</i>]) Santa Lucia 64 (<i>P. mahaleb</i>) PHLC (<i>P. avium</i> x <i>P. cerasus</i>)
Կեռասենի/ բալակեռասենի/ սալորենի	Պատվաստակալներ	Colt cherry (<i>P. avium</i> x <i>P. pseudocerasus</i>) Krymsk® 1 peach/apricot/plum (<i>P. tomentosa</i> x <i>P. cerasifera</i>) F 12/1 Mazzard cherry (<i>P. avium</i>) Damil® Gm 61/1 cherry (<i>P. dawyckensis</i> x [<i>P. canescens</i> x <i>P. dielsiana</i>]) Krymsk® 5 cherry (<i>P. fruticosa</i> x <i>P. serrulata</i> var. <i>Iannesianiana</i>) (USA) Krymsk® 6 cherry (<i>P. cerasus</i> x [<i>P. cerasus</i> x <i>P. maackii</i>]) Krymsk® 7 cherry (<i>P. iannesianiana</i>) Maxma® 14 cherry (<i>P. mahaleb</i> x <i>P. avium</i>) Weiroot™ 158 cherry (<i>P. cerasus</i>) Tabel™ Edabriz cherry (<i>P. cerasus</i>) Marielle® 'Mar 4001' plum/almond (<i>P. cerasifera</i> x <i>P. munsoniana</i>)
Ընկույզենի	Պատվաստակալներ	Vlach (<i>Juglans</i> hybrid) VX211 (<i>Juglans</i> hybrid) RX1 (<i>Juglans</i> hybrid) <i>Juglans nigra</i>
Պիստակենի	Պատվաստակալներ	UCB-1 (<i>Pistacia vera</i>)

Խաղող	Պատվաստակալներ	5BB SO4 Fercal 1103 P (V. berlandieri x V. rupestris) 140 R (V. berlandieri x V. rupestris)
Սալորենի/Նշենի	Պատվաստակալներ	Rootpac®-R (PAC 941) (P. cerasifera x P. dulcis) Marianna GF 8/1 (P. cerasifera x P. munsoniana) Wavit® (P. domestica Wangenheim) S. Giuliano GF 655/2 (selection of P. insititia)
Դեղձենի/Նշենի/ սալորենի	Պատվաստակալներ	BH® 106 Cv. Lillian (Prunus) BH® 5 (P. dulcis x P. persica) Cadaman... peach/almond (P. persica x P. davidiana) Hansen 536 peach/almond ([P. davidiana x P. persica] x P. persica 'Okinawa') x P. amygdalus) Krymsk® 86 peach/plum (P. persica x P. cerasifera) (USA) Marianna 26-24 plum/almond (P. cerasifera x P. munsoniana) Marianna M-40 plum/almond (P. cerasifera x P. munsoniana) Paramount® 'GF677' peach/almond (P. amygdalus x P. persica) Rootpac®-40 ([P. dulcis x P. persica] x [P. dulcis x P. persica]) Rootpac®-70 ([P. persica x P. davidiana] x [P. dulcis x P. persica]) Rootpac®-90 ([P. persica x P. davidiana] x [P. dulcis x P. persica]) Tempropac peach/almond (P. persica x P. dulcis)
Դեղձենի	Պատվաստակալներ	GF677 (P. persica x P. davidiana) Cadaman (P. persica x P. davidiana) Isthara ([P. cerasifera x P. salicina] x [P. cerasifera x P. persica]) Garnem (P. amygdalus x P. persica) Adesoto (Puebla de Soto) (P. insititia) Barrier 1® (P. persica x P. davidiana) Penta® (P. domestica) S. Giuliano GF 655/2 (selection of P. insititia) Tetra® (P. domestica)
Տանձենի	Պատվաստակալներ	Farold® 40 Daygon and Farold... 69 Daymir (Old Home x Farmingdale) Fox 9 and Fox 11 (Volpina) Pyrodwarf® (Old Home x Buona Luisa d'Avranches) OHxF 87 (P. communis 'Old Home' x 'Farmingdale') OHxF 97 (P. communis 'Old Home' x 'Farmingdale') (USA) OHxF 513 (P. communis 'Old Home' x 'Farmingdale') Pyro™ 2-33 (P. communis 'Old Home' x 'Bonne Louise') OHxF 69 (P. communis)

Պտղատու բույսերի սերմերի ծլունակության որոշարկման եղանակները, սերմերի ստրատիֆիկացում (ավազածածկում), սերմերի ցանքի չափաքանակները (նորմերը)

Պտղատու բույսերի սերմերի ծլունակության որոշարկման եղանակները

Պտղատու բույսերի սերմերը լայնորեն կիրառվում են ինչպես տնկարանային տնտեսություններում՝ սերմնային ծագում ունեցող պատվաստակալմերի արտադրության համար, այնպես էլ՝ ընտրասերման (սելեկցիոն) աշխատանքներում։ Գոյություն ունի սերմերի որակը բնութագրող երկու հիմնական չափանիշ՝ մաքրություն եւ ծլունակություն։ Ընդ որում՝ պտղատեսակների մթերված եւ պահեստավորված սերմերը պետք է ունենան 85-99 % մաքրություն եւ առնվազն 25-40 % ծլունակություն։

Քանի որ սերմերի ծլունակության որոշարկման բոլոր եղանակները տեսական են եւ աշխատատար, ապա հիմնականում բավարարվում են դրանց կենսունակության ցուցանիշների տվյալներով, որոնք մի քանի տոկոսով ավելին են, քան այդ սերմերի իրական ծլունակությունը։ Սերմերի կենսունակության որոշարկման համար գոյություն ունի երկու հիմնական եղանակ։

- արտաքին հատկանիշների ուսումնասիրություն (օրգանոլեպտիկ եղանակ),
- սերմերի հյուսվածքների հետազոտություն լաբորատոր պայմաններում (քիմիական եղանակ):

Արտաքին հատկանիշների ուսումնասիրության ընթացքում դիտարկվում են սերմերի համը, հոտը, ձեւը, գույնը եւ փայլը։ Սերմերի յուրաքանչյուր խմբաքանակից առանձնացվում է 100 սերմ պարու-

նակող նմուշ: Այդ սերմերը մաքրում են կորիզից, կեղեւից, կորիզավոր-ների դեպքում հեռացնում են նաև սերմնամաշկի (էնդոկարպիտմի) կարծր շերտը: Սովորաբար կենսունակ եւ առողջ սերմերն ունենում են փայլուն-սպիտակավուն երանգ, առանց ոչ բնորոշ համի եւ թղթի վրա տրորելիս բողնում են յուղային հետքը: Ծելու ոչ պիտանի, կենսունակությունը կորցրած սերմերը լինում են մանր, տձեւ, չմշակված, խամրած, ունենում են դեղնասպիտակավուն սաղմ, անդուր՝ ոչ բոնորոշ համ եւ հոտ, ինչպես նաև տրորելիս փշրկում են: Նման եղանակի շնորհիվ կարելի է մոտավոր պատկերացում կազմել սերմերի կենսունակության վերաբերյալ:

Առավել ճշգրիտ տվյալներ ստանալու համար կիրառվում է լաբորատոր հետազոտության եղանակը, որի ընթացքում, հատուկ ներկերով ներկելու միջոցով, տարրերակվում են կենսունակ եւ ոչ կենսունակ սերմերը: Սերմերի յուրաքանչյուր խմբաքանակից առանձնացվում է 100-ական սերմ պարունակող 3 նմուշ: Նախորդ եղանակի պես մաքրած սերմերը թրջում են 1-2 օր տեսողությամբ: Թրջված սերմերը դնում թասերի մեջ եւ դրանց վրա ավելացվում է ինդիգոկարմինի 0,1-0,2%-ոց ջրային լուծույթ եւ բողնվում 3-4 ժամ, որից հետո թափում են լուծույթը եւ սերմերը լվանում ջրով: Այս եղանակի հությունն այն է, որ կենսունակ եւ առողջ սերմերի հյուսվածքները ինդիգոկարմինի լուծույթից չեն ներկվում, իսկ ոչ կենսունակները ստանում են կապույտ գույն: Յուրաքանչյուր նմուշում հաշվում են ներկված եւ չներկված սերմերի քանակը եւ որոշում տվյալ խմբաքանակի սերմերի միջին կենսունակության եւ ծլունակության տոկոսը:

Սերմերի ստրատիֆիկացում (ավագածածկում, հետքերքահավաքային հասունացում)

Ստրատիֆիկացումը գործընթաց է, որի ընթացքում սերմերն անցնում են հետքերքահավաքային հասունացման շրջան եւ ներարկվելով ուշ աշնան եւ վաղ գարնան եղանակային պայմանների ազդեցությանը (ինչպես ցածր ջերմաստիճանների, այնպես էլ թթվածնի եւ քարձու խոնավության պայմաններում)` նախապատրաստվում են ծլեցմանը:

Սերմերի հետքերքահավաքային հասունացման համար անհրաժեշտ են օդափոխության, խոնավության եւ ջերմության որոշակի պայմաններ: Պահանջվող պայմանների խախտման դեպքում ստրատիֆիկացման գործընթացը տեղի չի ունենում եւ տվյալ տարրում սերմերը չեն ծլում:

Հետքերքահավաքային հասունացման ընթացքում սերմերը որոշակի քանակությամբ ջուր եւ օդ (թթվածին) են կլանում, հարդյունս որի կորիզները, կեղեւները, մաշկը եւ թաղանքը փափկում են, արագանում է դրանց նյութափոխանակությունը, եւ սերմերն ուռչում են: Տեղի ունեցող փոփոխությունների շնորհիվ նպաստավոր պայմաններ են ստեղծվում սերմերում սաղմի բջիջների բազմացման (կիսվելու եւ շատանալու) եւ ծլեցուն ակտիվացնելու համար:

Բնական պայմաններում ծառերից բափված սերմերի ծլելուն նախապատրաստումն ընթանում է տերեւների մնացորդների եւ խոտային ծածկույթի տակ, որտեղ առկա են վերը նշված բոլոր անհրաժեշտ պայմանները: Ստրատիֆիկացման ընթացքում այդ պայմաններն ապահովվում են արհեստական ճանապարհով: Ընդ որում «ստրատիֆիկացում» եզրույթն առաջացել է հունարեն «stratum» - «շերտ» բառից եւ «ստրատիֆիկացիա» բարգմանաբար նշանակում է «շերտավորում»: Այս դեպքում սերմերը շերտ առ շերտ ծածկվում են խոնավ ավազով եւ որոշակի ժամանակ պահպում ցածր, բայց դրական շերմաստիճանների պայմաններում:

Ստրատիֆիկացման համար որպես ծածկանյութ կարելի է օգտագործել ինչպես գետի լվացված ավազ, այնպես էլ տորֆ կամ լվացված հանքային ավազներ՝ կերամզիտ, պերլիտ, վերմիկուլիտ: Ամեն դեպքում կարենոր է ապահովել սերմակույտի օդարափանցելիությունը՝ պարբերաբար խառնելով այն:

Կարենորագույն պայման է համապատասխան ջերմության ապահովումը: Շատ պտղատեսակների սերմերի համար ստրատիֆիկացման համար լավագույն ջերմաստիճան համարվում է $+2\text{--}6^{\circ}\text{C}$, ընդունելի է մինչեւ $+1\text{--}10^{\circ}\text{C}$ լրացնցը: Հարկ է նշել, որ չափից դուրս բարձր ($+12\text{--}20^{\circ}\text{C}$) եւ բացասական ($-1\text{--}2^{\circ}\text{C}$) ջերմաստիճանային պայմանները կարող են ընդհատել սերմերի հետքերքահավաքային հասունացման գործընթացը, իսկ ավելի ցածր բացասական, սառնամանիքային ջերմաստիճանները ($-10\text{--}20^{\circ}\text{C}$) դառնալ սերմերի մահացման պատճառ:

ՀՀ պայմաններում աշնանը ցանվող մի շարք պտղատեսակների (խնձորենի, տանձենի, ծիրանենի, դեղձենի եւ այլն) սերմերը կարելի է նախօրոք չստրատիֆիկացնել, քանի որ դրանք հասունացման գործընթացը կարող են անցնել դաշտային պայմաններում՝ հողում եւ ձյան շերտի տակ: Այնինչ, զարնանը ցանվող սերմերը անհրաժեշտ է նախօրոք ենթարկել ստրատիֆիկացման:

Ընդ որում՝ պտղահատապտղատու տարբեր մշակարույսերի համար այս գործընթացի տեսողությունը խիստ տարբեր է:

Հետքերքահավաքային հասունացման երկար շրջան ունեցող պտղատեսակների (կեռասենի, բալենի՝ 150-180 օր) սերմերը մթերելուց հետո անհրաժեշտ է որոշակի ժամանակահատված ենթարկել ստրատիֆիկացման, այնուհետեւ կատարել ցանք, այն հաշվով, որ հասունացման հետագա գործընթացն ընթանա դաշտային պայմաններում:

Ստրատիֆիկացման ընթացքում մեկ ծավալ սերմը հարկավոր է շերտավորել 3 ծավալ ավազի կամ տորֆի հետ և խոնավացնել: Հարկավոր է հաշվի առնել, որ շերտավորված սերմակույտերի հաստությունը տարբեր է հնդավոր և կորիզավոր պտղատեսակների համար: Այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 25-30 և 50-60 սմ: Ավելի մեծ կույտերի դեպքում կարող է առաջանալ սերմների շնչահեղձման, գերտաքացման և մահացման վտանգ:

Ստրատիֆիկացման դրված սերմակույտերը պարբերաբար պետք է ենթարկվեն դիտարկումների, որոնց ընթացքում պետք է կանոնավորվեն և ջերմային և խոնավության և օդափոխության պայմանները: Եթե ձմռան ընթացքում ստրատիֆիկացման դրված սերմակույտերում նկատվում է ժամանակից շուտ տեղի ունեցող ծլման գործընթաց, ապա խորհուրդ է տրվում նվազեցնել կույտի ջերմաստիճանը՝ արկդերը նկուղներից դուրս հանելով կամ կույտերը բացելով:

Ստրատիֆիկացման հաջող ավարտն է՝ սերմերի ծլարմատի (գլխավոր արմատի) զանգվածային երեւալը, որից հետո դրանցով կարելի է ցանք կատարել: Սակայն ցանքի համար անթարենապաստ պայմաններում կարելի է ձգձգել սերմից ծլարմատի դուրս գալը՝ ցածրացնելով ջերմաստիճանը կամ ավելացնելով օդափոխությունը:

Ստորեւ ներկայացվում են մի շարք պտղատեսակների սերմերի հետքերքահավաքային հասունացման (ստրատիֆիկացման) մոտավոր ժամկետները:

Աղյուսակ 2.

Մշակաբույսը Ստրատիֆիկացման համար անհրաժեշտ ժամկետը, օր

Ծիրանենի	100
Սալորենի	120-180
Դեղձենի	100-120
Խնձորենի	90-100
Սերկեւիլ	50-80
Տանձենի	75-100
Ալոճենի (սպինի)	120-180
Բալենի, կեռասենի	150-180
Ընկուկենի	50-80
Նշենի	50-70

Աչքապատվաստի եւ կտրոնապատվաստի կատարման տեխնիկան

Այգեգործությունում պատվաստն իրենից ներկայացնում է բույսերի ոչ յուրարմատ բազմացման եղանակ, որը պտղատուների բազմացման հիմնական եղանակն է: Պատվաստման միջոցով որեւէ մշակաբույսի կամ բուսաձելի (պատվաստացու) կտրված մի հատվածը տեղափոխվում եւ համատեղվում է մեկ այլ բույսի (պատվաստակալ) կտրվածքի մեջ ու ժամանակի ընթացքում սերտածելով կազմում է մեկ ամբողջական մարմին (օրգանիզմ): Գոյություն ունեցող բազմաբիվ ձեւերից առավել տարածված են եւ գործնական նշանակություն ունեն աչքապատվաստը եւ կտրոնապատվաստը (ճյուղապատվաստը):

Աչքապատվաստը պատվաստման ամենապարզ եւ հուսալի ձեւերից մեկն է: Այն պատվաստի կատարման առավել հեշտ ու արագ ձեւն է եւ կատարողից մեծ վարպետություն չի պահանջում: Կիրառվում է պտղատու մշակաբույսերի մեծամասնության, ինչպես նաև որոշ գեղազարդային (դեկորատիվ) բույսերի բազմացման ընթացքում: Աչքապատվաստի կատարման դեպքում մեկ բույսի բուսաճային (վեգետատիվ) միայն մեկ բողբոջը պատվաստվում է պատվաստակալի վրա եւ աճելով վերականգնում է պատվաստացու բույսի մարմինը:

Այդ գործընթացը կատարվում է 1-2 տարեկան, 0,6-1,0 սմ հաստությամբ բույսերի շիվերի վրա, սերմնաբույսերի արմատավզիկից 5-10 սմ բարձրությամբ:

Աչքապատվաստի կատարման ժամկետից կախված, պատվաստը կարող է լինել՝

- աճող բողբոջներով (բացվող աչքերով) եւ
- ձմեռող բողբոջներով (քնած աչքերով):

Աչքապատվաստը կատարվում է գարնանը (**բացվող, աճող աչքերով**), կամ՝ ամռան երկրորդ կեսին (**քնած աչքերով**):

Պտղատեսակների մեծամասնության դեպքում բացվող աչքերով աչքապատվաստը կատարվում է վաղ գարնանը, ցանկալի է՝ ձնիա-

լից մինչեւ տվյալ տեսակի ծաղկման աճափուղը, քնած աչքերով պատվաստը կիրառվում է Արարատյան դաշտում, հովիսի երկրորդ կեսից մինչեւ սեպտեմբերի 20-ը, իսկ նախալեռնային գոտում՝ օգոստոսի սկզբից մինչեւ սեպտեմբերի 10-ը: Այս աչքապատվաստի ճիշտ ժամկետը որոշելու համար կարենոր է ընտրել այնպիսի ժամանակահատված, որ կատարում է հետո պատվաստված բույսերն ապահովված լինեն առնվազն 60 արեւային օրերով: Այդ դեպքում բարձր է լինում պատվաստի կաշողականությունը:

Ամեն դեպքում՝ աչքապատվաստի հաջողության կարեւրագույն հանգամանքն է բույսերի ակտիվ հյութաշարժը եւ պատվաստակալի կեղեւի լավ առաճնանալը քնափայտից (կեղեւի բացվելը, անջատվելը) (Ակ. 8): Եթե ինչ-ինչ պատճառներով հնարավոր չէ պահպանել լավագույն ժամկետը, ապա առավել ցանկալի է պատվաստն անել նախատեսված ժամկետից շուտ, քանի որ ուշացված պատվաստների դեպքում ավելի քոյլ արդյունքներ են արձանագրվում: Աշխատանքների կատարման ժամկետների տեսակետից առավել նպատակահարմար է սկզբից պատվաստել ավելի արագած կորիզավոր, այնուհետեւ՝ հնդավոր պտղատեսակները:

Առավել հաճախ են կիրառում «քնած աչքերով» աչքապատվաստը, որը կատարում են միամյա, երկամյա բույսերի կամ ծառի շիվերի վրա՝ օգսոտու - սեպտեմբեր ժամանակահատվածում:

Պատվատակալի վրա սուր դանակով կատարում են խաչաձեւ կամ T-աձեւ կտրվածք եւ որպես պատվաստացու օգտագործում միամյա, հասունացած, 4-6 մմ-ից ոչ պակաս հաստություն ունեցող շիվերը: Շիվերի միջին հատվածից ընտրվում են 1-2,5 սմ երկարության «վահանիկ»՝ կեղեւի ու քնափայտի բարակ շերտի ու տերեւակոքունի մնացորդի հետ միասին անջատվում է «աչքը» (բողբոջը), որը տեղափորում են պատվաստակալի T-աձեւ կտրվածքի բացված կեղեւի փեղկերի մեջ: Այնուհետեւ՝ ամուր կապում են կաշուն շերտ չունեցող ժապավենով, քաղանթով, ճիլոպով կամ հաստ փափուկ թելով:

Աճող աչքով պատվաստը կատարում են գարնանային հյութաշարժի սկզբելուց հետո: Պատվաստված բողբոջը սկսում է աճել ամռան սկզբին՝ երբ այն սերտաճում է պատվաստակալի հետ:




Նկար 8. Աչքապատվաստի կատարում (կեղեւի անջատում, «փեղկերի» բացում)

Պատվաստի այս մոտեցումը զվարապես կիրառվում է հարավային կամ ցածրադիր շրջաններում (որտեղ բուսածի շրջանը երկար է), քանի որ կարծ բուսածի պայմաններում առաջացած նոր շիվերը հաճախ ձմեռնան փոլ են անցնում ոչ լիարժեք հասունացած բնափայտով, որի հետեւանքով ցրտահարվում են:

Աչքապատվաստի կատարումից առնվազն 1,5-2 ամսվա ընթացքում պատվաստակալների դաշտը ջրվում, խնամվում է (ազատվում է մոլախոտերից), հողով բուկլից է արվում: Պատվաստից 2 շաբաթ առաջ բուկլիցը բացվում է՝ հողը հետ է տրվում: Պատվաստակալները ջրվում են նաև պատվաստից 1-2 օր առաջ, իսկ պատվաստի օրը խոնավ շորով մաքրվում են բույսերի բները: Պատվաստը սկսվում է կեղեւի խաչաձեւ կամ T-աձեւ կտրվածքի կատարումով, որի մեջ տեղադրվում է պատվաստացու կտրոնից անջատած վահանիկը: Պատվաստի կատարումից 7-10 օր հետո ստուգվում է պատվաստի կայչողականությունը: Եթե մատով թույլ հպվելիս պատվաստացուի տերեւակորունի մնացորդը պոկվում է, իսկ աչքը առողջ է եւ կանաչ գույնի, ապա պատվաստը սկսել է կայչել: Եթե պատվաստը չի կայել, ապա պատվաստակալի վրա կատարվում է կրկնապատվաստ (վերապատվաստ) չհաջողված պատվաստի կետի հակառակ կողմից, բայց մի քանի ամ վերեւ կամ ներքեւ:

Առաջին ստուգումից 10-15 օր հետո կատարվում է երկրորդը, երբ ստուգվում է աչքի կանաչ ու առողջ լինելը: Իսկ վերջնական ստուգումը կատարվում է գարնանը, եթե պատվաստացու աչքը ուշում է, նշանակում է պատվաստը կայել է եւ աճելու է: Այս դեպքում հեռացվում է պատվաստակալի վերին ցողունային մասը՝ պատվաստի կետից 2 4 սանտիմետր բարձ: Եթե պատվաստն անհաջող է ստացվել եւ չի աճում, պատվաստակալի վրա կատարվում է վերապատվաստ:

Գոյություն ունեն աչքապատվաստի մի քանի ձեւեր, որոնք միմյանցից տարբերվում են պատվաստակալի վրա արվող կեղեւի կտրվածքի եւ ճնշքի, ինչպես նաև պատվաստացուից առանձնացվող բողոքի կտրվածքի ձևով (նկ. 9):



Նկար 9. Աչքապատվաստի ձեւերը


Նկարի «Ա» հատվածում ներկայացված է խաչաձեւ կամ T-աձեւ աչքապատվաստը՝ 1- Տ-աձեւ կտրվածքը պատվաստակալի վրա, 2- պատվաստացու վահանիկը եւ 3-կտրվածքի մեջ տեղադրված պատվաստացուն:

«Բ» հատվածում ներկայացված է դնումով կամ լեզվակով աչքապատվաստը՝ 1-պատվաստակալի վրա կատարված լեզվակով հարք կտրվածքը, 2-ներքեւում միակողմանի սրված պատվաստացու վահանիկը եւ 3-պատվաստակալի կտրվածքի մեջ տեղադրված պատվաստացու վահանիկը:

«Գ» հատվածում ներկայացված է օղակաձեւ աչքապատվաստը՝ 1-պատվաստակալի վրա կատարված կեղենի օղակաձեւ կտրվածքը, 2-պատվաստացուի օղակաձեւ վահանիկը՝ առանց բնափայտի եւ 3-պատվաստացու վահանիկը՝ տեղադրված պատվաստակալի վրա:

Կտրոնապատվաստը կատարվում է պատվաստացու կտրոնի պատվաստումով մեկ այլ բույսի ճյուղի, շիվի կամ կտրոնի վրա (տեղադրումով եւ ամրացումով): Կատարվում է առավելապես վաղ գարնանը՝ նախքան բողբոջների ուռչելը, սակայն կարելի է անել նաև բուսաճային այլ ժամանակահատվածներում եւ նույնիսկ հանգստի շրջանում: Որպես պատվաստակալ կարող են ծառայել առնվազն 1,2 սմ տրամագծով ճյուղերը կամ նաև այլ հաստության բունք: Որպես պատվաստացու օգտագործվում են նախօրոք մթերված կտրոնները, որոնք ունեն լավ զարգացած 2-4 բողբոջներ: Գոյություն ունեն կտրոնապատվաստի հետեւյալ ձեւերը՝

- հասարակ եւ բարելավված պատվաստ (նկ. 10 եւ 11),
- ճեղքապատվաստ (նկ. 12),
- կեղենի տակ պատվաստ (նկ. 13),
- կողապատվաստ եւ դնովի պատվաստ (նկ. 14),
- կամրջապատվաստ (նկ. 15):




Նկար 10.Հասարակ կամ պարկ եւ լեզվակով կամ բարելավված կտրոնապատվաստ

Ա. Հասարակ կտրոնապատվաստ. 1-պատվաստակալ,
2-պատվաստացու կտրոն, 3, 4-պատվաստը՝ ավարտուն տեսքով:

Բ. Բարելավված կտրոնապատվաստ. 1- պատվաստակալ,
2-պատվաստացու կտրոն, 3, 4-պատվաստը՝ ավարտուն տեսքով:




Նկար 11. Լեզվակի պատրաստում բարելավված կտրոնապատվաստի համար



Նկար 12. ճեղքապատվաստ կամ լիաձեղք պատվաստ.
1-պատվաստակալի ճեղքումը,
2, 3-երկկողմանի սրած պատվաստացու կտրոնները,
4-կտրոնները՝ տեղադրված ճեղքի մեջ


Հասարակ կտրոնապատվաստի դեպքում պատվաստակալը եւ պատվաստացուն սովորաբար լինում են նույն հաստության: Երկուսն էլ կտրում են սուր դանակով, պատվաստացուն դնում պատվաստակալի վրա այնպես, որ երկուսի կամբիումի շերտերը բռնոր կետերում համընկնեն: Բարելավված կամ լեզվակով կտրոնապատվաստի դեպքում, շեղակի կտրվածքների վրա «լեզվակ» են հանում այնպես, որ պատվաստացուի եւ պատվաստակալի կտրվածքները համապեճի լինեն միմյանց նկատմամբ: Լեզվակը պատրաստում են՝ ճեղքելով կտրվածքի կենտրոնից վեր՝ մակերեսի երկարության 2/3-ի չափով (նկ. 11): Լեզվակներն իրար են հազցնում, կտրվածքների բաց մնացող նակերեսը ծածկում են այգու մածիկով:

Ենդքապատվաստ կամ լիաձեղք պատվաստը կատարում են հաստ ճյուղերի վրա: Առաջին հերթին կտրում են պատվաստակալ հանդիսացող ճյուղն այն հատվածում, որտեղ պետք է կատարվի պատվաստը, այնուհետեւ դանակով ճեղքում են 1-4 տեղից: Պատվաստացու կտրոնի ծայրը 2 կողմից սրում են սեպաձեւ եւ այն տեղակորում ճեղքի մեջ, ապա կապում են եւ մածիկ քսում:




Նկար 13. Կեղեւի տակ պատվաստ, 1-միակողմանի սրած պատվաստացու կտրոն,
2-կեղեւի կիսաբար կտրվածքով պատվաստակալ, 3-պատվաստը ավարտուն
տեսքով: Լուսանկարում՝ աճող պատվաստաշիկը

Պատվաստ կեղեւի տակ կատարում են հաստ ճյուղի վրա՝ պատվաստակալի լրիվ հյութաշարժի ժամանակ: Առաջին հերթին հեռացվում են պատվաստակալի ճյուղերը, իսկ մնացած մասի վրա անում են 2 սմ երկարությամբ կտրվածք: Կտրոնի ներքին ծայրը շեղակի կտրում են 2 սմ երկարությամբ, կտրվածքի հակառակ կողմից հեռացնում են կեղեւը, եւ կտրոնի ծայրը տեղափորում պատվաստակալի կեղեւի տակ: Այնուհետև պատվաստի տեղը ծածկում այգու մածիկով եւ ամուր կապում են: Հաստ ճյուղերի վրա կարելի է պատվաստել 2-4 եւ ավելի կտրոն:



Նկար 14. Ա. Կողապատվաստ. 1-պատվաստակալ, 2-պատվաստացու կտրոն,
3- Եպվակով հարթ կտրվածք, 4- պատվաստը՝ պարտված տեսքով:
Բ. Դնովի պատվաստ. 1-պատվաստակալ, 2- պատվաստացու կտրոն,
3, 4-պատվաստ՝ ավարտուն տեսքով:



Նկար 15. Կամրջապատվաստ կամ պատվաստ կամրջակով. 1-Վնասված բուն,
2-պատվաստացու կտրոններ, 3-պատվաստը՝ պարտված տեսքով

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ ի տարբերություն կտրոնապատվաստի՝ աչքապատվաստն ավելի արդյունավետ է, քանի որ՝

- պատվաստակալի վրա առաջանում են համեմատարար փոքր վերքեր,
- բարձր է լինում պատվաստի կպչողականությունը,
- աչքապատվաստ կատարելն ավելի դյուրին է,
- աչքապատվաստի համար ավելի քիչ քանակի պատվաստացու կտրոններ են օգտագործվում:

Պտղատու այգիների եւ տնկարկների տիպերը, մշակաձեւերի ընտրությունը, տեղաբաշխումը եւ նախագծման սկզբունքները տարբեր պայմաններում

Պտղահատապտղատու տնկարկների շահագործման երկարակեցությունը, ինչպես նաև դրանց տնտեսական արդյունավետությունը գլխավորապես պայմանավորված են այգետնկման ընթացքում կայացված որոշումներով: Մասնավորապես՝ կարեւոր են այգու տարածքի, դիրքադրության, տնկարկի տիպի, պտղատեսակի, սաղարքի ծեւավորման համակարգի, բուսաձեւերի ընտրությունը, դրանց ճիշտ տեղաբաշխումը եւ տնկման գործընթացը: Հատկանշական է, որ բազմամյա տնկարկների հիմնումը պահանջում է ֆինանսական եւ մարդկային մեծ ռեսուրսներ, սակայն եկամուտ ապահովում է տնկման պահից մի քանի տարի հետո:

Տնկարկների տիպերի, պտղատեսակների, բուսաձեւերի, ինչպես նաև տնկման բանաձեւերի ընտրությունը կախված է ինչպես շրջակա միջավայրի պայմաններից, այնպես էլ շուկայի պահանջից եւ այգերուծի հմտություններից:

Յուրաքանչյուր պտղատեսակին եւ բուսաձեւին բնորոշ է արտաքին միջավայրի պայմաններին հարմարվողականության որոշակի աստիճան, որը կարող է մասնակիորեն փոփոխվել այգիների կառուցվածքի, խտության եւ տնկարկների կառավարման տարբեր մուտքումներ կիրառելու դեպքում:

Տեսակների եւ բուսաձեւերի ընտրության առավել խոր ուսումնասիրությունների կարիք կա ոչ ավանդական պտղաբուծական շրջաններում, որոնց համար ոչ միշտ են հասանելի հիդրոօդերևութարանական տվյալների բազմամյա վերլուծության արդյունքները, հողերի մեխանիկական կազմի, ինչպես նաև ազդրիմիական հետազոտությունների տվյալները:

ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՏԻՎԱԵՐԸ

Արդյունաբերական պտղաբուծության վարման տեսակետից հիմնվող տնկարկները պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի տիպերի: ՀՀ պայմաններում բավական տարածված են այսպես կոչված «ավանդական» տնկարկները, որոնք աշքի են ընկնում բարձրաբուն խոշոր ծառերով, երկարակեցությամբ, բերքատվության մեկնարկի ուշ ժամկետով, ինչպես նաև՝ բերքատվության համեմատարար ցածր մակարդակով: Նման տնկարկները հիմնականում հիմնվում են սերմնաբույսերի վրա պատվաստված տնկիներով: Մեկ հեկտարի հաշվով տնկված բույսերի թվաքանակը միջին հաշվով տատանվում է 100-500-ի սահմաններում (նկ. 16.): «ԱՎԱՆԴԱԿԱՆ» տնկարկներ կարելի է հիմնել նաև բուսաճային եղանակով բազմացված չպատվաստված տնկիներով: Օրինակ՝ թգենու ավանդական «հիմ» այգիները Մեղրիի տարածաշրջանի պայմաններում, որտեղ մեկ հեկտարի հաշվով մշակվում է 330-400 ծառ, իսկ ծառերն ունեն բավական մեծ չափսեր: Հարկ է նշել, որ նոր տնկվող այգիներում ասուավելապես կիրառվում են ավելի փոքր սննման մակերեսներ, որի շնորհիվ մեկ հեկտարի վրա աճեցվող ծառերի թվաքանակը հասնում է 600-ի: «ԱՎԱՆԴԱԿԱՆ» տնկարկներում հաճախ կիրառվում են տնկման հետեւյալ բանաձեւեր՝ 10x10 մ, 10x8 մ, 8x8 մ, 6x5 մ, 6x4 մ, 5x5 մ, 5x4 մ եւ այլն:

Ժամանակակից արդյունաբերական պտղաբուծության բնագավառում առավել տարածված են «խիտ» տնկարկները (ինտենսիվ տնկարկներ), որոնք աշքի են ընկնում ցածրած (թույլ աճեցողությամբ) եւ բավական խիտ տնկված ծառերով: Միջին հաշվով, մեկ հեկտարի վրա աճեցվում է 1000-2500 եւ ավելի ծառ, որոնք ստացվում են բացառապես «թզուկային», բուսաճային եղանակով բազմացված պատվաստակալների



Նկար 16. Ծիրանենու ավանդական տնկարկ



Նկար 17. Ժորենու (արեւելյան խուրմա) ավանդական տնկարկ

Վրա պատվաստված տնկիներով: Այսպիսի տնկարկներն աչքի են ընկնում բարձր բերաբառվությամբ, բերքի արագ անցնելու ժամանակահատվածով (տնկումից հետո երկրորդ-երրորդ տարում) եւ մշակության մերենայացման բարձր մակարդակով: «Խիս» տնկարկներում կիրառվում են հետեւյալ տնկման բանաձևեր՝ $4 \times 2,5$ մ, 4×2 մ, $4 \times 1,5$ մ, 4×1 մ, 3×2 մ, $3 \times 1,5$ մ եւ այլն:



Նկար 18. Դեղճենու խիս տնկարկ



Նկար 19. Խնձորենու խիս տնկարկ

Զարգացած երկրներում հաճախ կիրառվում է «գերխիտ» տնկարկների հիմնման տեխնոլոգիան, որի հիմքում ընկած է գերցածրած պատվաստակաների օգտագործումը: Այդ դեպքում մեկ հեկտարի վրա աճեցվող ծառերի թիվը կարող է հասնել $4000-5000$ -ի հազարի (Երրեմն՝ ավելին): «Գերխիտ» տնկարկները հնարավորություն են տալիս ավտոմատացնել մշակության աշխատանքների հիմնական մասը, բերք ստանալ նույնիսկ տնկման տարում եւ լինել առավելագույնս ճկուն շուկայի փոփոխական պահանջների նկատմամբ:

Հարկ է նշել, որ գոյություն չունի

ճշգրիտ սահման, որը հստակորեն բաժանում է տնկարկների տիպերն ըստ խտության աստիճանի:



Նկար 20. Կեռասենու գերխիտ տնկարկ
<https://images.app.goo.gl/xhoHsDfe67tuJKvq7>

Վերջին տասնամյակների ընթացքում ամբողջ աշխարհում աճում են պաշտպանված գրունտի պայմաններում բազմամյա տնկարկների տարածությունները (նկ. 21.): «Պաշտպանված գրունտի պտղատու տնկարկները» հնարավորություն են տալիս արտադրության ընթացքում նվազեցնել արտաքին պայմանների անցանկալի ներգրածությունը եւ բույսերի աճի, զարգացման ու բերքատվության համար ապահովել առավել

բարենպաստ պայմաններ: Այս ամենի շնորհիվ արագանում կամ ընդարձակվում է պտղատեսակների քերքի ստացման ժամանակահատվածը: Պաշտպանված գրունտի պայմաններում հիմնականում կիրառվում են ցածր աճեցողություն ունեցող ծառատեսակներ եւ թփեր, որոնց մշակությունը ավելի հեշտ է իրականացնել ջերմատան պայմաններում: Հաճախակի կիրառվում է տնկման թաղարային եղանակը՝ դույլերի, ծաղկամանների, տակառների մեջ, որը հնարավորություն է տալիս ըստ անհրաժեշտության տեղափոխել դրանք մեկ միջավայրից մյուսը:

Բուսածեւերի ընտրությունը

Այգու հիմնման գործընթացում չափազանց պատասխանատու միջոցառում է պտղատեսակների եւ բուսածեւերի ընտրությունը: Դրանց կազմը որոշվում է այն տրամաբանությամբ, որ վերջիններն իրենց կենսաբանական առանձնահատկություններով համապատասխանեն ընտրված տարածքի հողակլիմայական պայմաններին եւ բավարարեն շուկայի պահանջները: Հարկ է նշել, որ շուկայի գործոնը չափազանց փոփոխական է եւ ֆերմերներին ստիպում է լինել առավելագույն ճկուն:

Այգետնկումից առաջ հարկավոր է ունենալ բոլոր տնկվող բուսածեւերի տնկման հատակագիծը եւ այզու հիմնումն իրականացնել այդ նախագծին խիստ համապատասխան:

Նախ եւ առաջ, հարկավոր է բուսածեւերը խմբավորել ըստ հասունացման ժամկետների, եւ վաղահաս բուսածեւերը տնկել մեկ հոդամասում, միջահաս կամ ուշահասները՝ այլ հոդամասերում: Նման մոտեցումը թույլ է տալիս ոչ միայն հեշտացնել այզու մշակության աշխատանքները, այլև արդյունավետ կերպով կազմակերպել թերքահավաքի եւ քերքի տեղափոխման գործընթացները: Ըստ ծաղկող



Նկար 21. Բազմամյա տնկարկ պաշտպանված գրունտի պայմաններում

բուսածեները չպետք է տնկել արեւահայաց լանջերում, որովհետեւ այդպիսի բույսերը ավելի շուտ են ծաղկում եւ կարող են ենթարկվել վաղ գարնանային ցրտահարության: Դրանից խուսափելու համար շուտ ծաղկող բույսերը հարկավոր է տնկել ստվերոտ լանջերում:

Չափազանց կարենոր է բուսածեների ճիշտ տեղաբաշխումը՝ լի-արթեք փոշոտում իրականացնելու տեսանկյունից: Չնայած այն հանգամանքին, որ պտղատեսակների մի մասն ինքնափոշոտվող է (օրինակ՝ դեղձենին, նշենին, հատապտուղները, նոնենին), խաչածեւ փոշոտում ապահովելու դեպքում տալիս են ավելի բարձր եւ որակյալ բերք: Յուրաքանչյուր բուսածեւ ունի իր «ընտրյալ» փոշոտիչը: Փոշոտվող եւ փոշոտիչ բուսածեներն այզում պետք է դասավորել շարքերով, այնպես, որ դա նպաստի խաչածեւ փոշոտման լավ կատարմանը:

Սովորաբար 5-6, երբեմն էլ 7-8 շարք տնկում են հիմնական փոշոտվողները, իսկ հաջորդ՝ 2-3 շարքերում՝ փոշոտիչ բուսածեները:

Ընդհանուր առմամբ, փոշոտիչ եւ փոշոտվող բուսածեները պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին:

- Փոշոտվողը եւ փոշոտիչը պետք է միաժամանակ ծաղկեն, եւ ծաղկի առանձին օրգանների հասունացման ժամկետները համընկնեն:
- Փոշոտվողը եւ փոշոտիչը բերքատվության մեջ պետք է նտնեն միաժամանակ (նույն տարիքում):
- Փոշոտվող եւ փոշոտիչ բուսածեները պետք է ունենան կյանքի միեւնույն տեսողությունը:
- Փոշոտիչը պետք է լինի բարձրերքատու եւ համապատասխանի տվյալ գոտու համար ընդունված չափորոշիչներին:
- Փոշոտիչը եւ փոշոտվողը պետք է փոխադարձաբար իրար փոշոտեն, հակառակ դեպքում՝ փոշոտիչ ծառերը բերք չեն տա եւ ավելորդ տարածություն կզբաղեցնեն:

Տեղաբաշխումը եւ նախագծման սկզբունքները տարբեր պայմաններում

Տնկարկների նախագծումն առաջին հերթին նպատակ է հետապնդում բույսերը տեղաբաշխել այնպես, որ՝

- արդյունավետ օգտագործվի մշակվող հողատարածքը,
- առավելագույնս նպատակահարմար կերպով օգտագործվեն

բնական ռեսուրսները՝ ջուրը, լույսը, ջերմաստիճանը,

- նվազի անցանկալի բնական երեւութերի բացասական ազդեցությունը (քամիներ, հողային էրոզիա և այլն),
- առավել արդյունավետ իրականացվեն այգու մշակության աշխատանքները:

Այս առումով շատ կարեւոր է տնկարկի խտության և տնկման քանածելի ճիշտ ընտրությունը: Հաշվի առնելով պատվաստակալի աճի հզորությունը, ծառերի տնկման ընթացքում հարկավոր է սահմանել միջշարային և միջծառային այնպիսի հեռավորություն, որը կնպաստի բույսերի կողմից արեգակնային ճառագայթների արդյունավետ յուրացմանը, ինչպես նաև կրացառի սաղարթների՝ միմյանց խիստ ստվերածածկումը:

Մեր պայմաններում շարքերի ուղղությունը հնարավորության դեպքում հիմնում են հյուսիսից հարավ, որն ապահովում է ծառերի սաղարթների առավելագույն լուսավորումն օրվա ընթացքում:

Ծառերի և թփերի դասավորման կարգը գլխավորապես պայմանավորվում է տեղանքի դիրքով և ռելիեֆով: Ամեն դեպքում բույսերը տարածության մեջ պետք է դասավորել այնպես, որ արդյունավետ օգտագործվի յուրաքանչյուր ծառին բաժին ընկնող հողատարածքը, առավել նպատակահարմար լինի ծառերի աճի և զարգացման համար, ինչպես նաև նպաստի տնկարկի մշակության և բերքահավաքի աշխատանքների իրականացմանը:

Տնկարկներում սովորաբար կիրառում են ծառերի և թփերի դասավորման (տնկման) հետեւյալ տիպերը:

Քառակուսի համակարգ – տնկարկի միջշարային և միջրուսային տարածությունները լինում են հավասար, և ծառերը տնկվում են երեւակայական քառակուսու գագաթներում:

Ուղանկյուն-քառանկյան համակարգ – տնկարկի միջշարային տարածությունները լինում են ավելի մեծ, քան միջրուսային տարածությունները: Ծառերը տնկվում են երեւակայական ուղղանկյուն-քառանկյան գագաթներին: Ուղղանկյուն-քառանկյան համակարգի տարատեսակ են համարվում նաև պալմետային կամ լարապյունային տնկումները, որոնց դեպքում միջծառային հեռավորությունից փոքր է միջշարային հեռավորությունից, որի շնորհիվ տնկարկի շարքերը նմանվում են «կանաչ պատի»:

Հախմատաձեւ կամ եռանկյուն համակարգ – ծառերը տնկվում են շախմատաձեւ՝ հավասարակողմ եռանկյան գագաթներին:


Հորիզոնական գծերի համակարգ (կոնտուրային) – կիրառվում է խիստ թեք տարածքներում դարավանդային այգետներումների ընթացքում, որը հնարավորություն է ընձեռում ոչ միայն նվազեցելու հողատարման (հողային էրոզիա) գործընթացը, այլև՝ էականորեն հեշտացնելու այգու մշակության աշխատանքները։ Ելնելով լանջի թեքության առանձնահատկություններից, հաճախ ստիպված են լինում կիրառել ոչ թե համատարած եւ համաչափ, այլ՝ անհատական դարավանդներ։

Այգու տարածքի կազմակերպումը եւ հողամասի տեղաձեւումը, տեսակների ու բուսաձեւերի տևակման բանաձեւերի սահմանումը, հողի նախապատրաստումը, այգու հիմնումը

Այգու տարածքի ընտրությունը

Պտղահատապտղատու տնկարկների հիմնման գործընթացը սկսվում է տարածքի ընտրությունից եւ կազմակերպման գործողություններից: Ըստ որում՝ տարածքի ընտրության ընթացքում հաշվի են առնվում բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են՝ տարածքի դիրքադրությունը, թեքության աստիճանը, տվյալ տարածքի բնակլիմայական եւ հողային պայմանները, ստորգետնյա ջրերի մակարդակը, հողակտորի հեռավորությունը ուռոգման ջրի աղբյուրից, հիմնական եւ համայնքային ճանապարհներից եւ այլն:

Ուշ զարնանային ցրտահարությունների վտանգի առկայության պայմաններում ցանկալի է ընտրել որոշակի թեքություն ունեցող հողակտորներ, որտեղ չեն կուտակվում անցանկալի սառը հոսանքները եւ, սահելով դեպի առավել ցածրադիր հատված, բացասական ազդեցություն չեն ունենում տնկարկի վրա (նկ. 22):



Նկար 22. Այգու տարածքի ընտրությունը

Նկարի վրա պատկերված (Ա) հատվածը առավել շատ է ենթարկվում արեւի ճառագայթների ազդեցությանը եւ ստանում է առավել

շատ ջերմություն: Նման տարածքները չեն ենթարկվում ուշ գարնանային ցրտահարությունների, քանի որ վտանգավոր սառը հոսանքները սահում են դեպի ցածրադիր հատվածներ: Հողակտորի (Բ) հատվածը նոյնպես խուսափում է գարնանային ցրտահարություններից, սակայն կարող է ենթարկվել ձմռան խիստ սառնամանիքների բացասական ազդեցությանը:

Նկարի (Գ) հատվածն իր բնութագրով նման է (Ա) հատվածին, սակայն աչքի է ընկնում ավելի ցուրտ պայմաններով եւ հյուսիսային դիրքադրության պատճառով ավելի ուշ է տարանում գարնան ընթացքում: Հողակտորի (Դ) հատվածն առավել խոցելի է գարնանային ուշ ցրտահարություններից, քանի որ, լինելով տարածքի ամենացածր հատվածը, սառը հոսանքի առավել հավանական կուտակման տարածք է: (Ե) հատվածը նոյնպես կարող է ենթարկվել ցրտահարության, սակայն առկա պաշտպանիչ անտառաշերտը կարող է խոչընդոտել սառը հոսանքների ներթափանցմանը: Նկարում պատկերված (Զ) հատվածը բոլորովին նպատակահարմար չէ այգետնկման համար, քանի որ առկա անտառաշերտը խոչընդոտում է սառը հոսանքի՝ դեպի առավել ցածրադիր հատված տեղաշարժին: (Է) հատվածն իր բնութագրով բավական նման է (Բ) հատվածին:

Այսպիսով՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ հարավային կողմի լանջերն, ի տարրերություն հյուսիսային լանջերի, ավելի շուտ են տարանում: Արեւելյան կողմի լանջերը միջանկյալ տեղ են գրավում հարավային եւ հյուսիսային լանջերի միջեւ: Այնուամենայնիվ, լանջի թերության աստիճանը կարող է սահմանափակող գործոն հանդիսանալ տնկարկների հիմնման համար: Հիմնականում նախընտրելի են 4-8 աստիճան թերություն ունեցող տարածքները: Առավել մեծ թերությունները ցամկալի չեն «ավանդական» այգետնկման համար: Նման թեք տարածքներում տնկարկների հիմնումն իրականացվում է դարավանդների կառուցման միջոցով:

Տարածքի հողային պայմանների ուսումնասիրության ընթացքում հարկավոր է հաշվի առնել հողի կառուցվածքը, թերքի շերտի հզորությունը, հագեցվածությունը սննդատարքերով, թթվայնությունը (ρΗ) եւ այլն:

Զափազանց կարեւոր է ստորգետնյա ջրերի մակարդակի որոշումը: Ջրերի բարձր մակարդակն անցանկալի է գրեթե բոլոր տեսակի պտղահատապտղային բույսերի համար, սակայն որոշ պտղատեսակներ (հիմնականում կորիզավորները) առավել խոցելի են գերխննավ հողային պայմաններում: Հնդավորները (խնձորենի եւ տանձենի) առավել դիմադրողական են նման պայմանների նկատմամբ:


Հողակտորի ընտրության ընթացքում անհրաժեշտ է ստուգել հողի բերրի շերտի հզորությունը, հետազոտել հողի հազեցվածությունը անհրաժեշտ սննդատարրերով, պարզել հողի pH -ը (թթվայնությունը), ինչպես նաև մեխանիկական կազմը:

Այգու հատակագծումը

Հողամասի ընտրությունից հետո անհրաժեշտ է հատակագծել այգին եւ որոշել ծառերի (բիւրի) տեղը: Հատակագծման համար գլխավորապես օգտագործվում են հողաչափական գործիքներ (թեռոդիխ, բուսոլ), սակայն դրանց բացակայության դեպքում կարելի է օգտագործել հասարակ եղանակ (յուղաձծված երկար պարան, չափաժապավեն, անկյունաչափ, հարթաչափ, 6 հատ 3-4 սմ հաստությամբ, 2 մ երկարությամբ փայտե ձողեր, 8 հատ 3-4 սմ հաստությամբ եւ 20 սմ երկարությամբ տեղանիշ ցցափայտեր եւ 3-4 սմ հաստությամբ, 1,25 մ երկարությամբ այնքան տեղանիշ ցցափայտեր, որքան հեկտարի վրա ծառեր պետք է տնկվեն):

Հատակագծման նպատակով երկու աշխատողներից մեկը բռնում է երկար պարանի մեկ ծայրը, կանգնում է հատակագծվող հեկտարի մեկ եզրին (Ա կետը՝ նկարի վրա), իսկ երկրորդ աշխատողը բռնելով պարանի մյուս ծայրը, ճգում է այն մինչեւ մյուս եզրը՝ Բ կետը: Պարանը ճգում են այնպես, որ Ա եւ Բ կետերը գտնվեն մեկ ուղիղ գծի վրա: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ աշխատողի կանգնած կետերում խվում են 1,5 մետրանոց ձողափայտեր: Դրանից հետո առաջին աշխատողը կանգնում է Բ կետում, իսկ երկրորդ աշխատողը պարանը ձեռքին անցնում է հատակագծվող հեկտարի մյուս կողմը՝ Գ կետը՝ երկրորդ գիծը որոշարկելու համար (նկ. 23):

Երկրորդ գիծը ճիշտ անցկացնելու համար երկրորդ աշխատողը վերցնում է անկյունաչափը, որի գագաթը դնում է առաջին աշխատողի կանգնած տեղում՝ Բ կետում, եւ կազմում է ուղիղ անկյուն, այնպես, որ անկյունաչափի մի կողմն ընկնի ԱԲ գծի վրա, իսկ անկյունաչափի մյուս կողմը ցույց տա ԲԳ գծի ուղղությունը: Դրանից հետո երկրորդ աշխատողը պարանը ճգում է անկյունաչափի ուղղությամբ նորից



Նկար 23. Հատակագծում

Երկրորդ գծի ծայրին Գ կետում խփում է մեկ հատ երկար (1,5 մետրանոց) ձողափայտ: Այսպես որոշարկում են 3-րդ և 4-րդ կողմերը, այսինքն՝ ԳԴ և ԴԱ գծերը: (Ա.Ե. Մարգարյան, Հ.Շ. Շահինյան, Պուլաբուծություն):

Այնկունաշափի բացակայության դեպքում ճախազդումը կարելի է անել 3:4:5 համամասնությամբ երեք պարաների օգնությամբ: Այս դեպքում չափումները կատարվում են Պյութագորասի թեորեմի հիման վրա (որոշարկվում են ուղիղ անկյունները):

Հատակագծման ընթացքում հարկավոր է հաշվի առնել այզու ճանապարհները: Սովորաբար, հողակտորների միջեւ թողնում են 5-6 մ լայնությամբ ճանապարհներ, իսկ հիմնական ճանապարհը կարող է ունենալ 8-10 մ լայնություն:

Տեսակների ու բուսաձեւերի տնկման բանաձեւերի սահմանումը

Այզիների հիմնման ընթացքում տարբեր պտղատեսակների համար կիրառվում են տարբեր տնկման բանաձեւեր (միջշարային և միջծառային հեռավորություններ): Այդ մեծությունները մասնավորապես պայմանավորվում են.

- տնկվող տեսակի կամ բուսաձեւի (սորտի) կենսաբանական առանձնահատկություններով,
- բույսերի սաղարթի ձեւավորման համակարգով,
- կիրառվող պատվաստակալով,
- հողի բերրիությամբ,
- տեղանքի բարձրությամբ:

Տնկման բանաձեւերը խիստ տարբեր են ավանդական և ինտենսիվ (խիտ) տնկարկների համար: Եթե ավանդական այզիներում կիրառվում են բավական մեծ միջշարային և միջծառային հեռավորություններ, հարդյուն որի միավոր մակերեսի վրա տնկվում են համեմատաբար փոքր թվով բույսեր, ապա խիտ տնկարկներում կիրառվող փոքր հեռավորությունները թույլ են տալիս տնկվող բույսերի թիվը հասցնել 2500, 5000 և ավելի:

Աղյուսակ 3.

Ավանդական տնկարկներում առավել հաճախ կիրառվող տնկման բանաձեւերը

Պտղատեսակը	Արարատյան հարթավայր		Նախալեռնային գոտի	
	Տնկման բանաձեւը, մ	Բույսերի քանակը 1 հա-ի վրա	Տնկման բանաձեւը, մ	Բույսերի քանակը 1 հա-ի վրա
Ծիրանենի	8 x 9, 8 x 8	138-156	8 x 7, 8 x 6	178-208
Դեղձենի	5 x 5, 5 x 4	400-500	5 x 4, 5 x 3	400-666
Սալորենի	5 x 5, 5 x 4	400-500	5 x 4, 5 x 3	400-666
Կեռասենի	6 x 5	333	6 x 4	416
Խնձորենի	6 x 4	416	5 x 4	400
Տանձենի	6 x 5	333	6 x 4	416
Ընկույզենի	10 x 10	100	8 x 6	208

Աղյուսակ 4.

Խիտ (ինտենսիվ) տնտարկներում առավել հաճախ կիրառվող տնկման բանաձեւերը

Պտղատեսակը	Կիրառվող պատվաստակալը	Տնկման բանաձեւը, մ	Բույսերի քանակը 1 հա-ի վրա
Ծիրանենի	Միջին աճեցողության	5 x 3; 4 x 3	666 - 833
	Ցածրած	4 x 1,5; 3,5 x 1,5	1480 - 1900
Դեղձենի	Միջին աճեցողության	4 x 3; 4 x 2,5	833 - 1000
	Ցածրած	4 x 1,5; 3,5 x 1,5	1480 - 1900
Կեռասենի	Միջին աճեցողության	4 x 4	333
	Ցածրած	4 x 1,5; 3,5 x 1,5	1480-1900
Խնձորենի	Միջին աճեցողության	4 x 3; 4 x 2,5; 4 x 2	833 - 1000 - 1250
	Ցածրած	4 x 1,5, 3,5 x 1,5	1480 - 1900

Հողի նախապատրաստումը եւ այգու հիմնումը


Այգու տեղի ընտրությունից եւ հատակագծումից հետո իրականացվում են հողի նախապատրաստական աշխատանքները, որոնք խիստ տարբեր են ընտրված տարբեր տարածքների համար: Անհրաժեշտության դեպքում կարելի է իրականացնել քարհավաք (եթե առկա են մշակության աշխատանքներին խանգարող մեծ քարեր),

բուսական մնացորդների հեռացում (ծառերի և թփերի մնացորդներ, արմատային համակարգեր), ինչպես նաև՝ հարթեցման աշխատանքներ:

Այնուհետեւ հարկավոր է ընտրված հողակտորը գծանշել եւ որոշել տնկվող բույսերի տեղը: Տնկումից 1,5-2 ամիս առաջ խորհուրդ է տրվում պատրաստել տնկման փոսերը (նկ. 24): Ցանկալի է, որ փորված հողը եւ փոսերի պատերը ենթարկվեն արեւի, օդի, անձրեւների ազդեցությանը, հողմահարվեն, եւ ակտիվանան դրանց մեջ տեղի ունեցող մանրէակենաբանական գործընթացները:

Ցանկալի է փոսերը պատրաստել այնպիսի չափսերի, որ փոսի մեջ տեղադրված տնկիների լայն տարածված (բոլոր ուղղություններով սփռված) արմատները չհասնեն փոսի հատակի եւ կողքերի ամուր հողաշերտին: Անհրաժեշտ է ապահովել նորր արմատների ազատ աճը փոխիր, օդաբափանց հողաշերտի պայմաններում: Աղքատ հողերում խորհուրդ է տրվում փոսերը պատրաստել մինչեւ 1 մ տրամագծով եւ 80-90 սմ խորությամբ: Փուլս եւ հարուստ հողերում կարելի է բավարարվել 60-70 սմ խորությամբ: Ցածրած («քուկային») տնկիների համար փոսը բավական է փորել 50-60 սմ լայնությանը եւ խորությամբ:


Փոսերը փորելիս հարկավոր է երեսի 25 սմ խորությամբ բերքի հողը լցնել փոսի մի կողմում, իսկ ներքեւի՝ ոչ բերքի հողը՝ փոսի մյուս



Կողմում: Այնուհետեւ, հողը դուրս բերելուց հետո փռսի կենտրոնը 10-15 սմ խորությամբ պետք է փխրեցնել:

Տնկման համար (նկ. 25) անհրաժեշտ է պատրաստել հողախառնուրդ, որի համար կարելի է հողի վերեւի պարարտ շերտից վերցնել 2 բաժին հող, ավելացնել 1 բաժին օրգանական պարարտանյութ (կենսահումուս, կիսափուած գոմադր, եթե վերջինը զերծ է հողաքնակ վնասառուներից), 150-200 գ սուլպերֆուսֆատ և 50-100 գ կալիումական պարարտանյութ: Այդ բոլորը լավ խառնելուց հետո 30-35 սմ շերտով լցնում են փռսի մեջ (կիսով չափ կոճաձել) և թողնում՝ մինչեւ տնկման օրը:

Տնկման ժամանակ չի կարելի օգտագործել քարմ գոմադր, որից անջատված ամոնիակը եւ ծծմբաջրածինը առաջացնում են արմատների քունավորում:



Տնկման ժամանակ հարկավոր է այնպիս անել, որ ծառի արմատավզիկը լինի հողի մակարդակին հավասար, իսկ պատվաստի տեղը՝ հողից բարձր:

Պտղահատապտղատու տնկարկների հիմնման նպատակով մշակաբույսերի տեսակների, պատվաստակալ- ների եւ մշակաձուերի ընտրությունը

Մշակաբույսերի տեսակների ընտրությունը

Պտղահատապտղային տնկարկներ հիմնադրելու համար անհրաժեշտ է նախապես ընտրել տնկվող մշակաբույսերը եւ որոշել սորտային կազմերը: Մշակաբույսերի տեսակների ընտրության ընթացքում կարենու է հաշվի առնել բույսերի կենսաբանական հատկությունները, ընտրված տարածքի հողային եւ կյանքայական առանձնահատկությունները, բուսաճի շրջանի (վեգետացիայի) տեսողությունը, շուկայի առանձնահատկությունները (վերամշակող ձեռնարկությունների, ինչպես նաև քարմ վիճակում օգտագործելու պահանջները): Առաջին հերթին հարկավոր է ուսումնասիրել գիտական հետազոտությունները, որոնք իրականացվել են տվյալ հողակլիմայական պայմաններում, ինչպես նաև հաշվի առնել տարածքի գյուղացիական տնտեսությունների՝ այս կամ այն պատվաստակալի կիրառման փորձը:

Մշակաբույսերի ընտրության ընթացքում խորհուրդ է տրվում նաև ուշադրություն դարձնել ընտրված հողակտորի հարեւանությամբ (նաև հարեւան համայնքներում) աճեցվող մշակաբույսերի կենսաբազմազանությանը:

Պատվաստակալների ընտրությունը

Պտղահատապտղային բույսերի ճնշող մեծամասնությունն աճեցնելիս կիրառում են պատվաստակալներ, որը պայմանավորված է աճեցվող մշակաձեի բոլոր հատկությունները պահպանելու անհրաժեշտությամբ: Բուսաճային (վեգետատիվ) եղանակով բազմա-

վող բույսերը (թզենի, նոնենի, ազնվամորի, մոշենի եւ այլն) պատվաստակալի կիրառման կարիք չունեն:

Ըստ ծագման եւ բազմացման եղանակի, պատվաստակալները լինում են սերմնային եւ բուսաճային կամ նույնակային (կլոնային): Ըստ աճեցողության ուժի լինում են բարձրած, միջակած եւ ցածրած:

Հարկ է նշել, որ պտղատու բույսերի աճեցողությունը, զարգացումը, բերքատվությունը, երկարակեցությունը, հողային պայմանների, հիվանդությունների եւ վճասատուների նկատմամբ դիմացկունությունը, ցրտադիմացկունությունը եւ երաշտադիմացկունությունը պայմանավորված են ոչ միայն մշակածելի առանձնահատկություններով, այլ նաև՝ կիրառված պատվաստակալով:

Պատվաստակալների ընտրությանը հարկավոր է մոտենալ առավելագույն պատասխանատվությամբ: Հնարավորության դեպքում հարկավոր է ընտրել այնպիսի պատվաստակալներ, որոնք փորձարկվել եւ դրական արդյունք են ապահովել ՀՀ պայմաններում եւ համատեղելի նախընտրեկի մշակածելի հետ:

Ներկայում Հայալրանում լայնորեն կիրառվում են ինչպես խորհրդային տարիներին ստեղծված եւ շրջանացված, այնպես էլ հետագայում արտերկրից ներմուծված նորագույն պատվաստակալներ:

Ստորեւ ներկայացվում են ՀՀ-ում տարածված պտղատու հիմնական մշակարույսերի համար առաջարկվող պատվաստակալները: Չնայած այն բանին, որ սերմնային ծագում ունեցող պատվաստակալները շարունակում են գերակա դիրք ունենալ պտղատու ծառատեսակների տնկամյութի բազմացման գրոծընթացում, արդյունաբերական տնկարկներում դրանք հետզհետև փոխարինվում են նույնակային (կլոնային) ծագում ունեցող առավել ցածրած եւ արդյունավետ պատվաստակալներով: Միեւնույն ժամանակ, սերմնային ծագմամբ պատվաստակալները կենարազմազանության, տվյալ տարածաշրջանի պատմության, մշակույթի պահպանման առումներով ունեն մեծ նշանակություն եւ ենթակա չեն լիարժեք փոխարինման («ոչնչացման»):

ԽՆԱՌԵՆՈՒ ՊԱՏՎԱՍՏԱԿԱԼՆԵՐ

ՍԵՐՄՆԱՅԻՆ

Մշակածելերի սերմնաբույսեր - սովորաբար օգտագործվում են ամառային Շաքարկենի եւ Անտոնովկա մշակածելերի սերմնաբույսերը:

ԽՆԱՌԵՆԻ ԱՐԵԼԵՎԱՆ - լավ սերտաճում են մշակածելերի մեծ մա-

սի հետ, ինչպիսիք են Բելֆյոր կիտայկան, Պեպին շաքրանինը, Մելքան, Մակինտոշը, սակայն ընկալունակ են որոշ հիվանդությունների նկատմամբ: Այս տեսակը վերատնկման կարիք ունի: Այն լայնորեն տարածված է Տավուշի մարզում:

ԽՆԴՐԵՆԻ աճտառային - այս տեսակն ունի բուսաբանական բազմաձեւություն և աչքի է ընկնում ցրտադիմացկունությամբ և երաշտադիմացկունությամբ, դրա սերմնաբույսերը լավ սերտաճում են խնձորենու մշակաձեւերի հետ, վերատնկման կարիք ունեն:

Կլրնային (Նույնակային) (պատկանում են խնձորենի ցածրած վայրի տեսակն)

M9 կամ դրախտախնձոր (պարադիզկա) 9 - բզուկային, քոյլ աճեցողությամբ պատվաստակալ է, որն ունի 2 մետր բարձրություն, բավարար երաշտադիմացկունություն, ցրտադիմացկունություն: Մակերեսային արմատային համակարգի շնորհիվ լավ է տանում ստորգետնյա ջրերի բարձր մակարդակը, բայց խիստ զգայուն է հողի խոնավության պակասի նկատմամբ: Բազմանում է անդալիսներով, բնափայտը ամուր չէ, ճյուղերը շուտ են կոտրվում, դրա վրա պատվատված ծառերն ունենում են 2,5-3,5 մետր բարձրություն (նկ. 26):


Պարադիզկա M8 - այս տարատեսակը ավելի պակաս ցրտադիմացկուն է, քան M9-ը, երաշտադիմացկուն չէ, հողի գերխոնավությունից չի տուժում, աղակալման հանդեպ դիմացկուն է, անդալիսներով ավելի դժվար է բազմանում: M9-ի համենատ հիմքից տալիս է համեմատաբար քիչ ճյուղավորություններ: Դրանց վրա պատվատված ծառերն ունենում են 3-4 մետր բարձրություն և աչքի են ընկնում առատ եւ ամենամյա պտղաբերությամբ:

MM 106 - կիսացածրած պատվաստակալ է, քիթերը լայնատարած են, միջակած, բազմանում է անդալիսներով: Արմատային համակարգը լավ ճյուղավորված է, մացառներ չի առաջանում: Արմատները խորանում են եւ լավ ամրանում հողում: Արմատները չեն կոտրվում: Զննադիմացկունությունը ցածր է, արմատները դիմանում են $-10\text{--}11^{\circ}\text{C}$ ցրտին: Եթե լեռնային գոտում ձյան ծածկույթը բարձր է, ապա հճարավոր է մշակել նաեւ լեռնային գոտում: Այս պատվաստակալը վատ է աճում խոնավ հողերում, դիմացկուն չէ արմատավզիկի օղակածեւ փտման եւ բակտերիալ այրվածքի նկատմամբ: Դիմացկուն է բրդապատ լվիճի հանդեպ: Դրա վրա պատվատված ծառերն ամենամյա եւ առատ բերք են տալիս, ինչպես նաեւ վաղ են անցնում բերքի:

M 26 - Թուփը միջակած է, տարածուն, շիվերը հաստ են եւ փշոտ: Արմատային համակարգը մակերեսային է, համեմատաբար փոքր

ծավալով: Բազմանում է անդալիսով: Ավելի ցրտադիմացկուն է, քան M9-ը, դիմացկուն է սնկային հիվանդությունների եւ, հատկապես խոնավ հողում, զգայուն է օղակաձեւ փտուման նկատմամբ: Դրա վրա պատվաստված ծառերը վաղ են անցնում պտղաբերման, բերքատվությունը ամենամյա է:

M 27 - Թուփը մեծ չէ, լայնատարած, բազմանում է անդալիսով: Արմատները դյուրաքեկ են: Ծառերը չունեն ծավալուն արմատային համակարգ, որի պատճառով պահանջվում են հենակներ: Այս պատվաստակալը պահանջում է բերքատու, համեմատարար թերեւ եւ խոնավությամբ ապահովված հողեր: Դրա վրա պատվաստված ծառերը խիստ ցածրած են, բարձրբերքատու եւ վաղ պտղաբերող:



Նկար 26. Պտղատու ծառատեսակների պատվաստակալների համեմատական գծապատկեր

Տանձենու պատվաստակալներ

Սերմնային

Տանձենի ամտառային – ուժեղ աճեցողությամբ ծառատեսակ է, աչքի է լճկնում խոր զնացող արմատներով եւ բարձր երաշտադիմացկունությամբ: Դիմանում է հողի քոյլ աղակալմանը, ցրտադիմացկունությունը բավարար է, ունի արմատի ծերատման կարիք, համատեղելի է տանձենու բոլոր մշակաձեւերի հետ:

Տանձենի փշատատերեւ - բույլած է, աչքի է լճկնում չորադիմացկունությամբ, քլորոզադիմացկունությամբ, համատեղելի է տանձենու մանրապտուղ մշակաձեւերի հետ:

Տանձենու մշակովի մշակաձեւեր (սորտերի սերմնաբույսեր) - համատեղելի են զրերեւ բոլոր մշակաձեւերի հետ, լավ հարմարված են տեղի պայմաններին:

Կլոնային (Նույնակային)

Սերկելիենու բուսաճային եղանակով բազմացվող A, C, Q, R ձեւեր (նկ. 27): Սերկելիենու հետ համեմատաբար լավ համաճում են տանձենու ելորպակամ՝ Բերե Արդանապոն, Բերե Ամանի, Կյուրե, Սեն Ժերմեն մշակածեւերը: Այն մշակածեւերի համար, որոնք վատ են համաճում սերկելիենու հետ, կատարում են կրկնակի պատվաստ, օգտագործելով միջանկյալ (ինտերկայլյար) պատվաստակալ՝ ստեղծելով 3 բույսի՝ սերկելիենի-տանձենու համատեղելի մշակածեւ-տանձենու անհամատեղելի մշակածեւ համալիր, միասնական մարմին:

«**Quince C**» պատվաստակալի վրա պատվաստված տանձենին 10 տարեկան հասակում ունենում է բավական փոքր չափսեր, հասնում 2-3 մ բարձրության: Այս պատվաստակալն ամենատարածված է երից է եւ կիրառվում է մեծ խոռոշական տնկարկներ հիմնելու համար: Աչքի չի ընկնում բարձր ցրտադիմացկունությամբ:

OhxF 40 - միջին աճեցողություն ունեցող պատվաստակալ է, որի կիրառման դեպքում ծառերի բարձրությունը հասնում է Bartlett-ի սերմնարույսի (ստանդարտ) վրա պատվաստված ծառի բարձրության 2/3-ին: Վաղ զարգացող է, առաջացնում է լավ զարգացած արմատային համակարգ եւ չի պահանջում լրացուցիչ հենարան: Այս պատվաստակալը խորհուրդ չի տրվում կիրառել «Բերե Բոսկ» մշակածելի հետ (T. Auvin, WTFRC):

OhxF 87 - ծառերի չափսերով շատ մոտ է OHxF 40 պատվաստակալին եւ հանդիսանում է OHxF ընտանիքի ամենատարածվածներից մեկը, քանի որ համատեղելի է շատ մեծ թվով մշակածեւերի հետ եւ աչքի է ընկնում հիվանդությունների նկատմամբ բարձր դիմադրողականությամբ: Նման պատվաստակալ կիրառելու դեպքում այզու շարերում ծառերի միջին հեռավորությունը կարելի է սահմանել 2-2,5 մ:


OHxF 333 - ծառերն ունենում են ավանդական չափսերի (ստանդարտի) 50-75 %-ը: Այս պատվաստակալի հիմնական առավելությունը բակտերիալ այրվածքի, արմատային փտման եւ բրդապատ լվիճի դեմ առկա բարձր դիմադրողականությունն է:

Quince Eline պատվաստակալը ստեղծվել է 1990-ականներին Նիդերլանդներում, կարող է օգտագործվել ինչպես տանձենու, այնպես էլ՝ սերկելիենու համար: Իր հատկանիշներով համեմատելի է Quince C պատվաստակալի հետ, սակայն աչքի է ընկնում առավել ցրտադիմացկունությամբ:

Quince A-ն միջին աճեցողությամբ պատվաստակալ է, որը լայնորեն տարածված է Եվրոպայում: Այս պատվաստակալի կիրառման դեպքում 10 տարեկան ծառերը սովորաբար ունենում են 3-4 մ բարձ-

բություն: Լարասյունային համակարգի կիրառման եւ հովհարաձեւ ձեւավորման դեպքում ծառերի բարձրությունը հասնում է 2,5 մ-ի: Quince A պատվաստակալի վրա պատվաստված ծառերը չափսերով ավելի մեծ են ստացվում, քան Quince C-ի վրա եւ համեմատելի են խնճորենու MM 106 պատվաստակալի չափսերի հետ: Լավ արդյունք է տալիս բերրի եւ լավորակ հողերում: Այս պատվաստակալի վրա պատվաստված մշակածերը տուժում են քլորոզից, վատ են տանում կարբոնատային հողերը եւ չորային պայմանները, սակայն դիմաց կուն են անբարենպաստ այլ պայմանների նկատմամբ:

PyroDwarf - ծառերն ունենում են տանձենու սերմնաբույսի բարձրության 50-70 %-ը եւ հասնում են 4,5 մ բարձրության: Այս պատվաստակալը չունի տանձենու մշակածեւերի հետ պատվաստման անհամատելիլության խնդիր: Պտղաբերումը սովորաբար սկսվում է տնկումից հետո 3-4 տարում: Այս պատվաստակալի առանձնահատկությունն է լավ զարգացած փնջածեւ արմատների բացակայությունը: Արմատները գրեթե զուրկ են լինում մազարմատներից եւ տնկման տարում չեն ապահովում հզոր աճ: Սովորաբար աճն ակտիվանում է տնկումից հետո երկրորդ տարվանից: Սերկելիենուց ստացված պատվաստակալների համեմատ այս պատվաստակալն ավելի հանդուժող է կրի պարունակության նկատմամբ եւ ի վիճակի է աճել թույլ իիմնային միջավայրում (ալկալի հողեր): Ունի որոշակի դիմադրողականություն բակտերիալ այրվածքի նկատմամբ:



Նկար 27. Տանձենու բուսաձային եղանակով բազմացվող պատվաստակալներ

Ծիրանենու պատվաստակալներ

Սերմնային

Ծիրանենի սովորական տեսակի «Խարջի» կիսավայրի ձեւեր - սերմնաբույսերն աչքի են ընկնում ուժեղ աճով, չորադիմացկունությամբ, ցրտադիմացկունությամբ, ունեն խոր գնացող արմատներ, սերմերը բարձր ծլունակ են, իսկ ծիլերը՝ արագած:

Ըլորենի - օգտագործվում է որպես պատվաստակալ այն տարածքներում, որտեղ հողն ունի ծանր կավային մեխանիկական կազմ եւ գերխոնավ է:

Նշենի - օգտագործվում է որպես պատվաստակալ այն տարածքներում, որտեղ հողը բարքարոտ է եւ հարուստ՝ կարբոնատներով:

Կլոնային (Նույնակային)

Myrabolan 29 C - Կալիֆորնիայի նահանգում շլորենուց ստացված կլոնային պատվաստակալ է: Համատեղելի է եւ ծիրանենու մշակածների մեծամասնության հետ: Վիրառելի է բոլոր տեսակի հողերի համար, հարմարվում է ծանր եւ սահմանափակ օդաքաղաց հողերին: Դիմացկուն է նեմատոդների նկատմամբ: Մացառառաջացման ունակությունը բույլ է: Լավ է տանում վերատնկումը:

Գրուժբա (մանրաբալենի ցածրած x ծիրանենի) - Ուսասատանում ստացված միջակած պատվաստակալ է, լավ համատեղելի է ծիրանենու բոլոր մշակածների հետ: Ցրտադիմացկուն է, դիմացկուն է նաև հողի գերխոնավության, նեմատոդների, բակտերիալ քաղցկեղի նկատմամբ: Երիտասարդ բույսերը բույլ են ճյուղավորվում: Լավ բազմանում է կանաչ, փայտացած կտրոններով եւ անդալիսով:

Ալաբա 1 (շլորենի, տնկի N 3 x ծիրանենի) - Ուսասատանում ստացված միջակած պատվաստակալ է, համատեղելի է ծիրանենու, սալորենու, շլորենու, դեղձենու բոլոր մշակածների հետ: Ցրտադիմացկուն է, դիմացկուն է հողի գերխոնավության, նեմատոդների եւ բակտերիալ քաղցկեղի նկատմամբ: Երիտասարդ բույսերը բույլ են ճյուղավորվում: Լավ բազմանում է կանաչ, փայտացած կտրոններով եւ անդալիսով:

Կուրան 86 (մանրաշլոր x դեղձենի) - Ուսասատանում ստացված ուժեղած պատվաստակալ է, լավ համատեղելի է նշենու բոլոր եւ ծիրանենու շատ մշակածների հետ: Խորհուրդ է տրվում կիրառել ծանր հողերում: Հզոր արմատային համակարգը դիմացկուն է նեմատոդների, արմատային քաղցկեղի նկատմամբ: Լավ բազմանում է կանաչ, փայտացած կտրոններով եւ անդալիսով:

BBA-1 (մանրաբալենի բաղիքային x շլորենի) - Ուսասատանում

ստացված ցածրած պատվաստակալ է, լավ համատեղելի է ծիրանենու շատ մշակաձեւերի հետ: Ցրտադիմացկուն է, չորադիմացկուն, լավ է տանում հողի երկարատեւ գերխոնավությունը: Դիմանում է նեմատողներին, սակայն տուժում է արմատային քաղցկեղից: Այս պատվաստակալը արագացնում է պտուղների հասունացումը 5-10 օրով: Լավ բազմանում է կանաչ, փայտացած կտրոններով եւ անդալիսով:

Ծառ երկրներում տարածված են նաև Torinel, M40 Marianna, Citation, Contoller 6 եւ այլ պատվաստակալներ:

Դեղձենու պատվաստակալներ

Սերմնային

Դեղձենի սովորական - օգտագործվում են այս տեսակից առաջացած պճողովի մշակաձեւերի սերմնաբույսերը, որոնք ունեն սերմերի բարձր ծլունակություն, ծիլերը արագ են աճում, բավական երաշտադիմացկուն են, ձմռանը դիմանում են -25°C ցրտին: Լավ են աճում քերեւ, ավագակավային հողերում:

Ծլորենի - հիմնականում կիրառվում է գերխոնավ եւ ծանր կավային մեխանիկական կազմ ունեցող հողերում:

Նշենի - հիմնականում կիրառվում է քարքարոտ կարբոնատներով հարուստ հողերում:

Կլոնային (Նույնակային)

GF677-ը (P.pescica x P.amygdalus): Ամենատարածված կլոնային պատվաստակալներից է, բավական դիմացկուն է հողային գրունտի սաղցակալման նկատմամբ, լավ աճում է չորային եւ կարբոնատային հողերի պայմաններում: Կարողանում է հարմարվել առթատ եւ քարքարոտ հողերին: Աճում է նույնիսկ քոյլ արտահայտված թթվային հողերում:

Էվրիկա (քալասալոր Սապա x շլոր Օտլիչնիցա) - Ուսուաստանում ստացված միջակած պատվաստակալ է, լավ համատեղելի է դեղձենու մշակաձեւերի հետ: Ցրտադիմացկուն է, դիմացկուն է գերխոնավության, կրացման, նեմատոդ որդերի, բակետերիալ քաղցկեղի նկատմամբ: Լավ բազմանում է կանաչ, փայտացած կտրոններով, անդալիսով:

Ալարա 1 - (շլորենի, տնկի N 3 x ծիրանենի) – միջակած է, համատեղելի է դեղձենու բոլոր մշակաձեւերի հետ:

Կուրան 86 (մանրաշլոր x դեղձենի) - ուժեղած պատվաստակալ է, լավ համատեղելի է դեղձենու բոլոր մշակաձեւերի հետ:

BBA-1 (մանրաբալենի թաղիքային x շլորենի) - լավ համատեղելի է դեղձենու բոլոր մշակաձեւերի հետ:

Սալորենու պատվաստակալներ

Սերմնային

Մշակաձեւերի սերմնաբույսեր - ցրտադիմացկունությունը բավարը է, համատեղելի են իրենց խմբի համապատասխան մշակաձեւերի հետ:

Ըլորենի - սալորենու հիմնական պատվաստակալն է, խոնավասեր է, սերմնաբույսերը զարգացնում են ճկուն (էլաստիկ), նուրբ եւ ամուր կեղեւ: Աչքի են ընկնում երաշտադիմացկունությամբ եւ ցրտադիմացկունությամբ:

Մամուխ - ցածրած է, աչքի է ընկնում ցրտադիմացկունությամբ եւ երաշտադիմացկունությամբ: Աչքապատվաստի ժամանակ կեղեւը դժվար է անջատվում, արմատային համակարգն առանցքային է, առաջացնում է մացառներ:

Նշենի - օգտագործվում է որպես պատվաստակալ այն տարածքներում, որտեղ հողը քարքարոտ է եւ հարուստ է կարբոնատներով:

Կլոնային (Նույնակային)

Myrabolan 29 C - Համատեղելի է սալորենու բոլոր մշակաձեւերի հետ:

Գրուժքա (մանրաբալենի ցածրած x ծիրանենի) - բացի ծիրանենուց, լավ համատեղելի է նաև սալորենու մշակաձեւերի մեծամասնության հետ:

Էվլիկա (բալասալոր Սապա x շլոր Օսլիչնիցա) - միջակած պատվաստակալ է, լավ համատեղելի է սալորենու, շլորենու մշակաձեւերի հետ:

Ալաբա 1 - (շլորենի, տնկի N 3 x ծիրանենի) - միջակած է, համատեղելի է սալորենու, շլորենու բոլոր մշակաձեւերի հետ:

BBA-1 (մանրաբալենի թաղիքային x շլորենի) - ցածրած պատվաստակալ է, լավ համատեղելի է սալորենու բոլոր մշակաձեւերի հետ:

Կուրան 86 (մանրաշլոր x դեղձենի) - ուժեղած պատվաստակալ է, լավ համատեղելի է սալորենու եւ շլորենու բոլոր մշակաձեւերի հետ:

Բալենու պատվաստակալներ

ՍԵՐՄՆԱՅԻՆ

Մշակաձեւերի սերմնաբույսեր - որպես պատվաստակալ օգտագործվում են տեղական հայկական մշակաձեւերի սերմնաբույսերը: Հաճախ օգտագործվում են նաև ներմուծված Լյուբուշայա, Վլադիմիրսկայա մշակաձեւերը, որոնց սերմնաբույսերը ցրտադիմացկուն են, չորադիմացկուն, կարող են աճել սննդանյութերից աղքատ եւ քոյլ աղակալած հողերում: Սերմնաբույսերն աճում են արագ, ունեն լավ ճյուղավորված արմատներ, հաստ եւ կոպիտ կեղեն, որն աչքապատվաստի ժամանակ դժվար է անջատվում: Նման պատվաստակալները լավ համաճում են բալենու մշակաձեւերի հետ:

Բալենի մահալերյան - ունի բարձր չորադիմացկունություն, խոր զնացող արմատներ, աչքապատվաստի ժամանակ կեղեւը հեշտ է անջատվում, ծիլերն աճում են համահավասար: Ցրտադիմացկուն է եւ լավ հարմարվում է տարբեր հողերում:

ԿԵՐՈՎԱՏԵՆՈՒ ՊԱՏՎԱՍՏԱԿԱԼՆԵՐ

ՍԵՐՄՆԱՅԻՆ

Մշակաձեւերի սերմնաբույսեր - Հայաստանում օգտագործվում են տեղական մշակաձեւերը՝ Սպիտակենին, Կարմրկենին:

Բալենի մահալերյան - ՀՀ պայմաններում առավել տարածված պատվաստակալներից է:

ԿԼՐՆԱՅԻՆ (ՆՈՒՅՆԱԿԱՅԻՆ)

EMLA COLT (*Prunus avium x P. pseudocerasus*) - Ստեղծվել է ԱՄՆ-ում: Սրա վրա պատվաստված ծառերը միջակած են, հասնում են մահալերյան բալենու վրա պատվաստված ծառերի բարձրությանը: Սաղարթը լավ է ճյուղավորվում: Ծառերը վաղ են ամցնում բերքի եւ ունեն միջակ ցրտադիմացկունություն: Դիմացկուն են բակտերիալ քաղցկեղի նկատմամբ: Լավ են արմատակալում, համատեղելի են կեռասենու գրեթե բոլոր տարածված մշակաձեւերի հետ: Հարմարվում են նաև ծանր կավային հողերում:

ՄԱՔՍՍՍ 14 (Maxima 14) - լայն տարածում ունեցող պատվաստակալ է, որի կիրառման դեպքում ծառերն ունենում են ավանդական բարձրության 2/3-ը: Բերրի, չափավոր կավային հողերում ծառերը կարող են ավելի ուժեղ աճ ունենալ: ՄԱՔՍՍՍ 14-ը լավ աճում է խոնավ հողերում, ինչպես նաև լավ արդյունք է ցուցաբերում կրային հո-

ղերի դեպքում: Դիմացկուն է բակտերիալ քաղցկեղի եւ նեմատողների նկատմամբ: Արմատային համակարգը համեմատաբար հզոր է, որի շնորհիվ ծառերը լարասյունային համակարգի կարիք չեն զգում: Այս պատվաստակալն աչքի է ընկնում մացառաջացման բույլ հատկությամբ: Աճում է նաև համեմատաբար աղքատ հողերում:

P-HL A - տարրեր հողային պայմանների եւ սննան մակերեսների ընտրության դեպքում P-HL A-ի վրա պատվաստված կեռասենու ծառերն ունենում են ավանդական ծառի 50-60 % բարձրությունը: Այս պատվաստակալը խորհուրդ չի տրվում օգտագործել բույլ աճ ունեցող մշակածների հետ, քանի որ բույլ աճի պատճառով տարեկան աճը լինում է չափազանց կարճ: Մասնավորապես՝ խորհուրդ չի տրվում P-HL A-ի վրա պատվաստել *Sylvia, Hedelfinger* եւ *Heidegger* մշակածները: Լավ արդյունք կարող են արձանագրել *Burlat, Bfttner Red, Summit, Cordia, Lapins* եւ մի շաք այլ մշակածները: Զգայուն է հողի բարձր pH-ի, կավի եւ չափազանց բարձր ջերմաստիճանների նկատմամբ (Cherry rootstocks; Prof. Dr. Karoly Hrotko):

Գիգելա 5 (Gisela 5) - հիբրիդային պատվաստակալ է, որը ստեղծվել է 1990-ական թվականներին *Prunus cerasus*-ի եւ *Prunus canescens*-ի տրամախաչումից: Այն համարվում է կեռասենու ցածրած պատվաստակալներից ամենատարածվածներից մեկը: Ծառերն ունենում են ավանդական բարձրության մոտ 50 %-ը եւ 5 տարեկան հասակում չեն գերազանցում 3 մ-ը: Ինչպես բնորոշ է զրեքե բույր ցածրած պատվաստակալներին, Գիգելա 5-ը նույնպես չի առաջանում հզոր արմատային համակարգ, որը պահանջում է այգետնկման ընթացքում կիրառել լարասյունային համակարգ:

LC-52-ը (Կրիմսկ 6) եւ VSL-1-ը ոռուսական ծագման պատվաստակալներ են: Այս պատվաստակալների կիրառման դեպքում ծառերն ունենում են ավանդական կեռասենու բարձրության 50-60 %-ը եւ համեմատելի են Գիգելա 5 պատվաստակալի հետ: Սակայն մի շաք փորձարկումներ ցույց են տվել, որ Գիգելայի համեմատությամբ երկու դեպքում էլ ծառերը զիջում են բերքատվության ցուցանիշով, թեպետ VSL-1-ը այդ ցուցանիշով գերազանցում է LC-52-ին: Ունեն արմատային մացառներ առաջացնելու մեծ ներուժ: LC-52-ն ընկալունակ է վիրուսային հիվանդությունների (PDV and PNRSV) նկատմամբ:

Գիգելա 6 (Gisela 6) - Գիգելա 5 պատվաստակալի համեմատ, Գիգելա 6-ն աչքի է ընկնում ավելի հզոր աճով: Չնայած այն հանգամանքին, որ չի համարվում խիստ ցածրած պատվաստակալ, ծեւավորում է ոչ շատ մեծ, հեշտ կառավարելի սաղարթ: Սովորաբար

Գիգելա 6-ի կիրառման դեպքում մեկ հեկտարի հաշվով ծառերի տնկման խսությունը տատանվում է 740-1250 ծառի սահմաններում: Ընդհանուր առմամբ, Գիգելա 6-ը կարելի է կիրառել տարրեր հողային պայմաններում՝ ինչպես քերեւ մեխանիկական կազմով, այնպես էլ ծանր հողերում, սակայն բոլոր դեպքերում ցանկալի է խուսափել գերխոնավորթյունից: Հարկ է նշել, որ այս պատվաստակալի ընտրության դեպքում այգետնեկումը կարելի է իրականացնել ինչպես լարասյունային համակարգով, այնպես էլ առանց դրա: Սակայն հարկավոր է հաշվի առնել, որ քամու տարածքներում ցանկալի է ունենալ հենարաններ:

Գիգելա 12 (Gisela 12) - ծառերը կարող են հասնել մահալերյան բալենու վրա պատվաստված ծառերի բարձրության: Առաջանում են ազատ աճող, միջին չափի ծառեր: Մացառներ չի առաջացնում, հենասյան կարիք չունի, ցրտադիմացկուն է:

Մամրապտուղ բալենի - համատեղելի է կեռասենու ցածրած մշակածեների հետ, դիմացկուն է հիվանդությունների, վնասատուների նկատմամբ, ցրտադիմացկուն է, բազմանում է մացառներով, փայտացած կտրոններով, դրա վրա պատվաստված կեռասենու ծառերն ունեն 3-4 մետր բարձրություն, ազատ աճող են, վաղ են անցնում պտղաբերման:

Ալեհեր բալենի - համատեղելի է բալենու մշակածեների հետ, առաջացնում է փուլող, տարածված սաղարթ, ցածրած է, ցրտադիմացկուն է, դիմացկուն է հիվանդությունների եւ վնասատուների նկատմամբ:

Բացի ներկայացված տարրերակներից, կան բազմաթիվ այլ պատվաստակալներ, որոնք լայնորեն կիրառվում են տարրեր հողային եւ բնակլիմայական պայմաններում, սակայն Հայաստանում լայն տարածում չունեն, ինչպես օրինակ՝ Piku 4, Weiroot 158, Weiroot 72, GM61/1, NEWROOT-1, Gisela 7, Gisela 3 եւ այլն:

Ժորենու (խուրմա արեւելյանի) պատվաստակալներ

Սերմնային

Խոռնիկ (խուրմա կովկասյան) վայրի տեսակի սերմնաբույսեր - ուժեղած են, ցրտադիմացկուն եւ երաշտադիմացկուն, մշակովի մշակածեների հետ լավ սերտածում են:

Ժորենի (խուրմա արեւելյան) տեսակի մշակածեների սերմնաբույսեր - միջակած են, մշակովի մշակածեների հետ լավ սերտածում

Են, սերմերի ստացումը անբավարար է, պտղում սերմերը փոքրաքանակ են:

Խուրմա վիրգինյան կիսավայրի տեսակի սերմնաբույսեր - միջակած են, մշակովի մշակածերի հետ լավ սերտաճում են, սերմերը պտղում բավարար քանակի են, շատ ցրտադիմացկուն են:

Ընկույզենու պատվաստակալներ

Սերմնային

Ընկույզենու ցածրած ձեւերի սերմնաբույսեր - դրանց վրա պատվաստված ծառերը բերքի են անցնում 2-4-րդ տարում, ցածրած են:

Ընկույզենու սեւ տեսակի սերմնաբույսեր - ուժեղած են, դրա վրա պատվաստված ծառերը բերքի են անցնում ավելի ուշ՝ 5-6-րդ տարում:

Շատ երկրներում լայնորեն տարածված են ընկույզենու կլոնային պատվաստակալները, օրինակ՝ RX1, VX211, Vlach, Paradox եւ բազմաթիվ այլք:

Նշենու պատվաստակալներ

Սերմնային

Նշենի սովորական - դրա սերմնաբույսերն լավ են աճում տարբեր տիպի հողերում, ունեն բարձր երաշտադիմացկունություն, ցրտադիմացկունություն, աճում են արագ, համատեղելի են նշենու բոլոր մշակածերի հետ:

Համաշխարհային պտղաբուծության ոլորտում լայնորեն կիրառվում են նշենու կլոնային պատվաստակալները (Krymsk... 86 , SG1, Bright's Hybrid... 5, Hansen 536, Viking, GF 557, GF 677 եւ այլն):

Պտղահատապտղատու տնկարկների տնկման ժամկետները, հիմնադրման աշխատանքների կազմակեր- պումն ու նախապատրաստումը

Տնկման ժամկետները

Տնկման լավագույն արդյունք կարելի է ստանալ տնկան-
յոթի հանգստի շրջանում (վաղ գարնանը՝ մինչեւ բուսածի սկսվելը
և աշնանը՝ տերեւարափից հետո, մինչեւ սառնամանիքների սկսվելը)
ծառատունկ կատարելու դեպքում: Ինչպես աշնանային, այնպես
էլ գարնանային տնկումներն ունեն եւ դրական եւ բացասական կող-
մեր, որոնք հարկավոր է հաշվի առնել յուրաքանչյուր առանձին դեպ-
քի համար: Գարնանային տնկումների դեպքում բավական
ինտենսիվ է ընթանում տնկանյոթի վնասված արմատների վերա-
կանգնման գործընթացը, եւ արձանագրվում է բարձր կազողականու-
թյուն: Միեւնոյն ժամանակ, գարնանային եղանակի պատճառով
հաճախ կրծատվում է ծառատունկ անելու համար հարմար օրերի թի-
վը, որը սահմանափակող գործոն է արտադրական մեծ այգիների
հիմնման դեպքում: Գարնան տնկումների դեպքում անցանկալի է նա-
եւ տնկման գործընթացին հաջորդող ջերմաստիճանային կտրուկ
բարձրացումները (որը բնորոշ է ՀՀ ցածրադիր գոտիներին): Այս դեպ-
քում բույսերի՝ դեռ չվերականգնված արմատային համակարգը չի
հասցնում բավարարել բույսին անհրաժեշտ քանակի ջրի պահանջը,
որի հետեւանքով կարող է առաջանալ ջրային անբավարարություն:

ՀՀ այն տարածաշրջաններում, որտեղ աշնանային համեմատա-
բար տաք եղանակը տեսում է մինչեւ նոյեմբերի վերջը (Արարատյան
հարթավայր, Հյուսիս-արեւելյան գոտի, Սյունիքի մարզի ցածրադիր
գոտի), պտղահատապտղային տնկարկների հիմնումը սկսվում է հոկ-
տեմբերին եւ շարունակվում մինչեւ կայուն ցրտերի սկսվելը (մոտա-
վորապես 40-45 օր):

Տնկման ժամկետները սահմանելիս հարկավոր է հաշվի առնել
նաեւ տնկվող ծառատեսակի ձմեռադիմացկունությունը: Այն բույսե-

բը, որոնք աչքի չեն ընկնում բարձր ձմեռադիմացկունոթյամբ (ժորենի, թզենի, նոնենի եւ այլն) խորհուրդ է տրվում տնկել օպերանը, քանի որ դրանց երիտասարդ լճացուղները կարող են ցրտահարվել ձմռան խիստ սառնամանիքներից:

Տնկման գործողությունից առաջ անհրաժեշտ է կատարել տնկանյուրի արմատների թարմացում, որի ընթացքում ստուգում են բոլոր տնկիների արմատային համակարգերը եւ հեռացնում արմատների 1-2 սմ ծայրամասերը, ինչպես նաև՝ վճասված արմատները: Հարկավոր է հաշվի առնել, որ վճասված արմատների վերականգնվելու եւ նոր արմատներ առաջացնելու ունակությունը խաթարվում է: Հետեւաբար՝ առողջ մասի եզրից 2-3 սմ խորությամբ մկրատով հեռացվում են նկատված չորուկները, վճասված եւ հիվանդ հատվածները, ինչպես նաև ուռուցքանման գոյացությունները: Արմատների վճասվածքները հիմնականում առաջանում են երիտասարդ ծառերը տնկարանից հանելու եւ պահպանելու ընթացքում:

Տնկման տեխնիկան

Ծառերի տնկումը կարելի է իրականացնել ինչպես ձեռքով, այնպես էլ՝ մեքենայացված: Որեւէ դեպքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տնկված բույսերի ուղղությանը (բույսերը պետք է լինեն նախապես զծանշված ուղղություններին համապատասխան) եւ խորությանը: Հարկավոր է հաշվի առնել, որ զծանշումից շեղված տնկումները (մոտավոր տնկումներ), ինչպես հաճախ հանդիպում է ՀՀ տնտեսավարողների շրջանում, հետագա դժվարություններ են ստեղծում կարկտապաշտպան, ոռոգման համակարգերի ներդրման, ինչպես նաև մշակության աշխատանքների մեքենայացման ընթացքում:

Տնկման համար անհրաժեշտ է պատրաստել հողախառնուրդ, որի համար կարելի է հողի վերելի պարարտ շերտից վերցնել 2 քածին հող, ավելացնել 1 քածին օրգանական պարարտանյութ (կենափառություն, կիսափտած գոմաղը, եթե վերջինը զերծ է հողաբնակ վճասատուներից), 120-200 գ սուլֆերֆոսֆատ եւ 40-80 գ կալիումական պարարտանյութ: Այդ բոլորը լավ խառնելուց հետո 30-35 սմ շերտով լցնում են փոսի մեջ (կոնաձեւ թմբի տեսքով) եւ բողնում մինչեւ տնկման օրը:

Տնկման ընթացքում անհրաժեշտ է տնկին այնպես տեղադրել փոսի մեջ, որ կողային արմատները հավասարապես դասավորվեն փոսի մեջ լցված հողաթմբի վրա: Այնուհետեւ արմատային համակարգն անհրաժեշտ է խնամքով ծածկել նախօրոք պատրաստված բերի հո-

դախառնուրդով: Ընդորում՝ փոսը հողախառնուրդով լցնելու պահին ցանկալի է տնկիները մերք ընդ մերք շարժել, որպեսզի հողն ամրող-ջուրյամբ պատի արմատները եւ լցնի հնարավոր բոլոր ազատ տարածքները: Արմատների շուրջը դատարկ մնալու դեպքում (խորշերի կամ խոռոչների «օդային բարձիկներ») ճվագում է տնկիների կպչո-դականությունը: Փոսը լցնելուց հետո անհրաժեշտ է ոտքերով տրո-րել ու ամրացնել հողը:

Տնկման ժամանակ չի կարելի օգտագործել թարմ գոմաղք, որից անջատված ամոնիակը եւ ծծմբաջրածինը առաջացնում են արմատ-ների բունավորում:

Տնկման ժամանակ հարկավոր է այնպես անել, որ ծառի իսկա-կան արմատավզիկը լինի հողի մակարդակին հավասար, իսկ պատ-վաստի տեղը՝ հողից բարձր:

Տնկիների կպչոդականության եւ աճման հզորության վրա մեծ ազդեցություն ունի տնկման խորությունը: Պետք է տնկել այնպիսի խորությամբ, որ հողը «նստելուց» հետո տնկիների արմատավզիկը հավասարվի հողի մակերեսին:

Ոռոգման ավանդական եղանակի կիրառման դեպքում (ակոսնե-րով եւ բաժակներով ոռոգում), տնկելուց հետո բույսերի շուրջը պատ-րաստում են բաժակներ, կամ անցկացնում են ոռոգման ակոսներ: Կարիլային ոռոգման դեպքում, նորատունկ այգու ոռոգումն իրակա-նացվում է նախօրոք կառուցված ոռոգման համակարգով:

ՊՏՂԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐԻ ԶԵՒԱԿՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ծառերի ձեւավորման բարելավված բնական համակարգերը

Եթք պտղատու բույսերը մշակվում են արդյունաբերական նպատակով, անհրաժեշտ է լինում բույսի աճը եւ կառուցվածքը կարգավորել այնպես, որ առավել արդյունավետ օգտագործվեն լույսը, տարածությունը, հասանելի սննդատարրերը եւ անհրաժեշտ այլ ռեսուրսները: Այս առումով խիստ կարևոր է պտղատու բույսերի սաղարթի ձեւավորումը, որի հիմքը դրվում է պտղատու բույսի տնկման պահին եւ բնորոշում է բույսի կառուցվածքն ամբողջ կյանքի ընթացքում:

Բնական պայմաններում ձեւավորված սաղարթը կենսաբանորեն բավարարում է բույսի պահանջները, սակայն չի կարող ապահովել առավելագույն բերքատվություն, հավասարակշռված աճ, բերքի անցնան վաղ շրջան եւ այլ ցուցանիշներ, որոնք առաջնահերթ են մարդու համար: Սակայն սաղարթի ձեւավորման ընթացքում ոչ միայն հաշվի են առնում մարդու առաջադրած պահանջները, այլև առաջնահերթ կերպով հիմնվում են բույսի կենսաբանական առանձնիատկությունների վրա:

Ծառերի սաղարթի ձեւավորումը կախված է ինչպես աճեցվող պտղատեսակից, դրա բուսաձելից (սորտից) ու կիրառվող պատվաստակալից, այնպես էլ՝ բնակլիմայական պայմաններից, հողից, մշակության ազդություններից:

Հստ ծառի բնի բարձրության ձեւավորումը կարող է լինել.

- բարձրաբուն - բնի բարձրությունը՝ 100-120 սմ եւ ավելի,
- կիսաբարձրաբուն - բնի բարձրությունը՝ 80-90 սմ,
- ցածրաբուն - հնդավորմերի դեպքում՝ 60-70 սմ, կորիզավորների դեպքում՝ 40-50 սմ,




- թզուկային - բնի բարձրությունը 30-40 սմ,
- գետնատարած կամ անբուն - 10-20 սմ:

Ըստ կենտրոնական ուղեկցողի առկայության եւ դրա դիրքի, սահարքի ձեւավորումը կարող է լինել հետևյալ տիպերի:

- Առաջատարով (լիդերային)** - կենտրոնական ուղեկցողը պահպանվում է ծառի կյանքի ամբողջ ընթացքում:
- Փոփոխված առաջատարով (փոփոխված լիդերային)** - ծառի վրա անհրաժեշտ թվով՝ 5-7 ճյուղեր հիմնադրվելուց հետո կենտրոնական ուղեկցողը փոխարինվում է մրցակից ով կամ դրան տրվում է թեր աճման ուղղություն: Դա նպաստում է ծառի՝ պտղաբերման շուտ անցնելուն, խնամքի եւ բերքահավաքի աշխատանքների հեշտացմանը:
- Բաժակաձեւ կամ առանց առաջատարի (անլիդեր)** - կենտրոնական ուղեկցողը հեռացվում է կմախքային ճյուղերի առաջացման կետից վերեւ եւ չի փոխարինվում, նպաստում է սաղարթի լավ լուսավորմանը, օդաշարժին եւ ծառի ցածրած լինելուն, ընդունված է դեղձենու, նշենու, սալորենու դեպքում:
- Պալմետային (քանդակային)** - լինում է քազմազան տարրերակներով (մկ. 28), հիմնականում առանց առաջատարի (լիդերի) կամ՝ նաև քազմաքանակ առաջատարներով:

Ըստ սաղարթի կառուցվածքի ծառերի ձեւավորումը կարող է լինել **բնական բարելավված** (սովորական, դասական, բարձրաբուն, ազատ կանգուն) եւ **արհեստական** (քանդակային-պալմետային, թզուկային, ցածրաբուն, այլ):

Բնական բարելավված ձեւավորման դեպքում հիմք է ընդունվում ծառի բնական ձեւը, եւ այգեգործը քիչ ներգործություն է կատարում դրա աճի, կենսաբանական եւ ֆիզիոլոգիական գործընթացների վրա: Բնական բարելավված ձեւա-




Նկար 28. Սաղարթի ձեւավորման պալմետային (քանդակային) համակարգ

Վորումն ունենում է հետեւյալ տարրերակները՝


- բրգաձեւ,
- հինգճյուղաճի հարկային,
- նոսրացված հարկային,
- անհարկ կամ փոփոխված առաջատարով (փոփոխված լիդերային),
- բաժակաձեւ,
- բարելավված բաժակաձեւ:

Բրգաձեւ ծառերն ունեն վերնթաց աճ, քիչ ճյուղավորված բրգաձեւ սաղարթ եւ ծայրամասում ճյուղավորվող բազմամյա ճյուղեր: Նման սաղարթ շատ հազվադեպ ունենում են որոշ հնդավորներ, կեռասենին, ընկուզենին, շագանակենու ուժեղած ձեւերը (նկ. 29):

Հինգճյուղաճի հարկային սաղարթն ունենում է կմախքային ճյուղերի հարկային դասավորություն: Այն սկսում են ձեւավորել դեռ տնկարանում եւ ավարտում երիտասարդ այգում: Որպես առաջին հարկ թողնում են հաջորդական բողբոջներից առաջացած 5 ճյուղերը: Տնկումից հետո այգում ծառերի ձեւավորումը շարունակվում է 3-4 տարի: Ձեւավորման յուրաքանչյուր տարում ուղեկցողի վրա ստեղծում են եւս 1-2 հատ կմախքային ճյուղեր, այնպես, որ ձեւավորումն ավարտելուց հետո 1-ին կարգի կմախքային ճյուղերի ընդհանուր թիվը հասնի 9-11-ի: Այդ ճյուղերից յուրաքանչյուրի վրա ձեւավորվում են 1-2 հատ 2-րդ կարգի ճյուղեր (նկ. 30):



Նկար 29. Բրգաձեւ սաղարթ




Նկար 30. Հարկային սաղարթ


Նոսրացված հարկային սաղարթ ձեւավորելու դեպքում, 5 ճյուղերի փոխարեն առաջին եւ երկրորդ հարկերից յուրաքանչյուրը ձեւավորում են ոչ թե 5, այլ 3-4 մեկընդմեջ, ոչ հարակից բողոքներից՝ (1-ին, 3-րդ, 5-րդ կամ 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ) առաջացած ճյուղերով։ Հնդավոր ծառատեսակների՝ միմյանց հաջորդող հարկերի միջեւ կենտրոնական ուղեկցողի վրա թողնում են 50-60 սմ հեռավորություն։ Կորիզավորների դեպքում այս հեռավորությունը կազմում է 30-40 սմ։ Լեռնային գոտում ծառի սաղարթի հարկերի միջեւ հեռավորությունը կարելի է կրծատվել մինչեւ 25-30 սմ։ Այս ձեւավորումը երբեմն էլ կոչվում է հեռինակի՝ Գելֆանդրեյնի անունով։

Անհարկ կամ փոփոխված առաջատարով (փոփոխված լիդերային) սաղարթի դեպքում կմախքային ճյուղերն առանց հարկեր կազմելու դասավորվում են կենտրոնական ուղեկցողի վրա։ Այսպիսի սաղարթը սկսում են ձեւավորել տնկարանում եւ ավարտում երիտասարդ այգում։ Սովորաբար, ստորին երեք ճյուղերը թողնվում են մեկը մյուսից 8-12 սմ, իսկ դրանցից բարձր ճյուղերը՝ 20-30 սմ հեռավորության վրա։ Ձեւավորման վերջում սաղարթը պետք է ունենա 5-7 առաջին կարգի կմախքային ճյուղեր, որոնք դասավորված են ուղեկցողի առանցքի շուրջ՝ 1,2-1,5 մ տարածության վրա (նկ. 31)։ Ձեւավորման վերջին տարրում կենտրոնական ուղեկցողի ծայրային մասը կտրում-հեռացնում են կամ դրան տալիս են թեք զարգացում։ Բրգաձեւ սաղարթ առաջացնող մշակածների (սորտերի) կենտրոնական ուղեկցողի զագարը հեռացնում են, իսկ փոված սաղարթ ունեցողների ուղեկցողին տրվում է թեք զարգացում։ Ի տարբերություն հարկային եւ բրգաձեւ համակարգերի, փոփոխված առաջատարով սաղարթի դեպքում ծառերը ստացվում են ավելի ցածր, վաղ են անցնում թերքատվության, կմախքային ճյուղերը լավ են ներածում ուղեկցողի հետ, լինում են ամուր եւ առողջ։ Նման ծառերի բուսաճղ (վեգետացիան) վաղ է ավարտվում, հեշտանում են թերքահավաքի ու էտի աշխատանքները, քիչ թվով նեցուկներ են պահանջվում։ Սակայն ձեւավորման այս համակարգի թերությունն այն է, որ տնկարանում հնարավոր չէ 2-ից ավելի կմախքային ճյուղեր ստեղծել, որովհետեւ հնդավորների պատվաստաշիվը՝ տնկարանի 3-րդ դաշտում (վաղ գարնանը), կամ կորիզավորների պատվաստաշիվը՝ 2-րդ դաշտում (ամռան կեսերին) 1,5 մ բարձրության չի հասնում։

Բաժակաձեւ ձեւավորման սաղարթը ներսում թողնվում է ազատ, առանց առաջատարի (լիդերի)։ Այս տիպի սաղարթ ստանալու համար կենտրոնական ուղեկցողը հեռացվում է դեռևս տնկարանում։



Նկար 31. Անհարկ կամ փոփոխված հարկային ձեւավորում



Նկար 32. Բարելավված բաժակաձև ձեւավորում

Կմախքային ճյուղերն առաջանում են կից բողբոջներից, իսկ սաղարթի կենտրոնը մնում է բաց՝ բաժակի (գավաթի, թասի) տեսքով: Այս ձեւավորումը բնորոշ է դեղձենուն, սալորենուն, նշենուն (նկ. 32):

Բարելավված բաժակաձև ձեւավորումը սկզբունքով նման է բաժակաձեւին, սակայն այս դեպքում կմախքային ճյուղերն առաջանում են մեկընդմեջ բողբոջներից՝ միմյանցից 8-10 սմ հեռավորության վրա՝ նպաստելով ճյուղերի՝ ուղեկցողի հետ լավ ամրանալուն, քամիներին ու բերքի ծանրությանը դիմանալուն: Այս ձեւավորումը կիրառվում է դեղձենու, սալորենու, նշենու դեպքում:

Ծառերի ձեւավորման ցածրած, ինտենսիվ եղանակները (արհեստական սաղարթներ)

Արտադրական պտղաբուծության ինտենսիվացումը եւ խիտ տնկարկների զանգվածային հիմնումը հիմք է դրել ծառերի սաղարթի ձեւավորման ցածրած (արհեստական) եղանակների զարգացմանը: Նման սաղարթներն ունենում են փոքր ծավալ, հեշտ են կառավարվում մարդու կողմից, շուտ են աճեցնում թերքատվության եւ ձեռնուու են տնտեսական առումով: Սակայն սաղարթի նման ձեւավորման դեպքում կրծատվում է բույսերի կյանքի տևողությունը:

Արհեստական (թզուկային, ցածրած, ցածրաբուն, ինտենսիվ, քանդակային-պալմետային, տափակ, մեկքեւանի, երկքեւանի, թփածեւ, փռված, իիկածեւ, այլ) ձեւավորումներ - ձեւավորելիս հիմնովին փոխվում է ծառի բնական ձեւը, մարդը խիստ կերպով ներգործում է ծառի աճի եւ կենսաբանական բնույթի վրա: Արհեստական ձեւավորման համակարգերը ներառում են հետեւյալ ձեւերը (նկ. 33):


Տափակ ձեւավորում, որն ընդգրկում է պարզ (հորիզոնական, ուղղահայաց, մեկ եւ երկկողմանի) եւ բարդ (մեկքեւանի, բազմաթեւ՝ պայտածեւ) կորդոնները:

Քանդակային (պալմետային) ձեւավորում, որն ընդգրկում է հովհարային, շեղ, բազմատեղային տարրերակները:

Ծավալային ձեւավորման մեջ մտնում են առանցքային սաղարթները, որոնք լինում են պարզ, թեավոր, իիկածեւ:

Նկարում պատկերված են արհեստական հետեւյալ ձեւավորումները.


1 - սաղարթի հասարակ պայտաձեւ կենցրունով քանդակային (պալմետային) ձեւավորում,



Նկար 33. Սաղարթի արհեստական ձեւավորման համակարգեր

- 2 - պայտաձեւ կենդրոնով և հորիզոնական ճյուղերով կրկնակի քանդակաձեւ (պալմելի),
- 3 և 4 - հովհարապայրաձեւ կենդրոնով քանդակաձեւ (պալմելի),
- 5 - կենդրոնում՝ հակառակ կորացրած ճյուղերով քանդակաձեւ (պալմելի),
- 6 - Լիսերայի կրկնաքանդակաձեւ (երկպալմելի),
- 7 - քազմասպիդային քանդակաձեւ (պալմելի)՝ շեղ ճյուղերով,
- 8 և 9 - քազմասպիդային քանդակաձեւ (պալմելի)՝ չորսից ուր ճյուղերով,
- 10, 11 և 12 - պայտաձեւ քազմասպիդային քանդակաձեւեր (պալմելիքներ),
- 13, 14, 15 և 16 - քարդ հովհարանման սաղարթի տարբեր քանդակաձեւեր:

Ինտենսիվ պտղաբուծության մեջ վերջերս առավել շատ կիրառում են իլիկաձեւ, ուղղահայաց առանցքով, վերընթաց սաղարթով, երկար կենտրոնական ուղեկցողով TSA (Tall Spindle Axe) (նկ. 34), նաև ձեւավորման գերնեղ, սեղմված SSA (Super Slender Axe) (նկ. 35), շեղ քանդակաձեւ, հովհարաձեւ, կորդոնային և այլ նորանոր համակարգեր: Գերբզուկային ծառերի դեպքում առավել տարածված են սաղարթի սյունաձեւ տարբերակները:



Նկար 34. Խիստ տնկարկներում կիրառվող ձեւավորման համակարգեր
<https://images.app.goo.gl/LPvGW9AE149wYBov7>

Բավական տարածված է վերընթաց կենտրոնական ուղեկցողով ձեւավորում (TSA համակարգ): Այս համակարգով լիարժեք ձեւավորումը տեսում է 3 տարի և ներառում է հետեւյալ գործողությունները: Տնկումից հետո կենտրոնական ուղեկցողի վրայից հեռացվում են դեռևս տնկարանում զարգացած մի քանի կողային ճյուղերը և հնարավորություն է ստեղծվում ուղեկցողի վրա գտնվող բողբոջներից ստանալ

միմյանցից հավասար հեռավորության վրա գտնվող եւ համապատասխան ուղղությամբ հավասար զարգացած կողային (լատերալ) ճյուղեր: Առաջին հերթին հեռացվում են բնի ստորին հատվածում (հողի մակերեսից մինչեւ 50-60 սմ բարձրությամբ) գտնվող բողբոջները, որի շնորհիվ ծառերի բունը զերծ է մնում կողային ճյուղավորումներից: Կենտրոնական ուղեկցողի վրա կողային նոր ճյուղերի ձեւավորման նպատակով հողի մակերեսից 50-60 սմ վեր գտնվող հատվածում ակտիվացնում են այն բողբոջների աճը, որոնք նպատակահարմար են ծառի սաղարթի ձեւավորման համար:

Այդ նպատակով ընտրվում են միմյանցից 10-11 սմ հեռավորության վրա գտնվող եւ միմյանց նկատմամբ հակառակ դիրքադրություն ունեցող բողբոջները: Դրանց ակտիվացման համար կարելի է կիրառել ինչպես քիմիական միջոցներ (օրինակ՝ պրոմոլին կոչվող հորմոնը), այնպես էլ մեխանիկական միջոց՝ կեղեւահատում, քերծում, որի ժամանակ քերծվածքներ են արփում ընտրված բողբոջի վերին հատվածի կեղեւի վրա (նկ. 36):



Նկար 35. Ձեւավորման գերնեղ SSA համակարգի կիրառումը կեռասենու խիտ տնկարկում




Նկար 36. Բողբոջի ակտիվացումը կտրվածքի միջոցով




Նկար 36. Բողբոջի ակտիվացումը կտրվածքի միջոցով

Տնկման տարվա ավարտին ունենում ենք լավ զարգացած կենտրոնական ուղեկցող եւ դրա ամբողջ երկարությամբ՝ նախընտրելի ուղղություններով, միմյանցից 10-11 սմ հեռավորության վրա աճած 8-12 կողային ճյուղեր (նկ. 37):


Տնկումից հետո երկրորդ տարվա սկզբին (նկ. 38) կենտրոնական ուղեկցողի վերին հատվածում կրկին ընտրվում են այն բողբոջները,




Նկար 37. Պտղատու ծառը ձեւավորման առաջին տարվա ավարտին



Նկար 38. Տնկումից հետո երկրորդ տարվա գարնանը՝ հանգստի շրջան



Նկար 39. Տնկումից հետո երկրորդ տարվա գարնանային էտր




Նկար 40. Պտղատու ծառը ձեւավորման երկրորդ տարվա գարնանը

որոնցից պետք է առաջանան կողային նոր ճյուղերը: Խակ նախորդ տարի աճած կողային ճյուղերը կարճացվում են երկարության 15-25 %-ով (նկ. 39):


Կարճացման երկարությունը կախված է կողային ճյուղերի աճի հզորությունից: Համեմատաբար հզորած ճյուղերը կարճացնում են ավելի խորքից: Որպես նման կարճացումների արդյունք՝ կտրվածքի հատվածից առաջանում են նոր ճյուղեր, ավելանում է տերեւային, հետեւաբար նաև՝ ֆոտոսինթեզող մակերեսը, միեւնույն ժամանակ կրծատվում է հաջորդ տարվա բերքը, որը ցանկալի չէ երիտասարդ ծառի ձեւավորման այս փուլում: Նման կարճացումներով հավասարակշռություն է հաստատվում աճի, զարգացման եւ բերքատվության միջեւ (նկ.40):

Սովորաբար, տնկումից հետո երկրորդ տարում, նախորդ տարվա ընթացքում առաջացած ճյուղերի հիմքում (մեկ տարեկան ճյուղեր) ձեւավորվում է սահմանափակ քանակությամբ բերք (նկ. 41):


Երրորդ տարվա գարնանը (նկ. 42), եթե ծառերը դեռ դուրս չեն եկել հանգստի շրջանից, կրկին իրականացվում է կողային ճյուղերի կարճացում 15-25 %-ով (նկ. 43): Սիեւնույն ժամանակ ակտիվացվում են կենտրոնական ուղեկցողի զագարի մի քանի բողոքները՝ նոր կո-



Նկար 41. Պտղատու ծառը ձեւավորման երկրորդ տարվա ամռանը



Նկար 42. Ձեւավորման երրորդ տարվա գարնանը՝ հանգստի շրջանում




Նկար 43. Տնկումից հետո երրորդ տարվա գարնանային էտր


դային ճյուղեր առաջացնելու նպատակով: Երրորդ տարվա ընթացքում բազմամյա բնափայտի վրա ձեւավորվում է որոշակի քանակությամբ բերք (նկ. 44):

Երրորդ տարվա ամռանը՝ բերքահավաքից հետո կարելի է իրականացնել ամառային (կանաչ) էտ, որը կնպաստի լույսի թափանցմանը դեպի սաղարթի ներս և նոր (գեներատիվ) ծաղկաբողոքների ձեւավորմանը (նկ. 45):

Բավական տարածված է նաև ձեւավորման գերնեղ համակարգ՝ SSA (Super Slender Axe, նկ. 46): Այս համակարգի էությունն այն է, որ շարքի երկարությամբ ծառերը տնկվում են միմյանց շատ մոտ



Նկար 44. Պտղատու ծառը ձեւավորման
երրորդ տարվա ամռանը



Նկար 45. Ամառային էտ, ձեւավորման
երրորդ տարվա բերքահավաքից հետո




Նկար 46. Սալարյահ ձեւավորման գերնել (SSA) համակարգ

(օրինակ՝ 1 մ), իսկ էտի լճթացքում կարճացվում են կողային բացարձակապես բոլոր ճյուղերը։ Կարճացվող ճյուղի վրա բողնում են հիմքի մասում գտնվող բոլոր ծաղկաբողբոջները, դրանցից հետո հաշվում են 2-3 տերեւարողբոջ և ճյուղը կարճացնում այդ հատվածից (նկ. 47)։ Հատման շի ենթարկվում միայն կենտրոնական ուղեկցողի գագարը։



Նկար 47. Ծառերի էտո ձեւավորման գերներ (SSA) համակարգի դեպքում


Բավական մեծ հետաքրքրություն է ներկայացնում, սաղարթի ձեւավորման կորդոնային (երկեւ, քառարեւ) համակարգը: Այս տարրերակի կիրառման դեպքում ծառերի լիակատար հարթ սաղարթի շնորհիվ հնարավոր է լինում խիստ կրճատել այգու միջշարային տարածությունը (մինչեւ 2,5-2,7 մ) և ավելացնել տնկվող ծառերի թիվը միավոր մակերեսի վրա:



Նկար 48. Սաղարթի ձեւավորման երկեւ ու քառարեւ (կորդոնային) (UFO) համակարգ

Սեծ տարածում ունի նաև սաղարթի ձեւավորման «արեւառանցք»

(Solaxe) համակարգը, որը ներդրել են ֆրանսիացի գիտնականները: Ձեւավորման այս համակարգի դեպքում ծառերն ունենում են լավ զարգացած կենտրոնական առանցք, որի վրա դասավորված են 18-22 կողային բերքատու ճյուղերը (նկ. 49): Կենտրոնական ուղեկցողի վրա նշված բերքատու (կմախքային, կողային) ճյուղերից բացի այլ ճյուղավորումներ չեն բողնում: Նոր ճյուղավորումներից (աճից) ազատ է այսպիս նաև կողային բերքատու ճյուղերի հիմքի 40 սմ-ոց հատվածը:



Նկար 49. Սաղարթի ձեւավորման արեւառանցք (Solaxe) համակարգ


Նման կառուցվածքի շնորհիվ լույսն անարգել բափանցում է ծառի սաղարթի ներար: Կողային բոլոր ճյուղերը ճկելու եւ լարով ամրացնելու միջոցով բերվում են հորիզոնական (կամ գրեթե հորիզոնական) դիրքի, որի շնորհիվ դանդաղում է դրանց աճը եւ խրանվում՝ պտղաբերությունը:

Կողային ճյուղերը ճկելու գործընթացն անհրաժեշտ է սկսել տնկումից հետո երկրորդ տարվա գարնանից: Հարկավոր է հիշել, որ ծառի կենտրոնական ուղեկցողը միշտ ունենում է գերակա դիրք: Կողային ճյուղերի վրայից նորացման միջոցով հեռացվում են բոլոր այն աճերը, որոնք ունեն կողային ճյուղի տրամագծի 1/3-ից ավելին եւ համարվում են մրցակից (նկ.50):



Նկար 50. Մրցակից ճյուղերի հեռացում

Այս դեպքում խուսափում են կարճացումներից եւ կտրվածքի հատվածից նոր ճյուղերի առաջացումից: Սիեւնույն ժամանակ հետադարձ էտի միջոցով կարճացվում են կողային հիմնական ճյուղերի վրա դասավորված պտղաբերող ճյուղիկների ծայրային հատվածները, որոնք պատված են միայն բուսածային բողբոջներով: Կարճացումն




Նկար 51. Պտղատու ճյուղի կարճացում՝ անմիջապես ծաղկաբողբոջի վերեւի հատվածից


արվում է անմիջապես ծաղկաբողբոջի վերեւի հատվածից (նկ. 51):

Չնայած այն հանգամանքին, որ ծառերը կարող են պտղաբերել շատ վաղ (նույնիսկ տնկումից հետո երկրորդ տարում), հարկավոր է հեռացնել ձեւավորված պտղուղները եւ հնարավորություն ընձեռել բույսի նորմալ աճի, զարգացման եւ ապագա պտղաբերող սաղարթի ձեւավորման համար:

Բացի ձեւավորման թվարկված համակարգերից, գոյություն ունեն մեծ թվով այլ համակարգեր, որոնք կիրառելի են պտղատու խիտ տնկարկների հիմնման համար:



Նկար 52. Չեւավորման լարասյունային համակարգ (շպալերա) հատապտղայինների համար



Նկար 53. Հատապտղայինների ձեւավորման լարասյունային T-աձեւ, երկու լարով համակարգ

Հատապտղային մշակաբոյսերի դեպքում հաճախ օգտագործվում է ձեւավորման լարերով ամրացվող լարասյունային (շպալերային) համակարգը: Լարասյունային համակարգը կարող է լինել մեկ շարքանի, T-աձեւ մեկ լարով, T-աձեւ երկու լարով, նավակաձեւ երկու լարով եւ այլ կառուցվածքով (նկ. 52-53):

Էտի կատարման տեխնիկան, Նպատակը, ժամկետները եւ ՃԵԼԵՐԸ

Էտը ազրոտեխնիկական կարեւորագույն միջոցառում է, որի շնորհիվ հավասարակշռվում է պտղահատապտղային բույսերի բուսաճը (վեգետատիվ աճը) եւ պտղաբերման ոճակությունը, կարգավորվում է բույսերի բարձրությունը, նվազեցվում է հիվանդությունների եւ վնասատուների զարգացման հավանականությունը, ինչպես նաև կատարվում է ծերացող բույսերի երիտասարդացում: Էտի կատարման ընթացքում կտրվում եւ հեռացվում են բույսերի ամբողջական օրգանները կամ դրանց որոշակի հատվածները (շիկ, ընձյուղ, աճման կոն, ճյուղ, կմախքային ճյուղ, բուն եւ այլն):

Գոյություն ունի շիվերի կամ ճյուղերի էտի 2 հիմնական ձեւ՝ հեռացում եւ կարճացում:

Նորացումը ճյուղի կամ շիվի ամբողջական հեռացումն է հիմքից՝ տարեկան օդակի վրայից կամ նախորդ կարգի ճյուղի միացումից: Նորացումով սաղարթի ներսն ազատվում է մոտ աճող ավելորդ շիվերից ու ճյուղերից: Նորացումով հեռացնում են բոլոր այն ճյուղերը, որոնք խտացնում են սաղարթը, աճում են հորիզոնական ուղղությամբ կամ ներքեւ՝ դեպի հողը: Հեռացնում են սուր անկյուն կազմող եւ միմյանց մրցակից զույգ ճյուղերից մեկը: Հեռացվում են նաև այն բոլոր չորացած, ցրտահարված, հիվանդություններով եւ վնասատուներով խիստ վարակված ճյուղերը, որոնք այլևս չեն կարող վերականգնվել (նկ.54):

ճակի հեռացումն է (նկ. 55): Հիմք ընդունելով կատարվող կտրվածքի խորությունը (շիկի երկարության հեռացման



Նկար 54. Նորացում



Նկար 55. Կարճացում

աստիճանը՝ կիրառվում են կարճացման տարբեր աստիճաններ:

- ա. ծերատում - հեռացվում է ճյուղի աճման կոնք, ծայրամասը, գագաթը՝ երկարության մինչեւ 5-10 %-ը,
- բ. բույլ կարճացում - հեռացվում է ճյուղի երկարության մինչեւ 1/3 կամ 10-30 %-ը,
- գ. միջակ կարճացում - հեռացվում է ճյուղի երկարության կեսը, մոտ 50 %-ը,
- դ. ուժեղ կարճացում կամ խոր էտ - հեռացվում է ճյուղի երկարության մինչեւ 2/3-ը կամ 60-70 %-ը:

Հատումների նպատակից ելնելով տարբերվում են էտի հետեւյալ եղանակները:


Զեւավորող էտ - կատարվում է երիտասարդ բույսերին որոշակի ձեւ տալու եւ բունն ու կմախքային ճյուղերը ձեւավորելու համար: Զեւավորող էտը կիրառվում է ինչպես տնկարանում, այնպես էլ նորատունկ այգում եւ շարունակվում է 3-5 տարի:

Կանոնավորող (կարգավորող) էտ - կատարվում է տարբեր տարիքի ծառերի աճը եւ պտղաբերությունը կարգավորելու եւ հավասարաշղնելու համար: Հատումներն արվում են այն տրամաբանությամբ, որ սահմանափակվի ծառերի սաղարթի վերընթաց հզոր աճը, ապահովվի նոր աճը, զարգացումը եւ պտղաբողոքների առաջացումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր պտղատեսակներ առավելապես պտղաբերում են տարբեր ճյուղերի վրա (միամյա, բազմամյա՝ փնջաճյուղեր, նիզակներ, ընթացիկ տարվա աճ եւ այլն), կանոնավորող էտի դեպքում կարող են կիրառվել տարբեր հատումներ: Սովորաբար բույլ կարճացնում են միամյա ճյուղերի վրա պտղաբերող ծառատեսակների (օրինակ՝ դեղձենի, արեւելյան խորմա (ժորենի), նոնենի եւ այլն)` 50 սմ եւ ավելի երկարություն ունեցող ճյուղերը, չեն հատում 30-45 սմ աճերը եւ ուժեղ կարճացնում են մինչեւ 25 սմ երկարությամբ ճյուղերը: Հնդավոր ծառատեսակների դեպքում, որոնք հիմնականում պտղաբերում են բազմամյա ճյուղերի վրա (օրինակ՝ խնձորենի, տանձենի եւ այլն) տվյալ տարվա բուսածը մեղմելու եւ նոր պտղաբողոքների հիմնելու նպատակով հատումները հիմնականում կատարվում են բազմամյա բնափայտի վրա՝ բացառելով միամյա ճյուղերի կարճացումը: Հեռացվում են բոլոր պտղահատապտղատոր բույսերի սաղարթը խտացնող եւ չափազանց բույլ աճ ունեցող կմախքային ճյուղերը:

Մանիժտարական էտ - հեռացվում են չորացած, կոտրված, ճաքած, հիվանդություններով եւ վնասատուներով ախտահարված, ցրտահարված ճյուղերը:

Հետադարձ էտ – կտրվածքը կատարվում է բացառապես բազմամյա ճյուղերի վրա եւ նպատակ է հետապնդում հատման միջոցով փոխել տվյալ ճյուղի գագաթը կամ աճման ուղղվածությունը: Նման հատումների միջոցով հնարավոր է լինում կարճացնել ճյուղը եւ ճնշել դրա աճը՝ որպես աճման կոն բողնելով ավելի նվազ շիվ: Կտրվածքն արվում է այն հատվածում, որտեղից սկիզբ է առնում ավելի երիտասարդ, ինչպես նաև նախընտրելի չափս եւ ուղղվածություն ունեցող ճյուղը (նկ. 56):

Երիտասարդացում - կիրառվում է այն դեպքում, երբ նկատվում է ծառերի աճի թուլացում, կմախքային ճյուղերի մերկացում կամ չորացում եւ բերքատվության տեղափոխում ծառի սաղարթի ծայրամասերը: Նման դեպքերում հատվում են 3-5 տարեկան ճյուղերը (նկ. 57.):



Նկար 56. Հետադարձ էտ



Նկար 57. Երիտասարդացում

Կունդ - կատարվում է ծերացող եւ ծերացած ծառերի կմախքային եւ կիսակմախքային ճյուղերի երիտասարդացում, դրանց մասնակի կամ ամբողջական հեռացում:

Բնատում - իրականացվում է ծերացած ծառի ամբողջական երիտասարդացում՝ թնի մասնակի կամ բոլոր կմախքային ճյուղերի ամբողջական հեռացում: Այս դեպքում թողնվում է միայն բունը կամ թնի մի հատվածը:

Էտի ժամկետները

Հիմք ընդունելով պտղահատապտղային բույսերի ֆիզիոլոգիական հատկությունները, էտ կարելի է կատարել բույսերի տարեկան զարգացման բոլորաշրջանի ցանկացած ժամանակահատվածում (Ների, Մասետանի 2018): Սակայն էտի կատարման ժամկետները որոշելիս, հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ տարբեր ժամանակահատվածում կատարված հատումները տարբեր կերպ են ազդում կտրվածքների վերքերի փակման, հատման կետից նոր ընձյուղների ձեւավորման ինտենսիվության, ինչպես նաև ծառերի պտղաբերման ունակության վրա (Ակ.58):

Ընդհանուր առմամբ տարբերում են հանգստի շրջանի եւ բուսածի (վեգետացիայի) ընթացքում կատարվող էտ: Հանգստի շրջանի էտն իր հերթին կարող է իրականացվել 2 ժամանակահատվածում:

Աշնանային-ձմեռային - կատարվում է մեղմ ձմեռային կլիմայի դեպքում՝ տերեւարափափից հետո մինչեւ կայուն ցրտերն ընկնելը, հիմնականում բարձր ցրտադիմացկունություն եւ ձմեռադիմացկանություն ունեցող (խնձորենի, տանձենի, սալորենի, բալենի, ծիրանենի) պտղատեսակների պարագայում:

Ձմեռային-գարնանային - սկսվում է ձմռան ավարտին՝ գարնա-

նաշնչի ազդակների պահին (սովորաբար՝ փետրվարի կեսից մինչեւ տվյալ պտղատեսակի բողոքների ուժելը), կատարվում է պակաս ցրտադիմացկուն ծառատեսակների համար եւ տաք կլիմայի պայմաններում: Համեմատաբար փոքր այգետարածքներում, որտեղ տվյալ ժամանակահատվածում չկա աշխատուժի հասանելիության խնդիր, բոլոր ծառատեսակների հանգստի շրջանի էտը կարելի է իրականացնել այս ժամկետում:

Բուսածի (վեգետացիայի) ընթացքում կատարվող էտն իրականացվում է բուսածի ողջ ընթացքում եւ կոչվում է կանաչ էտ: Նման հասումներ կատարվում են ինչպես մինչեւ բերքի հասումնացումը, որի դեպքում հեռացվում են սաղարթը խտացնող, բերքը ստվերող ճյուղերը, այնպես էլ՝ բերքահավաքից հետո: Բերքահավաքից հետո սովորաբար կտրվում են այն ճյուղերը, որոնք պտղաբողոքներ կրելու պատճառով չեն հեռացվել հանգստի շրջանում: Հատվում են նաև սաղարթը խտացնող ճյուղերը որոնք խիստ ստվերելով՝ խոչընդոտում են հաջորդ տարվա պտղաբողոքների ձեւավորումը, ինչպես նաև այն ճյուղերը, որոնց հատման կետից ցանկալի չէ ունենալ նոր հզրած ճյուղեր: Ի տարբերություն հանգստի շրջանում կատարված էտի, ամռան վերջում իրականացված հատման միջոցով ձեւավորվում են անհամեմատ քոյլ աճ ունեցող շիվեր:

	Դեկտեմբեր	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր
	Զմեռ	Գարուն			Ամառ			Աշուն				
Հանգստի շրջանի էտ												
Վաղ ամառային էտ												
Աշնանային էտ												

■ Փայտացած շիվերի և ճյուղերի էտ

■ «կանաչ էտ»

Նկար 58. Էտի կատարման ժամկետները

ՀՆԴԱՎՈՐՆԵՐԻ ԷՄՊՐ

Հնդավոր պտղատեսակներն աչքի են ընկնում համանման կենսաբանական առանձնահատկություններով: Դրանով է բացատրվում այս խմբի մեջ մտնող հիմնական ցեղերի էտի ժամկետների, ձեւերի եւ առանձնահատկությունների համընկնումը:

Չնայած այն հանգամանքին, որ վերջին շրջանում Հայաստանում սկսել է զարգանալ ինտենսիվ պտղաբուծությունը (խիտ տնկարկները), այդեզրոք ավանդական համակարգերը (դասական այգիները) մնում են երկրի պտղաբուծության ոլորտի հիմքը: Տարբեր հասակային կազմի ավանդական եւ խիտ տնկարկներում կիրառվող էտի ձեւերը եւ մոտեցումներն էապես տարբերվում են միմյանցից, սակայն բոլոր դեպքերում միտված են բարձրացնել արտադրության արդյունավետությունը, շահութաքերությունը, հավասարակշռել ծառերի բուսաճր եւ պտղաբերման ունակությունը, ինչպես նաև միավոր բերքի ստացման համար կրճատել պահանջվող աշխատանքի ծավալը:

Հնդավոր ծառատեսակների աճի ու զարգացման տարբեր փուլերի ընթացքում կիրառվում են էտի տարբեր մոտեցումներ, որը հիմնականում պայմանավորված է տարբեր հասակի ծառերին բնորոշ կենսաբանական առանձնահատկություններով:


Ավանդական տնկարկներում՝ **աճի ու զարգացման առաջին շրջանում**, տնկումից հետո առաջին մեկ-երկու տարում հնդավոր ծառատեսակներն աչքի են ընկնում համեմատաբար բույլ աճով, որի հետեւանքով սաղարքը շատ դանդաղ է ընդարձակվում: Տնկման երկրորդ-երրորդ տարվանից աճը հզրանում է, իսկ սաղարքն արագորեն մեծանալով ընդունում է տվյալ ծառատեսակին եւ մշակաձեւին բնորոշ տեսք: Այս փուլում ավանդական այգիներում էտի նպատակն է ձեւավորել ծառերի սաղարքը, ստեղծել հաստ, ամուր, ցանկալի ուղղությամբ զարգացած կմախքային ճյուղեր, այնպես, որ դրամք լավ ներաճած լինեն ուղեկցողի կամ շարունակող ճյուղի հետ եւ սուր անկյուն չկազմեն դրանց նկատմամբ: Այս նպատակով, առաջին հերթին, հեռացնում են սաղարքում եղած ավելորդ, իրար խանգարող, ցրտահարված, չորացած ճյուղերը: Այսուհետեւ հեռացնում են կմախքային ճյուղերի երկու տարեկան բնափայտերի վրա առա-

շացած մեկ տարեկան շիվերի ծայրային մասերը: Էտի ընթացքում հաշվի են առնում ծառերի տեսակային ու մշակաձեւից բխող առանձնահատկությունները, ստեղծվող սաղարթի տիպը, էտվող ճյուղի վհճակը եւ դրա զարգացման ուղղությունը: Էտի ձեւերից հիմնականում կիառվում է կարճացումը եւ ծերատումը: Կարճացնում են մեկ տարեկան ճյուղերի ծայրային մասերը, ընդ որում, կախված էտվող ճյուղի աճի ուժից, կատարում են քոյլ, միջակ եւ ուժեղ կարճացումներ: Միայն բացառիկ դեպքերում են կարճացվում երկու եւ երեք տարեկան բնափայտի վրա առաջացած կողային ճյուղերի ծայրային մասերը:

Խիստ տմկարկներում, այս փուլի էտի եւ ձեւավորման աշխատանքներն էապես տարբերվում են ավանդականից եւ նպատակ են հետապնդում առավելագույն կարճ ժամանակահատվածում (հիմնականում 2-3 տարի) ավարտել սաղարթի ձեւավորումը, եւ ապահովել բերքատու ճյուղերի հավասար տեղաբաշխումն ամբողջ սաղարթի ծավալով:

Աճի ու զարգացման երկրորդ շրջանում ծառերն աչքի են ընկնում հզոր քուսաճով, միեւնույն ժամանակ ձեւավորվում են քիչ քփով պտղաճյուղիներ: Այս շրջանում կիրառվում է էտի այլ մոտեցում: Մասնավորապես՝ նոր ճյուղեր առաջացնելու նպատակով կատարվում են կարճացումներ: Ընդ որում, ուժեղ աճ ունեցող շիվերը կարճացնում են միջին չափով (հեռացվում է շիվի երկարության 1/3-ը): Ավելի քոյլ աճ ունեցողները ծերատում են (կարճացնում են 1/5 չափով): Մնացած բոլոր դեպքերում, երբ նպատակ են դնում նվազեցնել աճեցողությունը եւ նապաստել պտղաբերող օրգանների ձեւավորմանը՝ խուսափում են մեկ տարեկան ճյուղերի կարճացումներից: Այդ դեպքում առավելությունը տրվում է նորացումներին եւ բազմամյա բնափայտի վրա կատարվող հետադարձ էտին:

Ծառերի աճի ու զարգացման երրորդ շրջանը բնորոշվում է ակտիվ պտղաբերումով: Այս շրջանում շարունակվում է ծառերի քուսաճը, սակայն ճյուղերի տարեկան աճը չի գերազանցում 20-25 սմ-ը: Այս փուլի ընթացքում սաղարթը բավական խտանում է, եւ նկատվում է որոշ պտղաճյուղերի ծերացում (նույնիսկ՝ չորացում): Աճի եւ զարգացման այս շրջանում սաղարթը նորացվում է այնպես, որ այն լինի օղաքափանց եւ բավարար լուսաբափանց: Հեռացվում են նաեւ բոլոր ծերացած եւ չորացած ճյուղերը, եւ խրանվում է նոր պտղագոյացությունների առաջցումը: Հաճախ նորացնում են չորացած կամ ուժը կորցրած օղանիստերն ու նիզակները: Իսկ երբեմն էլ՝ 3-10 տարեկան պտղակիրների երիտասարդացման նպատակով կատարվում է դրանց կարճացում:



Նկար 59. Հոռաշիկ

Աճի եւ պտղաբերման չորրորդ շրջանում, ծառերի սաղարթը հասնում է իր սահմանագծին եւ պտղաբերման առավելագույն չափին, խստ նվազում է աճը (գրեթե դադարում է), պակասում է տերեւային մակերեսը եւ ի հայտ է զայս պտղաբերման պարբերականություն: Երկրորդ եւ երրորդ շրջաններում առաջացած պտղաբերող ճյուղերը սկսում են չորանալ եւ սաղարթի ստորին մասերում առաջանում են հոռաշիվեր (Ակ. 59): Այս շրջանում էտի խնդիրն է կմախքային եւ կիսակմախքային ճյուղերի ծայրամասերում առաջացնել ուժեղ աճեր եւ նոր պտղաճյուղիկներ: Այդ նպատակով իրականացնում են կմախքային եւ կիսակմախքային ճյուղերի ծայրամասերում եղած մեկ տարեկան եւ երկու տարեկան ճյուղերի կարճացումներ: Երեմն էտվում են նաև ավելի նանր ճյուղավորումները:

Կարճացմանը զուգընթաց կատարում են նաև նոսրացում: Հեռացնում են չորացած կամ ծերացած (10 տարեկան եւ ավելի) պտղաբերող ճյուղերը, սաղարթը խտացնող այլ կողային ճյուղավորումները: Կարճացնելով երիտասարդացնում են բարդ օղանիստերը, պտղակիրմները եւ այլն (Ակ. 60):

Նոսրացնում են երկար պտղաբերող ճյուղերի վրա եղած աճակալող մասերը, ինչպես նաև կարճացնում են կմախքային եւ կիսակ-



Նկար 60. Խնձորենու պտղաբերող ճյուղիկները

մախքային ճյուղերը: Ընդ որում՝ կարճացման աստիճանը կախված է ետվող ճյուղի աճի հզորությունից: Ի տարբերություն աճի եւ զարգացման երկրորդ եւ երրորդ շրջանների, այս փուլում կարճացնում են ավելի մեծ տարիք ունեցող բնափայտի վրա եղած պտղաբերող ճյուղավորումները:

Ընդհանուր առմամբ 25-30 %-ով նոսրացվում են ծերացած, տարիքն առած պտղաբերող ճյուղերը: Այդ եղանակով էտում են 4-5 տարին մեկ աճագամ:

ԱՃԻ ԻԲՆԳԵՐՈՐԴ ՇՐՋԱՆՈՒՄ (խնձորենու եւ տանձենու 35-40 տարեկան տևակարկներ) խիստ քուլանում է աճը, սաղարթի կենտրոնում եղած ճյուղավորումներն ու պտղաճյուղիկները լրիվ մահանում են, խոչ աճը կենտրոնախույս ուղղությամբ փոխադրվում է սաղարթի ծայրային մասերը: Այդպիսի դեպքերում սաղարթի կենտրոնում գոյանում են մեծ թվով հոռաշիվեր: Բացի այդ, նկատվում է կմախքային ճյուղերի մասերի չորացում:

Կարճացվում են 3-5 տարեկան կողային ճյուղավորումները: Այդպիսի էտու կոչվում է մասնակի երիտասարդացում, խոչ արտադրության մեջ՝ խոր էտ: Խոր կարճացնելու հետեւանքով կմախքային ճյուղերի հիմքի մասի քնած բողոքներն արթնանում եւ առաջացնում են ուժեղ աճ ունեցող հոռաշիվեր: Այդ հոռաշիվերի մի մասը նոսրացման միջոցով հեռացվում է, մի մասին էլ տրվում է նպատակահարմար ուղղություն՝ հետագայում դրանցից փոխարինող կմախքային ճյուղեր ձեւավորելու համար: Որոշ հոռաշիվերի վրա նոր պտղաբերող ճյուղավորումներ գոյացնելու նպատակով կատարում են կարճացումներ:

ՎԵՐԵՐՈՐԴ ՇՐՋԱՆՈՒՄ աճը գրեթե կանգ է առնում, նկատվում է կմախքային ճյուղերի ծայրային մասերի չորացում: Կենտրոնում եւ կենտրոնից դուրս սաղարթը գրեթե 2/3-ով դատարկվում է, եւ ընկնում է բերքատվությունը: Այս փուլում էտի խնդիրն է երիտասարդացնել ծառերը: Այդ նպատակով ուժեղ կերպով կարճացնում են առաջին կարգի կմախքային ճյուղերը: Ընդ որում՝ երիտասարդացումը կատարում են 2-3 տարվա ընթացքում: Կմախքային ճյուղերը կտրում են այգու տղոցով, խոչ առաջացած վերքերը մշակում են այգու մածիկով: Նման միջոցառման շնորհիվ 3-4 տարվա ընթացքում հնարավոր է վերականգնել ծառերի սաղարթը եւ պտղաբերման ներուժը:

ՅՈՐԵՐՈՐԴ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ, առավել եւս իններորդ տարիքային շրջաններում ծերացող եւ մահացող ծառերի մեծամասնության հետազա էտու ու վերականգնումն անհիմաստ է դառնում: Դրանք ենթակա են այգու տարածքից հեռացման եւ պետք է հիմնովին արմատախիլ արվեն:

ԽՆԱԴՐԵՆՈՒ ԷՄԾ

Խնածորենու տարբեր բուսաձեւերն (մշակաձեւերն) ունեն աճի եւ պտղաբերման տարբեր առանձնահատկություններ, պտղաբերում են տարբեր տիպի շիվերի (պտղաբերող օրգանների) վրա, պահանջում են էտի խիստ տարբեր մոտեցումներ: Ընդհանուր առմամբ, խնածորենու բոլոր բուսաձեւերը, պտղաբերման բնույթից, աճի հզրությունից եւ կիրառվող էտի մոտեցումներից ելնելով, բաժանվում են երեք խմբի:

Երկար պտղատու ճյուղերի ծայրամասում պտղաբերող մշակաձեւեր («Սինապի» տիպ)

Այս խմբին են պատկանում Ապորտը, Կանդիլ սինապը, Սառի սինապը, Կալվիլների խումբը, Պեպին լիտովսկին, Կորիչնոյե պոլոսատոյեն, Օսեննի պոլոսատոյեն, Ռոզմարին բելին եւ այլն: Ներկայումս նշանակած մշակաձեւերն արդյունաբերական մեծ նշանակություն չունեն, դրանք տարեկան երկար աճերի հետ մեկտեղ գոյացնում են 25-30 սմ երկարության մերկ պտղաշիվեր, որոնց վրա եղած կողային բողբոջները չեն բացվում: Դրանց քանակը երբեմն այնքան շատ է լինում, որ բավական խտացնում են սաղարթը: Էտի ընթացքում հիմնականում նոսրացվում է սաղարթը, ինչպես նաև կարճացվում է սուր անկյուն կազմող 1-3 տարեկան զույգ ճյուղերից մեկը: Հասուն եւ թույլ աճով աչքի ընկնող ծառերի դեպքում կատարվում է երիտասարդացնող էտ:

Կարճ պտղաբերող ճյուղերի՝ օղանիստերի եւ նիկակների վրա պտղաբերող մշակաձեւեր («Պարմենի» կամ «Շաֆրանի» տիպ)

Այս խմբի մեջ են մտնում Պարմեն զիմնի զոլոտոյ, Ռենես Օղեանի, Ռենես շամպայնի, Ռենես Կասելի, Պեպին Լոնդոնի, Պապիրովկա, Ռենես լանդսբերգի, Կարմրկենի, Զիսկչիկան, Փարվանա եւ այլ մշակաձեւերը: Դրանք մեկ տարեկան աճերի վրա եղած բողբոջներից առաջացնում են 10-15 սմ երկարությամբ նիզակներ, որոնք հետագայում ճյուղավորվելով փոխակերպվում են պտղակիրների: Այդ ճյուղերը հիմնականում դասավորված են լինում կմախքային ու կիսակմախքային ճյուղերի հիմքում, երկարակյաց են, ապրում են 12-15 (երբեմն ավելի) տարի, լավ թերք են տալիս մինչեւ իրենց կյանքի 6-8-րդ տարիները:


Սովորաբար սաղարթի ծայրամասերում եղած պտղակիրներից եւ պտղապայտակներից հաճախ գոյանում են 2-3 սմ երկարությամբ ընձյուղներ, որոնք հաջորդ տարում վերածվում են օղանիստերի: Այս խմբի սորտերի էտի ընթացքում հաճախակի կարճացնում են կմախ-

քային ճյուղերի ծայրային մասերը (հիմնականում 30 %-ով), ինչպես նաև կատարում են նորացում: Խակ երկար պտղաճյուղիկները խորհուրդ է տրվում կարճացնել՝ երիտասարդացնելու նպատակով:

Երրորդ խմբի մեջ մտնում են մի շարք մշակածեւր, որոնք պտղաբերման բնույթով միջանկյալ տեղ են գրավում առաջին եւ երկրորդ խմբերի միջեւ՝ պտղաբերում են ինչպես երկար պտղաբերող ճյուղերի, այնպես էլ կարճ օղանիստերի եւ նիզակների վրա:

Երկար պտղաբերող ճյուղերն ունենում են 40-50 սմ երկարություն: Կարճ պտղաբերող ճյուղերը մեծ մասամբ առաջանում են օղանիստերի ձեւով, 3-5 սմ երկարությամբ եւ դասավորված են լինում կմախքային ճյուղերի վրա:

Հայատանի Հանրապետությունում գարգանում է ինտենսիվ պտղաբուծությունը, նորանոր խիտ տնկարկներ են հիմնվում հիմնական պտղաբուծական շրջաններում: Հարկ է նշել, որ ցածրած (թզուկային) ծառերի էտրը էականորեն տարբերվում է ավանդական այգիների ծառերի էտրից: Մասմավորապես՝ հմավորների էտի հիմնական առանձնահատկությունն այն է, որ ծառերի ձեւավորման ժամանակ խուսափում են հիմնական ճյուղերի աճման կոների հեռացումից: Ծյուղերի աճման հզրությունը սովորաբար կանոնավորում են՝ դրանք տարբեր անկյան տակ ճկելու միջոցով: Ընդ որում, որքան շատ է ճկված ճյուղը, այնքան դանդաղ է ընթանում դրա աճը (նկ.61):



Նկար 61. Ցածրած խնձորենու աճի եւ պտղաբերման կարգավորումը ճյուղերի ձկման միջոցով

Տանձենու էտը

Ընդհանուր առմամբ տանձենու սաղարթի ձեւավորումը նման է խնձորենու սաղարթի ձեւավորմանը եւ հիմնականում կախված է ինչպես պատվաստակալից, այնպես էլ բնակլիմայական պայմաններից: Այնուամենայնիվ, այդ երկու պտղատեսակները աճի տեսակետից որոշակիորեն տարբերվում են միմյանցից եւ պահան-

զում են էտի եւ սաղարթի ձեւավորման փոքր-ինչ տարբեր մոտեցումներ: Մասնավորապես, տաճանական աշքի է ընկնում բողոքների բացվելու մեծ ներուժով եւ կողային ճյուղեր առաջացնելու համեստ ունակությամբ: Որպես արդյունք, խնձորենու համեմատ տաճանական ունենում է ավելի նոսր սաղարթ: Տաճանական ունենում է ամուր եւ դիմացկուն կմախքային ճյուղեր, որոնք հիմնականում չեն ջարդվում բերքի ծանրությունից: Ընթացիկ տարվա ամերս ավելի հզոր են, քան խնձորենու դեպքում: Մեկամյա ճյուղերի վրա գտնվող բողոքներից հիմնականում առաջանում են թույլ ճյուղավորումներ, որոնց մեծ մասը վերածվում է կարճ օղանիստերի եւ նիզակների: Միայն սահմանափակ թվով ընձյուղներ կարող են լավ աճել եւ ձեւավորել կողային զարգացած ճյուղեր:

Տաճանական տարբեր մշակաձեւեր միմյանցից տարբերվում են աճի քննույթով, ուստի էտի եւ ձեւավորման մոտեցումներով: Այդ պատճառով բոլոր մշակաձեւերը խմբավորվում են երեք հիմնական խմբերի մեջ:

«Զմեռնուկ» տիպի մշակաձեւեր, որոնցից Հայաստանում մշակվում են «Զմեռնուկը», «Բերե Բուկը», «Սինի մալաշան», «Անտառային գեղեցկուիհն», «Բոն Լուիզը» եւ այլն: Նշված մշակաձեւերն աշքի են ընկնում ուժեղ աճեցնությամբ, կողային ճյուղեր տալու թույլ ունակությամբ եւ հիմնականում պտղաբերում են երկար պտղաբերող շիվերի վրա:

Այս խմբին պատկանող ծառատեսակների ձեւավորումից հետո (պտղաբերման սկիզբ) մեկ տարեկան ճյուղերի վրա կիրառում են թույլ կարճացումներ եւ հեռացնում են դրանց երկարության Զ մասը: Որպես արդյունք՝ առաջանում են կողային ճյուղավորումներ:

Լրիվ պտղաբերման շրջանում կարճացնում են մեկ տարեկան ճյուղերի երկարության 1/3 մասը, միաժամանակ նոսրացնելով հեռացնում են չորացած, ջարդված, ծերացած օղանիստերն ու նիզակները:

Աճի ու պտղաբերման 5-րդ եւ 6-րդ շրջաններում գտնվող ծառերի 2 եւ 3 տարեկան ճյուղերի երկարության զ մասը կարճացնում են: Դրան զուգընթաց կատարում են նաև նոսրացում՝ հեռացնելով ծերացած, չորացած կիսակմախքային ճյուղերը:

Աճի 7-րդ եւ 8-րդ շրջաններում, եթե ծերացող ծառերը դեռ կենաւնակ են եւ աճելու են եւս մեկ տասնամյակ, կատարում են երիտասարդացում:

«Պեկանկա զիմնյայ» տիպի սորտեր, որոնցից Հայաստանում մշակվում են «Բերե Արդանպոնը», «Բերե Ամանլին», «Բերե դիլը»,

«Մալաշան», «Դեկանկա դյու Կոմիսը» եւ այլն: Այս մշակաձեւերն աչքի են ընկնում ըստ երկարության բույլ աճով եւ կողային ճյուղեր տալու մեծ ունակությամբ: Սրանք հիմնականում պտղաբերում են կարճ պտղաբերող ճյուղերի՝ օղանիստերի, նիզակների եւ պտղակիրների վրա:

Այս խմբի մշակաբույսերի պտղաբերման սկզբում սովորաբար զի չափով կարճացնում են մեկ տարեկան ճյուղերը: Կատարում են թերթեւակի նոսրացում: Եթք ծառերը մտնում են լրիվ պտղաբերման փուլ (4-րդ եւ 5-րդ շրջաններում), կարճացումներ կատարում են ինչպես 1, այնպես էլ 2 տարեկան ճյուղերի վրա: Ընդ որում՝ 1 տարեկան ճյուղերը կարճացվում են 1/2-ի կամ նույնիսկ 2/3-ի չափով եւ նպատակ է դրվում առաջացնել կողային նոր ճյուղավորություններ: Երկու տարեկան ճյուղերի վրա կատարված կարճացումները նպաստում են նոր պտղաբերող ճյուղերի առաջացմանը: Նոյն ժամանակահատվածում իրականացվում է սաղարթի նոսրացում՝ հեռացվում են բոլոր չորացած, տարիքավոր օղանիստերն ու նիզակները:

Այս սորտատիպի մշակաձեւերի կենսունակությունը պահպանած ծառերի աճի ու զարգացման 6-րդ եւ 7-րդ շրջաններում հիմնականում կարճացնում են 2-4 տարեկան ճյուղերը եւ կատարում սաղարթի նոսրացում՝ հեռացնելով չորացած կիսակմախրային ճյուղերը եւ հոռաշիվերի մեծ մասը: Թողած հոռաշիվերից ձեւավորում են նոր կիսակմախրային ճյուղեր: Ծառերի աճման 8-րդ շրջանում, եթե հնարավոր է՝ կատարում են երիտասարդացում:

«Կյուրե» տիպի սորտեր, որոնցից Հայաստանում մշակվում են «Կլապի սիրելին», «Սեն-Ժերմենը», «Վիլյամս ամառայինը», «Իլյինկան» եւ այլն: Այդ խմբի մեջ մտնող սորտերը պտղաբերում են ինչպես երկար պտղաշիվերի, այնպես էլ կարճ օղանիստերի ու նիզակների վրա:

Այս խմբի ներկայացուցիչների պտղաբերման սկզբում հիմնականում կարճացնում են մեկ տարեկան ճյուղերը, հեռացնում են նաև սաղարթը խտացնող, իրար խանգարող ճյուղերը: Լիարժեք պտղաբերման շրջանում կատարում են նաև երկու տարեկան ճյուղերի կարճացումներ: Տարիքավոր ծառերի դեպքում, եթե հնարավոր է՝ իրականացվում է երիտասարդացում:

ՍԵՐԿԵԼԻԵՆՈՒ ԷՄՐ

Սերկելիենու սաղարթը ձեւավորում են առանց կենտրոնական ուղեկցողի (բաժակաձեւ), իսկ հետագա տարիներին իրակականաց-

նում են կարճացումներ եւ նոսրացում, որի ընթացքում հեռացվում են չորացած, ինչպես նաև դեպի սաղարքի ներս աճող ու խտացնող ճյուղերը: Ընտրված պատվաստակալը (Եթե սերկելիլենու ծառը բազմացվել է պատվաստով) էապես ազդում է ծառերի աճի ինտենսիվության եւ ծառերի առավելագույն բարձրության ցուցանիշի վրա: Հզոր պատվաստակալների կիրառման դեպքում հաճախ բազմամյա ճյուղերի հետադարձ էտի միջոցով իջեցնում են (սահմանափակում են) ծառերի բարձրությունը:

Բերքատվության շրջանում էտի միջոցով կարգավորում են աճը՝ նայաստելով նոր կորային ճյուղերի, ինչպես նաև պտղատու շիվերի առաջացմանը: Խորհուրդ է տրվում հետեւել սերկելիլենու ճյուղերի երկարությանը եւ անհրաժեշտության դեպքում սահմանափակել դրանց աճը երկարությամբ, քանի որ չափից ավելի երկար եւ բերքով ծանրաբեռնված ճյուղերը հաճախ ձկվում եւ ջարդվում են:

Լիարժեք բերքատվության շրջանում խորհուրդ է տրվում թույլ կարճացնել միամյա ճյուղերը, որը նայաստում է պտղաբերող ճյուղերի առաջացմանը: Կարճացմանը զուգընթաց նոսրացման միջոցով հեռացնում են խիտ դասավորված եւ իրար խաճարող ճյուղավորումների մեծ մասը: Ամբողջությամբ հեռացնում են նաև չորացած, վնասված եւ ծերացած ճյուղերը:

Չարունակում են նոսրացման միջոցով հեռացնել հասակավոր եւ աճը թուլացած ծառերի չորացած ճյուղերը եւ աճն ուժեղացնելու նպատակով կատարում են ուժեղ կարճացում: Դրա համար հեռացնում են թուր կմախքային ճյուղերի շարունակությունը կազմող աճերի երկարության 2/3 մասը:

Կորիզավորների էտը

Կորիզավոր պտղատեսակների այգետնկումից հետո իրականացվում է ծառերի սաղարթի ձեւավորման գործընթացը, որի ընթացքում միամյա ճյուղերը կարճացվում են տարբեր աստիճանի: Կախված այն հանգամանքից, թե սաղարթի ձեւավորման ինչ համակարգ է ընտրվում, էտի եւ ձեւավորման հետագա աշխատանքներն իրականացվում են տարբեր մոտեցումներով:

Ծիրանենու էտը

Ծիրանենու սաղարթի ձեւավորումը սկսվում է տնկման պահից: Հնդ որում՝ ավանդական տնկարկներում հիմնականում նախընտրելի է ազատ եւ բաց սաղարթը (նոսրացած հարկային, բաժակաձեւ, բարելավված բաժակաձեւ համակարգեր), իսկ խիտ տնկարկներում (ինտենսիվ այգիներում) լավ արդյունք են տալիս կենտրոնական ուղեկցողով եւ տափակ սաղարթով ձեւավորման համակարգերը:

Ավանդական այգու ծառերի բաց սաղարթ ձեւավորելու նպատակով, անմիջապես տնկումից հետո, կենտրոնական ուղեկցողը էտում են 60-70 սմ բարձրությամբ, որի միջոցով ձեւավորվում է ապագա ծառի բունը (30-40 սմ) եւ մնացած երկարության վրա հիմք է դրվում առաջին կարգի կմախքային ճյուղերի զարգացմանը: Կարեւոր է տարածության մեջ ճիշտ ուղղորդել կմախքային ճյուղերի աճը, այնպես որ սաղարթը հավասարապես զարգանա բոլոր կողմերով:

Ծիրանենու էտի ընթացքում աճի եւ զարգացման 2-րդ շրջանում, երբ ծառերը բերքատու են, միեւնույն ժամանակ աչքի են ընկնում հզոր աճով, հարկավոր է էտի միջոցով նպաստել նոր պտղատու ճյուղերի (օրգանների) առաջացմանը: Այս շրջանում սովորաբար խուսափում են նոսրացումներից եւ հիմնականում կիրառում են միամյա շիվերի կարճացումներ:

Աճի եւ զարգացման 3-րդ շրջանում աճման արագավալացությունը (սրբնացությունը) աստիճանաբար դանդաղում է, իսկ պտղարերում՝ հզորանում: Այս շրջանում սովորաբար խուսափում են կարճացումներից: Հիմնականում հեռացվում են մահացած, չորացած ճյուղերը եւ պտղարերող օրգանները: Հեռացվում են նաև սաղարթը

խտացնող ճյուղերը:

Զարգացման 4-րդ շրջանում (երր ծառերի տարիքը հասնում է 20-30 տարեկանի) սկսում են կիրառել կարճացումներ: Այն նպատակ է հետապնդում ակտիվացնել ծառերի բուլացած աճը, խուսափել սաղարթի մերկացումից, ինչպես նաև հիմնել նոր պտղաբերող օրգաններ՝ փնջաճյուղեր, խրանաճյուղեր: Այս շրջանում առավել հաճախ է նկատվում ճյուղերի եւ պտղաբերող օրգանների ծերացում (չորացում): Էտի ընթացքում հարկավոր է խնամքով հեռացնել ծառերի բուլացած օրգանները:

Աճի եւ զարգացման հաջորդ շրջաններում ծառերի աճը զրեթէ կանգ է առնում, սկսում են չորանալ նույնիսկ կմախքային ճյուղերի ծայրամասերը, նորանում է սաղարթը եւ կրծատվում է տերեւային (ֆոտոսինթեզող) մակերեսը: Ուստի այս շրջանում խորհուրդ է տրվում կիրառել երիտասարդացնող էտ եւ կարճացնել 3-5 տարեկան եւ տարիքով ավելի մեծ կիսակմախքային ճյուղերը: Այսպիսի էտի շնորհիվ հնարավորություն է ստեղծվում իջեցնել ծառի սաղարթը եւ կրծատել ընդհանուր բարձրությունը:

Ծիրաննենու աճի ու զարգացման 7-րդ փուլում, եթե ծառը կարող է պտղաբերել մինչեւ 40-50 տարեկանը, էտի հիմնական նպատակն է կանխել ծառերի մահացումը, վերականգնել դրանց աճը եւ պտղաբերման հնարավորությունը: Այդ նպատակով խիստ կարճացվում են խոշոր կմախքային եւ կիսակմախքային ճյուղերը: Խորհուրդ է տրվում նման էտ կիրառել աստիճանաբար՝ 2-3 տարվա ընթացքում:

Երիտասարդացնող էտ կատարելիս հարկավոր է հիշել, որ հանգստի շրջանից հետո տեղի է ունենում սննդանյութերի առատ հոսք դեպի ծառի սաղարթի ծայրամասը, ուստի համեմատաբար ուշ շրջանում իրանակացված երիտասարդացնող էտի դեպքում կլինեն սննդանյութերի մեծ կորուստներ: Հետեւաբար կմախքային եւ կիսակմախքային ճյուղերի կարճացումն անհրաժեշտ է կատարել հնարավորինս վաղ ժամկետում (անհրաժեշտ է հաշվի առնել նաև ցրտահարության վտանգը):

Ընդհանուր առմամբ, ծիրաննենու էտի ընթացքում հարկավոր է հաշվի առնել, որ այն պտղաբերում է ինչպես տարեկան ճյուղերի, այնպես էլ բազմամյա փնջաճյուղիկների, նիզակների եւ խրանաճյուղիկների վրա, որոնք ապրում են 4-5 տարի: Կարեւոր է այնպես կազմակերպել էտի գործընթացը, որ պտղաբերող այդ օրգանները հնարավորին չափ շատ ձեւավորվեն սաղարթում, միեւնույն ժամանակ ապահովի բավարար նոր աճ՝ հետագայում նոր պտղաբերող օրգաններ ձեւավորելու եւ մահացածներին (չորացածներին) փոխարինելու համար:

Դեղձենու էտը

Ավանդական տնկարկներում դեղձենու սաղարքը սովորաբար ձեւավորում են բաժակաձեւ համակարգով, որի դեպքում ծառի բունը քողճում են 40-50 սմ: Կիրառված պատվաստակալը, բուսաձեւը (մշակաձեւը, սորտը), ընտրված ձեւավորման համակարգը, հողակլիմայական պայմանները, կիրառվող ազդութեանիկան էապես ազդում են էտի բնույթի եւ մոտեցումների վրա:

Տնկարանից սկսած մինչեւ աճման եւ զարգացման 3-րդ տարին հիմնական ուշադրությունը դարձվում է սաղարքի ձեւավորման վրա: Այդ ընթացքում՝ դեռևս տնկարանում, բնից վերեւ 25-30 սմ բարձրությամբ հեռացնում են պատվաստաշիվի ծայրային մասը եւ այդ 25-30 սմ տարածության վրա ստեղծում են 3-4 հատ 1-ին կարգի կմախքային ճյուղեր: Տնկելուն հաջորդող 2-3 տարիների ընթացքում կարճացնում են 1-ին, հետագայում 2-րդ եւ 3-րդ կարգի կմախքային ճյուղերը, որով ձեւավորվում է ծառի սաղարքը:

Բերքատու տարիքում դեղձենու էտի նպատակն է կանոնավորել ծառերի բուսաճը, խուսափել սաղարքի մերկացումից (որը բնորոշ է դեղձենուն) եւ ապահովել բավարար քանակի պտղատու ճյուղիկների առաջացում: Դեղձենին ճիշտ էտելու համար անհրաժեշտ է տարբերել եւ հաշվի առնել օրգանների պիտանիությունը ծառի աճի եւ պտղաբերման համար:

Նորմալ շիվերն ունեն եւ ծաղկային, եւ տերեւային (վեգետատիվ) բողքոջներ եւ դրանց վրա գոյանում են առողջ պտուղներ ու նորմալ զարգացած կողային ճյուղավորումներ:

Վաղաժամ շիվերը (կամ աննորմալ շիվերը) որոնք թեև ունենում են ծաղկաբողքներ, բուսաճի ժամկետների սղության պատճառով ընթացիկ տարում չեն պտղաբերում կամ չեն հասցնում ապահովել նորմալ բերք:

Հոռաշիվերի (քնափայտային շիվեր) վրա գտնվում են միայն վեցետատիվ բողքոջներ: Ծառի երիտասարդ տարիքում այդպիսի շիվերը կարող են ծառայել սաղարքը ձեւավորելու նպատակին: Պտղաբերման համար դրանք պիտանի չեն եւ էտի ընթացքում հեռացվում են ամբողջությամբ:

Փնջացյուղիկները բազմամյա ճյուղիկներն են, որոնք ունեն 2-5 տարվա կյանք: Դրանց վրա ձեւավորվում են 5-6 բողքոջներ եւ ապահովում են ծառի առատ ծաղկումը եւ պտղաբերնվածությունը:

Դեղձենու էտի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն հիմնականում պտղաբերում է նորմալ շիվերի եւ փնջացյուղիկների վրա, մասամբ՝ աննորմալ շիվերի վրա:

Երիտասարդ ծառերի (3-5 տարեկան) էտի ընթացքում հիմնականում նոսրացնում են վաղաժամ (աննորմալ) շիվերի մեծ մասը, իսկ մնացած ճյուղերը կարճացնում են՝ նոր ճյուղավորումներ եւ մայիսյան փնջեր առաջացնելու համար:

Առավելագույն բերքատվության պտղաբերման շրջանում (5-8 տարեկան) էտի հիմնական նպատակն է պահպանել աճի եւ պտղաբերման առկա հավասարակշռված վիճակը: Այդ նպատակով հեռացվում (նոսրացվում) են չորացած, վնասված եւ սաղարթը խտացնող ճյուղերը: Սաղարթի ակտիվ աճը եւ նոր ճյուղավորումների առաջացումն ապահովելու նպատակով կիրառում են նաև կարճացումներ:

Նոսրացում կատարելիս հարկավոր է հաշվի առնել դեղձենու քնած բողոքների «արթնանալու» ցածր հավանականությունը, որի պատճառով սխալ էտը կարող է բերել սաղարթի մերկացման եւ բոյսի վաղաժամկետ ծերացման: Այդ նպատակով կիրառում են «փոխխարինող» էտ, որը հիմնականում քննորշ է խաղողի վազին: Էտի ընթացքում հեռացվում է ոչ թե ամբողջ ճյուղը, այլ կարճացվում է 3 բողոքի վրա: Բուսաճի (վեգետացիայի) ընթացքում դրանից գոյացած ամենաքոյլ շիվը հեռացնում են ամբողջությամբ: Մնացած երկուսից ստորինը էտում են 2 աչքի վրա՝ փոխարինող շիվ առաջացնելու համար, իսկ վերինը՝ էտում են 7-10 աչքի վրա եւ թողնում են պտղաբերման համար:

Դեղձենու տարրեր բուսաձեւեր (մշակաձեւեր) պահանջում են էտի տարրեր մոտեցումներ: Որոշ բուսաձեւերի (Նարնջի, Զաքրանի, Լոձ, ճուղուրի) ծաղկաբողոքները առավելաբար առաջանում են մեկ տարեկան ճյուղերի ներքեւի հատվածում: Այդ ճյուղերը կարճացվում են՝ թողնելով 7-10 թողող: Մեկ այլ խումբ բուսաձեւերի (պճովիներ, Ուկե հորելյան, Սալամի) ծաղկաբողոքներն առաջանում են մեկ տարեկան ճյուղերի ամբողջ երկարությամբ: Այդ բուսաձեւերի ծառերը էտելիս մեկ տարեկան ճյուղերն ավելի թույլ են կարճացնում՝ թողնելով 12-18 ծաղկաբողող:

Հաջորդ տարում պտղաբերման համար թողած ճյուղերը լրիվ հեռացնում են, իսկ փոխարինման համար թողած ճյուղերի վրա առաջացած 2-3 շիվերից ձեռավորում են՝ նոր պտղաբերող օղակ եւ ապագա փոխարինող:

Խորհուրդ շի տրվում կարճացնել կարճ պտղաշիվերը (մայիսյան փնջաճյուղիկները), քանի որ հեռացնելով ճյուղի ծայրամասին զտնվող միակ տերեւարողոջը, ճյուղին զրկում ենք ֆուտոսինթեզող նակերեսից:

Հարկ է նշել, որ դեղձենու խիստ տնկարկներում, բացասական շերմաստիճանից ծաղկաբողոքների ցրտահարվածության վտանգի

առկայության դեպքում, դեղձենու գարնանային էտը հաճախ կատարում են ծաղկման սկզբում: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս հստակ տարրերակել ցրտից վնասված եւ առողջ բողոքները եւ էտի միջոցով ապահովել ծառերի ցանկալի ծանրաբեռնվածությունը ծաղկաբողոքներով: Ընդ որում՝ ծանրաբեռնվածության մոտավոր հաշվարկի համար կիրառվում է հետևյալ տրամաբանությունը: Որակյալ ապրանքային բերք ստանալու համար դեղձենու համեմատաբար երկար (40 սմ եւ ավելի) պտղատու ճյուղերի վրա հաշվարկվում է ոչ ավելի քան 3 հատ պտուղ: Միջին չափի ճյուղերի վրա՝ ոչ ավելի քան 2 պտուղ: Եթի փոքր ճյուղերի դեպքում՝ ընդամենը 1 պտուղ: Հաճախ պտղատու ճյուղերի վրա ծեւավորվում են նախատեսված քանակից ավելի պտուղներ, որոնք հեռացվում են պտուղների ծեւավորման սկզբնական շրջանում, երբ դրանց չափսերը համեմատելի են ընկույզի պտղի չափի հետ: Այդ շրջանում հնարավոր է հստակ տարրերել լավ աճող, առողջ եւ ճիշտ դիրքում գտնվող պտուղները:

Սալորենու էտը

Աճի եւ պտղաբերման առանձնահատկություններից ելնելով՝ սալորենու բուսածեւերը բաժանվում են երկու խմբի:

Ճապոնական ծագում ունեցող ծեւեր, որոնք Հայաստանում քիչ են մշակվում եւ մինչեւ վերջին ժամանակները չունեին մեծ արտադրական նշանակություն:

Ելորպական ծագում ունեցող ծեւեր, որոնց պատկանում են ՀՀ-ում տարածված հիմնական բուսածեւերը:

Ճապոնական ծագում ունեցող ծեւերը հիմնականում պտղաբերում են միամյա ճյուղերի վրա: Նման առանձնահատկությամբ են աչքի ընկնում նաև Հայաստանում աճող շլրենու մշակաձեւերի մեծ մասը (Կանաչուկ, Սպահանի, Եղիազարի, Կարմրիկ, այլք), ինչպես նաև նոր ներմուծված մշակաձեւեր՝ Անջելին, Ֆորտունա, Սանտառուա, Էլեֆանտ հերք եւ այլն:

Ելորպական ծագում ունեցող ծեւերի պտուղները ծեւավորվում են ինչպես մեկ տարեկան ճյուղերի, այնպես էլ բազմամյա փնջաճյուղիկների եւ խթանաճյուղիկների վրա:

Առաջին խմբին պատկանող ծեւերի էտի ընթացքում հիմնականում կատարվում է նորացում, եւ հեռացվում են բույլ աճ ունեցող, սաղարթը խտացնող, իրար խանգարող ճյուղերը: Լիարժեք պտղաբերող այգում քիչ քվով կարծացումներ արվում են միայն երկար (40-50 սմ եւ ավելի) ճյուղերի դեպքում: Այլապես կարծացման միջոցով

հեռացվում է շիվի պտղաբերող հատվածը: Երկար ճյուղերը խորհուրդ է տրվում թույլ կարճացնել:

Երոպական ծագում ունեցող ձեւերի տարեկան շիվերի եւ ճյուղիների վրա բողոքները դասավորված են մեկական, կամ՝ խմբերով: Մեկական դասավորված բողոքները կարող են լինել ինչպես տերեւարողբոջ (վեգետատիվ), այնպես էլ՝ ծաղկաբողբոջ (գեներատիվ): Երկուական դասավորված բողոքներից մեկը լինում է ծաղկաբողբոջ, իսկ մյուսը՝ տերեւարողբոջ: Երեքի դեպքում տերեւարողբոջը գոյանում է մեջտեղում, իսկ ծաղկաբողբոջները դասավորվում են դրա կողքերին: Նման տերեւարողբոջից առաջանում են փնչաճյուղեր, խրանաճյուղեր, նիզակներ, իսկ մեկական դասավորվածներից՝ երկար, միամյա խառը պտղաբերող ճյուղեր: Այսինքն, էտելու ընթացքում սաղարքի վրա համաշափ բողնվում են բոլոր տիպերի բողոքադասավորություն ունեցող շիվերը:

Երիտասարդ տարիքում (մինչեւ պտղաբերումը եւ պտղաբերման սկզբնական շրջանում) կատարում են սաղարքի ձեւավորում, որի ընթացքում իրականացնում են տարբեր աստիճանի կարճացումներ: Հարդյուն՝ ձեւավորվում են տարբեր կարգի կմախքային ճյուղերը եւ ապագա պտղաբերող օղակները:

Լրիվ պտղաբերման շրջանում, երբ ծառերի աճը համեմատաբար բոլովանում է, կիրառում են խիստ սահմանափակ էտ: Հեռացվում են միայն վնասված, սաղարքը խտացնող եւ միմյանց խանգարող ճյուղերը: Աճի եւ զարգացման հաջորդ շրջանում, երբ նկազում է ծառերի պտղաբերող մակերեսը, նկատվում է ճյուղերի մահացում, սկսում եմ կիրառել 2-3 տարեկան ճյուղերի կարճացումներ եւ երիտասարդացումներ:

Տարեց, ծերացող ծառերը ենթարկվում են երիտասարդացնող էտի. հեռացնում են բոլոր չորացած, խեժապատված, կիսակմախքային, կմախքային եւ մահացած պտղաբերող ճյուղերը: Այնուհետեւ խիստ կարճացնում են 4-6 տարեկան կմախքային ճյուղերը:

Կեռասենու էտը

Կեռասենին պտղաբերում է բազմամյա կարճ փնչաճյուղերի եւ մեկ տարեկան երկար շիվերի վրա: Փնչաճյուղերն ապրում են մինչեւ 8-10 տարի եւ իրենց վրա կրում են կեռասենու բերքի հիմնական մասը: Իրանց վրա ստվորաբար առաջանում են 6-7 բողոքներ, որոնցից մեջտեղում գտնվող մեկը կամ երկուսը տերեւարողբոջներ են, իսկ մնացածը՝ ծաղկաբողբոջներ:

Էտի ընթացքում հարկավոր է հիշել, որ թույլ աճող (10-15 սմ) շիփի վրա հիմնադրվում են միայն ծաղկաբողոքները:

Ուժեղ աճ ունեցող (50-60 սմ) շիվերի վրա հիմնադրվում են միայն տերեւաբողոքները: Հազվադեպ (որոշ մշակածեւերի դեպքում) այդպիսի շիվերի հիմքի մասերում կարող են ձեւավորվել նաև ծաղկաբողոքները: Ուստի՝ այդ շիվերը կարելի է հեռացնել կամ խոր կարճացնել:

Պտղաբերող կեռասենու էտի ընթացքում հաշվի է առնվում ինչպես սաղարթի ձեւավորման համակարգը, այնպես էլ աճեցվող մշակածեւը: Ավանդական տնկարկներում հիմնականում կիրառում են սաղարթի նոսրացած հարկային կամ հիմնգճուղանի հարկային համակարգերը: Ըստ ճյուղավորման հատկության, լինում են թույլ եւ ուժեղ ճյուղավորվող մշակածեւեր:

Պտղաբերման շրջանի սկզբում թույլ կարճացնում են **թույլ ճյուղավորումներ** ունեցող բուսածեւերի մեկ տարեկան ճյուղերը, որը նպաստում է կողային պտղաբերող նոր ճյուղերի առաջացմանը: Նոսրացում սովորաբար չի կիրառվում: Հեռացվում են միայն վնասված, չորացած եւ միմյանց խանգարող ճյուղերը:

Ուժեղ ճյուղավորումներով բուսածեւերի ծառերի աճի եւ զարգացման վաղ շրջաններում (սաղարթի ձեւավորում, պտղաբերման սկզբ եւ վաղ շրջան) կարճացում եւ նոսրացում չեն կիրառում: Ծառերի լիարժեք պտղաբերման շրջանում կարճացումները եւ նոսրացումները դառնում են սաղարթի կառավարման կարեւոր բաղադրիչ: Մեկ տարեկան ճյուղերը (50-60 սմ եւ ավելի) կարճացնում են 25-30 %-ով, հարդյուն որի կանխվում է սաղարթի մերկացումը, առաջանում են նոր ճյուղավորումներ եւ պտղաբերող օրգաններ (փնջաճյուղիկներ):

Ավելի ուշ շրջանում, երբ դանդաղում է ծառերի աճը եւ պակասում է բերքատվությունը, կիրառում են երիտասարդացնող էտ եւ կարճացնում են 2, 3, եւ 4 տարեկան ճյուղերը: Հետագա տարիներին կարելի է երիտասարդացնել նույնիսկ 5 տարեկան եւ ավելի տարիքավոր ճյուղերը:

Էտից հետո գոյացող նոր աճերը մայիսի վերջին կամ ամռան սկզբին ծերատում են, որի շնորհիվ ձեւավորվում են նոր կողային ճյուղեր ու պտղաբերող օրգաններ:

Հարկ է նշել, որ խիստ պակասում է կեռասենու տարիքավոր (աճի եւ զարգացման 7-րդ շրջան) ծառերի վերականգնման ունակությունը եւ բազմամյա կմախրային ճյուղերը խոր կարճացնելիս չեն վերականգնվում:

Բալենու էտը

Աճի եւ պտղաբերման առանձնահատկություններից ենելով՝ բալենու բուսաձեւերը նույնպես բաժանվում են երկու խմբի:

Թփանման բուսաձեւեր, որոնցից Հայաստանի տարածքում հանդիպում են Լյուրսկայա, Վլադիմիրսկայա, Պլոդորոդնայա, Սիչուրինսկայա, Գրիոտ, Սիսիանի եւ Աշտարակի տեղական ձեւերը: Դրանք պտղաբերում են միամյա ճյուղերի վրա: Ուժեղ աճ ունեցող շիվերի վրա տերեւարողբոջները եւ ծաղկաբողբոջները հիմնադրվում են հերթականությամբ: Թույլ աճ ունեցող շիվերը հիմնականում պատված են լինում ծաղկաբողբոջներով:

Ծառանման բալենիներ, որոնցից Հայաստանում մշակվում են Անգլիական վաղահաս, Շորինկա, Շապանկա, Լոտովայա եւ Ամորել վաղահաս մշակաձեւերը: Դրանք պտղաբերում են ինչպես կարճ փնջացյուղիների, այնպես էլ միամյա շիվերի վրա:

Թփանման բալենիները ձեւավորվում են թփի ձեւով, իսկ ծառանման բալենիները սովորաբար ձեւավորվում են նոսրացած հարկային համակարգով, եւ ծառի բունը թողնում են 30-40 սմ բարձրությամբ:

Հարկ է նշել, որ հարկավոր է կատարել ուժեղ աճ ունեցող ծառերի նոսրացումներ, ինչպես նաև՝ կարճացնել 50-60 սմ-ից ավելի աճած շիվերը: Թույլ աճ ունեցող առանձին ծառերի դեպքում խորհուրդ է տրվում կատարել խիստ կարճացումներ եւ խրանել ճյուղերի աճը: Լրիվ թերքատվության շրջանում հարկավոր է հետեւել ինչպես պտղաբերող ճյուղերի ձեւավորմանը եւ բուսաճին, այնպես էլ՝ լուսարափանց եւ օդարափանց սաղարթի պահպանմանը:

Թփաձեւ բալենիների էտի ընթացքում կարճացումներ կիրառում են բույլ եւ ուժեղ աճ ունեցող ճյուղերի դեպքում: Թույլ աճող ճյուղերի դեպքում հեռացնում են ճյուղի 2/3-ը՝ ստիպելով, որ արքնանան հիմքի հատվածում գտնվող թերզարգացած տերեւարողբոջները: Ուժեղ աճող ճյուղերի դեպքում հեռացվում է դրանց 25-30 %-ը: Միջին աճ ունեցող ճյուղերը չեն կարճացնում, որպեսզի շեռացվի ճյուղի գագարնային տերեւարողբոջը:

Էտի միջոցով հեռացվում են բոլոր չորացած ճյուղերը, մահացած պտղաբերող օրգանները եւ սաղարթը խտացնող ճյուղերը: Սեծ տարիքում, երբ խիստ դանդաղում է (նույնիսկ կանգ է առնում) ծառերի աճը, կիրառում են երիտասարդացնող էտ: Այդ ընթացքում կարճացվում են 2-3, երբեմն 4 տարեկան ճյուղերը: Իրականացվող կարճացումները նպատակ են հետապնդում իջեցնել սաղարթը եւ խրանել նոր ճյուղերի առաջացումը:

Ընկույզավորների եւ հատապտղայինների էտը

Ընկույզենու էտը

Ընկույզենու էտի եւ ձեւավորման հիմնական մոտեցումները ընդունելու համար հարկավոր է հաշվի առնել այս պտղատեսակի կենսարանական առանձնահատկությունները: Ընդհանուր առմամբ, ընկույզենին երթեք խիստ չեն էտում, իսկ յուրաքանչյուր անգամ հեռացնում են ոչ ավելի քան սաղարքի ընդհանուր մակերերեսի 20 %-ը:

Ընկույզենին միատուն բույս է, սակայն ունի բաժանասեռ ծաղիկներ: Իգական ծաղիկները հիմնականում կազմակերպվում են մինչեւ 50-60 սմ երկարություն ունեցող մեկ տարեկան ճյուղերի ծայրերին: Արական ծաղիկները՝ կատվիկները, գոյանում են շիվերի տերեւածոցերում:

Ավանդական (բարձրաճ) տնկարկներում ընկույզենու սաղարքը սովորաբար ձեւավորում են կենտրոնական ուղեկցողով: Այդ նպատակով սաղարքի ձեւավորման սկզբնական փուլում 1,2-1,3 մ բարձրության վրա կարճացնում են կենտրոնական շիվը, եւ ծառի բնի առավելագույն բարձրությունը բողնում են 1 մ: Մնացած 0,2-0,3 մ տարածության վրա բողնում են ուղեկցողին փոխարինող հարմար շիվ եւ լավ զարգացած եւ ճիշտ դիրքադրություն ունեցող երկու ճյուղ՝ որպես սառաջին կարգի կմախքային ճյուղեր: Հետագա երեք տարիների ընթացքում, յուրաքանչյուր 40-50 սմ հեռավորության վրա, կարճացնելով կենտրոնական ուղեկցողը տարբեր հարկերի վրա՝ ընդհանուր առմամբ հիմնում են 7-8 առաջին կարգի կմախքային ճյուղեր: Առաջին կարգի կմախքային ճյուղերը հետագայում կարճացնում են՝ 2-րդ կարգի ճյուղեր ստեղծելով նպատակով:

ՀՀ-ում տարածված ընկույզենու ավանդական բուսաձեւերը (մշակաձեւերը) պտղաբերման շրջանում հիմնականում չեն էտում: Հեռացնում են միայն չորացած, վնասված եւ անհարմար դիրք ունեցող ճյուղերը:

Աճի ու զարգացման 6-րդ եւ 7-րդ շրջաններում, երբ կանգ է առնում ծառերի աճը եւ սկսում են չորանալ կմախքային ու կիսակմախ-

քային ճյուղերի ծայրային մասերը, կիրառում են երիտասարդացնող էտ: Կարճացնում են բազմամյա կիսակմախքային ճյուղերը: Խորհուրդ է տրվում երիտասարդացումը կիրառել աստիճանաբար՝ 2-3 տարվա ընթացքում:

Տխլենու էտը

Տխլենին բաժանասեռ ծաղիկներով միատուն բույս է, պտղաբերում է միամյա շիվերի վրա, ուստի էտի միջոցով հարկավոր է ապահովել ամենամյա նոր աճը եւ մեծ թվով միամյա շիվերի գոյացումը:

ՀՀ տարածքում տխլենին հիմնականում ձեւավորում են ծառանմանի կամ կանգուն թփի տեսքով: Այդ նպատակով տնկման առաջին տարում տխլենին էտում են 8-10 աշխի վրա, հարդյուն որի նույն տարում բույսի հիմքում առաջանում են մի քանի ցողուններ: Հետագա ձեւավորման համար թողնում են լավ զարգացած 4-5 ցողուն, իսկ մնացած հեռացնում են հիմքից: Զեւավորման նպատակով պահպանած ցողուններն ամեն տարի կարճացնում են 25-30 %-ի չափով՝ դրանց վրա կողային նոր շիվեր առաջացնելու համար:

Բերքառություն էտի ընթացքում խորհուրդ է տրվում կիրառել հետեւյալ մոտեցումները.

- միամյա նոր շիվերի գոյացման նպատակով հիմնականում կիրառել կարճացումներ,
- հեռացնել մահացած կամ հիվանդ ճյուղերը,
- էտի միջոցով ապահովել սաղարթի լավ լուսավորությունը եւ օդաբախանցելիությունը,
- նոսրացումների միջոցով հեռացնել ոչ ցանկալի դիրքադրություն ունեցող ճյուղերը,
- յուրաքանչյուր տարի հեռացնել ավելորդ մացաները, թողնելով մեկ-երկուսը երիտասարդացման համար
- երիտասարդ տարիքում կիրառել առավել թույլ, իսկ հասուն տարիքում՝ խիստ էտ,
- էտի ընթացքում միանվագ շեռացնել սաղարթի 25-30 %-ից ավելին,
- Նոսրացումներն անել այնպես, որ կտրված հատվածում չմնան բութակներ:

Ամռանը կիրառվող ծերատման միջոցով կարելի է նպաստել ծաղկաբողքների հիմնադրմանը եւ կասեցնել կողային ոչ ցանկալի շի-

վերի առաջացումը: Այդ նպատակով հուլիս եւ օգոստոս ամիսներին խորհուրդ է տրվում ծերատել պտղաբերող շիվերը:

Ի տարբերություն այլ ծառատեսակների, տխլենին էտում են նաև ծաղկելուց հետո: Այդ ընթացքում նոսրացնելով հեռացնում են արական ծաղիկներ (կատվիկներ) կրող բոլոր շիվերը, որովհետեւ փոշոտման գործընթացով սահմանափակվում է կատվիկների գործնական նշանակությունը:

Տարիքով (20-25 տարեկան) ծառերի աճը բուլանում, մանրանում են պտուղները, եւ սկսում են չորանալ կմախքային ճյուղերի ծայրամասերը: Այդ դեպքում՝ 3-4 տարվա ընթացքում կատարում են երիտասարդացնող էտ, որի ժամանակ հողի մակերեսից հաջորդաբար կտրում հեռացնում են հիմնական կմախքային ճյուղերը: Որպես արդյունք՝ գոյանում են մեծ թվով հոռաշիվեր, որոնցից հնարավոր կլինի ձեւավորել նոր կմախքային ճյուղեր:

Նշենու էտը

Նշենու էտի ընթացքում հարկավոր է հաշվի առնել այս պտղատեսակին բնորոշ հատկությունները: Հարկ է նշել, որ նշենին աչքի է ընկնում հզոր աճով, նոր ճյուղեր առաջացնելու մեծ ունակությամբ, ճյուղերի վրա կազմավորվում են պարզ բողոքներ, որոնցից առաջանում են ծաղկաբողոքներ եւ բուսաճային բողոքներ: Նշենին պտղաբերում է փնջաճուղիկների եւ միամյա ճյուղերի վրա:

Երբ նշենին մտնում է պտղաբերման մեջ, կիրառում են նոսրացնում եւ հեռացնում են չորացած, կոտրված, վարակված, իրար խանգարող ճյուղերը, հոռաշիվերը, վաղաժամ շիվերը, դեպի ներս աճող եւ խաչվող ճյուղավորումները: Կարճացվում են միայն ուժեղ աճ ունեցող ճյուղերը:

Երբ նշենին մտնում է լրիվ պտղաբերման մեջ, խիստ բուլանում է տարեկան աճը: Այդ շրջանում սաղարթի մերկացումից խուսափելու համար 50-70 %-ի չափով կարճացնում են մեկ, երբեմն երկու տարեկան բնափայտերը:

Աճի եւ զարգացման հետագա շրջաններում կիրառում են երիտասարդացնող էտ եւ կարճացնում են 3-5 տարեկան ճյուղերը: Երիտասարդացման պատճառով առաջացած հոռաշիվերից քողնում են միայն հարմար դիրքադրություն ունեցող առողջ շիվեր:

Հարկ է նշել, որ տարիքավոր ծառերի՝ նոր աճ առաջացնելու ունակությունը բուլանում է եւ սաղարթն այլևս չի վերականգնվում:

Հաղարջենու էտը

Հաղարջենու բույսը ձեւավորում են թփածեւ սաղարքով: Տնկման առաջին տարում կողային ճյուղավորումներ առաջացնելու նպատակով կարճացնում են թփի բոլոր ճյուղերը, յուրաքանչյուր ճյուղի վրա թողնելով 3-4 լավ զարգացած բողբոջներից: Այդ բողբոջներից առաջացած ընձյուղներից թողնում են միայն ուժեղ աճ եւ ցանկալի դիրքադրություն ունեցողները:

Ստեղծված կմախքային ճյուղերը կարճացնում են՝ դրանց վրա կողային ճյուղավորումներ ստեղծելու համար: Կարճացնում են նաև կմախքային ճյուղերի հիմքի բողբոջներից առաջացած ճյուղերը՝ մերձբնային շիվեր (վերականգնող ճյուղեր) առաջացնելու համար:

Տնկման 3-րդ տարում կմախքային ճյուղերը թույլ կարճացնում են, իսկ մերձբնային շիվերից թույլերը՝ հեռացնում: Ուժեղներից ստեղծում եւս 4-5 նոր ճյուղեր, որոնք հետազայում կրկին կարճացվում են: Սաղարքի ձեւավորումը եւ էտը իրականացվում է այն տրամաբանությամբ, որ աճի եւ զարգացման 4-րդ տարում թուփն ունենա 12-20 հատ տարրեր տարիքի ճյուղեր:

Հաղարջենու էտի ընթացքում յուրաքանչյուր տարի հարկավոր է հեռացնել չորացող, ծերացող, ինչպես նաև քիչ պտղաբերող ճյուղերը: Ամեն տարի հեռացնում են ուժեղ աճ ունեցող թուսաձեւերի առնվազն 4-5 հիմնական ճյուղ: Մինչդեռ թույլ աճ ունեցողների դեպքում հեռացվում է 3-4-ը:

Էտի ընթացքում խորհուրդ է տրվում կարճացնել մեկ տարեկան ճյուղերը եւ նպաստել կողային նոր ճյուղավորումների առաջացնանը: Հարկավոր է հաշվի առնել, որ պտղակիրները լավ պտղաբերում են 4-5 տարվա ընթացքում, այնուհետև ընկնում է դրանց պտղաբերման արդյունավետությունը: Այդ պատճառով 5-6 տարի եւ ավելի տարիք ունեցող ճյուղերը հարկավոր է հիմքից հեռացնել:

Ուղղահայաց դիրքով աճող ճյուղերը սովորաբար չեն կարճացնում, թույլատրվում է կարճացնել միայն այն դեպքերում, երբ նրանց ծայրային մասերը ցրտահարվել են:

Կարմիր հաղարջենու էտը

Կարմիր հաղարջենու թփի ձեւավորման նպատակով հեռացնում են նոր տնկված թույսի թփի հիմքի թույլ, ծուռումուր եւ ոչ հարմար ուղղությամբ աճող շիվերը եւ թողնում են միայն ուժեղ զարգացածները: Այդպիսի մեկ տարեկան ճյուղերը սովորաբար չեն կարճացնում: Կա-

րելի է կարճացնել միայն այն դեպքում, եթե ընկենում է կողային աճ տալու դրանց ունակությունը:

Կարմիր հաղարջենու պտղատու բողոքները հիմնադրվում են խմբերով՝ կարծ շիվերի կողային մասերում եւ վնաշաճյուղերի վրա:

Ուժեղ աճ ունեցող բուսաձեւերի թվերի հիմքի ճյուղավորումները չեն հեռացվում: Այդ խմբի բուսաձեւերը սկսում են էտել 4-5 տարեկանից եւ հիմնականում հեռացնում են 2-3 տարեկան կողային ճյուղերը: Արմատամերձ ճյուղերը սովորաբար չեն էտում, քանի որ դրանք հաջորդ տարում, առանց էտելու, առաջացնում են կողային աճեր: Սովորաբար ծայրամասային կողային ճյուղավորումները չեն էտում (կարճացնում), բացառությամբ այն դեպքի, եթե դրանք վնասվել են խիստ սառնամանիքներից:

Եթե նկատվում է տարիքով թվերի ծերացում եւ պտղաբերության անկում, կիրառում են երիտասարդացնող էտ: Այդ նպատակով ամբողջությամբ հեռացվում են 7-8 եւ խիստ կարճացվում են 5-6 տարեկան ճյուղերը:

Կոկոռշենու էտը

Կոկոռշենու թվի սաղարթի ձեւավորման ընթացքում բնի բարձրությունը սովորաբար թողնում են 10-15 սմ: Տնկելուց հետո 3-4 աշքի վրա կարճացնում են արմատակալի 1 տարեկան ճյուղերը եւ սաղարթի ձեւավորման համար թողնում են 3-5 լավ զարգացած եւ տարածության մեջ հավասարաչափ դասավորված մերձարմատային շիվեր: Դրանք թույլ կարճացվում են: Թվի սաղարթի ձեւավորումն ավարտվում է 4-5-րդ տարում: Այդ ժամանակ էլ կոկոռշենին սկսում է պտղաբերել: Ձեւավորված կոկոռշենու թուփը, միջին հաշվով, ունենում է լավ զարգացած 15-20 ճյուղ:

Ամեն տարի կատարում են պտղաբերման փուլ մտած թվերի նուրացում եւ հեռացնում են ծերացած, չորացած ճյուղերը: Կարճացում իրականացնում են միայն ճյուղերի ցրտահարված ծայրային հատվածները հեռացնելու համար:

Կոկոռշենու ճյուղերի կյանքի տեսողությունը 9-12 տարի է: Հարկավոր է հիշել, որ ամենամյա նոսրացումների ընթացքում չեն հեռացվում 5-6 տարեկանից բարձր տարիքի ճյուղերը, այլ հիմնականում հեռացնում են՝

- ավելորդ, վնասված 1 տարեկան զրո կարգի թույլ աճ ունեցող ճյուղավորումները,

- թույլ, ճնշված աճ ունեցող, կոտրված բոլոր տարիքի ճյուղերը,
- ծերացած (11-12 տարեկանից ավելի տարիք ունեցող) ճյուղերը:

Հողից աճող զրո կարգի եւ ավելի տարիքավոր ճյուղերի վրա առաջացած ուժեղ աճ ունեցող 1-ին եւ 2-րդ կարգի շիվերի ծայրային մասերը կարճացնում են շատ թույլ: Ավելի տարիքավոր տնկարկներում 12 տարեկանից ավելի տարիք ունեցող թփերը երիտասարդացնելու նպատակով ուժեղ կարճացնում են:

Մորենու էտը

Մորենու էտը պայմանավորված է դրա աճի եւ զարգացման առանձնահատկություններով: Այս տեսակը զարգանում եւ բազմանում է արմատային մացառներով: Ցողունի հիմքում, ստորերկյա արմատների կամ կոճղարմատների վրա գտնվում են ցողունային բոլորչները, որոնցից հողի մեջ յուրաքանչյուր տարի առաջանում են փոքրիկ ընձյուղներ: Դրանք դուրս են գալիս հողից միայն հաջորդ գարնանը, հզոր աճում են եւ նույն տարում ձեւավորում ծաղկաբողքոցներ, որոնք բացվում են հաջորդ տարվա ընթացքում, երբ շիվերն (երկամյա) այլեւս չեն աճում: Նման ճյուղերը բերքատվությունից հետո չորանում են: Այսպիսով, մորենու շիվերն ունեն երկամյա կյանք, որն էլ պայմանավորում է էտման առանձնահատկությունները:

Մորենու արմատակալը տնկելիս կարճացնում են՝ քողնելով 2-3 աչք: Առաջացած բազմավիվ արմատամերձ շիվերից հեռացնում են թույլ եւ նվազ աճերը, իսկ հիմքից դուրս եկած լավ, առողջ, զարգացած շիվերը կարճացնում են կամ ծերատում:

Հաջորդ գարնանը թույլ կարճացնում են նաև նախորդ տարվա շիվերը: Բերքահավաքից հետո հեռացնում են արդեն պտղաբերած երկամյա ճյուղերը:

Պահապատղատու տնկարկների ռողման ու սնուցման տեխնոլոգիան կաթիլային եղանակով

Հայաստանի Հանրապետության բնակչիմայական պայմաններում արդյունաբերական պտղաբուծության վարումը հնարավոր է բացառապես ռողման պայմաններում: Հետեւապես՝ ռողման ջրի եւ ենթակառուցվածքների առկայությունը պտղաբուծության ոլորտի զարգացման համար որոշիչ գործոն են:

Ընդհանուր առմամբ, պտղատու մշակաբույսերի ջրապահանջը բավարարելու համար գոյություն ունեն ռողման մի քանի եղանակներ՝ մակերեսային, ենթահողային, անձրեւացման եւ կաթիլային:

Չնայած այն հանգամանքին, որ մեր երկրում պտղաբուծության ոլորտում գերակշռում են ռողման մակերեսային (համատարած, հողատաշտերով, հողաբասերով, բաժակներով, առուներով, ակոսներով) եղանակները, պտղահատապտղային մշակաբույսերի ինտենսիվ մշակության համար առավել արդյունավետ եւ առաջադիմական են ջրի մատուցման կաթիլային եղանակներն ու ծերերը: Դրանք իրենցից ներկայացնում են համակարգեր, որոնք հնարավոր են դարձնում դաշտագոյացությունը և փոքր չափաբաններով հողի տեղայնացված խոնավացումը՝ բույսի արմատաքննակ շերտին մոտ տեղադրված փոքր թողունակությամբ կաթոցիկների միջոցով:

Ընդհանուր առմամբ, ռողման եղանակի ընտրության ընթացքում հաշվի են առնում մի շարք գործոններ: Մասնավորապես՝

- մշակաբույսի տեսակը եւ նրա պատվաստակալը,
- կիրառվող ազրոտեխնիկան,
- հողի մեխանիկական կազմը, հզրությունը, ջրապաշարի ծավալը, հողատարման (հողի ջրային քայլայում՝ «էրոզիա») հավանականությունը, աղակալվածությունը եւ այլն,
- ռելիեֆը, տեղանքի թեքությունը,
- ջրամատակարարման աղբյուրները, ռողման ջրի հասանելի ծավալը, բաշխվածությունը ըստ բուսածի ամիսների, եւ ջրի որակը՝ բույսերի համար պիտանիության տեսանկյունից,

- կլիման՝ հատկապես տեղումների քանակը, դրանց բաշխվածությունը եւ գոլորշացման ինտենսիվությունն ըստ ամիսների,
- ստորգետնյա ջրերի առկայությունը, որակը, խորությունը եւ տատանումների մակարդակն ըստ ամիսների,
- աշխատուժի առկայությունը եւ որակավորումը,
- ոռոգման համակարգի շահագործման համար անհրաժեշտ էներգիայի առկայությունը եւ մատչելիությունը,
- ոռոգման համակարգի էներգատարությունը,
- ոռոգման համակարգի շահագործման եւ պահպանման ծախսերը:


Ոռոգման տարրեր եղանակներ աչքի են ընկնում այզում ջրօգտագործման խիստ տարրեր արդյունավետությամբ: Օրինակ՝ եթե մալերեսային եղանակի դեպքում արդյունավետությունը մոտավորապես կազմում է 50-60 %, ապա անձրեւացման եւ կարիլային եղանակների դեպքում համապատասխանաբար կազմում է 85 եւ 95 %:

Ոռոգման կարիլային եղանակը կիրառելի է բոլոր հողատիպերի համար: Կավային հողերում, որտեղ ջրման ընթացքում հնարավոր են ջրի կուտակումներ եւ մակերեսային հոսք, ջուրը տրվում է դանդաղ՝ ջրի փոքր ելք ունեցող կարողիկների միջոցով: Մինչդեռ ավազային հողերում կիրառում են ջրի համեմատաբար մեծ ելք ունեցող կարողիկներ:

Կարիլային ոռոգման համակարգը (նկ. 62) բաղկացած է.

- պոմպից կամ պոմպային կայանից,
- գլխամասային հանգույցից,
- մաքրման զոհիչների (ֆիլտրների) համակարգից,
- գլխավոր եւ բաժանարար խողովակաշարերից,
- բաշխիչ (ջրման) խողովակաշարից,
- կարողիկներից,
- ճնշման կարգավորիչ եւ օդաբողիչ կափույրներից եւ այլ ձեւավոր մասերից:

Հարկավոր է հաշվի առնել, որ ոռոգման կարիլային համակարգի գործարկման համար անհրաժեշտ է էլեկտրաէներգիա կամ բավարար ճնշումով ջրի աղբյուր: Հակառակ դեպքում հնարավոր չէ ապահովել ջրի հոսքը եւ մաքրումը զոհիչների (ֆիլտրման) համակարգի միջով եւ ջրի հաստատուն ճնշումը ջրման խողովակաշարի ամբողջ երկարությամբ:



Նկար 62. Ոռոգման կաթիլային համակարգի կառուցվածքը

Ոռոգման կաթիլային համակարգի կարեւոր բաղադրիչներից է ջրի մաքրման ու զտման (ֆիլտրման) համակարգը, որի տարրերակների ընտրությունը կախված է ոռոգման ջրաղբյուրի տեսակից եւ ջրի որակից (բերվածքներից, կախյալ մասնիկներից, ջրիմուռներից եւ միկրոօրգանիզմներից) (Ակ. 63):



Նկար 63. Ավազային, սկավառակավոր վտիչներ (ֆիլտրեր), հիդրոցիկլոն

Աղյուսակ 5.

**Զրի մաքրման համակարգի ընտրության նպատակով
կարելի է կիրառել հետևյալ տրամաբանությունը:**

Զրադրուրը	Խցանող տարրերը	Ֆիլտրացման տեսակները	
Ստորերկրյա ջրեր	Խորքային հորեր	Ավազ, կարբոնատային աղեր	Ցանցային կամ սկավառակային ֆիլտրեր, հիդրոցիկլոն
	Բնական աղբյուրներ	Ավազ, տիղմ	Ցանցային կամ սկավառակային ֆիլտրեր, հիդրոցիկլոն
Մակերեսային ջրեր	Գետեր	Ավազ, տիղմ, կազ	Ավազային եւ ցանցային կամ սկավառակային ֆիլտրեր, հիդրոցիկլոն
	Զրանցքներ	Ավազ, տիղմ, կազ, ջրիմուռ, զոռականակուն	Ավազային եւ սկավառակային ֆիլտրեր, հիդրոցիկլոն
	Զրամբարներ եւ լճեր	Ավազ, տիղմ, ջրիմուռ, զոռականակուն	Ավազային եւ սկավառակային ֆիլտրեր, հիդրոցիկլոն

Կարիլային ոռոգման համակարգով հնարավոր է լինում իրականացնել նաև բույսերի պարարտացման եւ սննդման գործընթացը (ֆերտիգացիա): Այս դեպքում համակարգն ունի մի շարք առանձնահատկություններ: Մասնավորապես՝ ջրի մաքրման եւ զտման կառավարման խցում ավելացնում են պարատանյութերի կշռման, չափաբաշխման եւ խառնման սարքեր, որոնց գործածման միջոցով ջրման խողովակների մեջ մղվում է հանքային պարարտանյութերի եւ միկրոտարրերի լուծույթ՝ բույսերին սննդցող անհրաժեշտ կազմով եւ խտությամբ: Կարիլային ոռոգման համակարգով հանքային պարարտանյութերը հող են ներմուծվում լուծված վիճակում՝ անմիջապես բույսի արմատային համակարգի գոտում: Տրվող պարարտանյութի չափը որոշարկում են՝ կախված բույսի ֆիզիոլոգիական վիճակից, հողատարքի չափից եւ հողում սննդատարրերի փաստացի առկայությունից: Դրանով պահպանվում է պատղատու մշակաբույսերի առույգ եւ առողջ վիճակը, աճի եւ պտղաբերման համաշխատությունը, բարձրացվում բերքատվությունը, նվազում են պարարտանյութերի կիրառվող չափարաժինները եւ ավելցուկային պարարտանյութերով շրջակա միջավայրի աղտոտումը:

Կարիլային ոռոգման համար որպես ջրման խողովակաշար կիրավում են **ճկափողեր** (ճկախողովակներ), որոնք ունեն ներդրված կամ տեղադրվող կարոցիկներ եւ նախատեսված են 6-8 տարի շարունակական օգտագործման համար: Ընդ որում՝ կարոցիկները կառող են խողովակի երկարությամբ տեղադրված լինել իրարից

տարբեր հեռավորությամբ (կախված քույսերի տնկման բանաձեւից), տեղադրված լինել գործարանային պայմաններում կամ տեղադրվել դաշտային պայմաններում՝ հատուկ դեպքերում։ Կարողիկները կարող են ունենալ ջրի տարբեր քողովնակություն (1-16 լ/ժամ)։ Կարող են ունենալ նաև ջրի հոսքը կարգավորող ծորակներ։


Կիրառվում են նաև ենթահողային կարողիկներով խողովակներ, որոնք տեղադրվում են հողի արմատամերձ տարածքում (մինչեւ 45 սմ խորությամբ) եւ ապահովում են մշակաբույսերի կաթիլային ռողջումն առնվազն 10 տարվա ընթացքում։ Այս մոտեցման դեպքում ներդրված կարողիկները կարող են խցանվել հողային մասնիկներով, քույսերի մազարմատներով եւ հողաբնակ միջատներով։ Հատուկ կարողիկների կիրառումը, մաքրող քիմիական նյութերի եւ ջրահոսքի բարձր ճնշումային մաքրումները մասնակիորեն լուծում են նշված խնդիրը։


Ընդհանուր առմամբ գոյություն ունեն կարողիկների տարբեր տեսակներ՝ հաստատուն արտադրողականությամբ եւ կարգավորվող արտադրողականությամբ, **փոխհատուցող, հակադրենաժային, հակասիֆոնային** եւ այլն։

Ոռոգման համակարգը ներառում է նաև ջրաչափ, ճնշման կարգավորիչ, օդաքողիչ կափույր, մի շարք ձեւավոր մասեր եւ փականներ։

Քանի որ ոռոգման կաթիլային եղանակի կիրառման դեպքում խոնավանում է հողի արմատաքննակ շերտի միայն մի հատվածը, չափազանց կարենուր է համարվում հողի խոնավացման հետազծի ուսումնասիրումը։ Այս ցուցանիշը կախված է կարողիկի ջրի ելքից, տարածքի թերության աստիճանից, հողի մեխանիկական կազմից ու ջրաֆիզիկական հատկություններից։


Կախված ջրի ելքի փոփոխությունից՝ խոնավացման ուրվագծերի փոփոխությունը տարբեր մեխանիկական կազմ ունեցող հողերում տարբեր կերպ է տեղի ունենում (նկ. 64 եւ 65)։





Կաթիլային ոռոգման կիրառման դեպքում տարրեր մեխանիկական կազմ ունեցող հողերում հողի խոնավացման ուրվագծերը պատկերված է նկ. 66-ում:

Նկար 65. Խոնավացման ուրվագծերի փոփոխությունը կավային հողերում (Գ. Աֆյանի գործիք)



Նկար 66. Հողի խոնավացման ուրվագծերը տարրեր մեխանիկական կազմ ունեցող հողերում դեպքում

ՀՀ-ԻՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ԾԻՐԱՆԵՆՈՒ ՄՉԱԿԱՃԵԼԵՐԻ ԲՆՈՒԹՅԱԳՐԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում ծիրանենու այգիները կենտրոնացած են Արարատյան հարթավայրում (65 %), Արշալունային գոտում (15 %), հյուսիսարեւելյան գոտում (17 %), իսկ մնացած տարածքներում շատ քիչ են հանդիպում (3 %):

Ծիրանենին պատկանում է *Prunus L.* (*Armeniaca Mill.*) ցեղին, որում ընդգրկված են մի քանի տեսակներ: Արտադրական նպատակով կարեւոր նշանակություն ունի հիմնականում Ծիրանենի սովորական տեսակ՝ *Prunus Armeniaca L.* (*Armeniaca vulgaris Mill.*), որից առաջացել են տեղական ծագում ունեցող բոլոր մշակաճելերը (բուսաճելերը): Գոյություն ունեն նաև մի քանի բուսաճելեր, որոնք առաջացել են այլ տեսակի ծիրանիներից (*P.A. manchurica*; *P.A. sibirica*; *P.A. mume*):

Ծիրանենու մշակաճելերը

Երեւանի (Շալախ)

ՀՀ տարածքում գերակշռող (ծիրանենու տնկարկների 80-85 %) վաղամիջահաս մշակաճել է, որն ունի հին հայկական ծագում: Արարատյան հարթավայրի պայմաններում պտուղները հասունանում են հունիսի 20-ից հովկի 10-ը ընկած ժամանակահատվածում: Այս մշակաճելն առանձնանում է ամենամյա բարձր բերքատվությամբ (15-30 տ/հ), երկարակեցությամբ (70-80 տարի) ու համադիմացկունությամբ:



Նկար 67. Երեւանի

Պտուղները շատ խոշոր են (55-75, մինչեւ 100 գ), ձվածեւ, ոսկեդեղին, վարդագույն թշով, գեղեցիկ, շատ քարձր որակի, շատ համեղ՝ քաղցր, հաճելի թթվությամբ, բուրավետ: Փոխադրունակ են, համապիտանի քարմ եւ վերամշակված վիճակում օգտագործման համար: Թարմ սպառման լավագույն մշակածեն է: Գոյություն ունեն շատ ձեւեր, որոնք տարբերվում են հասունացման ժամկետով, պտղի մեծությամբ, գույնով, որակով:

Սաթենի (Թաբարզա)

Հին հայկական մշակածեւ է, Երեւանի սորտից հետո առավել տարածվածն է Հայաստանում (ծիրանենու տնկարկների 10-15 %-ը): պտուղների հասունացումը միջառչահաս է՝ հովհանի 10-ից 30-ը: Այս մշակածենին բնորոշ է ամենամյա քարձր բերքատվությունը (12-20 տ/հ): Պտուղները միջին մեծության են (35-40 գ), ոսկեգույն, դեղին, համեղ, քաղցր, առանց թթվության (առավել քաղցր հայկական սորտն է՝ 15-16 % շաքարներ), հյութալի, բույլ բուրավետ, փոխադրու-



Նկար 68. Սաթենի

նակ, համապիտանի օգտագործման համար: Չրարտադրության համար հիմնական մշակածեն է: Գոյություն ունեն տարբեր ձեւեր, որոնք տարբերվում են հասունացման ժամկետով, պտղի գույնով, որակական հատկանիշներով:

Սպիտակ կամ Անբան

Հին հայկական մշակածեւ, ունի սահմանափակ տարածվածություն (2-3 %), հասունացումը ուշահաս՝ 20.07-10.08: Այս մշակածենին բնորոշ է քարձր բերքատվությունը (12-20 տ/հ): Պտուղները ձվածեւ են, կլորավուն, սպիտակադեղնափուն, վարդագույն երանգով, մեծ (50-



Նկար 69. Սպիտակ

55 գ), համեղ, կիսաքաղցր, թեթև թթվությամբ, հյութալի, բարձր փոխադրունակության, համապիտանի օգտագործման համար: Գոյություն ունեն այս մշակաձեւի որոշ այլ ձեւեր, որոնք տարրերվում են պտղի մեծությամբ, գույնով, որակական հատկանիշներով:

ԴԵՒՆԻԴԻ

Հին հայկական մշակաձեւ է, ունի սափմանափակ տարածվածություն (1-2 %), ուշահաս է՝ 20.07-10.08: Ունի բարձր բերքատվություն (15-20 տ/հ): Պտուղները կլորձվածեն, սպիտակ, վարդագույն թշով,



Նկար 70. Դեւնիդի

մեծ (55-60 գ), միջին համեղության, կիսաքաղցր, թեթև թթվությամբ, քիչ հյութալի, բարձր փոխադրունակության, համապիտանի օգտագործման համար:

Վաղահաս վարդագույն

Ընտրասերովի (սելեկցիոն) հայկական մշակաձեւ է (հեղինակ՝ Մ. Սանայյան), ստացված է Երեւանի Եր Կանաչենի մշակաձեւերի խաչասերումից: Ունի սափմանափակ տարածվածություն (մինչեւ 0,5 %), վաղահաս է՝ 15-25.06, լավ փոշոտիշներն են՝ Խոսրովենին, Սա-

թենին, Ուսկին: Ունի բարձր բերքատվություն (12-15 տ/հ), պտուղները բաց դեղին են, գեղեցիկ վարդագույն, լայն ձվածեւ, միջին մեծության (45-55 գ, երբեմն մինչեւ 70 գ), նուրբ, համեղ, քաղցր, հաճելի թրվությամբ, հյութալի, փոխադրունակ չէ, համապատասխան է օգտագործման համար:

Մասիս

Ընտրասերովի հայկական մշակածեւ է (հեղինակ՝ Մ. Սանադյան)՝ ստացված Անքան եւ Օրդուրադի մշակածեւերի խաչասերումից: Ունի սափմանափակ տարածվածություն (մինչեւ 0,5 %), միջահաս է՝ 25.06 - 05.07: Աչքի է ընկնում բարձր բերքատվությամբ (12-15 տ/հ): Պտուղները դեղնականաչ են, երկարավուն ձվածեւ, սուր զագարով, շատ խոշոր (60-70 գ, երբեմն՝ 120 գ), համեղ, միջին քաղցրությամբ, բերեւ թրվությամբ, հյութալի, միջակ փոխադրունակ, համապատասխան օգտագործման համար:

Կրասնոշչոկի (Կարմրաթուշ)

Ուկրաինական ուշահաս, ուժեղ ձմեռադիմացկուն, միջակ համալիմացկուն, բարձր բերքատու մշակածեւ է: Պտուղները կլորավուն են, տափակ ձվածեւ, խոշոր՝ 44 գ, կորիզից կիսանջատվող: Մաշկը թույլ թափուտ է, պտղամիսը նարնջագույն, միջին ամրության եւ հյութալիության, միջակ համի, թթվաշաքաղցր, բուրումնավետ:



Նկար 71. Կրասնոշչոկի

որոշ ներմուծված բուսածեւեր՝ Աղջանաբադ, Աբութալիբի, Բաղամի, Գոլդկոտ, Բոռա, Տորնադո եւ այլն:

ՀՀ-ում մշակավոր դեղձենու Եւ Նեկտարենու մշակաձեւերի բնութագրերը

Հայաստանի Հանրապետությունում դեղձենու այզիները կենտրոնացած են Արարատյան հարթավայրում (65 %), ճախալեռ-նային գոտում (15 %), հյուսիսարեւելյան գոտում (17 %), իսկ մնացած տարածքներում հանդիպում են սահմանափակ քանակով (3%):

Դեղձենին պատկանում է *Prunus L.* կամ *Persica* Mill. ցեղին, որն ընդգրկում է մի քանի տեսակներ: Արտադրական նպատակով կարեւոր նշանակություն ունի Դեղձենի սովորական տեսակը (*P. Vulgaris* Mill.), որից առաջացել են տեղական ծագում ունեցող մշակաձեւերը: Գոյություն ունեն նաև մի շաբթ այլ բուսաձեւեր (տափակ կամ թզանման դեղձենիներ), որոնք առաջացել են մեկ այլ տեսակից՝ *Phærogawia* կամ դեղձենի (*P. ferganensis* Kostina and Rjab.)

Դեղձենու մշակաձեւերը

Նարնջի վաղահաս

Հին հայկական մշակաձեւ է, լայնորեն տարածված է դեղձենու մշակության բոլոր գոտիներում:

Ծառերը միջակ են, գնդաձեւ սաղարթով, ուժեղ ճյուղավորված: Բերքատվությունը 60-80 կգ/ծառ եւ ավելի: Պտղաբերում են տնկման 3-4-րդ տարվանից:

Պտտուները խոշոր են՝ 150-180 գ, կլոր, դեղմանարնջագույն, տարբեր աստիճանի շառագունած: Պտղամիսը դեղին է, հյութալի, թթվաչաքաղցր, բուրավետ, բարձրորակ: Հասունանում է օգոստոսի կեսից մինչեւ օգոստոսի վերջը:

Պիտանի է թարմ սպառման եւ վերամշակման (կոմպուտներ, հյութեր, չոր) համար: Փոխադրունակ չէ: Ունի լավ համադիմացկունություն:

Նարնջի միջահաս

Հին հայկական մշակաձեւ է, լայնորեն տարածված է դեղձենու մշակության բոլոր գոտիներում: Դեղձի տեղական լավագույն մշակաձեւերից մեկն է:

Ծառերը միջակ են, գնդաձեւ, ուժեղ ճյուղավորված: Միջին բերքատպությունը՝ 80-100 կգ/ծառ, առավելագույնը՝ մինչեւ 150 կգ: Պտղաբերում են տնկման 3-րդ – 4-րդ տարվանից:

Պտուղները խոշոր են՝ 150-180, մինչեւ 250 գ, կլոր, դեղնանարնջագույն, շառագունած: Պտղամիսը դեղին է, պինդ, հյութալի, բրվաշաքաղցր, բուրավետ, շատ բարձրորակ:

Հասունանում է սեպտեմբերի երկրորդ տասնօրյակից մինչեւ հոկտեմբերի սկիզբը:

Պիտանի է թարմ սպառման եւ վերամշակման (կոմպուտներ, մուրաբաներ, հյութեր) համար: Փոխադրունակ է: Ունի լավ համադիմացկունություն:

Նարնջի ուշահաս

Հին հայկական մշակաձեւ է, լայնորեն տարածված է դեղձենու մշակության բոլոր գոտիներում: Դեղձենու տեղական մշակաձեւերի մեջ լավագույնն է գեղագիտական եւ համային որակներով:



Նկար 72. Նարնջի

Ծառերը միջակ են, սաղարքը՝ գնդաձեւ, ուժեղ ճյուղավորված: Բերքը՝ 100-250 կգ ծառից: Պտղաբերում են 3-4 տարեկանում:

Պտուղները խոշոր են եւ շատ խոշոր՝ 180-250, մինչեւ 380 գ, կլոր, դեղնանարնջագույն, վառ շառագունած, պտղամիսը՝ դեղին, պինդ, հյութալի, բրվաշաքաղցր, բուրավետ, շատ բարձրորակ: Հասունանում է սեպտեմբերի վերջին տասնօրյակից մինչեւ հոկտեմբերի վերջը:

Պիտանի է թարմ սպառման եւ վերամշակման (կոմպուտներ, մուրաբաներ, հյութեր) համար: Լավ փոխադրունակ է: Ունի լավ համադիմացկունություն:

Լիմոնի

Հայկական մշակաձեւ է՝ Նարնջի մշակաձեւի բաց դեղնապտուղ

ձեւերից է: Տարածված է դեղձենու մշակության բոլոր գոտիներում:

Ծառերը խոշոր են՝ միջակ ճյուղավորված, բերքատվությունը ծառից 50-100 կգ է եւ ավելի: Բերքի են անցնում 3-րդ - 4-րդ տարվանից:

Պտուղները խոշոր են կամ միջակ մեծության, 175-250 գ, ձվաձեւ, ծայրը կլոր: Մաշկը միագույն է՝ դեղին-ոսկեգույն: Պտղամիար միապահադ միագույն է՝ դեղին ոսկեգույն, միջակ ամրությամբ, կրծկային, հյութալի, քաղցրաբրված, ուժեղ բուրմունքով, համային բարձր հատկանիշներով: Չատ գնահատելի է վերամշման համար՝ քանի որ պատրաստուկները ստացվում են պարզ ոսկեգույն եւ այլ գունավորում չեն բողնում: Հասունանում է սեպտեմբերի սկզբից մինչեւ վերջը: Փոխադրունակ է:

Ծմեռադիմացկունությունը բարձր է, իսկ հիվանդությունների հանդեպ դիմադրողականությունը՝ միջակ:



Նկար 73. Լիմոնի

Զաֆրանի

Հին հայկական մշակածեւ է, լայնորեն տարածված է դեղձենու մշակության բոլոր գոտիներում:

Ծառերը միջակ մեծության են, ուժեղ ճյուղավորված: Երկարակյաց են, ապրում եւ պտղաբերում են 12-15 տարի, բերքատվությունը շատ բարձր է՝ 100-150 կգ/ծառից: Բերքի են անցնում 3-4 տարեկանից:

Ուշահաս է՝ հասունանում է սեպտեմբերի կեսից մինչեւ հոկտեմբերի վերջը:

Պտուղները խոշոր են կամ միջակ, մոտ 150 գ, ձվաձեւ, կողքերից սեղմված, զաքրանագույն, 3/4 մասը՝ կարմիր գծավոր, շատ գեղեցիկ: Պտղամիար նարնջագույն է, կորիզի մոտ՝ կարմիր, պինդ, խիստ կրծկային, միջակ հյութալի, քաղցր, բույլ թթվությամբ եւ բույլ տախա համով, ուժեղ բուրմունքով:

Օգտագործում են առավելապես վերամշման համար՝ պատրաստում են բարձրորակ կոմպոստներ եւ մուրաքաներ: Փոխադրունակ է:

Ցրտադիմացկունությունը բարձր է՝ համարվում է դեղձենու ամենացրտադիմացկուն մշակածերից մեկը:

Լոձ շերտավոր

Հին հայկական մշակածել է, տարածված է դեղնանու մշակության բոլոր գոտիներում: Հոմանիշը՝ Լոձ գծավոր:

Ծառերը խոշոր են, ուժեղ ճյուղավորված: Բարձր բերքատու է՝ 80-100, մինչեւ 150 կգ ծառից: Բերքի են անցնում 3-4 տարեկանից:

Հասունանում է սեպտեմբերի 10-25-ից մինչեւ հոկտեմբերի սկիզբը:

Պտուղները խոշոր են կամ միջակ, միջին քաշը՝ 160 գ: Կլոր են, դեղնասպիտակավուն, սերուցքագույն, բույլ քավոտ, 2/3 մասը՝ շերտավոր կարմրությամբ, շատ գեղեցիկ: Պտղամիսը սերուցքագույն է, պինդ, կրծկային, հյութալի, թթվաշաքաղցր, զգալի բուրմունքով, բարձրորակ, շատ համեղ:

Օգտագործվում է թարմ վիճակում եւ կոմպուտներ, մուրաբաներ պատրաստելու համար: Փոխադրունակ է: Ունի բարձր համադիմացկունություն:

Ճուղուրի

Հին հայկական մշակածել է, տարածված է դեղնանու մշակության շատ գոտիներում:

Ծառերը խոշոր են՝ ուժեղ ճյուղավորված: Բարձր բերքատու են՝ 100-200 կգ/ծառ: Պտղաբերում են 3-րդ - 4-րդ տարվանից:

Պտուղները խոշոր են կամ շատ խոշոր՝ 180, երբեմն՝ մինչեւ 300 գ, հակառակ ծվածել, հիմքում սեղմված, խոր ծագարով: Պտղամաշկը սպիտակականաշավուն է, 1/2 մասը՝ ցրված կամ գծավոր քալագույն կարմրությամբ, շատ գեղեցիկ: Պտղամիսը սերուցքագույն է, կոպտավուն, մսալի, կրծկային, միջակ հյութալի, քաղցր, բույլ համելի թթվությամբ, բուրավետ, բարձրորակ: Հասունանում է սեպտեմբերի վերջից մինչեւ հոկտեմբերի վերջը: Պիտանի է թարմ օգտագործման եւ վերամշակման (կոմպուտներ, մուրաբաներ) համար: Լավ փոխադրունակ է: Ունի բարձր համադիմացկունություն:

Ուսաբեխ


Խորիրդային գիտնական Ի.Ն. Ռյաբովի ստեղծած մշակածեւթից է: Տարածված է դեղնանու մշակության բոլոր գոտիներում, հատկապես՝ Տավուշում: Ծառերը միջակ են: Բերքը՝ 80 կգ ծառից: Պտղաբերում են տնկման 3-րդ տարվանից: Պտուղները միջակ են, 130 գ, ծվածել: Մաշկը բույլ քավոտ է, նարնջագույն, պտղի 25-50 %-

ի ծածկող գույնը մուգ կարմիր է: Պտղամիսը նարնջադեղին է, կրծկրճան, հյութալի, դուրեկան համով, կորիզից անջատվող: Առավել վաղահաս մշակաձեւերից է: Պտուղները հասունանում են օգոստոսի առաջին - երկրորդ տասնօրյակներում: Պտուղներն օգտագործվում են քարմ և վերամշակված: Մասամբ փոխադրունակ է:



Նկար 74. Ուսպեխ

Խորհրդային գիտնական Ի.Ն. Ռյարովի ստեղծած մշակաձեւերից է: Միջակ մեծության ծառեր են: Բերքատվությունը բարձր է՝ 70-80 կգ/ծառ: Բերքի են անցնում տնկումից հետո 3-րդ տարվանից: Ամենավաղ հասունացող մշակաձեւերից է՝ պտուղները հասունանում են հուլիսի երրորդ եւ օգոստոսի առաջին տասնօրյակներում: Պտուղները միջակ են, 130-150 գ, կլոր-ձվագույն: Մաշկը դեղին գույնի է, 2/3 մասը՝ բոստրագույն, բույլ քավոտ: Պտղամիսը դեղին է, հյութալի, միջակ ամրությամբ եւ որակով: Կորիզը պտղամիս չի անջատվում: Փոխադրունակությունը ցածր է: Վերամշակված պտուղներից ստացվում է միջակ որակի արտադրանք:



Նկար 75. Լաուրեատ

Գոլդեն Չուբիլի (Ոսկյա հոբելյան)

Ամերիկյան ընտրասերովի մշակաձեւ է, անվանումը թարգմանաբար՝ «Ոսկյա հոբելյան»:

Ծառերը խոշոր են, փոփած սաղարթով: Երկարակյաց չեն, ապրում են պտղաբերում է՝ 8-10 տարի: Վաղ պտղաբերող է՝ բերքի է անցնում տնկումից հետո 3-րդ տարվանից: Բերքատվությունը միջակ է՝ 80-90 կգ/ծառ: Շատ վաղահաս է՝ օգոստոսի առաջին - երկրորդ տասնօրյակներ:

Պտուղները միջակ են, մինչեւ 130 գ, ձվաձեւ, կողերից սեղմված, մաշկը ոսկեդեղին, կեսի չափով բոստրագույն, քավոտ, պտղամիսը՝



Նկար 76. Գոլդեն չուրփիլի

դեղնանարնջագույն, նուրբ թելիկավոր, հյութալի, միջին քաղցրության, կորիզից լավ անջատվող («ճղովի», «պճղովի»):

Փոխադրումակությունը ցածր է:
Պիտանի է միայն թարմ օգտագործման համար:

ՆԵԿՏԱՐԵՆՈՒ ՄՇԱԼԿԱԾԵԼԵՐ

Ֆանտազիա

Ստեղծվել է ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգում: Ծառերն ունեն ուժեղ աճեցողություն, ցրտադիմացկուն եւ շատ քերքասու են: Պտուղը միջակից խոշոր է, գրեթե ամբողջությամբ կարմիր, հարթ, առանց բավոտության, զագաքում՝ փայլուն, հաճելի համով, բարձր որակի, դեղին պտղամսով, կորիզից հեշտ անջատվող (աճողվի, ճղովի):



Նկար 78. Ֆանտազիա

ՈԵԴ ԳՈԼԻ

Բարձրահասակ ծառերով ամերիկյան մշակածել է: Ուշահաս է: Պտուղը խոշոր է, պճղովի, շատ բարձրորակ համով եւ գունավորությամբ: Պտղամիսը կորիզից հեշտ անջատվող (ճղովի) է, դեղին է, ամուր, որն այս մշակածելը դարձնում է լավ պահունակ եւ փոխադրունակ: Բավարար ցրտադիմացկուն է:



Նկար 77. ՈԵԴ ԳՈԼԻ

Սանգլո

Ամերիկյան մշակածել է: Սիրահաս, շատ լավ ապրանքային տեսքով, բարձրորակ պտուղներով: Պտղի մոտ 75 %-ը կարմիր է, մնացածը՝ դեղնավուն, պտղամիսը դեղին, կորիզից լավ անջատվող:



Նկար 79. Սանգլու

ՀՀ-ում տարածված են նաև այլ մշակաձեւեր՝ Լոձ կանաչ, Զաքրանի միջահաս, Սալամի, Սուխը ըն ափ, Էնքոր, Սամըր բյութի, Պլատինա (տափակ) եւ այլն:

ՀՀ-ԻՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՍԱԼՈՐԵՆՈՒ ԵՒ ՉԼՈՐԵՆՈՒ Մշակածեւերի ԲՆՈՒԹՅԱԳՐԵՐԸ

Սալորենու և շլորենու այգիները տարածված են Արարատյան հարթավայրում, նախալեռնային գոտում, հյուսիսարեւելյան տարածաշրջանում և սահմանափակ մակերեսով՝ այլ տարածքներում:

Սալորենին պատկանում է *Prunus L.* ցեղին, որն ընդգրկում է միքանի տասնյակ տեսակներ: Արտադրական նպատակով կարեւոր նշանակություն ունի Սալորենի տնային տեսակը (*P. domestica Mill.*), որը վայրի բնության մեջ չի հանդիպում և որից առաջացել են համաշխարհային մշակածեւերի, այդ թվում տեղական ծագում ունեցողների մոտ 90 %-ը: Մնացած 10 %-ը առաջացել կամ ընտրասերվել է Շլորենի սովորական կամ կեռասանման (*P. divaricata* կամ *P. cerasifera*) տեսակից: Գոյություն ունեն նաև մի շարք այլ տեսակներից ընտրված կամ սերված կամ խաչասերված բուսաձեւեր և խառնածիններ (հիբրիդներ), որոնք առաջացել են ցեղի այլ տեսակներից՝ մամիսնիներից և մամիսասպիրներից (*P. spinosa* և *P. insititia Kostina and Rjab.*). Վերջինները արտադրական նշանակություն չունեն՝ մշակվում են սիրողական պտղաբուծությունում:

ՍԱԼՈՐԵՆՈՒ ՄՇԱԿԱԾԵՎԵՐ

ՀՀ տարածքում շրջանացված են սալորենու հետեւյալ մշակածեւերը:

ՀՈՒՆԳԱՐԱՍԱԼՈՐ ՀԻՏԱԼԱԿԱՆ

Հնագույն երրոպական մշակածեն է, այլ լեզումներով կոչվում է «Զեռնոսլիվ», «Ուգորկա», «Պրյուն դ'Աժան» և այլն: Առավել լայն տարածված սալորենու մշակածեւերից է՝ մշակության բոլոր գոտիներում:

Ծառերը միջակ են, գնդաձեւ, միջակ ճյուղավորված: Պտղաբերում են 4-րդ - 5-րդ տարվանից: Բերքը միջակից բարձր է՝ 60 կգ ծառից: Պտուղները միջակ են՝ 35-40 գ, երկարձվածեւ, ձագարը նեղ, գագաթը կլորավուն: Պտուղը հեշտությամբ բաժանվում է երկու հավասար կեսի: Մաշկը բարակ է, պինդ, մուգ կապտամանուշակագույն՝ երկնագույն խիտ մոմափառով, պտղամիսը դեղնականաչ՝ նարնջագույն երանգով, պինդ, մսալի, միջակ հյութեղ, քաղցր, բուրումնավետ, շատ համեղ:



Նկար 80. Հունգարասալոր իտալական

վասար կեսի: Մաշկը բարակ է, պինդ, մուգ կապտամանուշակագույն՝ երկնագույն խիտ մոմափառով, պտղամիսը դեղնականաչ՝ նարնջագույն երանգով, պինդ, մսալի, միջակ հյութեղ, քաղցր, բուրումնավետ, շատ համեղ:

Հասունանում է օգոստոսի կեսից մինչև սեպտեմբերի կեսը: Փոխադրունակ է: Բարձուակ աղանդերային բուսածածկ է, սակայն նաև հանրահայտ սալորաչի հիմնական հումքը,

ինչպես նաև պիտանի է դռնդրության եւ պովիլուների համար:

Պահանջկոտ է արտաքին միջավայրի եւ խնամքի հանդեպ: Լավ է աճում միայն բերքի հողերում եւ բարձր խոնավության պայմաններում: Համաշխարհային տեսակակազմի ամենատարածված առաջնակարգ մշակաձեւերից է:

Հունգարասալոր տնային (կամ սովորական)

Հնագույն եւրոպական մշակաձեւ է, ի սկզբանե՝ ֆրանսիական «Պրյուն դ'Աժան» անվանումով: Սալորենու առավել լայն տարածված մշակաձեւերից է, տարածված է մշակության բոլոր գոտիներում:

Բավականին խոշոր, արագ աճող ծառեր են՝ միջակ ճյուղավորված: Պտղաբերում են 5-րդ - 6-րդ տարվանից: Երկարակյաց են՝ կարող են մշակվել 50-60 տարի: Բերքը միջակից բարձր է՝ 60-70 կգ ծառից: Պտուղները միջակ են՝ 30-35 գ, ձվածեւ, բույլ ձգված: Մաշկը՝ սեւ կապտավուն, նարնջամանուշակագույն երանգով, ժանգանման կետերով՝ թխակապույտ մոմափառով: Պտղամիսը կանաչաղաքանագույն է, թեթեւ թելանման, հյութալի, թթվաշաքաղցր, բուրավետ, շատ լավ համի: Կորիզը՝ պաղամսից լավ անջատվող: Հասունանում է օգոստոսի երրորդ տասնօրյակից մինչեւ սեպտեմբերի



Նկար 81.Հունգարասալոր տնային (սովորական)

առաջին կեսը: Աղանդերային մշակածեն է, բայց օգտագործվում է նաև սալորաչի, մուրաբաների և կոմպոտների պատրաստման համար: Փոխադրումնակ է: Պտուղները կարելի են պահել 15-20 օր: Լավ է աճում քերրի հողում և խոճավ վայրերում: Համաշխարհային տեսակակազմի ամենատարածված առաջնակարգ մշակածերից է:

Սթենլի

Ամերիկյան ընտրասերովի մշակածեն է: Տարածված է սալորենու մշակության բոլոր գոտիներում, հատկապես՝ Արարատյան հարթավայրում և Տավուշի մարզում:

Ծառերը ուժեղ աճող են, կանգուն, բերքը շատ բարձր է՝ 80-100 կգ/ծառ: Պտուղները խոշոր են՝ 40-50 գ, ձվածեն, ձգված, մուգմանուշակագույն, պտղամիսը՝ կանաչավուն դեղին, հյութալի, թթվաշաքաղցր, բուրավետ, շատ լավ համի, բարձր որակի: Կորիզը՝ պտղամսից լավ անջատվող: Ինքնափոշոտվող է: Համար շատ հայտնի առաջնակարգ մշակածերից է:



Նկար 82. Սթենլի

Զայընթ Փրուն

Ամերիկյան ընտրասերովի մշակածել է՝ ստացվել է Կալիֆորնիայում, հեղինակը Լյութեր Բերբանկն է: Հայերենում թարգմանաբար անվանում են նաև «Հակա սալոր»: Լայնորեն տարածված է սալորենու մշակության բոլոր գոտիներում, հատկապես Արարատյան հարավայրում եւ Տավուշի մարզում:



Նկար 83. Զայընթ փրուն

Ծառերը հզորած են՝ խիտ եւ ճգված սաղարթով: Բերբատվությունը բարձր է՝ 50-65 կգ ծառից: Պտղաբերում են 5-րդ-6-րդ տարվանից: Պտուղները շատ խոշոր են՝ 45-55 գ, ճգածել եւ, միատարր: Մաշկը հաստ է, ամուր, մուգ կարմիր՝ ծածկված մանր վարդագույն բծերով: Պտղի ամբողջ մակերեսը պատված է գեղեցիկ մանուշակագույն հաստ մոմաշերտով: Պտղամիսը թափանցիկ է, սաթագույն, կորիզից լավ անջատվող, նուրբ, հալվող, շատ հյութալի եւ քաղցր, թերեւակի թթվությամբ: Հասունանում է օգոստոսի վերջին: Լավագույն աղանդերային մշակածեներից է, պիտանի է նաև վերամշակման համար: Փոխադրունակ է: Համաշխարհային տեսակակազմի ամենատարածված մշակածեներից է:



Նկար 84. Ռենկլոդ ալտանա

Ռենկլոդ Ալտանա

Չեխական հին մշակածել է: Հանդիպում է սալորենու մշակության բոլոր գոտիներում, սակայն գտնվում է անհետացման վտանգի տակ: Ծառերը հզորած են՝ ճգված սաղարթով: Բերբատվությունը միջակ է՝ 40-45 կգ ծառից: Պտղաբերում են 4-5 տարեկանից: Պտուղները խոշոր են՝ 35-45 գ, գնդածել եւ, կողերից սեղմած: Մաշկը կանաչավուն է, կարմրաշագանակագույն՝ պատված խիտ, կապույտ մոմափառով: Պտղամիսը ոսկեգույն է, բուրավետ ու հյութալի, նուրբ, քաղցրաթթվաշ, գերազանց որակի, կորիզից կիսաանջատվող: Հասունանում է օգոստոսի երկրորդ կեսին: Ընտիր աղանդերային մշակածել է՝ պիտանի է վերամշակման (չրեր, կոմպուտներ,

մուրաքաններ) համար: Աչքի է ընկնում բարեր փոխադրունակությամբ եւ համադիմացկունությամբ: Համաշխարհային տեսակակազմի տարածված մշակաձեւերից է:

Անսա Շպետ

Գերմանական սորտ է, ստացել է Գեռոգ Շպետը: Հանդիպում է սալորենու մշակության բոլոր տաք գոտիներում, սակայն գտնվում է անհետացման վտանգի տակ:

Ծառերն ուժեղ աճող են, գնդաձեւ սաղարթով: Բերքը բարձր է՝ 80-100 կգ/ծառ: Պտղաբերում են 4-րդ - 5-րդ տարվանից: Պտուղները խոշոր են՝ 40-45 գ, գնդաձեւ, բուք գագարով, բույլ կարով: Պտղի մաշկը՝ նուրբ կապույտ գույնի, ամուր, պատված գորշ բծերով եւ բուխ կապտագույն փառով: Պտղամիսը թափանցիկ է, դեղնականաչ, լրիվ հասունացմանը՝ ոսկեգույն, կորիզից լավ անջատվող, նուրբ, հալվող, հյութալի եւ քաղցր՝ քիչ թթվաշ: Հասունացումը՝ սեպտեմբերի սկզբին: Պիտանի է թարմ օգտագործման եւ վերամշակման (չրեր, կոմպոտներ) համար: Փոխադրունակ է: Պահանջվու է խնամքի եւ արտաքին միջավայրի նկատմամբ:



Նկար 85. Անսա Շպետ

Դեղձային

Ֆրանսիական հնագույն մշակաձեւ է «Ուոյալ ոուժ նեկտարին» անվանումով:

Տարածված է սալորենու մշակության բոլոր գոտիներում, սակայն քիչ տարածքներով, եւ անհետանում է արտադրությունից: Ուժեղ աճող ծառեր են՝ հակառակ բրգաձեւ սաղարթով, տարածված ճյուղերով: Բերքատվությունը միջակ է՝ 40-50 կգ ծառից: Պտղաբերում են 4-րդ - 5-րդ տարվանից: Պտուղները շատ խոշոր են՝ 45-60 գ, գնդաձեւ, հարք կլոր: Պտղի կեսերն անհամաշափ են: Մաշկը հիմքում կանաչադեղնափուն է, ծածկող գույնը՝ մուգ կարմիր, շառագունած՝ պատված բաց երկնագույն խիս մոմափառով: Պտղամիսը ոսկյա դեղին է, բույլ կանաչավուն, պինդ, հյութեղ, բուրումնավետ, հաճելի թթվաշաքաղցր՝ բույլ տտիպությամբ, կորիզից շատ լավ անջատվող: Հասունացումը՝ հուլիսի 2-րդ կեսին, օգոստոսի սկզբին: Հարմար է թարմ օգտագործման եւ կոմպոտների ու չրերի պատրաստման համար: Փոխադրունակ է:

ԱԼԲՈՒԽԱՐԻ

Հին հայկական մշակաձեւ է, տարածված է սալորենու մշակության բոլոր տաք գոտիներում, սակայն անհետացող տեղական սորտերից է: Առավել տարածված է Մեղրիում: Ծառերը միջակ են: Պտղաբերում են 3-րդ տարվանից: Թույլ աճող ծառեր են՝ կլորավուն սաղարթով: Բերքը բարձր է՝ 80-100 կգ/ծառ: Պտուղները 30-40 գ են, ձգված, կլորավուն գագարով: Մաշկը պինդ է, դեղին ուսկեզույն, սպիտակ կետերով, ուժեղ մոնափառով: Պտղամիսը ուսկեզույն դեղին է, մսալի, թույլ թելոտ, պինդ, հյութալի, թթվաշաքաղցր, թույլ բուրմուճքով, կորիզից լավ անջատվող: Հասունացումը՝ սեպտեմբերի սկզբին: Օգտագործվում է մուրաբաների, կոմպոտների եւ չրերի պատրաստման համար:

Վակիրի

Հին հայկական մշակաձեւ է, տարածված է սալորենու մշակության բոլոր տաք գոտիներում, հատկապես Տավուշի գոտում, սակայն անհետացող է: Ծառերը միջակ են, գնդաձեւ սաղարթով: Պտղաբերում են 3-րդ – 4-րդ տարվանից: Բերքը շատ բարձր է՝ մինչեւ 100 կգ ծառից: Պտուղները 35-45 գ են, ձգվածեւ, կարի կողմից պրտաձեւ: Մաշկը հաստ է, դարչնագույն, մանուշակագույն՝ հաստ, թուխ կապտագույն մոնափառով: Ենթամաշկային կետերը կլորավուն են, կարմիր եւ նոսր: Պտղամիսը բաց կանաչ է, լիիվ հասունացած վիճակում՝ կանաչադեղնավուն, պինդ, մսալի, միջակ հյութալի, թթվաշաքաղցր, թույլ բուրմուճքով, լավ որակի, կորիզից անջատվող: Հասունամում է օգոստոսի առաջին կեսին: Հարմար է թարմ սպառման եւ վերամշակման համար:

Ֆորչուն (Փորտունա)



Նկար 86. Ֆորչուն

ճապոնական նոր սելեկցիոն խառնածին մշակաձեւ է: Ծառերն ուղածից են եւ ուժեղած: Պտուղները հասունանում են օգոստոսի վերջին: Պտղամիսը միջինից խոշոր շափի են, կլորավուն, կարմրամանուշակագույն մաշկով, դեղին ամոր պտղամսով, կորիզից կիսաանջատվող: Որպես փոշոտիչ զերադասում է ճապոնական այլ մշակաձեւեր:

Ըլորենու մշակաձեւերը

Բոշյան (Սեւշլոր)

Ըլորենու հին հայկական մշակաձեւ է, ավելի շատ հայտնի է որպես «Սեւշլոր», սակայն լավագույն՝ «Բոշյան» բուսաձեւը հայտնաբերված եւ նկարագրված է այդ ազգանունով այգեգործի այգում: ՀՀ-ում առավել տարածված շլորենին է, տարածված է հիմնականում Նախալեռնային գոտում, հատկապես Երեւանամերձ եւ Աշտարակի տարածաշրջանի գյուղերում: Ծառն ունի ուժեղ աճ, կլորավուն, տարածվող, շատ խիտ սաղարթ: Պտուղները՝ միջին մեծության, մինչեւ 30 գ, տափակ կլորավուն, մուգ մանուշակագույն՝ լրիվ հասունացած վիճակում՝ գրեթե սեւ՝ գորշ կապտագույն, բույլ մոմափառով: Բերքառատ է՝ տալիս է 80-100 կգ/ծառ: Հասունանում է օգոստոսի սկզբին եւ կեսին, օգտագործվում է քարմ եւ չորացված պտղալավաշի (պաստեր) վիճակում, նաև կոմպուտների համար:

Կարմրիկ (Կարմրատերեւ)

Ըլորենու հին հայկական մշակաձեւ է՝ քազում ձեւերով: Քիչ մշակություն ունի Արարատյան հարթավայրում եւ Նախալեռնային գոտում: Ծառն ունի միջակ աճ, փռված, շատ խիտ սաղարթ, հաճախ՝ փշոտ ճյուղավորություններ: Ամման եւ ծաղկման շրջանում ծառն առանձնանում է գեղեցիկ, ամրողովվին կարմիր տեսքով: Պտուղները հասունանում են սեպտեմբերի սկզբին, միջակ են՝ մինչեւ 25 գ, բույլ ձվաձեւ, կլորավուն: Մաշկը հաստ է, փայլուն, նույնիսկ խակ վիճակում՝ մուգ կարմիր, շատ բույլ մոմային փառով: Շատ թթվաշ է, բույլ քաղցրությամբ: Հիմնականում վերամշակվում է թթվաշ պտղալավաշի եւ չորերի, նաև կոմպուտների մեջ՝ թթվության եւ գունավորման համար:

Կանաչուկ

Այսրկովկասում համատարած մշակվող շլորենու շատ հին բուսաձեւ է: Հանդիպում է Հայաստանի բոլոր սալորի այգիներում եւ հատկապես տնամերձերում: Ծառերն ունեն ուժեղ աճ՝ 5- 6 մ, կլորա-

Վուն սաղարթ: Շատ բերքատու է՝ 80-120 կգ/ծառ, լավ փոշոտիչ է բույր սպառների եւ շլորների համար: Պտուղները միջակ են՝ 20-30 գ, կլոր, լերկ, մաշկը բարակ, բայց պինդ, դեղնականաչ: Պտուղները հասունանում են հուլիսի երկրորդ կեսին, սակայն հիմնականում օգտագործվում են հունիսին՝ խակ, կանաչ վիճակում: Արժեքավոր է միայն բարձ վիճակում օգտագործելու համար:

Դեսերտնայա (Աղանդերային)

Կրիմի մշակաձեւ է՝ ընտրասերած խորհրդային շրջանում: Հանդիպում է Արարատյան հարթավայրի եւ Նախալեռնային գոտու այգիներում: Ծառերը բույլ աճող են, մինչեւ 3 մ բարձրությամբ: Սաղարթը տափակ է, լայնատարած, շատ խիտ, կախված ճյուղերով:



Պտուղները կլորավուն են, դեղին, հյութեղ, բրվաշաքաղցր, բուրավետ, համեղ: Համարվում է աղանդերային բարձրարժեք մշակաձեւ: Ինքնափոշոտվող եւ բերքառատ է, պտղաբերում է երրորդ տարում: Ծառի բերքը հասնում է 60 կգ-ի: Հասունացած պտուղները բավականին պահունակ են և փոխադրունակ:

Նկար 87. Դեսերտնայա

Նկ. ՀՀ-ում տարածված են նաև սպառնենու եւ շլորնենու շատ այլ մշակաձեւեր՝ ճանճուռ, Ղողնոշ, Իշաղամբուլ, Դեղնաշլոր, Սպահանի, Անջելին եւ այլն:

ՀՀ-ԻՄ ԿԵՌԱՍԵՆՈՒ ԵԼ ԲԱԼԵՆՈՒ ՄՉԱԿԱՃԵԼԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կեռասենու ել բալենու տնկարկները գրեթէ համաշափ տարածված են ինչպես Արարատյան հարթավայրում, այնպես էլ նախալեռնային եւ մասսամբ էլ լեռնային գոտիներում:

Բալենին եւ կեռասենին պատկանում են Prunus Mill. ցեղին (կամ Cerasus Lam.), որն ընդգրկում է մի քանի տեսակներ: Արտադրական նպատակով կարեւոր նշանակություն ունեն Կեռասենի սովորական կամ Բալենի սովորական տեսակը (Cerasus avium կամ Cerasus vulgaris Mill.), որից առաջացել են համաշխարհային մշակաճելերի (բուսածեւեր, սորտեր)` այդ թվում տեղական ծագում ունեցող բոլոր ձեւերը: Գոյություն ունեն նաև այս տեսակներից խաչասերված մի շարք բուսածեւեր եւ խառնածիններ (հիբրիդներ), որոնք նույնպես արտադրական մեծ նշանակություն ունեն եւ լայնորեն տարածվել են նաև սիրողական պտղաբուծությունում:

ՀՀ տարածքում շրջանացված են կեռասենու եւ բալենու հետեւյալ մշակաճեւերը:

ԿԵՌԱՍԵՆՈՒ ՄՉԱԿԱՃԵԼԵՐԸ

Առինջենի

Հայկական մշակաճեւ է, սակայն կարծիք կա, որ այն ներմուծվել է Մոլդովայից: Հոմանիշը՝ «Սեւ կեռաս»: Տարածված է հատկապես Արարատյան հարթավայրում եւ նախալեռնային գոտում: Բերքատվությունը՝ 80 կգ/ծառ: Պտղի միջին քաշը 6-8 գ է, կլորավուն, բույլ սրտածեւ, մաշկը մուգ կարմիր, գրեթէ սեւ, պտղամիսը մուգ, ներկված հյութով, քաղցր, բույլ բրվաշ, թեթև տտիպությամբ, լավ համի: Սիջափաղահաս է՝ հասունացման ժամկետը՝ հունիսի երկրորդ տասնօրյակից մինչեւ հուլիսի առաջին տասնօրյակ: Օգտագործվում է միայն քարմ սպառման համար:

ՄԵԼԻՏՈՎՈՂԱԿԻ ՌԱՆՆԻ¹ **(ՄԵԼԻՏՈՎՈՂԻ ՎԱՂԱՒԱՍ, ԱԽԱԼՄԱՄԲ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՆ ՆԱԵՒ «ԶԱՆՖԻԴԱ»)**

Ուկրաինական մշակածել է՝ ստեղծվել է Մելիտովոլի այգեգործության ինստիտուտում (UAAN): Ծառը խոշոր է, արագ աճի հասունությամբ՝ հասնում է 6-7 մ-ի, կլոր եւ խիտ սաղարթով: Բերքատվությունը շատ բարձր է՝ 50-60 կգ/ծառ, շատ վաղահաս է:



Նկար 88. Մելիտովողակի ռաննի
(Մելիտովողի վաղահաս)

Պտուղները միջին եւ խոշոր են՝ մինչեւ 7-8 գ, հարթեցված սրտածել, կարմիր, հյութալի, շատ քաղցր՝ մի փոքր թթվայնությամբ: Համի գնահատականը շատ բարձր է: Օգտագործվում է միայն բարմ վիճակում:

ԴՐՈԳԱՆԱ ԴԵՂԻՆ


Արեւմտաեւրոպական մշակածել է, գերմանական կամ ավստրիական: Տարածված է կեռասենու մշակության բոլոր գոտիներում, հատկապես՝ Արարատյան հարթավայրում եւ Տավուշի մարզում: Խոշոր ծառեր են՝ ուժեղած կամ միջակած, երկարյակյաց են: Պտղաբերում են 5-րդ տարվանից: Բերքը միջակից բարձր է՝ 30-70 կգ ծառից: Պտուղները խոշոր են՝ 5-9 գ, կլոր սրտածել, դեղին, փայլուն, հաստ մաշկով: Պտղամիսը դեղնավուն է, ամուր, մսալի, հյութեղ, քաղցր, բույլ թթվությամբ եւ լուրեկան համով: Ուշահաս է՝ հասունացումը հունիսի 25-ից հուլիսի 15-ը: Բացի բարմ օգտագործումից, պիտանի է կոմպուտների եւ մուրաբաների արտադրության համար, փոխադրունակ է: Պահանջկոտ է արտաքին միջավայրի եւ խնամքի հանդեպ:



Նկար 89. Դրոգանա դեղին

Նապոլեոն սեւ

Արեւմտաեւրոպական մշակածեւ է: Տարածված է Հայաստանի՝ կեռասենու մշակության բոլոր գոտիներում, հատկապես՝ Արարատյան հարթավայրում եւ Տավուշի մարզում: Ծառերը ուժեղ աճող են՝ ձգված սաղարթով: Պտղաբերում են 5-րդ տարվանից: Բներքատվությունը մեկ ծառից կազմում է 70-130 կգ: Պտուղները միջակ են՝ 5-6 գ, սրտածեւ, քոյլ կողավոր, մաշկը մուգ բալագույն, գրեթէ սեւ, պինդ, պտղամիսը մուգ բալագույն է, մուգ ներկված հյուրով, պինդ կրծկային, քաղցր, քոյլ բրդաշ, թերեւ տտիպությամբ, լավ համ ունեն: Ուշահաս է՝ հասունացումը տեղի է ունենում հունիսի 25-ից հուլիսի 15-ը: Բացի թարմ օգտագործումից պիտանի է կոմպոտների և մուրաբաների արտադրության համար, փոխադրումակ է: Հիվանդությունների նկատմամբ դիմացկուն է:



Նկար 90. Նապոլեոն սեւ

Նապոլեոն վարդագույն

Արեւմտաեւրոպական մշակածեւ է: Տարածված է կեռասենու մշակության բոլոր գոտիներում, հատկապես Արարատյան հարթավայրում եւ Տավուշի մարզում: Ծառերը բրգածեւ սաղարթով են եւ ուժեղ աճ ունեն, երկարյակյաց են: Պտղաբերում են 3-րդ - 4-րդ տարվանից: Բներքը շատ թարձր՝ 60-120 կգ ծառից: Պտուղները միջակ եւ խոշոր են՝ 6-8 գ, արտակարգ գեղեցիկ, սրտածեւ, մաշկը բարակ, բայց ամուր, պինդ եւ փայլուն՝ բաց դեղին, վառ կարմիր շառագունած: Պտղամիսը սպիտակ է, հյութալի, շատ քոյլ ներկված: Սիջահաս է՝ հասունացումը տեղի է ունենում հուլիսի սկզբին: Բացի թարմ օգտագործումից, պի-



Նկար 91. Նապոլեոն վարդագույն

տանի է կոմպուտների եւ մուրաբաների արտադրության համար, փոխադրունակ է: Հիվանդությունների նկատմամբ դիմացկուն է: Կեռասենու լավագույն մշակաձեւերից է:

Քանաքեռի կեռաս

Հին հայկական մշակաձեւ է, տարածված է հատկապես Արարատյան հարթավայրում եւ Նախալեռնային գրտում:

Բերքի է անցնում 5-6 տարեկանից: Բերքատվությունը՝ 60-80 կգ/ծառ: Պտղի միջին քաշը՝ 6 գ, հակառակ կոնաձեւ, դեղնավարդագույն, նուրբ, գեղեցիկ մաշկով: Պատղամիսը նուրբ, սերուցքագույն, շատ հյութալի, քաղցր, աննշան թթվությամբ: Սիջավաղահաս է՝ հասունացումը 10-30/06: Սիայն քարմ սպառման համար է:

Բլեք գոլդ

Ամերիկյան սորտ է: Ծառերը ուշ են ծաղկում, տալիս են մեծ չափի մուգ կարմիր, ամուր պտուղներ: Ինքնափոշոտվող է եւ խաչաձեւ փոշոտման կարիք չունի:



Ուզինա

Գերմանական ուշահաս մշակաձեւ է: Պտուղները ամուր են, մեծ (8-9 գ.) եւ քարձրորակ: Գույնը մուգ կարմիր է, համը՝ քաղցր: Աչքի է ընկնում քարձր պահունակությամբ, կարելի է սառնարանային պայմաններում պահպանել 2 շաբաթ՝ առանց համային հատկանիշների կորստի: Ուշ ծաղկող է եւ փոշոտումը կատարվում է խաչաձեւ՝ պետք է տնկվի այլ ուշահաս սորտերի հետ համատեղ (օրինակ՝ Բիանկա, Կարինա, Սիլվիա եւ այլն): Ծառերը բերքի են անցնում տնկումից հետո 3-րդ տարի հետո:

Նկար 92. Ուզինա

Շմիդտ

Գերմանական մշակաձեւ է: Ծառը միջին չափի է, առատ պտղաբերում է, ցրտադիմացկուն է: Վաղահաս է: Պտուղները՝ մուգ կարմիր, գրեթե սեւ, խոշոր, հյութալի, քարձրորակ: Ծառերը ցրտադիմացկուն են, դանդաղ են անցնում պտղաբերման: Խաչաձեւ փոշոտվող է:

Բալենու մշակաձեւերը

Սիսիանի

Բալենու հին հայկական մշակաձեւեր է՝ Սյունիքից: Ծառը միջակից բարձր: Պտուղները խոշոր են՝ մինչեւ 7 գ, մուգ կարմիր, բրվաշ: Միջին բերքատու է՝ մինչեւ 12 կգ/ծառ: Հարմար է վերամշակման համար: Թույլ դիմացկուն է հիվանդությունների հանդեպ:

Շպանկա

Արեւելաներոպական բալակեռասային խառնածին (հիբրիդ) է: Ծառը բարձր է՝ մինչեւ 6 մ: Պտուղը մեծ՝ 5-6 գ, բրվաշաքաղը, դուրեկան: Բերքատվությունը բարձր: Պահանջում է կանոնավոր էտումներ: Հարմար է են թարմ սպառման, են վերամշակման համար:

Վլադիմիրսկայա

Բալենու հին ռուսական մշակաձեւեր է: Ծառանման է: Պտուղը մաճը, մուգ կարմիր, գրեթե սեւ, համը քաղցրաբրվաշ: Հարմար է են թարմ սպառման, են վերամշակման համար:

Ժուկովսկայա

Բալենու ռուսական մշակաձեւեր է: Ծառը՝ միջակ: Պտուղները՝ միջին են



Նկար 93. Շպանկա



Նկար 94. Վլադիմիրսկայա



Նկար 95. Ժուկովսկայա

խոշոր՝ 4-7 գ: Ունի միջին բերքատվություն: Հարմար է եւ քարմ սպառման, եւ վերամշակման համար: Դիմացկուն է քազմաքիվ հիվանդությունների հանդեպ:



Նկար 96. Լյուբսկայա

Լյուբսկայա

Բալենու հին ռուսական մշակաձեւ է: Փոքր ծառանման է՝ մինչեւ 2 մ: Պտուղը՝ միջակ, մինչեւ 5 գ, բաց կարմիր, հազեցած համի քաղցրաթթվաշ: Հարմար է վերամշակման համար: Բավականին ուշահաս է: Սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկունությունը ցածր է:

ՀՀ-ում տարածված են նաև կեռասենու եւ բալենու մի շարք նոր եւրոպական եւ ամերիկյան մշակաձեւեր՝ Ալայա, Սամիք, Վան, Գեներալսկայա, բալակեռասային խառնածին «Դյուկ»-եր եւ այլն:

ՀՀ-ԻՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ԽՆԴՈՐԵԼՈՒ ՄՉԱԿԱՃԵԼԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Խնձորենու այգիները անհամաշափ տարածված են նախալեռնային եւ լեռնային գոտում, Տավուշում, մասամբ նաև Արարատյան հարթավայրում: Վերջին տարիներին հիմնվող խնձորենու այգիները հիմնականում ցածրած (թզուկային), բարձրարդյունավետ տնկարկներ են:

Խնձորենին պատկանում է Malus Mill. ցեղին, որն ընդգրկում է միքանի տասնյակ տեսակներ: Արտադրական կարեւոր նշանակություն ունեն միքանիսը, որոնցից գլխավորը՝ Խնձորենի տնայինն է (Malus domestica Borkh.), որից առաջացել են համաշխարհային մշակաճելերը, այդ թվում՝ տեղական ծագում ունեցող բոլոր ձեւերը: Գոյություն ունեն նաև Խնձորենի արեւելյան, Խնձորենի սովորական (M. vulgaris Mill.) տեսակները, ընտրասերված կամ խաչասերված միշտաքանակ բուսածեւեր եւ խառնածիններ (հիբրիդներ), որոնք նույնպես մեծ արտադրական նշանակություն ունեն եւ որոշ չափով տարածվել են պտղաբուծությունում:

ՀՀ տարածքում շրջանացված են խնձորենու հետեւյալ մշակաճեւերը:

Այդարեղ (Idared)

Ամերիկյան ընտրասերովի մշակաճեւ է: Հայաստանում լայն տարածում գտած լավագույն ձմեռային սորտերից է: Ծառերն ունեն միջակ ամեցողություն, բերքի են անցնում տնկումից հետո 4-րդ - 5-րդ տարում: Բերքատու է, կյանքի 7-րդ - 8-րդ տարում բերքատվությունը՝ 150-170կգ/ծառ, պտղաբերումը՝ կանոնավոր: Բերքահավաքը հիմնականում



Նկար 97. Այդարեղ

կատարվում է սեպտեմբերին: Պտուղները խոշոր են կամ միջակ, մինչեւ 180 գ: Գեղեցիկ արտաքինով՝ հարք կլորավուն, ամբողջ պտուղն ունի մուգ մոռագույն ծածկող գույն: Մաշկը նուրբ է, պտղամիսը՝ սպիտակավուն, թթվաշաքաղցր, հյութալի, գերազանց որակի եւ համի: Փոխադրունակությունը եւ պահունակությունը բարձր են՝ պահպում է մինչեւ մարտ-ապրիլ: Զգայուն է ալրացողի նկատմամբ: Ցրտադիմացկունությունը բարձր չէ:

Գոլդեն Շելիչես (Golden Delicious)

Հայտնաբերվել է ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգի այգիներում, իին «Դելիչես» սորտի ընտրված նույնակային (կլոնային) դեղնապտուղ ձեւն է: Թարգմանաբար նշանակում է՝ «Ուսկյա սքանչահամ»: Լավագույն ձմեռային մշակաձեւերից է: Շնորհիվ շատ արժեքավոր հատկանիշների՝ մեծ տարածում ունի աշխարհում, այդ թվում ՀՀ-ում: Լայնորեն մշակվում է երկրի բոլոր պտղաբուծական մարզերում: Լավ փոշոտիչ է համարվում խճանքենու բոլոր այլ սորտերի համար: Ծառերն աչքի են ընկնում միջակ աճեցողությամբ, հավաքուն սաղարթով: Ծառերը բերքի են անցնում 4-5 տարեկանից, իսկ ցածրած (թզուկային) պատվաստակալների վրա՝ շատ ավելի վաղ (2-րդ – 3-րդ տարվանից): Բերքատվությունը հասնում է առավել բարձր ցուցանիշների՝ հատկապես թզուկային պատվաստակալների վրա: Բերքահավաքի ժամկետները՝ սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին: Պտուղները խոշոր են՝ 150-160 գ եւ ավելի, լայն կոնաձեւ, գեղեցիկ ուսկեցույն: Պտղամաշկը անհարթ է, փայլուն՝ մանր դարչնագույն կետերով: Պտղամիսը սերուցքագույն է, միջին ամրության, հյութալի, հիանալի բուրմունքով եւ գերազանց համային հատկանիշներով: Ունի միջակ դիմացկունություն ցրտի եւ ալրացողի հանդեպ, վատ է տառում հողում խօնավության, ինչպես նաև ցինկի եւ բորի պակասը:



Նկար 98. Գոլդեն Շելիչես

Ռեդ Շելիչես (Red Delicious)

Ամերիկյան «Դելիչես» մշակաձեւի ընտրասերման նույնակային (կլոնային) կարմրապտուղ բուսածեւն է: Ռեդ Շելիչես նշանակում է՝ «Կարմիր սքանչահամ»: Նման կարմրապտուղ շատ սորտեր կան՝ Ստարկրինտոն, Ստարկինգ Շելիչես, Ռոյալ Ռեդ Շելիչես, Ռիչարենդ,

Վելսպուր եւ այլն, որոնք արտաքին հատկանիշներով միմյանցից գոեթ չեն տարրերվում՝ միայն պտուղներով դրանց շատ դժվար է զանազանել: Ունի Դելիշեսի ծառերը բարձրած են, բրգաձեւ: Պտղաբերման են անցնում 6-7-րդ տարեկանում, իսկ ցածրած պլատվաստակալների վրա՝ ավելի վաղ: Բերքատու են, պտղաբերման պարբերականությունը բույլ է արտահայտված: Պտուղները խոշոր են, 130-160 գ, երկարավուն կոնաձեւ, բնորոշ կողավորությամբ, մուգ կարմիր պտղամաշկով եւ սալիտակ ենթամաշկային կետերով: Պտղամիսն օժտված է բարձր որակական հատկանիշներով՝ համեղ է, թերեւ բուրմունքով, քաղցր, հաճելի թթվությամբ: Մշակության բարձր արդյունավետությունն է ապահովում միայն տաք վայրերում: Տերեւներն ու պտուղները բավական դիմացկուն են քոսի եւ ալրացողի հանդեպ, բայց բողոքները տուժում են վաղ գարնանային ցրտերից:



Նկար 99. ՌեդԴելիշես

Ստարկրիմսոն (Starkrimson)

Ամերիկյան «Դելիշես» բուսաձեւի նույնակային (կլոնային) կարմրապտու ձեւերից է: «Ստարկրիմսոն» բարգմանաբար նշանակում է՝ «Սոռագույն աստղ»: Ծառերը բույլած են, փոքր, նոսր եւ հավաքուն սաղարբով: Վաղ պտղաբերող է՝ 3-րդ տարվանից: Պտղաբերում է կանոնավոր եւ առատ՝ 80-150 կգ/ծառ: Պտուղները միջակ մեծության են կամ խոշոր՝ 160-180 գ, գեղեցիկ, երկարավուն կոնաձեւ, պտղի ամբողջ մակերեսով անցնող խոր կողավորությամբ: Պտղամաշկը՝ համատարած մուգ մոռագույն, անփայլ մոմափառով: Պտղամիսը դեղնավուն սպիտակ է, համեղ, թերեւ բուրմունքով, քաղցր, առանց թթվության: Բերքահավաքը կատարվում է սեպտեմբերի երկրորդ կեսին, պտուղները պահվում են մինչեւ մարտ-ապրիլ: Պահանջկոտ է ինչպես ծառերի խնամքի, այնպես էլ բերքահավաքի ժամկետների նկատմամբ: Եթե բերքահավաքը ժամանակին է կատարվում, պտուղների պահունակությունը բարձրա-



Նկար 100. Ստարկրիմսոն

նում է: Բերքահավաքն ուշացնելիս պտուղները գերհասունանում են, իսկ ժամկետից շուտ հավաքելիս՝ բառամում: Աչքի է ընկնում միջակ ձմեռադիմացկունությամբ եւ չորադիմացկունությամբ: Բավական դիմացկուն է սնկային հիվանդությունների հանդեա:

ՄԵԼՔԱ

Ստացել են կանադացի ընտրասերողները: Համարվում է խնձորենու լավագույն ամառային մշակաձեւերից մեկը: Ծառերը միջակ են, կլորավուն, փոփած սաղարթով: Ծառերը վաղ են անցնում պտղաբերության շրջան՝ 3-4 տարեկանից: Բարձրբերքատու են՝ 8-12 տարեկանում տալիս են 100-150 կգ/ծառ բերք: Պտուղները միջակ են կամ խոշոր՝ 110-125 գ, կլորավուն են կամ տափակ կլորավուն, հարթ: Պտղամաշկը դեղնականաչավուն է, պտղի 2/3 մասը պատված է կարմիր զոլերով: Պտղամիսը սպիտակ է, հյութալի, նուրբ եւ բուրավետ, թթվաշաքաղցր, գերազանց համային



Նկար 101. ՄԵԼՔԱ

հատկանիշներով: Պտուղները հասունանում են հուլիսի վերջին, օգոստոսին եւ պահվում են 10-ից 20 օր: Սառնարանային պայմաններում պահունակությունը բավականին երկար է՝ մինչեւ 3 ամիս: Ծառերի ձմեռադիմացկունությունը բարձր է: Պտուղներն ընկալունակ են քուի նկատմամբ:

ՄԵԼՌՈՒՐԻՎ (Melrose)

Ստացվել է ԱՄՆ-ում՝ տարբեր կարմրապտուղ ձեւերի ընտրասերումից: Հայաստանի գիսավոր պտղաբուծական գոտիներում լայն տարածում գտած լավագույն ձմեռային մշակաձեւերից է: Ծառերն ունեն ուժեղ աճեցողություն: Պտուղները խոշոր են, մինչեւ 180 գ, կլոր կոնաձեւ, բույլ կողավորությամբ: Մեծությամբ են ձեւով միատարր են, ունեն շատ գրավիչ տեսք: Պտղամաշկը կոպիտ է, հարթ, փայլուն: Պտղի հիմնական գույնը կանաչադեղին է, սակայն պտղի գրեթե ողջ մակերեսը ծածկված է մուգ կարմիր գծերով: Պտղամիսը սպիտակասերուցքագույն է, ամուր, նուրբ, շատ հյութալի, ուժեղ բուրմունքով եւ

գերազանց բրվաշաքաղյու համով: Բերքահավաքը՝ հոկտեմբերի առաջին տասնօրյակում, իսկ սպառողական հասունացումը՝ նոյեմբերից ապրիլ: Պտուղները փոխադրունակ են եւ պահունակ: Չմեռադիմացկունությունը բարձր է: Զոսի ու ալրացողի դեմ միջակ դիմացկունություն ունեն: Համարվում է լավ փոշոտիչ այլ սորտերի համար:



Նկար 102. Սելոռում

Գրենի Սմիթ (Granny Smith)

Ավստրալիական ձմեռային մշակածեւ է: Վերջին երկու տասնամյակում է մուտք գործել Հայաստան եւ լայն տարածում ստացել գրեթե ամենուր: Ծառերն ուժեղած են, վաղ են մտնում պտղաբերության շրջան եւ աչքի են ընկնում առատ պտղաբերմամբ: Պտուղները գրավիչ են իրենց խոշոր, բարձր ապրանքային տեսքով, խոշոր են կամ միջակ, կլորավուն, տափակ կոնաձեւ: Պտղամաշկը հարթ է, մուգ կամաչ գույնի, սպիտակավուն ենթամաշկային կետերով: Պտղամիսը բաց կանաչ գույնի է կամ սպիտակ, շատ համեղ, պինդ, խրթխրթան, հյութալի, քաղցրավուն, բարձմացնող բրվությամբ եւ բույլ բուրմունքով: Բերքահավաքը կատարվում է սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին: Պտուղները պահվում են մինչեւ ապրիլ - մայիս եւ օժտված են բարձր փոխադրունակությամբ: Սորտը բույլ դիմացկունություն ունի ալրացողի նկատմամբ:



Նկար 103. Գրենի սմիթ

Ունետ Սիմիրենկո

Հայտնաբերել է գիտնական Լ. Պ. Սիմիրենկոն Ուկրաինայի մի այգում: Հայաստանում լայն տարածում ունեցող ձմեռային մշակածեւ է: Տարածված է ՀՀ բոլոր պտղաբուծական մարզերում՝ հատկապես ծովի մակարդակից 1000-1200 մ բարձրություն ունեցող վայրերում: Ծառերն ունեն 5-6 մ բարձրություն, փոփած սաղարթ: Վաղ



Նկար 104. Ռենետ Միմիթեսկո

Են անցնում պտղաբերման՝ 4-5 տարեկանում, լրիվ բերքատվության շրջանում 1 ծառից ստացվում է 200-400 կգ բերք: Պտուղները հավաքում են սեպտեմբերի վերջից մինչեւ հոկտեմբերի կեսը եւ օգտագործում նոյեմբերի կեսից մինչեւ ապրիլ-մայիս ամիսները: Պտուղները խոշոր են՝ 100-250 գ, բարձր կոնսամազ, իսկ միջակները եւ փոքրերը ավելի տափակ, կարծ պտղակորունով լավ ամրացված ճյուղերին: Պտղամաշկը հաստ է, կանաչ, շատ հաստ մոմաշերտով՝ գրեթե յուղոտ, հասունանալիս դառնում է ծղոտադեղին, փայլուն, սպիտակ կետերով: Պտղամիսը սպիտակավոն կանաչ է, շատ հյութալի, մանրահատիկ, բրվաշարադր, շատ համեղ եւ նուրբ բուրմուճքով: Հայտնի է, որ անշուր կանաչ գույնի այս պտուղները հյութալի եւ համեղ են,

պահպանում են համային հատկանիշները մինչեւ ապրիլ-ամիս եւ ավելին: Ծիվառաջացման բարձր ունակության շնորհիվ ցրտից վճասված ծառերն արագ վերականգնվում են: Ցրտադիմացկունությունը բարձր է, բայց երբ բուսաճն աշնանը շուտ է ավարտվում, ձնուանը ծառերը վնասվում են սառնամանիքներից: Չորադիմացկուն եւ քամեդիմացկուն է: Բրդապատ լվիճի նկատմամբ դիմացկունությունը բույլ է: Խոնավ վայրերում ուժեղ վարակվում է քոսով:

Բանան ՃՄԵՌԱՅԻՆ

Հյուսիսամերիկյան հնագույն մշակածել է: Հայաստանում մշակվում է շատ վաղուց եւ համարվում է լավագույն ճմեռային սորտերից մեկը: Առավելապես լավ է աճում ցածրլեռնային եւ նախալեռնային գոտու պայմաններում, մինչեւ 1800 մ բարձրություններում: Ծառերը խոշոր են, ուժեղ աճեցողությամբ: Բերքատվությունը միջակ է եւ մի-

շակից բարձր՝ 120-200 կգ: Պտղաբերության է անցնում տնկման 5-րդ - 6-րդ տարվանից: Ցածրադիր գոտիներում բավական ցրտադիմացկուն է, դիմանում է սաստիկ սառնամանիքներին: Պտղաբերման պարբերականությունը բույլ արտահայտված է: Բերքահավաքը՝ սեպտեմբերի կեսից մինչեւ հոկտեմբերի կեսը, բերքը պիտանի է օգտագործման հոկտեմբերի վերջից եւ պահպում է մինչեւ փետրվար-մարտ ամիսները: Պտուղները խոշոր են կամ միջակ՝ 120-300 գ, կլոր կամ երկարավուն կոճածեւ, երբեմն էլ տափակ, անկանոն շեղված: Մաշկը հաստ է, ամուր, միջակ մոռնափայլվ, բաց կանաչ, հետազայում՝ բաց դեղին: Պտղամիսը բաց դեղնափուն է, նուրբ, մանրահատիկ, հյութալի, գինեքաղցր, աղամաքուզի (բանանի) բուրմունքով, բարձր համային հատկանիշներով, գերազանց որակի: Փոխադրունակությունը բարձր չէ: Խոնավ վայրերում պտուղները եւ տերեւները ուժեղ վարկվում են քոսով:



Նկար 105. Բանան ձմեռային

ԲԵԼՖԼՅՈՐ ԴԵՂԻՆ

Հյուսիսամերիկյան հին մշակածեւ է (որոշ աղբյուրներով՝ հին ֆրանսիական): Ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է «Գեղեցիկ դեղին ծաղիկ»: Հայաստանում մշակվում է շատ վաղուց եւ համարվում է լավագույն ձմեռային սորտերից մեկը: Լայնորեն մշակվում է նախալեռնային եւ լեռնային գոտիներում, Վայոց Ձորի, Սյունիքի, Տավուշի մարզերում՝ ծովի մակերեւույթից 1200-1500 մ եւ ավելի բարձրություններում: Ծառերը խոշոր են, լայն գնդածեւ սաղարթով:



Նկար 106. ԲԵԼՖԼՅՈՐ ԴԵՂԻՆ

Ծառերը պահանջկոտ են խնամքի եւ հողային պայմանների նկատմամբ: Բերքատվության են անցնում ուշ՝ 7-8-րդ տարուց, իսկ ապրանքային նշանակության բերք տալիս են 12-15-րդ տարվանից: Ցածրած պատվաստակալի վրա պատվաստելիս այդ ժամկետները կրծատվում են: Բերքատվու-

թյունը բարձր է՝ 200-360 կգ/ծառ, բայց ոչ ամենամյա՝ 1-2 տարվա պարբերականությամբ: Բերքահավաքը կատարվում է սեպտեմբերի վերջին տասնօրյակից մինչեւ հոկտեմբերի կեսը: Պտուղները գեղեցիկ են, միջակ եւ մեծ՝ 150-180-ից մինչեւ 300 գ եւ ավելի, բարձր կոնածեւ, պտղի վերին մասում կողավոր: Պտղամաշկը ամուր է, բայց նուրբ, փայլուն, բերքահավաքին՝ դեղնականաչ, հետո՝ կիտրոնադեղին, արեսի կողմից վարդագույն բշով: Պտղամիսը բաց դեղին, ամուր, նուրբ հյութալի, հասունանալիս փխրուն, բույլ բուրմունքով, քաղցրաբրվաշ, յուրահատուկ համով, գերազանց որակի: Օգտագործման համար ալիսանի են դառնում հոկտեմբերի վերջից եւ պահպանվում են մինչեւ վենտրվար, մարտ եւ ավելի երկար:

ԲԵԼՖԼՅՈՐ ԿԻՏԱՎԱԿԱ

Ստացել է ոռու ընտրասերող Ի.Վ. Միջուրինը՝ Բելֆլյոր դեղին եւ վայրի Կիտավակա ծեների խաչասերումից: Մեկ դարից ի վեր լայնորեն տարածված է Հայաստանի լեռնային եւ մասամբ նախալեռնային շրջաններում: Լավագույն աշնանային սորտերից է: Ծառերը խոշոր են, գնդաձեւ սաղարթով, խիս: Բերքատվությունը սկսվում է 3-րդ - 4-րդ տարվանից, իսկ 9-10 տարեկանում կազմակերպում են ապրանքային նշանակալի բերք՝ 125-250 կգ/ծառ: Պտուղները հասունանում են օգոստոսի վերջին, սեպտեմբերի սկզբին եւ պահվում 10-ից 20 օր: Պտուղները լինում են խոշոր՝ 200 գ, երբեմն միջակ՝ 120-160 գ, գեղեցիկ, կլոր-ձվածեւ, բույլ արտահայտված կողավորությամբ: Պտղամաշկը բարակ է, կիսափայլատ, մոխրադեղին՝ մակերեսի 3/4-ը՝ բաց վարդագույն գծերով: Պտղամիսը սպիտակ, հյութալի, վարդաբուրմունքով, գինեթթվային, բարձր համային որակի: Բացի բարմ սպառումից պտուղներից ստացվում է նաև միջին որակի չիր: Օժտված է բարձր ցրտադիմացկունությամբ, բայց հիվանդությունների նկատմամբ դիմացկունությունը ցածր է:



Նկար 107. ԲԵԼՖԼՅՈՐ ԿԻՏԱՎԱԿԱ

Են, գնդաձեւ սաղարթով, խիս: Բերքատվությունը սկսվում է 3-րդ - 4-րդ տարվանից, իսկ 9-10 տարեկանում կազմակերպում են ապրանքային նշանակալի բերք՝ 125-250 կգ/ծառ: Պտուղները հասունանում են օգոստոսի վերջին, սեպտեմբերի սկզբին եւ պահվում 10-ից 20 օր: Պտուղները լինում են խոշոր՝ 200 գ, երբեմն միջակ՝ 120-160 գ, գեղեցիկ, կլոր-ձվածեւ, բույլ արտահայտված կողավորությամբ: Պտղամաշկը բարակ է, կիսափայլատ, մոխրադեղին՝ մակերեսի 3/4-ը՝ բաց վարդագույն գծերով: Պտղամիսը սպիտակ, հյութալի, վարդաբուրմունքով, գինեթթվային, բարձր համային որակի: Բացի բարմ սպառումից պտուղներից ստացվում է նաև միջին որակի չիր: Օժտված է բարձր ցրտադիմացկունությամբ, բայց հիվանդությունների նկատմամբ դիմացկունությունը ցածր է:

Էլսթար

Ամերիկյան ընտրասերովի մշակաձեւ է: Ծագումով Գոլդեն Դելիշեսի ձեւերից է, որից ժառանգել է մի շաք օգտակար հատկանիշներ: Ծառը մեծ է, պտուղը միջակից մեծ, դեղնակարմիր: Պտղամիսը կիտրոնագույն է, խրթխրթան, հյութալի, շատ համեղ, բարձր աղանդերային, ունի հատուկ, այսպես կոչված «մեղրի» համ:



Նկար 108. Էլսթար

Օրեգոն սփուր

Ամերիկյան ընտրասերովի մշակաձեւ է, ծառը մեծ է, կարող է աճել ոչ բերրի հողերում, դիմացկուն է հիվանդությունների նկատմամբ, վաղահաս է: Պտուղը շատ խոշոր եւ գեղեցիկ վառ կարմիր է:



Նկար 109. Օրեգոն սփուր

Ֆուջի

ճապոնական ուշահաս մշակաձեւ է, շուկա է մտել 1962 թ.: Ծառը միջին աճեցողության է: Հասունանում է հոկտեմբերի վերջին: Պտուղը միջակ մեծության է, կլորավուն, կարմիր, հյութալի, խրթխրթան, սերուցքագույն պտղամսով, քաղցր՝ հոյակապ համային հատկություններով: Պահունակությունը երկար է, այդ ընթացքում չի կորցնում ապրանքային տեսքը: Դիմացկուն է քոսի, որոշակիորեն դիմացկուն՝ ալրացողի նկատմամբ:



Նկար 110. Ֆուջի



Նկար 111. Մուցու

Մուցու

Ծապոնական միջառուշահաս նոր մշակածել է: Հյայաստանում ունի որոշակի տարածվածություն: Ծառը միջին աճեցողության է: Պտուղը՝ միջակ մեծության, տափակվլորավուն, բաց կարմիր, նարնջագույն, հյութալի, խրբխրբան, կրեմագույն պտղամտով, քաղցր՝ բարձր համային հատկություներով: Հասունանում է սեպտեմբեր-հոկտեմբերին: Երկար պահունակ է: Դիմացկուն է քոսի եւ ալյացողի նկատմամբ:



Նկար 112. Գալա

Գալա

Ծապոնական նոր մշակածել է: Հասունանում է սեպտեմբերին: Պտուղը կարմիր է, մուգ կարմիր գծերով, միջին չափսերի, պտղամիսը ամուր, համային հատկությունները բարձր՝ քաղցր համի, հյութալի: Պտուղը հնարավոր է հավաքել միանվագ կամ կրկնահավաքով: Պահունակ է:

ՀՀ-ում տարածված են նաև Խնձորենու մի շաք հին ու նոր արեւմտաեւրոպական, հյուսիսամերիկյան, ռուսական մշակածելեր՝ Վիրզինյան վարդագույն, Պապիրովկա, Պարմեն ոսկյա ձմեռային, Չելինի, Ռենետ կանարական, Ռենետ Օռլեանի, Ռենետ Բերզամութի, Ռոյալ Գալա, Կրոնսել, Սինապ, ինչպես նաև Շաքարկենի եւ Մարգախնձոր տեղածին՝ գերվաղահաս ձեւեր եւ այլն:

ՀՀ-ԻՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՏԱՆՃԵՆՈՒ ԵՒ ՍԵՐԿԵԼԻԼԵՆՈՒ ՄշակածԵՒԵՐԻ ԲՆՈՒԹՅԱԳՐԵՐԸ

ՏԱՆՃԵՆՈՒ ՄՇԱԿԱԾԵՒԵՐԸ


Տանճենու այզիները անհամաշափ տարածված են նախալեռնային գոտում, Տավուշում, Սյունիքում, մասամբ նաև՝ Արարատյան հարթավայրում:

Տանճենին պատկանում է *Pyrus L.* ցեղին, որն ընդգրկում է մի քանի տասնյակ տեսակներ: Արտադրական կարեւոր նշանակություն ունեն մի քանիսը, որոնցից առավել արժեքավորը Տանճենի սովորականն է (*Pyrus communis L.*): Դրանից առաջացել է համաշխարհային տարածում ունեցող մշակածեւերի ճնշող մեծամասնությունը, այդ թվում՝ տեղական ծագում ունեցող ճեւերը: Գոյություն ունեն նաև այլ տեսակներից՝ Տանճենի ասիական կամ ավազային (*P. pyrifolia Mill.*) եւ Տանճենի կովկասյան (*P. caucasica Mill.*), ընտրասերված կամ խաչասերված մի շաբթ բուսածեւեր եւ խառնածիններ (հիբրիդներ), որոնք նույնպես ունեն արտադրական նշանակություն եւ որոշ տարածում ունեն պտղաբուծությունում:

ՀՀ տարածքում շրջանացված են Տանճենու հետեւյալ մշակածեւերը:

Մալաչա

Ամառային հասունացմամբ հնագույն հայկական մշակածեւ է: Ծառերը մեծ են, բերքի են անցնում 3-5 տարեկանում, ունեն քարձը եւ կանոնավոր բերքատվություն: Պտուղները հասունանում են օգոստոսի սկզբից մինչև սեպտեմբերի առաջին տասնօրյակը: Պտուղները երկար տանձածեւ են, միջակ մեծության, երբեմն խոշոր՝ 140-220 գ, համաշափ, շատ գեղեցիկ, ճյուղին ամուր կպած: Պտղամաշկը՝ հարթ, նուրբ մոմային փայլով, լրիվ հասունանալիս՝ դեղին, փայլուն: Պտղամիսը սպիտակ է, մանրահատիկ ու քիչ քարաքիջներով, հյութալի է, շատ համելի քաղցրությամբ եւ քոյլ թթվությամբ, քարձորակ: Քերքը հավաքելուց հետո պտուղները պահպում են 2-3 օր, ուստի



Նկար 113. Մալաչա

պետք է օգտագործել անմիջապես և միայն բարմ վիճակում: Ավելի երկար պահելիս դրանց որակը խփառ ընկնում է: Տեղական լավագույն մշակաձեւերից է և բացի լեռնային գոտուց ընդգրկված է տանձենու մշակության բոլոր գոտիների ստանդարտ տեսականու մեջ:

Վիլյամս ամառային




Նկար 114. Վիլյամս ամառային

Ամառային հասունացմամբ անգիտական մշակաձեւ է: Առավելապես մշակվում է Տավուշի և Լոռի մարզերի ցածրադիր վայրերում: Ծառերը միջակից մեծ են, բերքի են անցնում 3-5 տարեկանում, ունեն բարձր և կանոնավոր բերքատվություն: Պտուղները միջակ կամ խոշոր՝ 170–220 գ, երկար տանձաձեւ կամ զանգակաձեւ: Պտղի մակերեսը թույլ բլթակավոր է: Պտղամաշկը բերքահավաքի ժամանակ բաց կանաչ է, բարակ, փայլատ պատված համաչափ ցրված դարչնագույն կետերով, արեւի կողմից նուրբ կարմիր գունավորված: Հասունացած պտուղները

կիտրոնադեղին են: Պտղամիսը սերուցքագույն է, շատ նուրբ, հյութալի եւ քաղցր, մուսկատային համով եւ բուրմունքով: Արարատյան հարթավայրում հասունանում է օգոստոսի վերջին - սեպտեմբերի սկզբին: Բերքահավաքից հետո պտուղները նկուղում կարող են պահպել 15-25 օր, իսկ սառնարանային պայմաններում՝ 2-3 ամիս: Պահպանման ընթացքում պտուղները դառնում են ավելի նուրբ, հալվող եւ բարձրորակ: Արդյունաբերական նշանակություն ունեցող ամառային մշակաձևերի մեջ համարվում է լավագույնը:

ԱՆՏՈՐԱՅԻՆ ԳԵՂԵցկուիի


Բելգիական հինավորց մշակաձև է: Հայաստանում վաղեմի տարածում ունեցող մշակաձև է, տարածված է բոլոր պտղաբուծական մարզերում՝ ծովի մակարդակից մինչեւ 1500 մ բարձրություն ունեցող վայրերում: Աճեցվում է նաև ավելի բարձր վայրերում, մասնավորապես Շիրակի եւ Գեղարքունիքի մարզերում: Ծառերը խոշոր են: Աճեցնում են բերքի 4-5 տարեկանում, ապահովում են կայուն բարձր բերք: Աշնանային մշակաձև է՝ Արարատյան դաշտում հասունանում է օգոստոսի սկզբին, իսկ բարձրադիր վայրերում՝ սեպտեմբերի կեսին: Պտուղները խոշոր կամ միջակ են՝ 150–350 գ, բուր ձվաձև կամ հատված կոնաձև: Պտղամաշկը հարթ է, փայլուն, կանաչ, հասունացած ժամանակ՝ դեղին, վառ կարմիր մեծ թշով, շատ գեղեցիկ: Լրիվ հասունացման ժամանակ մշակաձևին հատուկ է հաճելի մուսկատային բուրմունքը: Պտղամիսը սպիտակադեղին, հալվող, գինեքաղցր, գերազանց համի: Պտուղների որակը ավելի է բարձրանում բերքահավաքից 15-20 օր հետո: Սառնարանային պայմաններում կարելի է պահել 2-3 ամիս: Պտուղների փոխադրունակությունը բարձր չէ: Ուժեղ վնասվում է պտղակերպից եւ տանձենու սղոցողից:



Նկար 115. ԱՆՏՈՐԱՅԻՆ ԳԵՂԵՑԿՈՒԻԻ

ԲԵՐԵ ԲՈՆԿ

Հին ֆրանսիական աշնանային մշակաձև է: Տարածված է Տավուշի եւ Լոռու մարզերի ցածրադիր վայրերում: Լավագույն աղանդերային աշնանային մշակաձևերից է: Ծառերը խոշոր են: Բերքի են



Նկար 116. Բերե բռուկ

անցնում 4-5 տարեկանում, ապահովում են լավ բերքատվություն: Պտուղները հասունանում են սեպտեմբերի կեսին եւ պահպում մինչեւ նոյեմբերի վերջը, իսկ սառնարանային պայմաններում՝ 5-6 ամիս: Պտուղները միջակ են եւ շատ խոշոր՝ 180-300 գ, երկար տաճածեն, մաշկը՝ նուրբ ու բարակ: Բերքահավաքի ժամանակ՝ բաց կանաչ գույնի, լիիվ պատված ժանգաբծերով եւ մանր ժանգակետերով, երբեմն ավելի արտահայտված ցանցի տեսքով: Չոր եւ արեւոտ պայմաններում պտղամաշկը ոսկեգույն է կամ ոսկեժանգագույն, շատ գեղեցիկ: Պտղամիսը սպիտակադեղնավուն է, նուրբ, հյութալի, հալվող, քաղցր, դուրեկան բրդությամբ, բարձրորակ: Պտուղները գեղեցիկ են, բարձրորակ եւ փոխադրունակ:

Բերե արդանապոն

Զմեռային հասունացմամբ բելգիական մշակածեն է: Ծառերը խոշոր են, բերքի են անցնում 4-5 տարեկանում, ունենում են բարձր բերքատվություն: Պտուղները խոշոր են եւ շատ խոշոր՝ 150–400 գ քաշով,

զանգակատանձածեն, փոփոխված ձեւով, անհավասարակողմ: Պտուղն ամբողջ երկարությամբ ունի բնորոշ կողավորություն: Բերքը հավաքելու շրջանում պտղամաշկը բաց գույնի է, բազմաթիվ մանր կանաչավուն կետերով, պահպանան ընթացքում դառնում է բաց դեղին, արեւի կողմից շառագունած: Պտղամիսը սպիտակ է, շատ նուրբ, հյութալի, հալվող, քաղցր, շատ հաճելի բրդությամբ ու բուրմունքով: Պտուղները միատարր չեն, ունեն յուրահատուկ դուրեկան թույլ տտիպություն, գերազանց որակի են: Շուտ հավաքելու դեպքում (մինչեւ հոկտեմբերի կեսը) արագ



Նկար 117. Բերե արդանապոն

կնճռոտվում են՝ կորցնելով որակական հատկանիշները: Այս մշակաձեւը պահանջկոտ է խնամքի եւ միջավայրի գործոնների նկատմամբ: Չոր եւ քամոտ վայրերում տերեւները ստանում են այրվածքներ:

ՕԼԻՎԵ ԴԵ ՍԵՐ

Զմեռային հասունացմամբ ֆրանսիական մշակաձեւ է: Բարեհաջող աճում եւ պտղաբերում է ծովի մակերեւույթից մինչեւ 1200–1300 մ բարձրություն ունեցող վայրերում: Ծառերը միջակ են, լայն բրզանելի հավաքուն սաղարթով, բերքի են անցնում 5-6 տարեկանում, ունեն բարձր եւ կանոնավոր բերքատվություն՝ 150–200 կգ/ծառ: Բերքահավաքը կատարվում է սեպտեմբերի վերջին, հոկտեմբերի կեսին: Պտուղները օգտագործման համար պիտանի են դառնում դեկտեմբերի վերջից հունվարի կեսից եւ առանց համային հատկանիշները կորցնելու պահին են մինչեւ մարտի կեսը: Պտուղները միջակ մեծության են եւ խոչը՝ 130-270 գ քաշով, տափակ կլորավուն, թերեւակի անհավասարակողմ, խորդուքորդ, քմբավոր մակերեսով, սերկելիլանման տեսքի: Պտղամաշկի գույնը մոխրականաչ է, խոր հասուն վիճակում՝ դեղնականաչ՝ պատված գորշ կանաչավուն կետերով եւ բծերով, որոնք խտանալով խիտ ժանգի են վերածվում: Պտղամիսը ամուր է, սպիտակ,




Նկար 118. Օլիվյե դե սեր

շատ հյուրալի, քաղցր, հաճելի բույլ թթվությամբ, նշի բուրմունքով, գերազանց համով: Ուշ ձմեռային հասունացմամբ լավագույն աղանդերային մշակաձեւերից է: Պահանջկոտ է հողակլիմայական պայմանների նկատմամբ: Չորային, ծանր մեխանիկական կազմով, խոնակ եւ սառը հողերում աճեցնելիս պտուղները վատ են զարգանում եւ պահպանման ընթացքում կնճռոտվում են:

Հեղինե

Հայկական մշակաձեւ է, որը ստացվել է Շիրակում, հեղինակը Պ. Քարանյանն է: Ծառերը խոշոր են, բերքի են անցնում 4-5 տարեկանում, ունի բարձր բերքատվություն՝ 60-80 կգ/ծառ եւ ավելի: Լավ խնամքի պայմաններում պտղաբերությունն ամենամյա է, պտղաբերում է օղանիստերի եւ պտղաշիվերի վրա: Պտուղները բարձրորակ են, խոշոր եւ միջին չափսի, մինչեւ 300 գ, բութ տանձաձեւ, կարմիր թշով: Պտղամիսը սպիտակ է, նուրբ, շատ հյութալի, բրվաշաքաղցր, հաճելի բուրմունքով եւ դուրեկան համով: Աշնանային մշակաձեւ է: Պտուղները քաղում են սեպտեմբերի վերջին եւ պահպուն մինչեւ հունվար: Ցրտադիմացկուն է՝ շրջանացված է լեռնային գոտու պայմաններում:



Նկար 119. Հեղինե

Զմեռնուկ

Զմեռային հասունացմամբ հիմն հայկական մշակաձեւ է: Տարածված է Հայաստանի բոլոր պտղաբուծական տարածքներում բացի լեռնային գոտիներից: Պտուղները մանր են կամ միջակ, 100-130 գ, բայց երիտասարդ ծառերինը՝ մինչեւ 325 գ, կլորավուն, երբեմն քիչ երկարավուն, հարք կամ թույլ խորդութորդ: Մաշկը կոպիս է, հաստ, հարք, բաց կանաչ, լրիվ հասունացման ժամանակ դեղնականաչ, մանր կետերով: Պտղամիսը սպիտակ է, հյութալի, կոպիտ կրծկային կառուցվածքով, խոշոր քարաբջիջներով, թույլ բրվաշաքաղցր, զովացուցիչ բրվությամբ, միջին որակի: Պտուղները հավաքում են հոկտեմբերին, իսկ օգտագործման համար պիտանի են



Նկար 120. Զմեռնուկ

դառնում նոյեմբերից՝ պահվելով մինչեւ մարտ-ապրիլ ամիսները: Օգտագործվում են նաև քրվի համար: Պտուղները փոխադրունակ են: Ցրտադիմացկուն, երկարակյաց, հիվանդությունների եւ պտղակեր վնասատուների նկատմամբ դիմացկուն մշակածեն է:

Օլիմպիկ

Ասիական տանձի ճապոնական մշակածեներից է: Մշակվում է Տավուշի մարզում եւ այլ տաք վայրերում: Ծառն ուժեղած է, վերնքաց ուղիղ աճող: Պտուղները կլոր են, խոշոր, գեղեցիկ շագանակագույն: Պտղամիար՝ խրբխրբան, հյութալի, քաղցր համով: Ծապոնական մյուս բուսածեների համեմատությամբ ավելի ձմեռադիմացկուն է: Երկրարաժամկետ պահպանման լավագույն մշակածեն է: Որպես փոշոտիչ կարելի է տնկել ասիական մեկ այլ բուսածելի հետ:



Նկար 121. Օլիմպիկ

Յոնաշի

Ասիական տանձի ճապոնական լավագույն մշակածեներից է: Մշակվում է Տավուշի մարզում: Հասունանում է սեպտեմբերի կեսին: Պտուղը խոշոր է, նարնջաշագանակագույն, շատ գեղեցիկ, խրբխրբան, հաճելի բույրով, ամուր պտղամսով: Ծառերը՝ ուղղածից աճող, միջին աճեցողության: Որպես փոշոտիչ պետք է տնկել մեկ այլ ասիական բուսածելի հետ:



Նկար 122. Շինկո

Ասիական տանձի ճապոնական լավագույն մշակածեներից է: Մշակվում է Տավուշի մարզում: Հասունանում է սեպտեմբերի սկզբին: Պտուղը միջակ է, դեղնաշագանակագույն, գեղեցիկ: Պտուղները խրբխրբան են, հյութալի, հաճելի համով եւ բույրով, ամուր պտղամսով: Ծառերը ուղիղ աճող են, մի-

զին աճեցողության: Որպես փոշոտիչ պետք է տնկել մեկ այլ ասխական բուսաձեւի հետ:

ՀՀ-ում տարածված են նաև տանձենու մի շարք արեւմտաեւրոպական եւ հայկական մշակաձեւեր՝ Հուլիսյան, Լեռնային գեղեցկուհի, Պապական, Բերե Լիզելի, Բերե Բերգամոտ, Կոնֆերանս (Կոնֆերենցիա), Պաս Կուասան, տեղական կիսավայրի մանրապտուղ ձեւեր (պանտա) եւ այլն:

Սերկելիենու մշակաձեւերը

Սերկելիենու այգիները անհամաչափ են տարածված ՀՀ-ում, հինականում՝ Տավուշում, Արարատյան հարթավայրում եւ մասամբ՝ նախալեռնային գոտում: Ամենուր սովորաբար կազմում են փոքր այգիներ:

Սերկելիենին պատկանում է *Cydonia L.* ցեղին, որն ընդգրկում է մեկ տեսակ՝ Սերկելիենի սովորականը (*Cydonia oblonga L.*), որից առաջացել են համաշխարհային (այդ թվում տեղական ծագում ունեցող) բոլոր մշակաձեւերը:

ՀՀ տարածքում շրջանացված են սերկելիենու հետեւյալ մշակաձեւերը:

Արեւիկ

Հայկական մշակաձեւ է, տարածված է հիմնականում Մելքիի տարածաշրջանում: Ծառերը միջակ աճեցողության են, ունեն 5-7 մ բարձրություն: Վաղահաս մշակաձեւ է, բարձրբերքատու: Պտուղները միջակ են կամ խոշոր, մինչեւ 420 գ կշռով, կլորավուն խնձորաձեւ, հարք: Գազարը շատ խոր չէ եւ անհարք է: Պտղամաշկը պինդ է, բարակ, հարք, կանաչ երանգով, թույլ քավապատ, զրեթե լերկ, կանաչ ենթամաշկային կետերով: Պտղամիսը բաց գույնի է, զրեթե սպիտակ, փխրուն, նուրբ, հյութալի, քաղցր, միջակ բուրմուճքով, քիչ քանակի քարաքիջներով: Պահունակությունը եւ փոխադրումակությունը միջակ են: Օգտագործում են զլիսավորապես քարմ վիճակում:



Նկար 123. Արեւիկ

Արարատի N 1 (խնձորածել թթվաշ N 9)

Հայկական ընտրասերովի մշակածել է, լայնորեն տարածված է Արարատյան հարթավայրի ու Տավուշի մարզի այգիներում, մասամբ՝ նաև նախալեռնային գոտում: Ուշահաս մշակածել է: Ծառերը բարձրած են՝ կլորավոր կամ լայն փոփած սաղարթով: Բերքառատ մշակածել է:

Պտուղները միջին մեծության են: Կշռությունը 140-200 գ, ունեն կլոր կամ տափակ կլորավոր ձև: Պտղամաշկը ամուր է, հաստ, բաց դեղնավուն, կանաչ երանգով, խիտ քավապատ, մոխրագեղնավուն մազմզուկներով: Պտղամիսը դեղնավուն է կամ բաց դեղին, ամուր, քրփաշ, միջին տտիպությամբ: Աչքի է ընկնում սփռվող ուժեղ բուրմուճքով: Համապատասխան պահունակ պտուղներն ունեն մեծ արժեք: Համարվում է ձմեռադիմացկուն մշակածել:



Նկար 124. Արարատի N 1

Անի

Հայկական խառնածին մշակածել է, ստացել է Էմմա Գարրիելյան-Բեկետովսկայան՝ Երեւանի 126 եւ Անուշ մշակածեների խաչասերումից: Տարածված է տարրեր գոտիներում: Ծառերը մեծ են, միջակ խստության կլորավոր սաղարթով: Ծառերը արագած են, վաղ եւ առատ պտղաբերող: Պտուղները շատ խոշոր են՝ միջինը 400-500 գ, երեմն՝ մինչեւ 900 գ, լայն կողավոր, տանձածել: Պտղամաշկը ուկեղեղին կամ բաց դեղին է, բարակ, հարթ, խիտ քավապատ, կանաչավուն, լավ նկատելի ենթամաշկային կետերով: Պտղամիսը կանաչասպիտակավուն կամ սպիտակասերուցքագույն է, հյութալի, շատ բուրավետ, քրփաշաքաղցր, բույլ տտիպությամբ, առանց քարարջիշների: Պտուղները հասունանում են սեպտեմբերի վերջին - հոկտեմբերի կեսին եւ օգտագործվում մինչեւ նայիս: Ցրտադիմացկուն մշակածել է, հիվանդությունների նկատմամբ ցածր դիմացկունությամբ: Պտուղները օգտագործվում են ինչպես բարմ սպառման, այնպես էլ վերամշակման համար: Կիրառվում է տարրեր կերակրատեսակների մեջ:

Նոյեմբերյանի ուշահաս

Հայկական մշակաձեւ է՝ Տավուշի մարզից: Ուշահաս է: Ծառերը մեծ են՝ 8-9 մ բարձրությամբ, ուժեղ աճեցողությամբ: Բերքառատ է, ինքնափոշոտվող, խակ խաչաձեւ փոշոտմամբ տալիս է ավելի բարձր բերք: Պտուղները խոշոր են՝ 300-400 գ, տաճածածեւ: Պտղի մակերեսը հարք է կամ քոյլ կողավոր: Մաշկը դեղնանարնջագույն է, հարք, պատված ուժեղ մազափառով: Պտղամիսը սերուցքագույն է, կոպիտ, ոչ հյութեղ, բրվաշ, զգալի բուրմունքով, հարուստ է բարարջիշներով: Պտուղները համապիտանի են գրձածնան համար, ունեն բարձր պահունակություն: Բավական ցրտադիմացկուն մշակաձեւ է:



Նկար 125. Նոյեմբերյանի ուշահաս

Մեղրու N 2 (Խնձորաձեւ թթվաշ 2)

Այս մշակաձեւը հանդիպում է Սեղրիի տարածաշրջանում: Հասունանում է սեպտեմբերի վերջին, աչքի է ընկնում ցրտադիմացկունությամբ, բայց հիվանդությունների նկատմամբ ունի միջակ դիմադրողականություն: Այս մշակաձեւը պահունակ է, համապիտանի եւ ունի տնտեսական բարձր արժեք: Ծառերը ուժեղած են եւ ունեն 6-7 մ բարձրություն: Պտուղները խոշոր են՝ մինչեւ 400 գ, տափակ-կլորավուն, խնձորանման: Պտղամաշկը նուրբ է, բայց պինդ, բաց դեղնավուն, քիչ բավությամբ: Պտղամիսը բաց սերուցքագույն է, պինդ, հյութալի, բրվաշ, բուրավետ: Քարարջիշները քիչ են, դասափորված են սրտիկի շուրջ:



Նկար 126. Մեղրու N 2

ՀՀ-ում տարածված են նաև սերկելիլենու մի շարք հայկական մշակաձեւեր՝ Արաքսենի, Ալեմա, Երեւանի 126, Սեղրու պահունի եւ այլն:

ՀՀ-ում հատապտղայինների Եւ ընկույզավորների մշակաձեւերը բնութագրերը

Հատապտղայինները եւ ընկույզավորները լայնորեն տարածվել են սիրողական պտղաբուծությունում, սակայն արտադրական նշանակություն եւ տարածվածություն ունեն Արարատյան հարթավայրում, նախալեռնային գոտում, Լոռիում, Տավուշում եւ նասամք՝ Սյունիքում:

ՀՀ-ում տարածված հատապտղայինների մշակաձեւերը

Հիմնականում մշակվող հատապտուղները (ըստ կարեւորության՝ ելակենի ու գետնաելակ, մորենի եւ մոշենի, հաղարջենի եւ կոկոռշենի) պարունակում են 8-10 % ածխաջրեր (հիմնականում շաքարներ), 60-80 մգ/% վիտամին C (սեւ հաղարջ՝ 400 մգ/%), 1,5 % քրոներ, P, K եւ այլ միկրոտարրեր, դոնդողներ, հանքային աղեր:

Հատապտուղների բոլոր մշակաձեւերի պտուղները բույլ փոխադրունակ եւ քիչ պահունակ են: Սովորական սառնարանային պայմաններում հաղարջն ու կոկոռշը կարելի է պահել 2-3, իսկ մնացած հատապտուղները՝ 1,5 շաբաթ: Երկար են պահվում միայն խոր սառեցման պայմաններում՝ բացասական ջերմաստիճաններով սառցարաններում:

Հայաստանում վաղուց մշակվում են գետնաելակի եւ ելակի Աճանասային, Ռոշշինսկայա, Զենգա Զենգանա, Լենինականի, Ռուբինե, Լոռի, Սպիտակ անանաս, Ռեդգրենտլետ, Պրոլիֆիկ մշակաձեւերը: Վերջին տարիներին ներկրված եւ հիմնականում ջերմաստնային պայմաններում մշակվող ելակենու բազմաբերք (ռեմննտանու) մշակաձեւերից են Ալբոնը, Ալբան, Սան Անդրեասը, Մոնտերեյը, Պոլկան, Հոնիոյը, Զեւելը եւ մի շաբաթ այլք:

Աղյուսակ 6.

Անվանումը	Հասունացման ժամկետը	Պտղի մեծությունը, ձեւը, գույնը, համը	Պտուղների օգտագործումը	Բերքատվությունը եւ աճի ու բերքի բնույթը
Պրոլիֆիկ	Հունիսի սկզբին - հուլիսի սկզբին	Խոշոր կամ միջակ՝ 8-20 գ, լայնկոնաձև, կողավոր, փայլուն մուգվարդագոյն, թթվաշաքաղցր, լավ բուրմունքով	Թարմ	Միջակ՝ 300 գ./թուփ, կամ 6-7 տ/հա, աճում է բույր տիպի հողերում, համադիմացկուն է հիվանդությունների հանդեպ:
Զենգա-Զենգանա	Միջահասուշահաս	Խոշոր՝ 15 - 25 գ, սեպաձև, կլորկոնաձև, մուգկարմիր փայլուն, թթվաշաքաղցր	Թարմ	Միջակ՝ 6-7 տ/հա, առաջին պտուղները միջակ են:
Անանասային (սպիտակ անանաս)	Միջահաս	Միջակ՝ 8-14 գ, կլոր, թույլ վարդագոյն կամ սպիտակավուն, շատ բարձր համային հատկանիշներով	Թարմ	Միջակ, 5-6 տ/հա, ցրտադիմացկուն, համադիմացկուն:
Հոնիոյ	Վաղահաս	Խոշոր՝ 10-20 գ, գեղեցիկ, կարմիր, համեղ, ամուր պտղամսով	Թարմ	Շատ բարձր՝ 15 տ/հա, փոխադրունակ, ցրտադիմացկուն:
Զեւել	Վաղահաս	Խոշոր՝ 18-20 գ, լավ գունավորված, ամուր, քաղցրահամ	Թարմ	Շատ բարձր՝ 18 տ/հա, բարձր փոխադրունակ, ամենահարմարվող:
Ալբիոն	Վաղահաս	Շատ խոշոր՝ 20-25 գ, երկարավուն կոնաձև, համաչափ, փայլուն, մուգկարմիր, գերազանց համ	Թարմ	Շատ բարձր՝ 15 տ/հա, բարձր փոխադրունակ:

Մորենու տարածված եւ վաղուց մշակվող բուսաձեւերից են Անգլիականը, Նովոկիտայսկայան, Նովոստ Կուզմինան, Մալբորոն: Վերջին տարիներին ներկրված եւ տարածվող բազմաբերք մշակաձեւերից են Պուլյանա, Պոլկա, Գոլբեն զեւել, Զեւել բլաք, Ջուգանա, Չոլտոյն կուպոլա, Գերակլ, Աննա, Ժակլին եւ մի մեծ շարք այլ մշակաձեւեր: **Անփուշ մոշենու** նոր ներկրված եւ բավականին արագ տարածվող բուսաձեւերից են Խոռոն ֆրի, Թրիփլ Քրաուն, եւս մի քանիսը:

Աղյուսակ 7.

Անվանումը	Հասունացման ժամկետը	Պտղի մեծությունը, ձեւը, գույնը, համը	Պտուղների օգտագործումը	Բերքատվությունը եւ աճի ու բերքի բնույթը
Անգլիական	Հուլիսի կեսին	Շատ խոշոր, մոռագույն, անփայլ, երկարավուն, հյութալի, թթվաշաքառց	Թարմ եւ վերամշակված	Բարձր՝ մեկ թիկից մինչեւ 2 կգ, կարող է տալ երկրորդ բերքը:
Մալբորո	Հուլիսի սկիզբ	Խոշոր, օվալաձեւ հավասարաչափ, բացկարմիր, քաղցրաթթվաշ	Թարմ	Բարձր, մեկ թիկից մինչեւ 2 կգ, լավ հայտնարկողական է տարբեր գոտիներում:
Անսա (դեղին մորի)	Միջա-ուշահաս, հուլիսի կեսին	Խոշոր, կոնաձեւ, դեղին, քաղցրահամ	Թարմ	Բարձրբերքատու, դիմացկուն է արմատային փուման հանդեպ:
Թրիմիլքրաուն (անվուշ մոշ)	Վաղահաս, հունիսի վերջին	Խոշոր, եռյակներով, փայլուն սեւ, հյութալի, շատ քաղցր	Թարմ եւ սառեցման	Բարձր բերքատու

Հաղարջենու տարածված մշակաձեւերից են՝ Կրանդալը, Ացիդեն բլաքը, Լիա բերքատուն, Հոլանդական կարմիրը, Կովկասյանը եւ այլ նոր բուսաձեւեր: Իսկ կոկոռշենու տարածված մշակաձեւերից են Խառուտոնը, Կանաչ շշաձեւը, Վարշավային, Ինվիլտան, Բլաք Վելվեթը:

Աղյուսակ 8.

Անվանումը	Հասունացման ժամկետը	Պտղի մեծությունը, ձեւը, գույնը, համը	Պտուղների օգտագործումը	Բերքատվությունը եւ աճի ու բերքի բնույթը
Գոլիաֆ (Գողիաթ)	Հովհանիսի սկիզբ	Կլորավուն, սեր, 1,5 գ քաշով, կանաչավուն, նուրբ բուրմունքով, թթվաշաքաղցր	Թարմ եւ վերամշակված	Սորտը աչքի է ընկնում բարձր բերքատվությամբ եւ պտուղների որակով: Բերքատվությունը մեկ թփից՝ մինչեւ 4 կգ:
Լիա Բերքատու	Հունիսի վերջ - հովհանիսի սկիզբ	2գ քաշով, կլորավուն, սեր, փայլուն, թթվաշաքաղցր, դուրեկան բույրով	Թարմ եւ վերամշակված	Այս սորտը աչքի է ընկնում ամենամաքարձր բերքատվությամբ: Մեկ թփից բերքատվությունը կազմում է մինչեւ 3 կգ:
Կրանդալ	Հովհանիսի կես - հովհանիսի վերջ	Խոշոր, 2-3 գ, կլորավուն, սեր կամ կանաչասեր, շատ քաղցր, թույլ թթու, բուրավետ, շատ C վիտամին	Թարմ	Բերքատվությունը 1 թփից մինչեւ 6 կգ է և ավելի: Այս սորտը մեծ նշանակություն ունի արտադրական տնկարկներ հիմնելու եւ դեկորատիվ նպատակներով:
Կովկասյան	Հովհանիսի վերջ	Կլորավուն, մասր՝ 0,8 գ, փայլուն, կարմիր, քաղցրաթթվաշ	Թարմ եւ վերամշակված	Բերքատվությունը մեկ թփից մինչեւ 2 կգ է: Պտղաբերումը սկսվում է 3-4-րդ տարում, հասունանալիս չեն թափվում:
Խառնուն	Հովհանիսի կես - օգոստոսի սկիզբ	Կշռում են 1,5 գ, վարդագույն, կարմիր գույնի, թթվաշաքաղցր թարմացնոր համով	Թարմ եւ վերամշակված	Բարձր, մինչեւ 5 կգ/թուփ, բարձր չորադիմացկուն է:
Կանաչ շշաձեւ	Հովհանիսի վերջ	Խոշոր, երևարձվաձեւ, մուգ կանաչ, մաշկը նուրբ, հյութալի, թթվաշաքաղցր	Թարմ եւ վերամշակված	Բարձր, մինչեւ 6 կգ:
Վարշավայի	Հովհանիսի կես - հովհանիսի վերջ	Խոշոր, օվալաձեւ, կարմիր, հյութալի, թթվաշաքաղցր գերազանց համի, մաշկը հաստ	Թարմ եւ վերամշակված	Բարձր, մինչեւ 7 կգ:
Բլաք վելվեթ	Հովհանիսի կես - օգոստոսի սկիզբ	Խոշոր, մուգ կարմիր, քաղցր, համեղ պտուղներ	Թարմ եւ վերամշակված	Առատ պտղաբերում է նաև ցուրտ պայմաններում, համադիմացկուն է

Ընկույզենու մշակածեւերը եւ Կիսավայրի բուսածեւերը

Հայաստանի Հանրապետությունում ընկույզավորներից մշակվում են ընկույզենին, նշենին, մասամբ տիլենին (տկողին) եւ պիտակենին:

Հայաստանում հաշվվում է ընկույզենու 100-ից ավելի մշակածեւ, որոնք ներառում են նաև տեղական կիասավայրի բուսածեւեր՝ Աշտարակի տեղական, Բյուրականի, Ողջաբերդի, Ջրվեժի, Գառնիի, Արինջի, Նորքի, Կլորավուն, Կլորձվածեւ, Տափակլորավուն, Օվալածեւ, Լայն օվալածեւ, Նեղ օվալածեւ եւ այլն: Դրանք տարրերվում են հասունացման ու սպառման ժամկետներով, ընկույզի մեծությամբ, կշռով, ձեւով, կեղեւի հաստությամբ եւ ամրությամբ, միջուկի ելունքով (տատանումները՝ 23-71 %), համով եւ քիմիական կազմով: Ընկույզի քաշը տատանվում է 3-18 գրամ սահմաններում: Այդ բուսածեւերը ըստ օգտագործման եւ քիմիական կազմի լինում են՝

- բարձրյուղատու (60-70 % եւ ավելի),
- սպիտակուցի մեծ պարունակությամբ՝ 20 - 23 % սպիտակուցներ, բայց 3-4 % շաքարներով,
- սեղանի (աղանդերային) ձեւեր՝ պարունակում են 50-60 % յուղեր, 10-15 % սպիտակուցներ, 5-10 % շաքարներ,
- յոյի մեծ պարունակությամբ՝ 0,5 - 2 մգ/% յոյ պարունակողները օգտագործում են խայիպ հիվանդությամբ տառապողներին բուժելու համար,
- Ե վիտամինի մեծ պարունակությամբ՝ 0,03 մգ/% պարունակողները կարելի է օգտագործել բժշկական ցուցումներով,
- պահունի. միջուկները դիմացկուն են պսղացեցի ու բորբոքի նկատմամբ եւ նկուղներում ու մառանում պահվում են 2-3 տարի,
- հաստակեղեւ (կոռու). միջուկը դժվարությամբ է աճացնելու կենելից: Օգտագործվում են կանաչ (խակ) վիճակում մուրաքա պատրաստելու համար:

Վերջին տասնյամյակում Հայաստանում բավականին մեծ տարածում են գտել ընկույզենու Իդեալ, Չանդեր, Ֆրանկետ, Ֆերնոր, Լառա, Տուլարե, Բոնքա եւ այլ կիսաբզուկային մշակածեւերը:

Աղյուսակ 9.

Վաղուց մշակվող եւ տարածված մշակաձեւերից են.

Անվանումը	Հասունացման ժամկետը	Պտղի մեծությունը, ձեւը, գույնը, համը	Պտուղների օգտագործումը	Բերքատվությունը եւ աճի ու բերքի բնույթը
Աշտարակի	Սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Ընկուզակի քաշը՝ միջակ եւ մեծ՝ 5-10 գ, կանոնավոր ձվաձեւ, կնճռոտ, միջուկը հեշտ անջատվող, միջակ եւ խոշոր՝ 3-7գ, սպիտակ, քաղցր, հաճելի համով	Թարմ եւ վերամշակված	10-15 տարեկան ծառից՝ 100-150 կգ բերք, իրական այգում՝ 1,5-2 տ/հա: Շառերն ապրում են 100-200 տարի, հողրած են՝ 20-25 մ, շատ ցրտադիմացկուն:
Իղեալ	Սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	Խոշոր եւ շատ խոշոր՝ 10-17գ, կլոր կամ կլորովալաձեւ, կեղեւը՝ բարակ, միջուկը՝ սպիտակ, քաղցր, հաճելի համով	Թարմ եւ վերամշակված, ունի համային լավագույն արժանիքներ	Կիսաթվուկային ծառից՝ մինչեւ 60 կգ բերք, այգուց 3-6 տ/հա, ծառերը՝ 4-6 մ, պտղաբերում են 2-3-րդ տարվանից, ցրտադիմացկուն են:

Աղյուսակ 10.

Վերջին տարիներին մեծ տարածում ձեռք բերած ներմուծված նոր մշակաձեւեր.

Մշակաձեւի անվանումը եւ նկարը	Ֆրանկետ	Ֆերնոր	Չանդեր	Լառա Պիերալ
Ծագումը	Ֆրանսիա, 18-րդ դար	Ֆրանսիա, Բորոյն	ԱՄՆ, Կալիֆորնիա	Ֆրանսիա, Ժիրոնտա
Արտադրությունը	Ավանդական, կիսահինտենսիվ	Ինտենսիվ, կիսահինտենսիվ	Ավանդական, կիսահինտենսիվ	Ինտենսիվ, կիսահինտենսիվ
Պտղաբերման սկզբնավորման տարին	2 - 4	2 - 4	2 - 4	2 - 4
Լազ փոշոտիչներ	Մարբոտ, Լարա	Մարբոտ, Լարա	Մարբոտ	Ֆերնոր
Ծառի ամրությունը	Բավարար ամուր	Միջին	Ամուր	Միջին
Ծառի ձեւը	Կիսականգուն	Կիսականգուն	Կիսականգուն	Կիսականգուն
Պտղաբերության տիպը	Ծայրային (Տերմիսալ)	Կողային	Կողային	Կողային

Բերքատվությունը	Բավականին բարձր	Բարձր	Բարձր	Շատ բարձր
Բողբոջելու սկիզբը	Ուշ (մարտ - ապրիլի 30)	Ուշ (մարտ - ապրիլի 22)	Շատ վաղ (մարտ - ապրիլի 7)	Շատ վաղ (մարտ - ապրիլի 14)
Արական ծաղիկների քանակը	Միջին	Միջին	Միջին	Բավականին շատ
Հասունությունը	Ուշահաս	Բավականին ուշահաս	Ուշահաս	Վաղահաս
Դիմացկունություն բակտերիուսի նկատմամբ	Միջին թույլ (6-ը 10-ից)	Թույլ (10-ը 10-ից)	Միջին (4-ը 10-ից)	Միջին (5-ը 10-ից)
Դիմացկունություն անսորակնուսի նկատմամբ	Թեթեւակի (8-ը 10-ից)	Շատ թեթեւ (10-ը 10-ից)	Միջին (6-ը 10-ից)	Միջին (6-ը 10-ից)
Պտուղների որակը	(10-ը 10-ից)	(10-ը 10-ից)	(10-ը 10-ից)	(6-ը 10-ից)
Պտղի չափսը	Միջակ (6-ը 10-ից)	Շատ խոշոր (9-ը 10-ից)	Շատ խոշոր (9-ը 10-ից)	Շատ խոշոր (10-ը 10-ից)
Պտղի ձեւը	Երկարավուն ձվաձեւ	Ձվաձեւ	Գնդաձեւ	Գնդաձեւ
Ընկույզակի քաշը	9-ից 12գ	10-ից 12 գ	10-ից 12 գ	10-ից 13 գ
Կեղեւապատի հաստությունը	Միջին	Միջին	Միջին	Բարակ
Միջուկի անջատումը	Լավ	Լավ	Շատ լավ	Լավ

ՀՀ-ԻՒՄ Մշակվող չոր մերձարեւադարձայինների մշակաձեւերի բնութագրերը


Հայաստանի Հանրապետությունում չոր մերձարեւադարձային մշակաբույսերն ունեն մշակության խիստ սահմանափակ բնատարածք: Բնակլիմայական պայմանների սահմանափակող գործոնի պատճառով չոր մերձարեւադարձային մշակաբույսերը (հիմնականում նոնենին, թզենին եւ ժորենին (ժորի, արեւելյան խուրմա, կակենի, ոսկեպտղի.ոմանք սխալմամբ դեռ շարունակում են «արքայանարինջ» անվանել) մշակվում են Տավուշի, Լոռու եւ Սյունիքի մարզերի ցածրադիր վայրերում:

Նոնենու մշակաձեւերը

Բալա-մյուրսալ


Միջին չափի, թփանման սաղարթով, չափավոր լայնատարած ճյուղերով եւ քիչ քանակի փշերով մշակաձեւ է: Պտուղները խոշոր են՝ 200 – 215 գ: Հյութը կարմիր է, թթվաշաքաղցր, հաճելի համով, պարունակում է 10,8 % ածխաջրեր եւ 3,4 % թրուներ: Հյութի ելքը պտղամսից կազմում է 54 %:

Այս մշակաձեւ քավական ցրտադիմացկուն է: Պտուղները հասունանում են հոկտեմբերի կեսին: Բերքատվությունը՝ 35-45 կգ/ծառ: Սենյակային ջերմաստիճանում պտուղները կարելի է պահել մինչեւ մեկ ամիս: Համապիտանի է քարմ վիճակում օգտագործելու եւ վերամշակման համար:



Նկար 127. Բալա-մյուրսալ

Գյուլոշա հայկական




Նկար 128. Գյուլոշա հայկական

Այս մշակաձեւը հաճախ հանդիպում է Մեղրիի տարածաշրջանի արաքսամերձ գոտում: Թփերը թույլ ճյուղավորված են, 3,5 մ միջին բարձրությամբ: Պտուղները միջին են եւ խոշոր՝ 150-200 գ: Պտղի կեղեւն ունի մինչեւ 3 մմ հաստություն: Հատիկները ձվածեւ-երկարավուն են, 0,9-1,1 սմ երկարությամբ, նրբարադանիք:

Հյութը գինեցույն է, թթվաշաքաղցր, պարունակում է 12 % ածխաջրեր եւ 2 % թրուներ: Բերքավորյունը՝ 20-25 կգ/ծառ: Պտուղները հիմնականում օգտագործվում են քարմ վիճակում: Պիտանի են նաև վերամշակման համար:

Գյուլոշա կարմիր



Նկար 129. Գյուլոշա կարմիր

Առավել հայտնի եւ պահանջված մշակաձեւերից է: Հայաստանում տարածված է Մեղրիի, Իջևանի եւ Նոյեմբերյանի տարածաշրջաններում: Թփերը խոշոր են, ուղիղ կանգուն ճյուղերով եւ միջակ փշոտ: Ծաղիկներն առավելապես սափորաձեւ են, մուգ կարմիր գունավորմամբ, միջին մեծության՝ 205 գ: Հատիկների չափսերը 0,25-0,7 սմ-ի սահմաններում են, թափանցիկ են, մսոտ, հյութալի, նորր քաղանքով: Հյութն առատ է, մուգ կարմիր, թթվաշաքաղցր: Պտուղները պարունակում են 12 % ածխաջրեր եւ 3 % թրուներ:

Համեմատաբար ցրտադիմացկուն մշակածեւ է: Պտուղները հասունանում են հոկտեմբերի երկրորդ կեսին: Մեկ թփի քերքատվությունը կազմում է 30-40 կգ: Պտուղները պահունակ են և ունեն բարձր փոխադրունակություն: Համապիտանի են ինչպես բարմ, այնպես էլ՝ վերամշակված վիճակում:

Գյուլոշա Նոնաձորի

Տարածված է Մեղրիի տարածաշրջանի արաքսամերձ գոտում: Թփերն ունեն մինչեւ 3,5 մ բարձրություն եւ լայն սաղարթ: Պտուղները միջին մեծության են, արտաքին տեսքով եւ գույնով տարբերվում են մյուս մշակածենքից: Աչքի է ընկնում բարակ, փխրուն եւ հատիկների առկայությամբ պայմանավորված անհարթ մակերեսով կեղեւով: Հատիկների հյուրը կարմիր է, պարունակում է 11,2 % ածխաջրեր եւ 2,3 % բբուներ: Հյութառատ է՝ ելքը պտղից կազմում է մոտ 44 %: Բերքատվությունը մեկ թփից՝ 40-45 կգ: Պտուղները պահունակ են: Համապիտանի են ինչպես բարմ, այնպես էլ՝ վերամշակված:



Նկար 130. Գյուլոշա Նոնաձորի

Շահ Նուռ (Շահ Նար)

Այս մշակածելը հիմնականում աճում է Մեղրիի տարածաշրջանի Նոնաձոր համայնքում: Թփերը բավական խոշոր են՝ մինչեւ 4 մ բարձրությամբ: Սաղարթը լայն է, գնդաձեւ, խիտ ճյուղավորված: Ծյուղերը քիչ փշոտ են: Պտուղները համային հատկություններով նման են «Նոնաձորի քաղցր» մշակածենին, սակայն վերջինից տարբերվում են պտղի կառուցվածքով եւ հատիկների խոշորությամբ: Պտուղները խոշոր են, ունեն բարակ եւ փխրուն կեղեւ, ճառագայթածեւ, վարդագույն, ամուր քաղանքով քաղցր հատիկներ, որոնց երկա-



Նկար 131. Շահ նուռ

բությունը հասնում է 1,4-1,5 սմ-ի:
Հյութը պարունակում է 12,7 % ածխաջրեր եւ 0,32 % քրուներ: Հյութի ելքը կազմում է 53 %: Թփի միջին բերքատվությունը՝ 40 կգ: Պտուղները պիտանի են միայն քարմ վիճակում օգտագործելու համար:


ՀՀ-ում հանդիպում են նաև Գյուղա վարդագույն, Նոնաձնրի թթու, Նոնաձնրի քաղցր, թթու ուշահաս, Կրմզի նուռ, Կարմիր քաղցր, Կարմիր Նոնաձնրի, Կազակե անոր եւ այլ մշակածներ:

ԹպԵՆՈՒ ՄշակածԵԼԵՐԸ

Արաբուլի

Խոշոր պտուղներով քարձրբերքատու մշակածեն է: Պտղաբերում է 2 անգամ (կրկնակի պտղաբերող): Փոշոտման կարիք չունի: 7-8 տարեկան ծառի բերքը կազմում է 40-50 կգ: Առաջին բերքի պտուղները հասունանում են հուլիսի առաջին կեսին, շատ խոշոր են՝ 80-100 գ քաշով: Պտղամիսը մուգ վարդագույն է, հյութալի, հատիկավոր, չափավոր քաղցր, քույլ բուրմուճքով: Երկրորդ բերքի պտուղները հասունանում են օգոստոսի երկրորդ կեսին և սեպտեմբերին, խոշոր են՝ 50-60

գ քաշով: Պտղամիսը դեղնավարդագույն կամ կարմիր է, հյութալի, շատ քաղցր, մշակածենին հատող բուրմուճքով: Պտուղներն օժտված են գերազանց համային հատկանիշներով, պիտանի են ինչպես թարմ վիճակով օգտագործելու, այնպես էլ՝ վերամշակման համար:



Նկար 132. Արաբուլի


Չապլա (Բրառունսվիկ)

Այս մշակածելը տալիս է երկու բերք, փոշոտում չի պահանջում: Քարձր բերքատու մշակածեն է, 7-8 տարեկան ծառերի բերքը՝ 45 կգ: Ծառերը համեմատարար փոքր են՝ մինչեւ 3 մ քարձրությամբ, ունեն գնդածեն լայն սաղարթ: Առաջին բերքի պտուղները հասունանում են հուլիսի առաջին կեսին, շատ խոշոր են՝ 80-100 գ քաշով: Պտղամիսը քաց կամ մուգ վարդագույն է, հյութալի, շատ քաղցր: Թոշնած պտուղներն ունեն հաճելի յուրահատուկ



Նկար 133. Չապլա (Բրառունսվիկ)

համ: Երկրորդ բերքի պտուղները հասունանում են օգոստոսի երկրորդ տասնօրյակից մինչեւ հոկտեմբերի կեսը, միջին չափի են կամ խոշոր՝ 30-70 գ: Պտուղները քափանցիկ են, ուկեզույն հյութով, հիանալի համի, պիտանի են բարձրորակ մուրաբաներ պատրաստելու համար:



Նկար 134. Կաղուտա

Կաղուտա

Միարերք, փոշոտում չպահանջող մշակածեն է: Աչքի է ընկնում բարձր ցրտադիմացկունությամբ: Յոր տարեկան ծառի միջին բերքատվությունը կազմում է 30 կգ: Ծառերն ունեն 3-3,5 մ բարձրություն, լայն, հզոր սաղարթ՝ հաճախ կրացած ճյուղերով: Պտուղները հասունանում են օգոստոսի վերջից մինչեւ սեպտեմբերի վերջը: Պտղամիսը հյութալի է, մեղրի նուրբ բուրմունքով, սպիտակ եւ ուկեզույն: Բավական արժեքավոր մշակածեն է վերամշակման համար:

Նեապոլիտան (Ֆինիկովի)



Նկար 135. Նեապոլիտան (Ֆինիկովի)

Միարերք, ինքնափոշոտվող մշակածեն է: Ծառերը հզորած են, մինչեւ 6 մ բարձրությամբ: 7-8 տարեկան ծառերի բերքատվությունը կազմում է 40 կգ: Պտուղները հասունանում են սեպտեմբերի սկզբից մինչեւ հոկտեմբերի վերջը, միջին կամ միջինից փոքր են՝ 25-35 գ: Պտուղները տանձածեն են, երբեմն բերեւ բերքած վզիկով: Մաշկը դեղնականաչ է՝ ծածկված մուգ մանուշակագույն գունա-


վորմամբ: Պտուղները բույլ խավապատ են, իսկ հասունացած ժամանակ պատվում են ոչ մեծ խորության ճաքերով: Այս մշակածեն աչքի է ընկնում բարձր ցրտադիմացկունությամբ, դիմակայուն է նաև սնկային հիվանդությունների հանդեպ:

ՀՀ-ում հանդիպում են նաև Դալմատսկի, Սարի Խալդանսկի, Սպիտակ, Մաղլեն, Ֆո սեղոն եւ այլ մշակածեներ:

Ժորենու (ժորի, արեւելյան խուրմա, ճապոնական խուրմա, ուկեպտղի, կակենի, գագենի) մշակաձեւերը

ԶԵՆՉԻ ՄԱՐՈՒ

Ճապոնական խուրմայի արդյունաբերական մշակաձեւ է: Ծառերը միջին մեծության են, սաղարթը՝ գնդաձև, ճյուղերի խիստ դասավորությամբ, լավ տերեւակալած: Հասունացած պտուղների պտղամիսը գորշ է, հյութալի եւ քաղցր, պարունակում է 15 % ածխաջրեր, 0,012 % թրուներ եւ 0,083 % դարաղանյութեր: Ցրտադիմացկուն, ինքնափոշոտվող (փոշոտիչների կարիք չունի) մշակաձեւ է, ծաղկում է հունիսին, իսկ պտուղները հասունանում են հոկտեմբերի երկրորդ կեսից մինչեւ նոյեմբերի առաջին տասնօրյակը: 7-14 տարեկան ծառերի բերքատվությունը կազմում է 35-100 կգ:



Նկար 136. Զենչի մարու

Հաչիա

ՀՀ-ում շատ տարածված է Մեղրիի, Նոյեմբերյանի եւ Խջենանի տարածաշրջաններում: Աչքի է ընկնում հզորած, մեծ ծառերով, գրեթե բրգաձև սաղարթով, երկար եւ մերկացած կմախրային ճյուղերով: Պտղի միջին քաշը կազմում է 230 գ, իսկ խոշոտ պտուղները կարող են կշռել 270 գ: Պտուղներն ունեն երկարավուն եւ կոնաձև կառուցվածք: Կեղեւը մուգ նարնջագույն է՝ կարմիր երանգով: Չհասունացած պտուղները տտիալ են, իսկ գերհասունացածները՝ քաղցրահամ, պա-




Նկար 137. Հաչիա

րունակում են 15 % ածխաջրեր, 0,54 % թթուներ, 0,108 % դարաղանյութեր: Այս մշակաձեւը կարող է տուժել ձմռան սառնամանիքներից (ցրտաղիմացկուն չէ), պահանջկոտ է խնամքի նկատմամբ եւ պահանջում է փոշոտիչ այլ մշակաձեւ: 10-14 տարեկան ծառերի բերքատվությունը կազմում է 55 կգ: Բերքահավաքը տեղի է ունենում հոկտեմբերի վերջին: Պտուղները կարելի է պահել ընդամենը մեկ ամիս: Համապիտանի է եւ քարմ վիճակում օգտագործելու, եւ վերամշակման (չրի արտադրության) համար:

Հիակումե

Լայնորեն տարածված մշակաձեւ է, որն աչքի է ընկնում խիս ճյուղերով կլորավուն սաղարբով: Տերեմները ձվաձեւ են: Միջին չափի պտուղները կշռում են 195 գ, իսկ խոշորները՝ 225 գ: Պտուղները խնձորանման են: Եր կանաչ, եւ հասուն պտուղների պտղամիսը սերմերով է, տսիա չէ եւ ունի մուգ դարչնագույն թելիկներ: Պտղամիսը պարունակում է 14,2 % ածխաջրեր, 0,08 % թթուներ եւ քիչ դարաղանյութեր: Համեմատաբար ցրտաղիմացկուն մշակաձեւ է, ծաղկում է մայիս ամսին: 7-10 տարեկան ծառերի բերքատվությունը կազմում է 50-100 կգ: Բերքահավաքը տեղի է ունենում հոկտեմբերի վերջին եւ նոյեմբերի սկզբին:



Նկար 138. Հիակումե

Պտուղները կարող են պահվել մինչեւ 2 ամիս: Համապիտանի է քարմ վիճակում օգտագործելու եւ վերամշակման (չրերի արտադրության) համար:

ՀՀ-ում հանդիպում են նաև Զիրոն, Մարու, Տամոպան եւ այլ մշակաձեւեր:

Օգտագործված գրականության ցանկ

- ԱԳ.ԶԿ հիմադրամ (2017). Տեղեկատու. Մեղրիի տարածաշրջանում մշակվող նոճենու, քզենու և արեւելյան խուրմայի հիմնական սորտերը. Գ. Մելյան
- Աֆյան Գ. (2018). Գյուղատնտեսական մշակաբույսերի ռոպման կազմակերպման հիմունքներ. Երեւան.
- Գ. Սանթրոսյան, Ա. Հովհաննիսյան, Գ. Գարբիելյան, (2014). Պտղաբուծության լաբորատոր պարապունքների ձեռնարկ. Երեւան.
- Եսայան Գ.Ս., Ընկույզենու մշակությունը. Երեւան, 1984
- Հայաստանի պտուղները, Վերմիջյան Ա., Դիլանյան Հ., Սանայյան Մ. և ուրիշներ, 1,2,3,4,5 հատորներ, Երեւան, 1958 -1981
- Հովհաննիսյան Ա.Ռ., Պտղահատապտղային բույսերի ուղեցույց (հայերեն-լատիներեն-անգլերեն-ֆրանսերեն-ռուսերեն), Երեւան, 2007
- ՀՀ օրենքը օրգանական գյուղատնտեսության մասին
- ՀՀ-ում օրգանական շուկայի ներկա իրավիճակը, խնդիրները ու հնարավորությունները, Նունե Դարբինյան, ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի 02 նոյեմբերի 2016 թ. նիստի գեկույց
- Ղետնի Ալիշան Հայրուսակ կամ հայկական բուսաբառութիւն, Վենետիկ, 1895
- Ների Դ., Մասետանի Ֆ. (2018). Պտղատու այգիների ձեռավորումն ու էտր ավանդականից դեպի ինտենսիվ համակարգերի անցումը Հայաստանում. Երեւան.
- Մարգարյան, Ա. Չափանյան, Հ. (1976). Պտղաբուծություն. Երեւան
- Մկրտչյան Խ. (2015). Այգեպան, Ուսումնական ձեռնարկ. Երեւան.
- Չափանյան Հ.Ն., Հատապտուղներ, Երեւան, 2000
- Պտղաբուծության տեղեկագիրը, Վերմիջյան Ա. և ուրիշներ, Երեւան, 1959
- Ստեփանյան Ս.Ս., Ղասումյան Ս.Ա., Ստեփանյան Ա.Ս., Այգեգործի տեղեկատու, Երեւան, 1989,
- Ստեփանյան Ս.Ս., Սանթրոսյան Գ.Ս., ՀՀ-ում տարածված խնձորենու գլխավոր սորտերը, Երեւան, 2002

17. Ստեփանյան Ա.Գ. Կորիզավոր եւ հնդավոր պտղատեսակներ. Երեւան. 2006.
18. Ստեփանյան Է. (2021). Ինտենսիվ այգու հիմնում ու կառավարում. Երեւան
19. Ստեփանյան Ա. (2006). Կորիզավոր եւ հնդավոր պտղատեսակներ. Երեւան.
20. Ստեփանյան Է. (2021). Պտղաբուծություն, մեքողական ցուցումներ պարենամթերքի տեխնոլոգիա, տեքստիլ եւ քերեւ արդյունաբերության նյութերի եւ արտադրանքների տեխնոլոգիա, պարենամթերքի տեխնոլոգիա մասնագիտությունների լաբորատոր պարապմունքներ անցկացնելու համար. Երեւան.
21. Վ. Թոռչյան, Գ. Սանրըռոյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Ասատրյան, ՀՀ ներմուծված պտղա-հատապտղային տեսակների սորտերի եւ դրանց պատվաստակալների նկարագրեր, 2009
22. Lang, G. (2019). Achieving sustainable cultivation of temperate zone tree fruits and berries.
23. Mandal, D., Wermund, U., Phavaphutanon, L., & Cronje, R. (2021). Temperate fruits.
24. Training Young Walnut Trees: No Pruning/No Heading vs. Minimum Pruning Compared. (2021). Retrieved 27 October 2021, from <http://www.sacvalleyorchards.com/walnuts/horticulture-walnuts/training-young-walnut-trees-minimum-pruning-vs-no-pruning-compared/>
25. Tree Fruit Production Guide, Summer Pruning of Apples and peaches
26. Tree Fruit Production Guide, 2012-2013, Pennsylvania.
27. Pruning Hazelnut Trees — A Basic Guide. (2021). Retrieved 26 October 2021, from <https://extension.oregonstate.edu/crop-production/nuts/pruning-hazelnut-trees-basic-guide>
28. Prof. Dr. Karoly Hrotko, Cherry rootstocks
29. Usha, K., Thakre, M., Goswami, A. K., & Deepak, G. N. (2015). Fundamental of Fruit Production
30. (2021). Retrieved 1 March 2021, from <https://www.youtube.com/watch?v=bRzpL30jRzA>
31. (2021). Retrieved 1 March 2021, from <https://www.youtube.com/watch?v=TS8IFyVHcFU>
32. <https://www.fibl.org/fileadmin/documents/shop/1150-organic-world-2021.pdf>

33. <https://shen.am/hy/publications>
34. <https://www.fibl.org/fileadmin/documents/shop/1150-organic-world-2021.pdf>
35. <https://thtreeservices.co.uk/>
36. <https://cebutte.ucanr.edu//files/43185.pdf>

**Արա Հովհաննիսյան
Արմեն Զաքարյան**

ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Զնավորումը՝ Արամ Ուռուտյանի

ՀՏԴ 634.1(07)
ԳՄԴ 42.35g7
Հ 854

Ս.Հովհաննիսյան Ա., Զաքարյան Ա.
Հ 854 **ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ** / Ա. Հովհաննիսյան, Ա. Զաքարյան.- Եր.:
ՀԱԱՀ, 2022.- 338 էջ:

ՀՏԴ 634.1(07)
ԳՄԴ 42.35g7

ISBN 978-9939-77-159-5



9 789939 771595